Սմբատ Հովհաննիսյան

Հայոց պատմություն

7

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ

Սմբատ Հովհաննիսյան

Հայոց պատմություն

7

Դասագիրք
հանրակրթական
դպրոցի համար

ՄԱՍՆԱԿՑԱՅԻՆ ԴՊՐՈՑ
Երևան • 2023

ՀՏԴ 373:94(479.25)(075.3)
ԳՄԴ 63.3(5Հ)g72
Հ 854

Հեղինակ՝ Սմբատ Խ. Հովհաննիսյան, պ. գ. թ., դոցենտ
Խմբագիր՝ Մարիամ Մ. Կարապետյան, բ. գ. թ., դոցենտ

Համապատասխանում է ՀՀ Կառավարության 2021 թ. փետրվարի 4-ի N 136-Ն որոշմամբ ընդունված Հանրակրթության պետական չափորոշչին: Դասագիրքը ստեղծվել է «Մասնակցային դպրոց» ԿՀ միջգիտակարգային նախագծի շրջանակում: **Նախագծի ղեկավար՝** Վահրամ Սողոմոնյան:

Սրբագրիչ՝ Գոհար Ամիրբեկյան
Ձևավորող՝ Նորա Գալֆայան
Նկարիչ՝ Աննա Հակոբյան
Կազմի ձևավորող՝ Լուսինե Նավասարդյան
Գրքի շապիկը՝ Գառնու հեթանոսական տաճարն ու Սուրբ Սիոն եկեղեցին
Սրբ. Սիոն եկեղեցու վերակազմությունը՝ Տիրան Մարությանի, եռաչափ մոդելավորումը՝ Ռուբեն Սարգսյանի

Հովհաննիսյան Սմբատ
Հ 854 Հայոց պատմություն: 7-րդ դասարանի դասագիրք / Ս. Հովհաննիսյան.- Եր.: «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023. – 176 էջ:

Հեղինակային խումբը շնորհակալություն է հայտնում դասագրքի ստեղծմանն աջակցած բոլոր անհատներին և կազմակերպություններին, այդ թվում՝ Հայաստանի պատմության թանգարանին, «Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտին, «Էրեբունի» պատմահնագիտական արգելոց-թանգարանին, Մայր աթոռ Սուրբ Էջմիածնին, Հայաստանի ազգային պատկերասրահին, ՀՀ կենտրոնական բանկին, Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոնին, Վենետիկի Մխիթարյան միաբանությանը, «Գառնի» պատմամշակութային արգելոց-թանգարանին, Արաքս Մանուչարյանին, Ռուբեն Սարգսյանին, Կարեն Թոխաթյանին և Սեդա Խանջյանին:

ՀՏԴ 373:94(479.25)(075.3)
ԳՄԴ 63.3(5Հ)g72

Երաշխավորված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության կողմից:

Դասագրքում բովանդակային և տեխնիկական խնդիրներ հայտնաբերելու դեպքում կարող եք նամակ գրել հետևյալ էլ. փոստին՝ masnakcayindproc@gmail.com

Տպագրությունը՝ օֆսեթ: Թուղթը՝ օֆսեթ: Չափսը՝ 700x100 1/16:
Ծավալը՝ 11 տպագրական մամուլ: Տպագրական գույները՝ 4x4:
Տպաքանակը՝ 2000: Տպագրվել է «Անտենոր» տպագրատանը, 2023:
Բոլոր հեղինակային իրավունքները պաշտպանված են:

© Հովհաննիսյան Սմբատ, 2023
© «Մասնակցային դպրոց» ԿՀ, 2023
© ՀՀ ԿԳՄՍՆ, 2023

ISBN 978-9939-1-1723-2

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞ւ և ինչպե՞ս ուսումնասիրել պատմությունը

Սիրելի՛ աշակերտ

այս տարվանից ուսումնասիրելու ես «Հայոց պատմություն» առարկան: Գիրքը, որը քեզ հետ է լինելու այս տարի, քեզ կտանի հայ ժողովրդի պատմության ամենախորքերը:

Հաջորդ երկու տարիների ընթացքում կշարունակես քո ճանապարհորդությունն անցյալի այլ դարաշրջաններում:

Ի՞նչ է պատմությունը

Մինչ օրս շատերը կարծում են, որ պատմությունը գիտություն է անցյալի մասին: Իրականում այդքան էլ այդպես չէ կամ մասամբ է այդպես, քանի որ պատմությունն այն ամենի մասին է, ինչ տեղի է ունեցել, տեղի է ունենում կամ կարող է տեղի ունենալ: Ավելին՝ շատերը պատմությունը պատկերացնում են որպես անունների և ամսաթվերի ճանձրալի ցուցակ, հեղափոխությունների և ճակատամարտերի կամ թագավորների, թագուհիների և այլ կառավարիչների ժամանակավրեպ պատմություններ: Պատմությունը, սակայն, ներառում է այնպիսի թեմաներ, ինչպիսիք են տնտեսությունը, քաղաքականությունը և սոցիալական փոփոխությունները, բայց պատմում է նաև իրականացած կամ չիրականացած երազանքների, ստեղծագործության, փիլիսոփայական ու կրոնական ոգեշնչման մասին:

Ինչո՞ւ ուսումնասիրել պատմությունը

Պատմության իմացությունը նախ կարևոր է սեփական անցյալն իմանալու համար: Այն մասնակցում է մեր ինքնության ձևավորմանը, քանի որ պատմում է այն արժեքների մասին, որոնք մենք կիսում ենք: Պատմությունը հնարավորություն է տալիս վերամտածելու անցյալում կատարված սխալները՝ ապագայում դրանց կրկնությունից խուսափելու համար: Այն օգնում է հասկանալ, թե ինչպես են այսօրվա իրադարձությունները ձևավորվում անցյալի իրադարձությունների հիման վրա:

Ինչպե՞ս ուսումնասիրել պատմությունը

Պատմությունն ուսումնասիրելը նման է հետաքննիչների աշխատանքին. հարկավոր է ապացույցներ փնտրել՝ լուծելու համար անցյալի հանելուկները:

Սակայն կարևոր է իմանալ, որ պատմությունն ուսումնասիրելը սկսվում է հարցեր տալով: Դիցուք՝ ինչպե՞ս և ինչո՞ւ են տեղի ունեցել տվյալ իրադարձությունները, որո՞նք են եղել դրանց հետևանքները, կամ ինչպե՞ս են պետությունները և հասարակությունները փոխազդում, ինչպե՞ս են հասարակությունները վերաբերվել մարդկանց միջև եղած տարբերություններին և այլն, և այլն:

Մի խոսքով՝ հարցերը հուշում են, թե որ ուղղությամբ նայել:

Ինչո՞ւ է կարևոր ժամանակը պատմության համար

Իսկ որպեսզի հարցերին տրված պատասխաններն իմաստ ունենան և չլինեն զուտ պատկերների, գաղափարների, իրադարձությունների քաոսային հավաքածու, պատմությունն ուսումնասիրելիս հույժ կարևոր է ուշադրություն դարձնել ժամանակագրությանը, այն է՝ երբ է տեղի ունեցել այս կամ այն իրադարձությունը: Ժամանակը պատմության հիմնական հասկացությունն է: Ինչպես պատմահայր Խորենացին էր նշում. «Չկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»: Առանց ժամանակագրության անցյալի իրադարձությունները մեզ անկարգ են ներկայանալու, և չենք կարողանալու հասկանալ, թե ինչպես է զարգացել մարդկության պատմությունը:

Եվ քանի որ մենք շարունակում ենք նոր հարցեր տալ անցյալի մասին, պատմությունը երբեք չի սպառվում, չի փակվում: Անցյալը միշտ ենթակա է վերանայման, քանի որ մարդկանց պատկերացումները ժամանակի ընթացքում միշտ փոփոխվում են՝ առաջ բերելով նոր հարցեր և պահանջելով նոր պատասխաններ:

Ինչպես աշխատել այս դասագրքով

Ընթերցանությունը պատմության կամ որևէ այլ առարկայի արդյունավետ ուսումնասիրության առանցքային հմտությունն է: Որքան զարգացած լինեն քո ընթերցելու հմտությունները, այնքան ավելի շատ կհիշես քո կարդացածը: Ստորև ներկայացվող ռազմավարությունները կօգնեն քեզ ավելի արդյունավետ ուսումնասիրել և հասկանալ պատմությունը:

Մեր դասագրքի յուրաքանչյուր **ԹԵՄԱ** սկսվում է ակնկալվող **վերջնարդյունքների** վերաբերյալ տեղեկությամբ և թեմային առնչվող նկարով: Այստեղ դու կարող ես կարդալ, թե ինչ կիմանաս և կկարողանաս՝ ուսումնասիրելով այդ թեմայի դասերը:

Յուրաքանչյուր գլուխ սկսվում է **Հիմնվիր գիտելիքներիդ վրա** փոքրիկ բաժնով, որտեղ տրված տեղեկության հիման վրա դու կկարողանաս որոշակի դատողություն անել: Ուստի տեքստից անմիջապես հետո տեքստից բխող **հարցադրում** կամ **առաջադրանք** է ձևակերպվում, որը պետք է քննարկեք դասարանում: Հարցադրումը հնարավորություն է տալիս վեր հանելու կապը անցյալի և ներկայի միջև, ինչպես նաև անցյալի և ներկայի տարբերությունները:

Գլուխները նշված են թվերով (1.1, 1.2 և այլն): Գլխի վերնագիրն ու ներածական տեքստը, **ենթագլուխներն** ու դրանց առանձին վերնագրերը հուշում են, թե ինչի մասին է տվյալ հատվածը:

Յուրաքանչյուր գլխի հիմնական նյութին զուգահեռ կարող ես գտնել նաև լրացուցիչ տեղեկություններ: Դրանք նշված են **S** տառով: Այդ տեղեկության վերջում կա վերլուծական առաջադրանք **(տեղեկության վերլուծություն)**, որը թույլ է տալիս ավելի հիմնավոր պատկերացում կազմել գլխի վերաբերյալ և օգնում է կատարել գլխի առաջադրանքները:

Յուրաքանչյուր գլխի առանցքային հասկացություններն ու անունները նշված են **կապույտ գույնով**: Այդ բառերի բացատրությունը տրված է տվյալ գլխի բացատրական **բառարանում**:

Որոշ գլուխներ ունեն կից քարտեզ և դրան առնչվող առանձին առաջադրանք՝ **Նայելով քարտեզին:** Դա թույլ է տալիս սովորել վերլուծել քարտեզը (կիրառելով աշխարհագրական հմտությունները), ինչպես նաև համադրել դրանից քաղված տեղեկությունները դասանյութի հետ (մեկնաբանելով քարտեզը): Եթե որևէ գլխում չկա քարտեզ, ինքներդ պետք է գտնեք համացանցից և քննարկեք դասարանում:

Յուրաքանչյուր գլխի վերջում տրվում է **Ինչո՞ւ է դա կարևոր այսօր** ամփոփումը, որը ցույց է տալիս կապը ներկայացված իրադարձությունների և մեր այսօրվա ապրելակերպի միջև:

Դա թույլ կտա վեր հանել տվյալ գլխի կարևորությունը մեր օրերում: Դու կկարողանաս տեսնել մեր ժամանակների և անցյալի կապը, ուստիև տվյալ նյութն ուսումնասիրելու իմաստը: Հարկավ, այդ մեկնաբանությունը սպառիչ չէ: Դու, ուսուցիչդ և դասընկերներդ կարող եք սեփական դիտարկումն անել՝ կապելով դասանյութը մեր ժամանակների հետ:

Որոշ գլուխներ ունեն սկզբնաղբյուրներ: Եթե ներկայացված է մի քանի սկզբնաղբյուր, ապա դրանք համարակալված են՝ **U1** և **U2**, իսկ եթե մեկ սկզբնաղբյուր է օգտագործվել, նշված է պարզապես **U**:
Աշխատանք սկզբնաղբյուրների հետ առաջադրանքը թույլ է տալիս սովորել վերլուծել սկզբնաղբյուրները և համադրել դրանք դասանյութի հետ:

Յուրաքանչյուր գլխի վերջում տեղադրված են այդ գլխի վերանայմանն ուղղված առաջադրանքներ: Առաջադրանքներն **ըստ բարդության** առանձնացված են տարբեր գույներով: Առաջին մակարդակը նշված է **կանաչ** գույնով, երկրորդը՝ **նարնջագույնով,** իսկ երրորդը՝ **կապույտով**:
Ի դեպ, ինքդ կարող ես գույներին համապատասխան ուրիշ առաջադրական բայեր ընտրել գրքի սկզբնամասում տեղադրված բայերի ցանկից և նույն հարցը քննարկել արդեն նոր առաջադրական բային համապատասխան:

Դասագիրքն ավելի բաց ու ընդգրկուն դարձնելու համար որոշ դեպքերում տեղադրված են QR կոդեր: Դու կարող ես սկանավորել դրանք քո բջջայինով, բացվող տեղեկությունը համեմատել դասագրքում կարդացածի հետ և վերլուծել:

Պայմանական նշաններ

- Գիտելիքի հաղորդում և ներկայացում
- Վերադասավորում և փոխանցում
- Ինքնանդրադարձ և խնդիրների լուծում

I. Գիտելիքի հաղորդում և ներկայացում

(հաղորդել ու նկարագրել)

Առաջադրական բայեր	Ինչ պետք է անես	Ինչը քեզ կօգնի
Նշիր	Թվարկիր պահանջվող տեղեկություններն ու տերմինները՝ ըստ դրանց կարևորության և հերթականության:	***Օրինակներ՝*** *Առաջինը, պետք է նշել ...:* *Հատկապես կարևոր է ...:* *Բացի դրանից, ...:*
Մշակիր	Քաղիր տեղեկություններ նյութից և հաղորդիր դրանք:	***Նյութից դուրս բեր կարևոր կետերը:***
Նկարագրիր	Իրողությունը հաղորդիր այնպես, որ ուրիշները լավ պատկերացնեն այն: Դա կարող ես անել սեփական գիտելիքի կամ նկարների ու գրաֆիկների օգնությամբ:	Կիրառիր պատկերավոր խոսք, ճիշտ տերմիններ: Խուսափիր ավելորդ բառերից: ***Օրինակներ՝*** *Ես այստեղ տեսնում եմ ...:* *... ից հետո տեղի է ունեցել ...:*
Բնութագրիր	Նշիր իրողության բնորոշ հատկանիշները:	***Օրինակ՝*** *Այս շրջանն աչքի է ընկնում ...:*
Ամփոփիր, վերապատմիր	Հավաքիր նյութի ամենակարևոր տեղեկությունները, դրանք ներկայացրու սեփական կապակցված խոսքով:	Նախ պետք է լավ հասկացած լինես տեքստը կամ իրողությունը: ***Օրինակ՝*** *Պատմիչն իր գրքում առաջ է քաշում այն տեսակետը, որ...:* *Ապստամբության պատճառը...:*
Ներկայացրու, ուրվագծիր	Կառուցվածքային տեսքով վերապատմիր իրողությունները, համատեքստերը, մեթոդներն ու կախվածությունները: Նշիր դրանց ընդհանուր գծերը:	***Օրինակ՝*** *Ներկայացրու հայ մշակույթի փոփոխությունները Ոսկեդարում:* *Ուրվագծիր պատերազմի ընթացքը:*
Տեղայնացրու, տեղորոշիր	Դեպքերն ու տվյալները տեղադրիր կոորդինատային հարթության վրա:	

II. Վերադասավորում և փոխանցում

(ինքնուրույն բացատրել, դասակարգել ու կիրառել)

Առաջադրական բայեր	Ինչ պետք է անես	Ինչը քեզ կօգնի
ստեղծիր	Ցույց տուր իրողություններն ու դրանց միջև կապերը նկարի կամ ուրվագծի միջոցով:	Կարող ես օգտագործել սլաքներ, աղյուսակներ կամ մտապատկեր:
դասակարգիր	Իրադարձությունները, անձանց գործելաոճն ու թեմայի մյուս տարրերը դասավորիր որոշակի պատմական իրավիճակում (համատեքստում):	Պատասխանիր հետևյալ հարցերին | Ուրիշ էլ ի՞նչ է տեղի ունեցել այդ ժամանակաշրջանում: | Ո՞ր իրավիճակում եմ արդեն հանդիպել այդ իրադարձությանը կամ թեմային:
բացատրիր, պարզաբանիր	Իրողությունը ներկայացրու այնպես, որպեսզի ակնհայտ լինեն բովանդակային կապերը:	Բարդ իրողությունները մանրամասն բացատրության, պարզաբանման կարիք ունեն: Օգտագործիր շաղկապներ՝ որպեսզի, որովհետև, քանի որ:
հիմնավորիր	Փաստարկներ, տվյալներ կամ պատճառներ բեր պնդումը հաստատելու համար:	***Օրինակ՝*** *Այդ հասարակարգը համարվում է ստրկատիրական, քանի որ ...:*
բնորոշիր	Նկարագրիր իրողությունը՝ առանձնացնելով դրա առանձնահատկությունները:	Գտիր, թե ինչն է աչքի զարնող և հատկանշական: Օգտվիր փաստերից:
վերլուծիր, ուսումնասիրիր	Քննիր նյութը՝ բաժանելով այն մասերի և վերհանելով դրանց փոխադարձ կապերը:	**Տեքստի վերլուծություն** Ուշադրություն դարձրու գոյականներին, թվականներին, մարդկանց ու վայրերի անուններին: **Նկարի վերլուծություն** Ուշադրություն դարձրու խորհրդանիշներին, գույներին, ընդգծված առարկաներին:
համեմատիր, տարբերակիր	Գտիր երկու նյութերի տարբերություններն ու ընդհանրությունները:	Այդ նպատակով կարող ես կազմել երեք սյունակներով աղյուսակ:
բացահայտիր, առանձնացրու, ցույց տուր	Նյութից առանձնացրու որոշակի տեղեկություններ և արդյունքները ներկայացրու սեփական մասնագիտական ձևակերպումների միջոցով:	Ուշադրություն դարձրու հիմնական մտքին, քանի որ հիմնականում կարևոր տեղեկությունը ոչ թե հստակ, այլ անուղղակի կերպով է նշվում:
քննիր	Դիտարկիր տեքստը, պատկերը, քարտեզը կամ գրաֆիկը ինչ-որ տեսանկյունից:	Ցանկացած դիտարկման համար անհրաժեշտ է որոշակի տեսանկյուն:

III. Ինքնանդրադարձ և խնդիրների լուծում

(կշռադատել, կարծիք ձևավորել ու միասին խնդիրներ լուծել)

Առաջադրական բայեր	Ինչ պետք է անես	Ինչը քեզ կօգնի
գնահատիր	Դատիր որոշակի իրողության մասին՝ հենվելով փաստերի և պայմանների վրա: Կիրառիր քո առարկայական գիտելիքը՝ առանց քո անձնական դիրքորոշումն արտահայտելու:	*Օրինակ՝* *Գրերի գյուտը ..., քանի որ ...:*
դատիր, դիրքորոշում հայտնիր	Ձևավորիր դիրքորոշում պատմական իրողության մասին՝ հաշվի առնելով քո սեփական պատկերացումը:	*Օրինակ՝* *Երվանդական շրջանը բավարար վերագնահատված չէ, քանի որ ...:*
քննարկիր	Կազմիր որոշակի դիրքորոշում ինչ-որ պնդման մասին և փորձիր համոզել մյուսներին՝ ձևակերպելով փաստարկներ:	*Օրինակ՝* *Կարծում եմ, որ արդարությունը կարևոր է, քանի որ ...:*
ստուգիր, վերստուգիր	Ուսումնասիրիր՝ արդյոք ճշմարիտ է պնդումը, և ձևակերպիր քո եզրահանգումը՝ նախապես քննելով համապատասխան նյութեր:	Վերստուգելու համար կարող ես գնահատել, դատել և քննարկել:
մեկնաբանիր	Ուսումնասիրիր որևէ տեքստի, պատկերի կամ գրաֆիկի մեջ առկա պնդումներն ու պարզիր դրանց նշանակությունը:	*Օրինակ՝* *Հեղինակն իր գրքում ցանկանում է ասել, որ ...:* *Այդ մասին են վկայում ...:*
կշռադատիր	Կշեռքի նժարներին դիր և քննիր խնդրի հետ կապված փաստարկները: Դատիր, թե որ նժարի վրա են ավելի ծանրակշիռ փաստարկները:	*Օրինակ՝* *Դրա օգտին է խոսում...:* *Դա հերքվում է ...:* *Այսպիսով, հանգում եմ այն եզրակացության, որ ...:*
նախագծիր	Ստեղծիր ինչ-որ բան, ձևակերպիր ելույթի տեքստ կամ նախաձեռնիր բանավեճ տարբեր անձանց միջև:	Այստեղ հատկապես կարևոր է ստեղծագործականությունը և այն, թե ում համար և ինչ նպատակով ես անում:
մշակիր լուծում	Փնտրիր խնդրի լուծման տարբերակ:	Քո լուծումը պետք է հենված լինի նյութերում առկա փաստերի վրա:

Բովանդակություն

ՆԵՐԱԾԱԿԱՆ ԴԱՍ

Ներածություն. ինչո՞ւ և ինչպե՞ս ուսումնասիրել պատմությունը 3

Ինչպես աշխատել այս դասագրքով 5

Առաջադրական բայեր 7

Հայկական լեռնաշխարհն ու հայերը 12

1. ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀՆ ՈՒ ԱՌԱՋԻՆ ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ 18

1.1 Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչները 20

1.2 Նորքարիդարյան հեղափոխությունը և հայ ժողովրդի կազմավորման սկիզբը 24

1.3 Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումները 28

1.4 Վանի թագավորության հիմնադրումն ու ամրապնդումը 34

1.5 Վանի թագավորության վերելքն ու անկումը 39

1.6 Վանի թագավորության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը 45

2. ԵՐՎԱՆԴԱԿԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 52

2.1 Երվանդական Հայաստանի կազմավորումը և Աքեմենյան Պարսկաստանը 53

2.2 Երվանդական Հայաստանի անկախության վերականգնումն ու Սելևկյանները 59

2.3 Երվանդական Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը 64

3. ԱՐՏԱՇԵՍՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 71

3.1 Արտաշեսյան Հայաստանի կազմավորումը. Արտաշես I 72

3.2 Հայկական աշխարհակալ տերությունը. Տիգրան II Մեծ 78

3.3 Հայ-հռոմեական պատերազմներն ու Տիգրան Մեծի կայսրության փլուզումը 84
3.4 Արտավազդ II-ը և վերջին Արտաշեսյանները 89
3.5 Արտաշեսյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը 95

4. ԱՐՇԱԿՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆ 101

4.1 Արշակունիների հաստատումը Հայոց գահին 102
4.2 Տրդատ Մեծի գահակալումը և քրիստոնեության ընդունումը 108
4.3 Արշակունյաց Հայաստանի բաժանումն ու անկումը 115
4.4 Արշակունյաց Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը 122

5. ՀԱՅԱՍՏԱՆԸ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻ, ԲՅՈՒԶԱՆԴԻԱՅԻ ԵՎ ԱՐԱԲԱԿԱՆ ԽԱԼԻՖԱՅՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ 128

5.1 Պայքար ինքնավարության համար 129
5.2 Հայաստանը և պարսկա-բյուզանդական մրցակցությունը VI դարում 135
5.3 Արաբական խալիֆայության տիրապետությունը Հայաստանում 140

6. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՎԱՂ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ (V-IX ԴԴ.) 147

6.1 Հայ մշակույթի Ոսկեդարը 148
6.2 Բնական գիտություններն ու արվեստը V-IX դարերում 153

7. ԲԱԳՐԱՏՈՒՆՅԱՑ ՀԱՅԱՍՏԱՆ 158

7.1 Բագրատունիների հաստատումը Հայոց գահին 159
7.2 Բագրատունյաց Հայաստանի մասնատումն ու անկումը 164
7.3 Բագրատունյաց Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը 170

Հայկական լեռնաշխարհն ու հայերը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա
Այսօր տեղեկատվական ու հաղորդակցական տեխնոլոգիաները որքանո՞վ են նպաստում մարդկանց հաղորդակցմանը: Արդյո՞ք լիարժեք հաղթահարված են լեռնաշղթաների, ծորերի ու խորշերի ստեղծած անհարմարությունները: Խոսեք ձեր բնակավայրի կամ ձեզ ծանոթ բնակավայրերի օրինակով:

Յուրաքանչյուր ազգի պատմություն կապված է ինչ-որ աշխարհագրական տարածքի հետ, որն այս կամ այն չափով ազդել է նրա կենսակերպի վրա: Հայերի դեպքում աշխարհագրական տարածքը վճռական նշանակություն է ունեցել: Լեռնային բարձր դիրքը բնական պատնեշ է եղել օտար նվաճողների դեմ, բայց մյուս կողմից էլ դժվարացրել է հայոց կենտրոնացված և միասնական պետության կազմավորումն ու կայացումը:

Դիրքը և բնական սահմանները

Աշխարհագրական այն տարածքը, որտեղ կազմավորվել և իր պատմական ուղին է անցել հայ ժողովուրդը, կոչվել է Հայք կամ Հայաստան: Լեռների, լեռնաշղթաների և բարձրավանդակների առատության պատճառով այն հայտնի է նաև **Հայկական լեռնաշխարհ** անվամբ: Այն մի բարձրադիր զանգված է **հարավ-արևմտյան Ասիայի** հյուսիսում և առանձնանում է մի շարք բնական սահմաններով: Գտնվում է **Իրանական և Փոքրասիական (Անատոլիական) բարձրավանդակների, Միջագետքի հարթավայրի** և **Սև ծովի** միջև: Հյուսիս-արևմուտքից եզերվում է **Պոնտական**, հյուսիս-արևելքից՝ **Փոքր Կովկասի**, հարավից՝ **Հայկական (Արևելյան) Տավրոսի լեռնաշղթաներով:** Արևելքում լեռնաշխարհի սահմանները հասնում են մինչև **Ուրմիա (Կապուտան) լիճ**, հյուսիս-արևելքում՝ **Կուր գետ:**

Բառարան

Լեռնաշխարհ | շրջապատի համեմատությամբ բարձրադիր, միասնական ընդարձակ տարածք, որը բաղկացած է միևնույն բարձրադիր հիմքի վրա գտնվող լեռնաշղթաներից, սարահարթերից, լեռնազանգվածներից, միջլեռնային գոգավորություններից, ծորերից և այլն:

Բարձրավանդակ (նաև սարահարթ) | լայնածավալ զանգվածային բարձրություն՝ հարթ կամ թեթևակի ալիքավոր ջրբաժանների գերակշռությամբ: Հաճախ մեկ կամ մի քանի կողմերից սահմանափակվում է զառիթափերով կամ խորշերով:

Լեռնաշղթա | լեռների երկարավուն բարձրություն՝ վերին մասում հատվող հստակ ընդգծված լանջերով ու նեղ լեռնակատարներով:

Հարթավայր | ցամաքի մակերեսի, ծովերի և օվկիանոսների հատակի մեծ տարածքներ՝ աննշան թեքություններով և բարձրությունների փոքր տատանումներով:

Լեռները և դաշտերը

Հայկական լեռնաշխարհի զգալի մասը հրաբխային ծագում ունի: Նշանավոր են **Մասիս** (Արարատը, 5165 մ)*, **Արագած** (4096 մ)*, **Սիփան**, **Թոնդրակ**

* Ըստ ժամանակակից տվյալների՝ հավերժական ձյան շերտի մի մասի հալոցքի պատճառով Մասիսի բարձրությունը կազմում է 5137 մ, Արագածինը՝ 4090:

և **Նեմրութ** լեռները: **Հայկական պար լեռնաշղթան** սկիզբ է առնում Մասիս սարից և ձգվում դեպի արևմուտք՝ մինչև Եփրատ գետը: Հայկական պարը լեռնաշխարհը բաժանում է *հյուսիսային* և *հարավային* հատվածների: Մեկ այլ լեռնաշղթա՝ **Վասպուրականի լեռնաշղթան**, սկիզբ է առնում Թոնդրակ լեռից և լեռնաշխարհը բաժանում է *արևելյան* և *արևմտյան* հատվածների:

Հայկական լեռնաշխարհում ճանապարհները դժվարամատչելի են եղել լեռնային բարձրություններով կտրտված լինելու պատճառով: Տարբեր ուղղությամբ ձգվող լեռնաշղթաները հատվելով երկիրը վեր են ածել բազմաթիվ փակ շրջանների:

Տնտեսական կյանքում առաջնակարգ նշանակություն են ունեցել բարձրադիր հարթավայրերն ու դաշտերը, որոնցից հատկապես նշանավոր են **Մուշի, Կարինի** և **Արարատյան դաշտերը**: Դրանցից կարևորագույնն Արաքսի միջին հոսանքում գտնվող *Արարատյան դաշտն* է: Այստեղով է անցել Չինաստանն ու Հնդկաստանը Արևմուտքի և Հյուսիսի հետ կապող հիմնական մայրուղիներից մեկը: Այն ապահովել է Հայաստանի ներգրավվածությունը համաշխարհային առևտրում: Արարատյան դաշտում կան հանքային և արտեզյան ջրերի պաշարներ: Արարատյան դաշտում են գտնվել Հայաստանի գրեթե բոլոր մայրաքաղաքները: Հայաստանի Հանրապետության մայրաքաղաք Երևանը ևս այստեղ է գտնվում:

U1 Ձայներ անցյալից



ՔՍԵՆՈՓՈՆ
հույն պատմիչ
(Ք. ա. շուրջ 430-354 թթ.)

«Այստեղից գնացին խոր ձյան ու դաշտի միջով երեք կայան [...]: Դեպի երրորդ կայան ճանապարհը շատ ծանր եղավ, քանզի տչում էր հյուսիսային հակառակ քամի, որն ամեն ինչ սառեցնում էր և ցրտահարում մարդկանց: [...] Իսկ ձյան խորությունը մեկ գրկաչափ էր, այնպես, որ բեռնատար անասուններից ու ստրուկներից շատերը կորստի մատնվեցին, ինչպես նաև երեսուն հոգի զինվորներից: [...] Աչքերի համար ձյունից պաշտպանվելու մի միջոց էր, եթե մեկը գնում էր աչքերի առաջ որևէ սև բան ունենալով [...]: Այստեղ իսկ գեղջավագը* սովորեցրեց ձիերի ու գրաստների ոտքերին, ձյան միջով գնալիս, պարներ փաթաթել, քանզի առանց պարկերի անասունները մինչև տորը խրվում էին ձյան մեջ»:

Անաբասիս, Գիրք IV:5:

* Գյուղական համայնքի ավագ, պետ՝ հին և միջնադարյան Հայաստանում:

Գետերը և լճերը

Հայկական լեռնաշխարհը հարավ-արևմտյան Ասիայի գլխավոր գետերի ջրբաժանն է: Այստեղից սկիզբ են առնում խոշոր գետեր, որոնցից հատկապես նշանավոր են **Տիգրիսը, Եփրատը, Ճորոխը, Արաքսն ու Կուրը**, որոնք թափվում են **Սև** ու **Կասպից ծովեր** և **Պարսից ծոց**: Լեռնաշխարհի ջրառատությունը պայմանավորված է ձյունառատ ու երկարատև ձմեռներով: Ձնհալի ջրերից ու սառցադաշտերից սկիզբ են առնում մի շարք գետեր ու գետակներ:

Նայելով քարտեզին

Հայկական լեռնաշխարհի դիրքն ու 15 աշխարհները (նահանգները)

1. **Ներկայացրու:** Քարտեզի վրա ցույց տուր այն լեռնաշղթաները, որոնք Հայկական լեռնաշխարհը բաժանում են հյուսիսային և հարավային, ինչպես նաև արևելյան և արևմտյան հատվածների: Ի՞նչ հետևանքներ է ունեցել այդ տրոհվածությունը:
2. **Հիմնավորիր:** Ինչո՞ւ են Հայաստանի գրեթե բոլոր մայրաքաղաքները գտնվել Արարատյան դաշտում:

Սրընթացության կամ ոլորապտույտ լինելու պատճառով այս գետերը նավարկելի չեն կամ մասամբ են նավարկելի, ուստի ներքին և արտաքին հաղորդակցությունը իրականացվել է հիմնականում ցամաքային ճանապարհներով:

Հայկական լեռնաշխարհը հարուստ է նաև մեծ ու փոքր լճերով: Իրենց մեծությամբ և նշանակությամբ առանձնանում են **Ուրմիա (Կապուտան), Վան (Բզնունյաց) և Սևան (Գեղամա)** լճերը: Թե՛ Ուրմիան, թե՛ Վանը աղի լճեր են՝ ջրային արտահոսք չունենալու պատճառով: Ուրմիայի ջրերն այնքան աղի են, որ այն գրեթե զուրկ է կենդանական աշխարհից: Վանա լճում տարածված է ճկան միայն մեկ՝ **տառեխ** տեսակը: Լճերից միայն Սևանի ջրերն են, որ քաղցրահամ են և հարուստ ճկնային պաշարներով, որոնցից նշանավոր է **իշխանը**:

Կլիման և բնական հարստությունները

Հայկական լեռնաշխարհը կլիմայական հակադրությունների տարածք է: Լեռնաշխարհի բարձրությունը չեզոքացնում է բարեխառն գոտում գտնվելու առավելությունները: Բարձր լեռներն ամռանը զրկում են նրան Սև, Միջերկրա-

կան և Կասպից ծովերի զովացուցիչ քամիներից, իսկ ձմռանը՝ հարավային ցածրադիր վայրերից փչող տաք քամիներից: Ունի հստակ արտահայտված մայրցամաքային կլիմա՝ չոր և արևոտ ամառներով, ցուրտ և ձյունառատ ձմեռներով: Գարունը կարճ է, իսկ աշունը՝ երկար:

Լեռնաշխարհին հատուկ է բուսական և կենդանական աշխարհների մեծ բազմազանությունը: Կլիմայի հակասականությունը դեռ հնագույն ժամանակներից ոռոգման համակարգի անհրաժեշտություն է ստեղծել: Ոռոգման համակարգի շնորհիվ զարգացել է երկրագործությունը: Հայաստանը համարվում է **վայրի ցորենի** և **խաղողի** նախահայրենիքներից մեկը: Պայմանները նպաստավոր են եղել նաև անասնապահության համար:

Լեռնաշխարհի ընդերքը հարուստ է օգտակար հանածոներով և բուժիչ հանքային ջրերով: Դեռ հնագույն ժամանակներից երկրի ընդերքից հանել են պղինձ, երկաթ, կապար, ոսկի և այլ օգտակար հանածոներ:

Ներքին և արտաքին շուկաներում մեծ համբավ է ունեցել հայկական չգունաթափվող վառ կարմիր ներկը՝ **«որդան կարմիր»**-ը, որը հայտնի էր նաև «հայկական գույն» անվամբ:

U2 Ձայներ անցյալից

ՍՏՐԱԲՈՆ
(Ք. ա. շուրջ 62-24 թթ.)
հույն պատմիչ և աշխարհագրագետ

«Բուն Հայաստանում կան շատ լեռներ և սարահարթեր, որտեղ նույնիսկ որթատունկը հեշտությամբ չի աճում. [կան նաև] շատ հովիտներ, մի մասը՝ միջակ, մյուսները խիստ բերրի, ինչպես Արաքսի դաշտը, որով Արաքս գետը հոսում է դեպի Ալբանիայի եզրերը և թափվում է Կասպից ծով: [...]

Ասում են, թե այնտեղ լեռնանցքներում, հաճախ ամբողջ քարավաններ բուքի ժամանակ մնում են ձյան տակ: Նման վտանգի համար նրանք գավազաններ ունեն, որոնք հանում են [ձյան] մակերեսից դուրս՝ շնչառության, ինչպես նաև անցորդներին նշան անելու համար, որպեսզի օգնության հասնեն, դուրս հանեն և փրկեն իրենց: Ասում են, թե ձյան մեջ դատարկ սառցագնդիկներ են գոյանում, որոնք պարունակում են պիտանի ջուր. սրանց պատյանը ջարդելով, խմում են [ջուրը]»:

Աշխարհագրություն, Գիրք XIV:11:4:

Պատմական աշխարհագրություն

Հայ ժողովրդի մշակութային, տնտեսական և քաղաքական կյանքն ընթացել է Հայկական լեռնաշխարհի տարածքում և դրանից դուրս: Լեռնաշխարհի տարածքում պատմության տարբեր փուլերում հայտնի են եղել **Մեծ Հայքի**, իսկ դրանից դուրս՝ **Փոքր Հայքի** և **Կիլիկիայի** վարչական միավորները: Ավանդաբար Մեծ Հայքը կազմված է եղել 15 նահանգներից՝ **Բարձր Հայք, Ծոփք, Աղձնիք, Տուրուբերան, Մոկք, Կորճայք, Պարսկահայք, Վասպուրական, Սյունիք, Արցախ, Փայտակարան, Ուտիք, Գուգարք, Տայք և Այրարատ**: Ընդհանուր՝ շուրջ 400 հազար քառ. կմ տարածք:

Պատմությունը և մարդը

ՀԵՐՄԱՆ ՖՈՆ ԱԲԻԽ (1806-1886)

Գերմանացի երկրաբան, որն առաջին անգամ կիրառեց «Հայկական լեռնաշխարհ» եզրույթը և դրեց լայն գիտական շրջանառության մեջ (1882 թ.):
1844 թ. եղել է Արևելյան Հայաստանում՝ Ակռռի երկրաշարժի (1840) պատճառներն ուսումնասիրելու նպատակով, իսկ հաջորդ տարի՝ 1845 թվականին, խաչատուր Աբովյանի ուղեկցությամբ բարձրացել է Արարատ լեռը: Տվել է լեռան երկրաբանական նկարագրությունը:

Ներկայիս **Հայաստանի Հանրապետությունը** գտնվում է Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան մասում և հիմնականում (ոչ ամբողջությամբ) ընդգրկում է **Այրարատ, Սյունիք և Գուգարք** նահանգները՝ շուրջ 30 հազար քառ. կմ տարածք: **Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետությունն** իր կազմում ընդգրկում է **Արցախ, Ուտիք և Սյունիք** նահանգների փոքրիկ մասը:

Հայ ժողովրդի պատմության բնորոշ գծերից են հայրենիքից պարբերաբար և պարտադրված արտագաղթերը: Դեռ հնագույն ժամանակներից ի վեր, բայց հատկապես Օսմանյան կայսրության կատարած Հայոց ցեղասպանությունից հետո հայերը համայնքներ են հիմնել աշխարհի տարբեր շրջաններում, որոնք հայտնի են **սփյուռքներ** անվամբ: Սփյուռքներ, որոնք առանձնահատուկ դեր են կատարել հայ ժողովրդի պատմության, մասնավորապես հասարակական-քաղաքական և մշակութային կյանքում:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Հայկական լեռնաշխարհի բնակչությունը բախվեց աշխարհագրական և բնակլիմայական խնդիրների, որոնց հաղթահարումը հնարավոր էր տեխնոլոգիական լուծումների միջոցով: Այսօրվա կառավարությունները ևս նման խնդիրների առջև են կանգնած. նորարարական տեխնոլոգիաները կրկին առաջնային են:

Գործնական առաջադրանք

Ստեղծի՛ր դիագրամ՝ ցույց տալու քո բնակության վայրի ֆիզիկաաշխարհագրական առանձնահատկությունները: Այնուհետև նկարագրի՛ր, թե ինչպես են այդ հատկանիշները ձևավորել ձեր համայնքի կյանքը:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր: լեռնաշխարհ • բարձրավանդակ (սարահարթ) • լեռնաշղթա • հարթավայր • Մեծ Հայք • Հայկական Պար • Վասպուրականի լեռնաշղթա • Արարատյան դաշտ • Տիգրիս գետ • Եփրատ գետ • Արաքս գետ • Սևանա լիճ • Վանա լիճ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Որո՞նք են Հայկական լեռնաշխարհի բուսական և կենդանական աշխարհի բազմազանության պատճառները:

բ. Հիմնավորիր: Ո՞նչ ազդեցություն կարող է ունենալ տարածքի բարձրությունը երկրագործության և անասնապահության վրա:

գ. Պարզաբանիր: Ինչո՞վ էր պայմանավորված Արարատյան դաշտի կարևորությունը:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչպե՞ս էր կլիման ազդում Հայկական լեռնաշխարհի բնակիչների առօրյա կյանքի վրա:

2. Ընդհանրացրու: Որքանո՞վ էր նպաստավոր կամ աննպաստ տարբեր ուղղություններով ձգվող լեռնաշղթաների ցանցը, որոնք երկիրը վերածել էին բազմաթիվ փակ շրջանների:

Ա4 | Աշխարհագրական մտածողություն

1. Ինչպե՞ս կարող են Հայկական լեռնաշխարհի կլիման և բուսականությունն ազդել գաղթի (միգրացիայի), բնակեցման և ապրելակերպի վրա:

2. Ո՞նչ ազդեցություն կարող էին ունենալ բնական պաշարները տարածաշրջանի զարգացման վրա:

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Ներկայացրու և բացատրիր:** Ինչպե՞ս կարող էր ծմեռը ազդել Հայկական լեռնաշխարհի ներքին և արտաքին տեղաշարժերի վրա (առևտուր, ռազմարշավ և այլն):

2 | **Մեկնաբանիր:** Ո՞ր դեպքերում կարելի է տարածաշրջանի եղանակային պայմանները համարել առավելություն և ո՞ր դեպքերում՝ թերություն:

ԹԵՄԱ 1

Հայկական լեռնաշխարհն ու առաջին քաղաքակրթությունները

Ուսումնասիրելով այս թեման՝ կկարողանաս.

1

- **ա. Ներկայացնել** մարդկության պատմության հիմնական ձեռքբերումներն ու դժվարությունները Հին քարի դարում:
- **բ. Բացատրել** տեխնոլոգիաների դերակատարումը շրջակա աշխարհի յուրացման գործում, անասնապահության և երկրագործության առաջացման արդյունքում ի հայտ եկած փոփոխությունները:
- **գ. Հիմնավորել** այն պնդումը, որ Հայկական լեռնաշխարհը եղել է երկրագործության և անասնապահության նախահայրենիքներից մեկը:

2

- **ա. Ներկայացնել** Հայկական լեռնաշխարհում վաղ պետական կազմավորումների ստեղծման մեջ աշխարհագրության դերակատարումը:
- **բ. Վերլուծել** այն դժվարությունները, որոնք դանդաղեցնում էին Հայկական լեռնաշխարհի ցեղերի միավորման և վաղ պետական կազմավորումների ստեղծման գործընթացը:

3

- **ա. Նկարագրել** Վանի թագավորության պետական կարգը, բանակը, տնտեսությունը, դիցարանը:
- **բ. Համեմատել** Վանի թագավորության արքաների գործունեությունը, կարծիք հայտնել նրանց գործունեության վերաբերյալ:
- **գ. Գնահատել և արժևորել** Վանի թագավորության քաղաքակրթական ժառանգության տեղն ու դերը հայոց և համաշխարհային մշակույթների համատեքստում:

Կատարի՛ր առցանց շրջայց Հայաստանի պատմության թանգարանի կայքում, ծանոթացի՛ր մեր պատմությանը Հին քարի դարից մինչև մեր օրերը:

«Թեպետ մենք փոքր ազգ ենք և թվով հույժ սահմանափակ, զորությամբ էլ տկար և շատ անգամ նվաճված ուրիշ թագավորությունների կողմից, բայց մեր աշխարհում էլ կատարվել են քաջության բազում գործեր՝ արժանի գրով հիշատակելու»:

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ

1.1 ԳԼՈՒԽ Հայկական լեռնաշխարհի հնագույն բնակիչները

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Նախամարդկանց գոյատևումը պայմանավորված էր սնունդ հայթայթելու, որսի և ծկնորսության, ինչպես նաև գիշատիչներից խուսափելու հմտություններով:

* ***Ինչպե՞ս էին վաղ գործիքներ արտադրողները կիրառում իրենց հնարամտությունը և խնդիրներ լուծելու հմտությունները: Դասարանում քննարկե՛ք վերջին գործիքներն ու գյուտերը, որոնք փոխել են մարդկանց կյանքը, և զուգահեռներ անցկացրե՛ք նախամարդկանց գործիքների հետ:***

Որտեղի՞ց է սկսվում մարդկության պատմությունը, կամ ինչպիսի՞ն են եղել հնագույն մարդիկ. շատերն են այս հարցերը տալիս: Դրանք մարդկանց հուզել են հնագույն ժամանակներից: Այդ հարցերին պատասխաններ փընտրելիս մարդիկ ստեղծել են կրոններ և գիտություններ: Անցյալի պատկերները ստեղծելու համար պատմաբանները սովորաբար դիմում են գրավոր տեքստերին, սակայն մարդկության **նախապատմության** վերաբերյալ գրավոր նյութեր չկան: Այս պակասի պատճառով հնագույն մարդկանց պատմությունը վերակառուցելիս պատմաբանները դիմում են հնագիտության, կենսաբանության (գենետիկայի) օգնությանը: Դրանց տեղեկությունների հիման վրա պատմաբանները փորձում են վերականգնել չգրառված անցյալի պատմությունը:

Չնայած գիտական ուսումնասիրության նորագույն մեթոդների առկայությանը՝ հնագույն ժամանակների մասին մեր պատկերացումների մեծ մասը դեռևս հիմնված է ենթադրությունների վրա:

Բառարան

Նախապատմություն (կամ նախագրային պատմություն) | մարդկության պատմության մինչգրային ժամանակաշրջանը, որը սկսվում է մարդու ծագումից (մոտ 2,6 միլիոն տարի առաջ) և ձգվում մինչև ամենավաղ գրային համակարգերի հայտնվելը (մոտ 5000 տարի առաջ):

Հոմո էրեկտուս («ուղղաճիգ մարդ») | ժամանակակից մարդկանց անմիջական նախնին: Առաջացել է մոտ 1,5 միլիոն տարի առաջ: Օգտագործել է կրակ և ավելի մեծ գործիքներ:

Նեանդերթալցի | մարդկային ցեղի ոչնչացած կամ ձուլված ներկայացուցիչ: Որոշ գիտնականներ նեանդերթալցիներին համարում են հոմո սապիենսի ենթատեսակ, մյուսները՝ հոմո ցեղի առանձին տեսակ: Ձևավորվել է մոտ 150-130 հազար տարի առաջ և անհետացել է մոտ 30,000 տարի առաջ:

Հոմո սապիենս («մարդ բանական») | հայտնի է որպես «ժամանակակից մարդ», որը բնութագրվում է երկոտանի լինելով և բացառիկ ճանաչողական հմտություններով: Ձևավորվել է մոտ 160,000-70,000 տարի առաջ: Առաջացել է նեանդերթալցու հետ գրեթե միաժամանակ մոտ 250,000 տարի առաջ ձևավորված նույն նախնուց:

Գաղթ | նոր տարածաշրջան տեղափոխվելու գործընթաց:

Տեխնոլոգիա | գիտելիքներ և գործիքներ, որոնք կիրառվում են մարդկանց կարիքները բավարարելու համար:

Տոհմ | մեկ նախահորից սերած և արյունակցական կապերով միավորված մարդկային խումբ:

Առաջին մարդկանց գաղթն ու Հայկական լեռնաշխարհը

Մեզ հայտնի մարդանման ամենահին արարածները գոյություն են ունեցել Աֆրիկայում երեքից չորս միլիոն տարի առաջ: **Հոմո էրեկտուսն («ուղղաձիգ մարդ»)** առաջինն էր, որ սնունդ փնտրելու նպատակով մոտ 2-2,5 միլիոն տարի առաջ լքեց Աֆրիկան՝ հաստատվելով արևելյան կիսագնդի բարեխառն գոտիներում: Մոտ 1.8 մլն տարի առաջ նա հասավ Հայկական լեռնաշխարհ և Կովկաս: Արտագաղթը մասամբ հաջողվեց, քանի որ արդեն կիրառվում էր **կրակը:**

Հոմո էրեկտուսին հաջորդեց **նեանդերթալցին,** որը նույնպես երկար ճանապարհորդություն կատարեց և կարողացավ դրսևորել նույն հարմարվողականությունը, ինչ էրեկտուսը: Ամենից վճռորոշ գաղթը կատարեց **հոմո սապիենսը,** որը սնունդ փնտրելու նպատակով մոտ 80,000 տարի առաջ **Արևելյան Աֆրիկայից** շարժվեց դեպի *հյուսիս:* Գաղթականները հասան **Արևմտյան Ասիա**, այդպիսով՝ նաև **Հայկական լեռնաշխարհ:** Գաղթականների հենց այս ալիքից էլ, ինչպես պնդում են գիտնականները, ծագել են աշխարհի բոլոր ժողովուրդները:

Այսպիսով՝ գտնվելով Եվրոպայի և Արևմտյան Ասիայի բանուկ խաչմերուկում՝ **Հայկական լեռնաշխարհը** եղել է նախամարդկանց գաղթի ճանապարհի կարևոր հանգրվաններից մեկը, իսկ հետո նաև «բաշխիչ կետ»՝ ծառայելով որպես հիմնական տարածք, որտեղից սկիզբ են առել Եվրոպայի և Ասիայի բնակեցումները: Լեռնաշխարհի հինքարիդարյան հայտնի կայաններից են **Արտին լեռան, Արզնիի, Ազոխի, Հրազդանի կիրճի, Շանիդարի** հնավայր-քարայրները: Դրանք վկայում են, որ Հայկական լեռնաշխարհը բնակեցված է եղել մարդկային պատմության ամենավաղ շրջաններից սկսած:

S Քարի դար

(մոտ 2,6 միլիոն տարի առաջ – Ք. ա. 6000 թ.)

Մարդկության պատմության ամենավաղ շրջանը, երբ հարվածող մակերեսով գործիքներ պատրաստելու համար օգտագործվում էր գերազանցապես քարը. մինչդեռ ոսկորից և տայտից պատրաստված գործիքները համեմատաբար հազվադեպ էին: **Երկրագնդի տարբեր մասերում ունեցել է տարբեր տևողություն: Որոշ շրջաններում քարի դարը չի փոխարինվել մինչև վաղ բրոնզի դարը:**

Հին քարի դար (**պալեոլիթ** - հուն. *պալեոս՝* հին և *լիթոս՝* քար բառերից) – Նախապատմության ամենաերկար ժամանակաշրջանը, որը ծգվում է առաջին մարդուց (2,6 միլիոն տարի առաջ) մինչև երկրագործության ծնունդը (մոտ 12,000 թ.):
Միջին քարի դար (**մեզոլիթ**, հուն. *մեզոս՝* միջին և *լիթոս՝* քար բառերից) – Քարի դարի երկրորդ փուլը, որը տևել է մոտ Ք. ա. 12-րդ հազարամյակից մինչև 10-րդ հազարամյակը:
Նոր քարի դար (**նեոլիթ** - հուն. *նեոս՝* նոր և *լիթոս՝* քար բառերից) – Քարի դարի երրորդ փուլը, որը տևել է մոտ Ք. ա. 10-րդ հազարամյակից մինչև 5-րդ հազարամյակը:

Հին քարի դարը և որսորդ-հավաքիչները

Մարդկանց հիմնական տարբերակիչ հատկանիշներից մեկը գործիքներ պատրաստելու կարողությունն է: Ամենավաղ գործիքները պատրաստված են եղել քարից, ուստի գիտնականները մարդկության պատմության վաղ շրջանը նշելու համար օգտագործում են **Քարի դար** եզրույթը:

Հին քարի դարում մարդիկ **որսորդներ** և **հավաքիչներ** էին, բայց ոչ **սննդամթերք արտադրող**: Գոյատևելու համար նախամարդիկ սկզբում պատսպարվում էին քարանձավներում, իսկ հետագայում նաև ստեղծում են նոր ապաստարաններ: *Գործիքներ պատրաստելը, վայրի կենդանիներին ընտելացնելն ու կրակի օգտագործումը* հինքարիդարյան կարևոր տեխնոլոգիական նորարարություններից են և հիշեցնում են մեզ, թե որքան կարևոր էր հարմարվելու կարողությունը մարդու գոյատևման համար: Աստիճանաբար ձևավորվում է **տոհմը** կամ **տոհմական համայնքը**, որը միավորված էր արյունակցական կապերով:

Հին քարի դարի մշակույթի մյուս և ամենակարևոր զարգացումը **լեզվի զարգացումն** էր, որը ժամանակի ընթացքում ձևավորվեց հնչյունների և շարժումների համադրությամբ: Գիտնականները լեզվի ծագման մասին տարբեր մոտեցումներ ունեն: Ոմանք կարծում են, որ լեզուն կոչված էր հեշտացնելու խմբային որսը: Մյուսները կարծում են, որ այն զարգացել է որպես մարդկանց հարաբերություններ ձևավորելու միջոց: Ուրիշներն էլ կարծում են, որ լեզուն մարդկանց համար հեշտացնում էր այնպիսի հարցեր, ինչպիսին է սննդի բաշխումը:

Բայց լեզուն միակ միջոցը չէր, որով մարդիկ արտահայտվում էին: Նրանք քարից, ոսկրից և փայտից քանդակներ էին անում, քարանձավի պատերին կամ ժայռերի վրա պատկերներ նկարում կամ քանդակում: Ի հայտ են գալիս **կրոնն ու արվեստը:**



Հոմո էրեկտուսի (դեղին), հոմո նեանդերթալցու (մուգ դեղին) և հոմո սապիենսի (կարմիր) հաջորդական սփռումները

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Հազարավոր տարիների ընթացքում մարդկանց ապրելակերպը ենթարկվել է անհավատալի փոփոխությունների: Առանցքային նշանակություն ունեցավ առաջին գործիքների ստեղծումը: Այսօր ևս տեխնոլոգիաներն առանցքային նշանակություն ունեն մարդկանց կյանքում: Դրանք շարունակում են բարելավել մարդկանց կյանքը և օգնում են գոյատևել:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Նախապատմություն • հոմո էրեկտուս • նեանդերթալցի • հոմո սապիենս
քարի դար (հին, միջին, նոր) • գաղթ • տեխնոլոգիա • տոհմ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչո՞ւ է պատմաբաններին անհրաժեշտ հնագիտության և կենսաբանության (գենետիկայի) աջակցությունը՝ նախապատմությունն ուսումնասիրելու համար:

բ. Բացատրիր: Որո՞նք են եղել մարդկության պատմության հիմնական ճեռքբերումները Հին քարի դարում, ի՞նչ դժվարությունների են հանդիպել:

գ. Ցույց տուր: Ինչո՞վ էին նեանդերթալցիներն ու հոմո սապիենսները տարբերվում նախամարդկանց այլ տեսակներից:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչո՞ւ էր կրակի գյուտն այդքան կարևոր:

2. Ընդհանրացրու: Ինչպե՞ս տեխնոլոգիաները պայմանավորեցին նախամարդկանց կյանքի զարգացումը:

3. Վերլուծիր: Ինչո՞վ էր կարևոր Հայկական լեռնաշխարհը նախամարդկանց գաղթի ճանապարհին:

Ա4 | Պատճառի և հետևանքի որոշարկում

Նշե՛ք հնագույն մարդկանց կյանքում կրակի 6 նշանակություն:

Գործնական առաջադրանք

Գրե՛ք փաստարկված շարադրություն՝ բացատրելով, թե ձեր կարծիքով՝ ո՞ր հմտությունների (գործիքներ պատրաստելը, կրակի օգտագործումը կամ լեզուն) շնորհիվ էր, որ նախամարդիկ իրենց միջավայրի նկատմամբ առավելագույն վերահսկողությունը հաստատեցին:

1.2 ԳԼՈՒԽ Նորքարիդարյան հեղափոխությունը և հայ ժողովրդի կազմավորման սկիզբը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Մարդկանց կողմից բույսերի և կենդանիների ընտելացումը մեծ ազդեցություն ունեցավ բնական աշխարհի վրա: Հազարամյակների ընթացքում մարդու տիրապետությունն ավելի ու ավելի փոփոխեց աշխարհը:

* ***Հաշվի առնելով ասվածը՝ դասարանում քննարկե՛ք ժամանակակից քաղաքակրթության մեջ ապրելու առավելությունները և պակասությունները:***

Մարդկանց կյանքում և պատկերացումներում առաջին խոշոր փոփոխությունները տեղի են ունեցել մոտ 12,000 տարի առաջ, երբ անցում կատարվեց Նոր քարի դար կամ Նեոլիթ: Անցումը Նեոլիթ մի քանի հազար տարի տևեց և միատեսակ չընթացավ աշխարհի բոլոր մասերում: Այն գրեթե համընկավ վերջին **սառցի դարաշրջանի** ավարտին, որից հետո երկիրը թեւակոխեց ընդհանուր տաքացման, տեղումների ավելացման և ավելի կայուն կլիմայական պայմանների ժամանակաշրջան:

Բառարան

Սառցի դարաշրջան | Կլիմայի ընդհանուր սառեցման շրջան, որը տևել է մի քանի միլիոն տարի (մոտ 1,6 մլն տարի առաջ - Ք. ա. 10-րդ հազարամյակ):

Նորքարիդրյան (նեոլիթյան) կամ գյուղատնտեսական հեղափոխություն | Մշակութային արմատական փոփոխություն, որը սկիզբ է առել մոտ 12,000 տարի առաջ: Երբեմն կոչվում է **նեոլիթյան անցում**:

Ընտելացում | Գործընթաց, որի միջոցով մարդիկ միտումնավոր կամ ակամա փոփոխում են բույսերի կամ կենդանիների բնական հատկանիշները՝ օժտելով դրանց անհրաժեշտ հատկանիշներով:

Ցեղ | Միևնույն տարածքում ապրող մի քանի տոհմերի կամ տոհմական համայնքների միավորում:

Նորքարիդարյան հեղափոխությունը

Մոտ 12,000 տարի առաջ աշխարհի որոշ մասերում մարդիկ կատարելագործեցին քարե գործիքները: Նրանք սովորեցին մշակել հողը՝ ուտելի բույսեր ստանալու համար բնության վրա հույս դնելու փոխարեն, իսկ կենդանիներին ընտելացնել՝ պարզապես որսալու փոխարեն: Մարդիկ այժմ ոչ միայն օգտագործում էին այն, ինչ գտնում էին բնության մեջ, այլև կարող էին սեփական սնունդ արտադրել: Այդպիսով՝ **յուրացնող հասարակությունից** անցում կատարվեց **արտադրող հասարակության:** Աստիճանաբար հավաքչությունը փոխարինվեց երկրագործությամբ, որի ազդեցությամբ էլ որսորդությունը փոխարինվեց անասնապահությամբ: Ընդհանուր առմամբ՝ Նորքարիդարյան դարաշրջանի ամենաբնորոշ նշաններն են գյուղատնտեսությունը, նստակեցությունն ու տները, արհեստագործությունը, հղկված քարե գործիքներն ու խեցեգործությունը:

Նորքարիդարյան հեղափոխության հետևանքները

Մննդի արտադրությունը նպաստեց **բնակչության աճին,** իսկ սննդի ավելցուկի արդյունքում զարգացավ **փոխանակումը:** Մեկուսացված տոհմական համայնքները միավորվեցին **ցեղերի** մեջ: Մարդիկ սկսեցին մշտական բնակավայրեր կառուցել և աստիճանաբար անցան **նստակեցության**: Գործիքներով աշխատելը մեծ հմտություն էր պահանջում, ուստի մարդիկ սկսեցին մասնագիտանալ տարբեր **արհեստների** մեջ: Նրանք սկսեցին բնակվել ավելի մեծ և կազմակերպված համայնքներում, որոնց մի մասն աստիճանաբար վերածվեց **քաղաքների:** Զարգացավ և ավելի համակարգվեց **կրոնը:**

Բնակչության աճը, պարենային պաշարները հաշվառելու և պահպանելու, ինչպես նաև պաշտպանության համար պատեր կամ պարիսպներ կառուցելու անհրաժեշտությունը շուտով հանգեցրին **գրերի ստեղծմանը:** Ի հայտ եկան նաև հմուտ **կառավարիչներ,** որոնց ծառայություններն անհրաժեշտ էին համայնքի գոյատևման համար: Մոտ 8,000 տարի առաջ ի հայտ եկան առաջին **քաղաքակրթությունները:** Շատ գիտնականներ քաղաքակրթությունը սահմանում են որպես բարդ մշակույթ, որն ունի վեց բնութագրիչ՝ **քաղաքներ, կառավարություն, կրոն, սոցիալական կառույց, գիր և արվեստ**: Առաջին քաղաքակրթությունները զարգացան գետերի հովիտներում, որտեղ մարդիկ կարող էին զբաղվել լայնածավալ երկրագործությամբ, որն անհրաժեշտ էր մեծ բնակչությանը կերակրելու համար: Հայտնի ամենավաղ քաղաքակրթությունը զարգացել է Շումերում՝ հարավային Միջագետքում, մոտ Ք. ա. 6500 թ.: Դրա առաջացումը ազդարարեց նաև **Բրոնզի դարի** սկիզբը:

U1 Ձայներ գիտությունից

ԳՈՐԴՈՆ ՉԱՅԼԴ
(1892-1957)

Օազիսի տեսություն

Եզրույթն առաջարկել է Ռաֆայել Փատելին 1908 թվականին, այնուհետև այն հանրահռչակել է Գորդոն Չայլդը 1928 թվականին: Ըստ Չայլդի՝ երբ կլիման ավելի չորային դարձավ, այդ չորությունը ստիպեց մարդկանց և կենդանիներին հավաքվել օազիսներում և գետերի հովիտներում: Մարդկանց, կենդանիների և բույսերի այս մերձեցումը նպաստեց ինչպես բնակչության աճին, այդպես և սերտ շփմանը, որի արդյունքում էլ մարդիկ ընտելացրին կենդանիներ և բույսեր՝ ոչ նպաստավոր վայրերում ևս գոյատևելու նպատակով:

Այնուամենայնիվ, այս տեսությունը հնագետների շրջանում քիչ աջակիցներ ունի այսօր, քանի որ հետագա ապացույցները ցույց են տալիս, որ հետսառցադաշտային շրջանում դարձել է ավելի խոնավ, այլ ոչ թե չոր:

Հայկական լեռնաշխարհի քաղաքակրթական օջախները

Նորքարիդարյան ժամանակաշրջանը Հայկական լեռնաշխարհում տևել է մոտ **Ք. ա. X-V հազարամյակներում:** Երկրագործության համեմատաբար վաղ

ի հայտ գալու արդյունքում Հայկական լեռնաշխարհը մեծ դեր է ունեցել կայծքարի, կաշվե կոշկեղենի և խաղողագործության տարածման գործում. տեխնոլոգիաներ, որոնք հետագայում կմշակվեն Հարավային Ասիայում և ի վերջո կտարածվեն դեպի Եվրոպա:

Հայկական լեռնաշխարհի նորքարիդարյան բնակավայրերը հիմնականում գտնվում են **Արարատյան դաշտում, Արաքսի, Արածանիի** և Հայաստանի մյուս մեծ ու փոքր գետերի բարեբեր հովիտներում: Նորքարիդարյան բնակավայրերից հայտնաբերված նյութերը հիմք են տալիս պնդելու, որ Հայկական լեռնաշխարհը երկրագործության և անասնապահության նախահայրենիքներից մեկն է: Հնագիտական և գենետիկական հետազոտությունները ցույց են տալիս, որ ժամանակակից հայերն անմիջական հետնորդներն են Հայկական լեռնաշխարհի նորքարիդարյան բնակչության:

Վիրտուալ ճանապարհորդություն Արենիի քարանձավում:

U2 Ձայներ գիտությունից

ՌՈԲԵՐՏ ԲՐԵԴՎՈՒԴ
(1907-2003)

Լեռնալանջերի տեսություն

Նկատառված են Հարավ-արևմտյան Ասիայի (Հայկական լեռնաշխարհի հարավ-արևմտյան) բարձրադիր շրջանները՝ ներառյալ Զագրոս լեռների ստորոտներն ու Տավրոսի լեռները, Միջագետքից անմիջապես հյուսիս (ներառյալ Հայոց Միջագետքը):

Եզրույթն առաջարկել է Ռոբերտ Բրեդվուդը 1948 թվականին՝ ի հակադրություն Գորդոն Չայլդի «օազիսի տեսության»: Ըստ նրա՝ նեոլիթյան հեղափոխությունը սկսվեց լեռնալանջերից, քանի որ այս տարածքների տեղումները բավականաչափ ջուր էին ապահովում, որ գյուղատնտեսությունը հնարավոր լիներ առանց ոռոգման: Նա նաև նկատեց, որ ընտելացված մշակաբույսերի վայրի նախնիներից շատերի, ինչպես նաև վայրի ոչխարների ու այծերի բնական միջավայրը լեռնալանջերն էին:

Հնագիտական հետագա հետազոտություններն ապացուցեցին Բրեդվուդի տեսության հավաստիությունը:

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Ներկայացրու**: Ի՞նչ տարբերություն «օազիսի տեսության» և «լեռնալանջերի տեսության» միջև:

2 | **Հիմնավորի՛ր**: Արդյո՞ք բարենպաստ պայմանները կարող են մարդկանց մղել ավելի սերտորեն համագործակցելու միմյանց հետ և մտածելու կյանքն ավելի բարվոք դարձնելու մասին:

3 | **Գնահատի՛ր**: Համացանցից գտի՛ր «լեռնալանջերի տեսության (Hilly Flanks Theory)» քարտեզը և ցո՛ւյց տուր, թե շփման ինչ գոտիներ կան այնտեղ նշված տարածքների և Հայկական լեռնաշխարհի միջև:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Այն, թե ինչպես ենք մենք այսօր ապրում, ուղղակիորեն կապված է նեոլիթյան հեղափոխության առաջընթացի հետ՝ կառավարման ձևերից մինչև մասնագիտացած բանվորներ, ապրանքների և սննդի առևտուր: Մարդիկ այս ընթացքում անդառնալիորեն փոխվեցին՝ անցնելով նստակյաց գյուղատնտեսության և կենդանիների ընտելացման: Աշխարհի որոշ մասերում, օրինակ՝ Աֆրիկայում և Հնդկաստանում, մարդկանց մեծ մասը դեռևս գյուղերում ապրող երկրագործներ են: Հայաստանում ևս երկրագործությունը կարևորագույն բնագավառ է:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր: Սառցի դարաշրջան • Նորքարիդարյան հեղափոխություն • Բրոնզի դար • Ցեղ • Քաղաքակրթություն

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Հիմնավորիր: Ինչո՞ւ սկզբում ի հայտ եկավ երկրագործությունը, հետո միայն անասնապահությունը:

բ. Պարզաբանիր: Ի՞նչ փոփոխություններ եղան անասնապահության և երկրագործության առաջացման արդյունքում:

գ. Ցույց տուր: Ի՞նչ կապ կա գյուղատնտեսության և քաղաքների առաջացման միջև:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչո՞ւ էին վաղ բնակավայրերը գտնվում գետերի մոտ:

2. Ընդհանրացրու: Ինչպե՞ս ինարավոր դարձավ նեոլիթյան (գյուղատնտեսական) հեղափոխությունը:

3. Մեկնաբանիր: Ինչպե՞ս ենք իմանում, որ Հայկական լեռնաշխարհը եղել է երկրագործության և անասնապահության նախահայրենիքներից մեկը:

Ա4 | Պատճառի և հետևանքի որոշարկում

Պատճենե՛ք ստորև ներկայացված գրաֆիկական պատկերը և դրանով ցույց տվեք երկրագործության առաջացման առնվազն մեկ պատճառ և առնվազն երեք հետևանք:

Պատճառներ	Երկրագործության առաջացում	Հետևանքներ

Գործնական առաջադրանք

Գրե՛ք փաստարկված շարադրություն՝ բացատրելով, թե ձեր կարծիքով որոնք էին քաղաքակրթության առաջացման կարևորագույն նախապայմանները (բաղադրիչները), և մանրամասնե՛ք, թե այդ նախապայմաններից (բաղադրիչներից) յուրաքանչյուրն ինչ հետևանքներ է առաջացնում: Համեմատություններ անցկացրե՛ք «Համաշխարհային պատմություն. հին աշխարհ» և «Հասարակագիտություն» դասագրքերի համապատասխան բաժինների հետ:

1.3 ԳԼՈՒԽ Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումները

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Ընտանեկան պատմություններն օգնում են մարդկանց հասկանալ իրենց սեփական պատմությունը: Նման պատմությունները կարող են պատմել, թե որտեղից են եկել ձեր ծնողները կամ նրանց նախնիները:

* ***Ըստ այդ պատմությունների՝ փորձե՛ք կազմել ձեր ընտանեկան տոհմածառը: Գրե՛ք և դասարանում ներկայացրե՛ք ըստ ձեզ ամենաուշագրավ ընտանեկան պատմություններից մի քանիսը:***

Բառարան

Հնդեվրոպական նախահայրենիք | վայր, որտեղից հնդեվրոպական լեզուները տարածվել են ողջ Եվրոպայում և Ասիայի մի մասում:

Հնդեվրոպական նախալեզու | հնդեվրոպացիների մայր լեզուն, որով խոսել են հնդեվրոպացիները:

Բրոնզի դար | պատմական ժամանակաշրջան, որն ընդգրկում է Ք. ա. մոտ 3300-1200 թթ.: Բնութագրվում է գործիքներ և զենքեր պատրաստելիս բրոնզի լայն կիրառմամբ, որոշ տարածքներում՝ գրի առկայությամբ:

Մասնավոր սեփականություն | սեփականության ձև, որի դեպքում արտադրության միջոցներն ու աշխատանքի արդյունքները պատկանում են մասնավոր անձանց:

Ազգերի կամ ժողովուրդների և նրանց լեզուների ծագման վերաբերյալ հետաքրքրությունն առաջացել է շատ վաղ ժամանակներից: Տարբեր ժամանակներում տարբեր բացատրություններ են տրվել դրանց վերաբերյալ, բայց դրանցից ոչ մեկն էլ վերջնական չէ, և առկա են տարբեր մոտեցումներ: Հայերի ծագման և վաղնջական պատմության հարցն ամենաշատ քննարկված հարցերից է. ժողովրդի ձևավորման վերաբերյալ կան մի քանի առասպելներ և տեսություններ: **Բալկանյան տեսության համաձայն** հայերի նախնիներն են բալկաններից Հայկական լեռնաշխարհ գաղթած **փռյուգիացի** գաղութարարները: Հայերի ծագման մասին մեկ այլ տեսակետ հիմնված է Պատմահայր Խորենացու հաղորդած առասպելի վրա: Այս մոտեցումը ենթադրում է հայ ժողովրդի՝ հիմնականում **տեղական** ձևավորման վարկածը: Այն, որ հայ ժողովրդի ձևավորումը տեղի է ունեցել տևական փոխազդեցությունների արդյունքում և Հայկական լեռնաշխարհի տարածքում, հաստատվում է նաև ժամանակակից **գենետիկական հետազոտությունների** արդյունքում: Իսկ հայերենը հնդեվրոպական լեզվաընտանիքի առանձին ճյուղ է:

Հնդեվրոպական նախահայրենիքն ու հայերը

Որտե՞ղ է գտնվել հնդեվրոպացիների **նախահայրենիքը**, ի՞նչ ուղղություններով են տարածվել մայր լեզվից տրոհված լեզուները. այս հարցերին պատասխանող տարբեր վարկածներ կան: Դրանք հիմնված են առասպելաբա-

նական, լեզվաբանական, հնագիտական, գենետիկական և այլ տվյալների վրա: Հետևելով Աստվածաշնչի տվյալներին՝ նախապես հնդեվրոպացիների նախահայրենիքը համարել են Հայկական լեռնաշխարհը՝ Արարատ լեռան լանջերը: Հետագայում առաջարկվեցին այլ տարածքներ ևս՝ Հնդկաստանից ու Միջին Ասիայից մինչև Արևմտյան Եվրոպա: Թեպետ հնդեվրոպական նախահայրենիքի հարցը դեռ վիճարկելի է, բայց կան առավել ընդունված մի քանի վարկածներ: Դրանցից են **«տափաստանային»** և **«հարավասիական (հայկական)»** վարկածները: Համաձայն *«տափաստանային»* վարկածի՝ հնդեվրոպական նախահայրենիքը գտնվել է մերձվոլգյան տափաստաններում, որտեղից էլ **Ք. ա. մոտ V հազարամյակից** մի քանի փուլով տարածվել են հնդեվրոպացիներն ու հնդեվրոպական լեզուները:

Մեկ այլ վարկած է *հարավասիականը («հայկականը»)*: Համաձայն դրա՝ հնդեվրոպացիների նախահայրենիքը գտնվել է Հայկական լեռնաշխարհը, Փոքր Ասիայի արևելյան շրջանները, Հյուսիսային Միջագետքը և Իրանական սարահարթի հյուսիս-արևմուտքն ընդգրկող մի ընդարձակ տարածքում: Հնագիտական, լեզվաբանական և գենետիկական տվյալները կարծեք թե հաստատում են այս վարկածը: Ըստ այդմ՝ Ք. ա. մոտ X հազարամյակից հնդեվրոպացիները տարածվել են տարբեր ուղղություններով: Նրանք ընտելացրել էին ձիերին, հայտնաբերել էին սռնանիվը և ստեղծել էին թեթև երկանիվ կառքը: Ծնորհիվ դրանց էլ տեղի ունեցավ հնդեվրոպացիների արագ տարածումը: Սկզբնապես խոսում էին մեկ՝ **հնդեվրոպական նախալեզվով,** իսկ նախահայրենիքից տարածվելուն զուգընթաց նրանց լեզուները սկսեցին տարբերվել: Առաջացան առանձին հնդեվրոպական լեզուները, որոնցից է և **հայերենը**, որը մայր լեզվից տրոհվել է Ք. ա. մոտ VIII հազարամյակում: Այսպիսով՝ թեպետ դեռ վիճարկվում է հնդեվրոպական նախահայրենիքի տեղադրության հարցը, բայց Հայկական լեռնաշխարհն այն տարածքն է, որտեղ տեղի է ունեցել հայ ժողովրդի կազմավորումը:

Բրոնզի դար

Ք. ա. մոտ 4000 - 3000 թվականներին որոշ տարածքներում արձանագրվեցին նոր զարգացումներ: Դրանք նշանակալի ազդեցություն ունեցան նեոլիթյան քաղաքակրթության վրա: Այսպես՝ շրջակա միջավայրի և դրա ռեսուրսների նկատմամբ մարդու վերահսկողությունը նոր մակարդակի հասավ **մետաղների** օգտագործմամբ: Պղինձն առաջին մետաղն էր, որն օգտագործվեց գործիքներ պատրաստելու համար: Ք. ա. մոտ 4000 թվականից հետո Արևմտյան Ասիայի (այդ թվում՝ Հայկական լեռնաշխարհի) արհեստավորները հայտնաբերեցին **բրոնզը** (պղնձի և անագի խառնուրդը)՝ մետաղ, որը շատ **ավելի կարծր և դիմացկուն էր, քան պղինձը**: Հարկավ, մարդիկ միանգամից անցում չկատարեցին **բրոնզի դար**. բրոնզի ներմուծումից հետո էլ նրանք շարունակում էին օգտագործել քարե գործիքներ ու զենքեր: Այնուամենայնիվ, բրոնզի լայնածավալ օգտագործումը պատմաբաններին մղել է Ք. ա. 3300 -1200 թվականներն անվանել բրոնզի դար:

Նայելով քարտեզին

Ենթադրվում է հնդեվրոպացիների երկու գաղթ. առաջինը՝ Ք. ա. մոտ 7,000 թ., երկրորդը՝ Ք. ա. մոտ 4,000 թ.

1. **Բացահայտիր քարտեզը:** Ի՞նչ ուղղություններով գաղթեցին հնդեվրոպացիները, և ինչո՞ւ նրանց լեզուները սկսեցին տարբերվել միմյանցից:
2. **Կիրառիր աշխարհագրական հմտություններդ:** Որոշ պատմաբանների կարծիքով որտե՞ղ է գտնվել հնդեվրոպացիների նախահայրենիքը, ի՞նչ վարկածներ կան:

Այս ժամանակաշրջանում աստիճանաբար կազմավորվեցին ավելի բարդ հասարակություններ: Գործընթացներից անմասն չմնաց Հայկական լեռնաշխարհը, որտեղ պետական կազմավորումների ձևավորումը տեղի էր ունենում համեմատաբար դանդաղ: Ստեղծվեցին ավելի մարտունակ բանակներ, ակտիվացան պատերազմները, հասարակությունը շերտավորվեց, առաջացավ **մասնավոր սեփականությունը:** Այդ ամենի մասին վկայում են բրոնզի դարի նշանավոր հնավայրերի՝ **Շենգավիթի, Մեծամորի** և **Լճաշենի** դամբարաններից պեղված տարատեսակ առարկաները: Դրանք պատմում են մի ինքնատիպ մշակույթի մասին, որն ընդգրկում էր ամբողջ Հայկական լեռնաշխարհն ու հարակից տարածքները և հայտնի է Շենգավիթյան կամ Կուր-Արաքսյան անվանումներով:

Վաղ պետական կազմավորումները

Հայկական լեռնաշխարհը բարդ էթնիկական կազմ ուներ և բազմալեզու էր: Սկսած Ք.ա. III-II հազարամյակներից՝ Հայկական լեռնաշխարհի հին հարևան երկրների սկզբնաղբյուրները հիշատակում են լեռնաշխարհի բազում երկրներ, ցեղեր և ցեղախմբեր:

Հայկական լեռնաշխարհում վաղ պետականկազմավորումներիցհայտնի են **Արատտան, Հայասան, Նաիրին, Արմե-Շուպրիան և Ուրուատրին**: Ավելի ուշ՝ Ք. ա. I հազարամյակում, եղել են ևս երկու հզոր ցեղային կազմավորումներ՝ **Դիաուխին և Էթիունին**: Բոլոր այս վաղ պետականությունները կանգնած էին մի քանի խնդիրների առջև՝ դժվար հաղթահարելի լեռնաշղթաներ, կլիմայական կտրուկ փոփոխություններ, սակավահողություն, աննավարկելի գետեր և այլն: Դժվարություններ, որոնք դանդաղեցնում էին լեռնաշխարհի ցեղերի միավորման և վաղ պետական կազմավորումների ստեղծման գործընթացը:

Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումներից է համարվում շումերական սկզբնաղբյուրներում հիշատակված առասպելական **Արատտան:** Երկիր, որը լի էր ոսկով, արծաթով, լաջվարդով և այլ թանկարժեք նյութերով: Այն գոյություն է ունեցել մոտ Ք. ա. XXVIII-XXVII դարերում: Որոշ գիտնականներ կարծում են, որ Արատտան գտնվել է Հայկական լեռնաշխարհի հարավն ու հյուսիսային Միջագետքն ընդգրկող տարածքում: Այդուամենայնիվ, Արատտայի տեղայնացումը դեռ վարկածային է:

Ք. ա. XIV-XIII դդ. խեթական սկզբնաղբյուրներում հիշատակվում է **Հայասա** երկրի մասին (խեթերեն՝ **«հայերի երկիր»**): Այն սահմանակից էր խեթական կայսրությանը և գրեթե մշտապես հակամարտության մեջ էր նրա հետ: Հետազոտողների կարծիքով՝ հենց այդ երկրի անվանումից է և **«հայ»** ինքնանվանումը:

Ք. ա. XIII-X դդ. ասորեստանյան սկզբնաղբյուրները հիշատակում են նաև **Նաիրի երկրի** մասին, որը տեղադրվում է Վանա լճի և Եփրատի հովտի միջև: Այն

S Ինչպես ձիերը փոխեցին պատմության ընթացքը

Ձիու բրոնզի սանձ, Ք.ա. 26-25-րդ դդ. Պատմամշակութային ժառանգության գիտահետազոտական կենտրոն

Ձիու ընտելացումը մոտ 5500 տարի առաջ հին աշխարհի ամենակարևոր տեխնոլոգիական նորարարություններից մեկն է: Ձիաուժի օգտագործմամբ քաղաքական, տնտեսական և սոցիալական հարաբերությունները ամբողջ հին աշխարհում փոխվեցին: Ձիերն ազդեցին առևտրի, պատերազմի և գաղթի ճանապարհների վրա:

Չնայած մարդկության պատմության մեջ ձիերի խաղացած կարևորագույն դերին՝ տնային ձիերի ծագումը մնում է անորոշ: Ենթադրվում են ընտելացման մի քանի կենտրոններ: Մրցակից վարկածներն են պոնտական-կասպիականը և անատոլիականը: Ըստ այդմ՝ Հայկական լեռնաշխարհը ևս կարող է ձիերի ընտելացման կենտրոն լինել: Այդ մասին է վկայում նաև Մոխրաբլուրում (Հայաստանում) պեղված հովատակի՝ մաշված ատամներով ծնոտը (Ք. ա. 4,000-3,500 թթ.), ինչպես նաև վերևում պատկերված ձիու բրոնզե սանձը (Ք. ա. 2,000-ական թթ.), որն առկա է ամբողջ լեռնաշխարհում:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ եք կարծում, ինչպե՞ս են ձիերը փոխել պատմության ընթացքը: Նշե՛ք պատմության ընթացքը փոխած ևս երկու գյուտ (օրինակներով):

ցեղային միություն էր, որի մեջ մտնում էին մի քանի տասնյակ ցեղեր: Նաիրյան երկրները մշտական պայքարի մեջ են եղել Ասորեստանյան թագավորության հետ:

Այդ ուժային կենտրոնների դիմադրությունների և համագործակցությունների արդյունքում աստիճանաբար ձևավորվում է հայ ժողովուրդը:

Քառանիվ կառք
(Ք. ա. 15-14-րդ դդ., Լճաշեն)
Հայաստանի պատմության թանգարան

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Դաշինքները Հայկական լեռնաշխարհի վաղ պետական կազմավորումների համար որոշակի պաշտպանություն են ապահովել: Դրանք օգնել են պաշտպանել և առաջ մղել պետական կազմավորումների շահերը, ինչպես նաև եղել են պատերազմները զսպող միջոց: Դրանք հատկապես կարևոր էին Հայկական լեռնաշխարհի փոքր կամ պակաս հզոր պետական կազմավորումների համար: Այսօր ևս պետությունները կարիք ունեն քաղաքական, ռազմական կամ տնտեսական դաշինքների՝ մրցակցություններին դիմանալու, ինչպես նաև կայունություն և զարգացում ապահովելու համար:

Գործնական առաջադրանք

Դասընկերների հետ վերհիշե՛ք հայ ժողովրդի ծագման վերաբերյալ հայկական և հունական առասպելները և փորձե՛ք դրանք համեմատել գիտական վարկածների (Տափաստանային և Հարավասիական) հետ: Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան այդ առասպելների և գիտական վարկածների միջև:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Հնդեվրոպական նախահայրենիք • «Տափաստանային» և «Հարավասիական (հայկական)» վարկածներ • մասնավոր սեփականություն • Արատտա • Հայասա • Նաիրի

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ի՞նչ գիտական վարկածներ գիտեք Հնդեվրոպական նախահայրենիքի մասին, և ի՞նչ տեղ ունի դրանցում Հայկական լեռնաշխարհը:

բ. Բացատրիր: Ինչպե՞ս ազդեց մետաղների օգտագործումը մարդու և բնության հարաբերությունների վրա:

գ. Պարզաբանիր և վերլուծիր: Ի՞նչ դեր խաղաց աշխարհագրությունը Հայկական լեռնաշխարհում վաղ պետական կազմավորումների ստեղծման մեջ:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչո՞ւ էր բրոնզի գյուտն այդքան կարևոր գյուղատնտեսության, ռազմարվեստի և այլնի համար: Բերե՛ք օրինակներ:

2. Ընդհանրացրու: Ինչի՞ շնորհիվ հնդեվրոպական ժողովուրդներին հաջողվեց արագ տարածվել տարբեր ուղղություններով:

3. Գնահատիր: Նշե՛ք և հիմնավորե՛ք լեզվի, անիվի և ձիերի ընտելացման գյուտերից յուրաքանչյուրի ազդեցությունը մարդկանց կյանքում: Դրանցից ո՞րն է ավելի նշանակալի և ինչո՞ւ:

Ա4 | Տեղեկատվության հաջորդականության որոշարկում

Արատտա

ժամանակագրական առանցք

Հայասա

Նաիրի

Ստեղծե՛ք ժամանակացույց՝ Հայկական լեռնաշխարհում վաղ պետական կազմավորումների առաջացմանը և անկմանը հետևելու համար:

Օգտագործե՛ք տրված ժամանակացույցը որպես ուղեցույց՝ ավելացնելով համապատասխան տարեթվերը:

Այդ վաղ պետականությունների միջև ժամանակագրական ի՞նչ համընկնումներ կան, և ի՞նչ կարելի է դրանից եզրակացնել:

1.4 ԳԼՈՒԽ Վանի թագավորության հիմնադրումն ու ամրապնդումը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Ռազմական բախումները կազմում էին Հայկական լեռնաշխարհի ցեղային դաշնությունների կյանքի անբաժան մասը: Նրանք մշտապես զգում էին ավելի հզոր հարևանների (Խեթական թագավորություն, Ասորեստան) ազդեցությունը:

* ***Ի՞նչ եք կարծում, ավելի մեծ և ուժեղ պետություններն այսօր ինչպե՞ս են ազդում փոքր պետությունների վրա, և արդյո՞ք փոքր պետությունները չեն կարող ազդել մեծ պետությունների վրա:***

Վանի թագավորության կազմավորման նախադրյալների վերաբերյալ տարբեր տեսակետներ կան: Նման նախադրյալներ են համարվում առևտրային ուղիների փոփոխությունը և ասորեստանյան հարձակումների աճին դիմագրավելու անհրաժեշտությունը: Այդ հարձակումները կարող էին լեռնաշխարհի ցեղային միություններին մղել համագործակցելու կենտրոնական ղեկավարության ներքո: Այսպիսով՝ Ք. ա. I հազարամյակի սկզբին **Նաիրի երկրների** դաշնությունը, չնայած աշխարհագրական խոչընդոտներին, ի վերջո հանգում է կենտրոնաձիգ իշխանության գաղափարին: Եվ արդեն Ք. ա. IX դարի կեսերին Նաիրյան երկրների միավորմամբ ստեղծվում է միասնական պետություն: Այն առավել հայտնի է իր ասորեստանյան **Ուրարտու (Արարատ)** անունով: Ուրարտուի արքաներն իրենց երկիրը կոչում էին **Բիայնիլի,** որից էլ առաջացել է Վան քաղաքի անվանումը: Քաղաքի անունով էլ ստեղծված նոր պետությունը կոչվում է նաև **Վանի թագավորություն**: Այն գտնվել է Հայկական լեռնաշխարհում՝ ընդգրկելով **Վանա, Ուրմիո և Սևանա լճերի** ավազաններն ու դրանց հարակից ընդարձակ տարածքները:

Բառարան

Երկաթի դար | պատմական ժամանակաշրջան, որն ընդգրկում է Ք.ա. մոտ 1200-550 թթ.: Բնութագրվում է գործիքներ և զենքեր պատրաստելիս երկաթի լայն կիրառմամբ:

Սեպագիր | ամենավաղ գրային համակարգերից մեկը: Անվանումը ստացել է գրելու ձևից՝ կավի սալիկի կամ ժայռերի վրա արված սեպաձև նշաններից:

Վերափոխություն (ռեֆորմ) | հասարակական կյանքի որևէ ոլորտի (տնտեսական, ռազմական, վարչական, կրոնական, քաղաքական և այլն) ոչ արմատական վերափոխում, փոփոխություն:

Ասուրերեն (ասորեստաներեն) | աքքադերենի լեզվական ճյուղ, որով խոսում և գրում էին հին Ասորեստանում: Ասուրա-բաբելական սեպագիր արձանագրությունների լեզուն:

Վանի թագավորության կազմավորումը

Վանի թագավորության՝ պատմության ասպարեզ մտնելը համընկավ **երկաթի դարի** բուռն զարգացման ժամանակաշրջանին: Հին աշխարհում արդեն հռչակ էր վայելում Հարավ-արևմտյան Ասիայի հյուսիսում երկաթի արտադրու-

թյունը: Եվ պատահական չէ, որ ասորեստանյան աշխարհակալները դեպի Նաիրի երկրներ կատարած իրենց արշավանքների ընթացքում ավար էին վերցնում երկաթի ահռելի պաշարներ: Նրանց ռազմարշավները պայմանավորված էին նաև երկաթով հարուստ տարածքներն իրենց հսկողության տակ վերցնելու նպատակով:

Երկաթի կիրառումը տարածաշրջանում վճռորոշ դարձավ Վանի թագավորության ի հայտ գալով, որտեղ երկաթն ի սկզբանե լայն կիրառություն ուներ: Երկաթի հանքեր կային հատկապես երկրի կենտրոնական և արևմտյան հատվածներում: Թագավորության զինվորները կրում էին երկաթե թրեր և երկաթե ծայրով նիզակներ: Դա հնարավորություն տվեց ավելի արդյունավետորեն պայքարելու հակառակորդ Ասորեստանի դեմ, որի զորքը ևս զինված էր երկաթյա զենքերով: Երկաթի կիրառումը (երկաթե խոփեր, բահեր, մանգաղներ և այլն) մեծ առաջընթաց ապահովեց նաև գյուղատնտեսության մեջ:

Այսպիսով՝ Վանի թագավորության ամրապնդմամբ ամբողջ Հայկական լեռնաշխարհն առաջին անգամ քաղաքականապես միավորվում է: Պետության առաջին հայտնի թագավորը **Արամուն (Արամեն)** է, որի մասին հիշատակված է Ասորեստանի արքա **Սալմանասար III-ի (Ք.ա. մոտ 859–824)** արձանագրության մեջ: Հերթական արշավանքի ժամանակ վերջինս ավերում է Արամուի թագավորանիստ քաղաք **Արզաշքուն:**

Նոր մայրաքաղաք՝ Տուշպա-Վան

Ասորեստանյան զորքերի կողմից մայրաքաղաքի ավերումից հետո անհրաժեշտություն էր առաջացել կառուցելու նոր մայրաքաղաք: Դա իրագործում է **Սարդուրի I (Ք.ա. մոտ 835-825)** արքան, որն արդեն իրեն կոչում էր *«Մեծ արքա, հզոր արքա, տիեզերքի արքա, Նաիրիի արքա»*: Նա Վանա լճի արևելյան ափի վիթխարի ժայռի լանջին կառուցեց **Տուշպա** մայրաքաղաքը, որը դարձավ թագավորության տնտեսական և քաղաքական կենտրոնը: Տուշպայի դերակատարումն այնքան նշանակալի էր, որ Իշպուինիի և Մենուայի համատեղ գահակալության շրջանից սկսած՝ *«Տուշպա քաղաքի կառավարիչ»* տիտղոսը դարձավ արքայական տիտղոսաշարի անբաժան մասը:

Հաջողությամբ շարունակելով պայքարը՝ Սարդուրին նաև կարողացավ չեզոքացնել ասորեստանյան սպառնալիքն ու զգալիորեն ընդլայնեց պետության սահմանները դեպի արևելք: Այս արքայի ժամանակաշրջանից արդեն սկսվեց Վանի թագավորության վերելքը:

Սարդուրի արքայի մյուս կարևոր նորարարությունն էր **սեպագրի** ներմուծումը: Վանի թագավորությունից մեզ հասած առաջին սեպագիր արձանագրությունները հայտնի են Սարդուրիի անունով և գրված են **ասուրերեն:**

Պետությունը վերափոխությունների խնդրի առջև

Վանի թագավորությունը դեպի ծով ելք չունեցող տերություն էր, և դա որոշակի խնդիրներ էր ստեղծում: Պետությունը կախված էր իր հարևանների հետ առևտրային կապերից և ուղիներից: Հարևան երկրները տնտեսական կամ ռազմական պատճառներով արգելափակում էին ելքը դեպի ծով կամ իրենց տարածքով տարանցումը: Պետության քաղաքական կայունությունը և առևտրային ուղիները պաշտպանելու համար անհրաժեշտ էր ամրապնդել պետության անվտանգությունը: Պետությունը կանգնած էր **ռազմական, տնտեսական, սոցիալական և կրոնական** վերափոխություններ անցկացնելու խնդրի առջև, որոնց և ձեռնամուխ եղան **Իշպուինի (Ք.ա. մոտ 825-810)** և **Մենուա (Ք.ա. մոտ 810-786)** արքաները:

Առաջնային խնդիրներից էր պետության սահմանների կայունացումը: Իշպուինին և Մենուան **բանակը** վերազինեցին պողպատե և երկաթե զենքերով, իսկ բրոնզե հանդերձանքը նվիրեցին տաճարներին: Աշխարհազորին զուգահեռ ստեղծվեց **կանոնավոր բանակը:**

Հաջորդ կարևոր քայլն ասուրերեն սեպագրերի կիրառման մերժումը և **տեղական սեպագրերի** ներմուծումն էր: Պետության կենտրոնացման և թագավորական իշխանության ամրապնդման նպատակով Իշպուինին և Մենուան քայլեր ձեռնարկեցին նաև **համապետական կրոնի** հաստատման ուղղությամբ: **Խալդի** աստվածը հռչակվեց երկրի գերագույն աստված: Նրա պաշտամունքի կենտրոնը գտնվում էր **Արդինի-Մուսասիրում**, որը նվաճվել էր մինչ այդ:

S Պատմությունը և մարդը

ԱՐՉԻԲԱԼԴ ՍԵՅՍ
(1845-1933)

Վանյան սեպագրերի մասին առաջին տեղեկությունները հայտնի են Մովսես Խորենացու «Հայոց Պատմություն» գրքից, որտեղ նա դրանց ստեղծումը վերագրում է Ասորեստանի թագուհի Շամիրամին: Առաջին անգամ դրանք հայտնաբերել է գերմանացի գիտնական Ֆրիդրիխ Շուլցը 1827 թվականին: Սկզբնական շրջանում գիտնականները կարծում էին, թե դրանք ասուրական արձանագրություններ են: Բայց շուտով պարզ դարձավ, որ դրանց մեծ մասը գրված է անծանոթ լեզվով:
Միայն 1880 թվականին Ֆրանսիացի ասուրագետ Ստանիսլավ Գյուարը կռահեց, որ արձանագրությունների եզրատակիչ տողերը կրկնվող անեծքի բանաձև են, և ասորեստանյան զուգահեռ բնագրերի համադրությամբ վերծանեց մի քանի բառեր ու քերականական դարձվածքներ: Գյուարի տորձառությունը հաջողությամբ ավարտին հասցրեց անգլիացի աշշուրագետ Արչիբալդ Սեյսը: 1882 թվականին նա հրատարակեց այն ժամանակ հայտնի արձանագրությունները՝ տալով դրանց հնարավոր թարգմանություններն ու քերականության ընդհանուր ուրվագիրը:

ՎԵՐԼՈՒԾԻՐ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆԸ
Ինչպե՞ս հնարավոր եղավ վերծանել վանյան սեպագրերը:

Պետության ընդլայնումը

Պետությունը հզորացնելու նպատակին հետամուտ՝ Իշպուինին և Մենուան ռազմարշավներ ձեռնարկեցին տարբեր ուղղություններով: Հյուսիսում և հարավարևելքում պետության սահմանները զգալիորեն ընդլայնվեցին՝ ապահովելով ոսկու և երկաթի լրացուցիչ պաշարներ: Այս ուղղություններով պետության սահմաններն ընդլայնելն ինչ-որ չափով նաև հեշտ էր, քանի որ դրանք հիմնականում դուրս էին Ասորեստանի հսկողությունից և համեմատաբար թույլ զարգացած: Ձևավորված հսկայական թագավորությունը կարիք ուներ հաղորդակցական կապերի կարգավորման: Կառուցվեցին մի շարք ամրոցներ, որոնք նախատեսված էին ինչպես պաշտպանության, այնպես էլ հարձակման համար:

Փուլ առ փուլ իրագործված այս և այլ վերափոխությունների արդյունքում աստիճանաբար հավասարակշռվում են Վանի թագավորության և Ասորեստանի ուժերը: Այդպիսով Վանի արքաները մարտահրավեր են նետում Ասորեստանին՝ ընդհուպ մոտենալով նրա սահմաններին:

Վանի բերդ
(Ք. ա. 9-7-րդ դդ.)

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Նորաստեղծ Վանի թագավորությունը բախվեց պետության սահմանների կայունացման, հաղորդակցական ուղիների վերականգնման և ամրացման, թագավորական իշխանության ամրապնդման խնդիրներին: Խիստ կարևոր էր խնդիրները գիտակցելը, ապա դրանց համարժեք լուծումներ առաջարկելը: Խնդիրները լուծվում էին լավ մտածված վերափոխությունների միջոցով: Ժամանակակից կառավարությունները ևս բախվում են նման խնդիրների և պարբերաբար կարիք ունեն քաղաքական, ռազմական, տնտեսական կամ այլ վերափոխությունների՝ ավելի մրցունակ, կայուն, լավ կառավարվող, ճկուն և միասնական համակեցություն ապահովելու համար:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Բիայնիլի-Ուրարտու • Տուշպա • Սալմանասար III • Սարդուրի I • Իշպուինի • Մենուա
Երկաթի դար • Սեպագիր • Վերափոխություն

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ե՞րբ է ստեղծվել Վանի թագավորությունը: Ի՞նչ այլ անուններով է այն հայտնի:

բ. Բացատրիր: Ի՞նչ դեր ուներ երկաթը թագավորության կյանքում, ինչպե՞ս էր այն նպաստում թագավորության կայացմանը:

գ. Ներկայացրու և վերլուծիր: Ի՞նչ միջոցներ ձեռնարկեցին Վանի արքաները՝ երկիրը միավորելու, ընդլայնելու և կայունացնելու համար: Ինչո՞ւ:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ եք կարծում, իրագործված վերափոխություններից (նոր մայրաքաղաքի հիմնում, բանակի զարգացում, սեպագրերի ներմուծում, կրոնի միասնականացում) յուրաքանչյուրն ի՞նչ նշանակություն կարող էր ունենալ մարդկանց և պետության համար:

2. Ընդհանրացրու: Ինչպե՞ս հաջողվեց Վանի թագավորության արքաներին արագ սազմակերպվել և հակակշռել իրենց հակառակորդ պետությանը՝ Ասորեստանին:

3. Գնահատիր: Նշե՛ք և հիմնավորե՛ք, թե Վանի թագավորության արքաների իրագործած վերափոխություններից որն էր ավելի առաջնային և ինչու:

Ա4 | Փոփոխություն և շարունակականություն

Պատկերացրե՛ք, որ դուք Վանի թագավորության արքաներից մեկն եք: Ընտրե՛ք այս բաժնում քննարկված խնդիրներից մեկը, որի ուղղությամբ վերափոխություններ եք ծրագրել: Պատրաստե՛ք պաստառ, որով կհիմնավորեք ձեր ձեռնարկած վերափոխությունների դրական և հեռանկարային լինելը:

Ի՞նչ եք կարծում, հնարավո՞ր է, որ այդ ժամանակներում վերափոխությունները դրական ազդեցություն ունենային հասարակության բոլոր շերտերի համար (յուրաքանչյուր շերտի համար հիմնավորեք առանձին):

Գործնական առաջադրանք

Դասընկերոջ հետ «Համաշխարհային պատմություն» առարկայի դասընթացից դո՛ւրս գրեք ձեզ հայտնի արքաների իրականացրած վերափոխություններից և փորձե՛ք դրանք համեմատել Վանի թագավորության արքաների կողմից իրագործված վերափոխությունների հետ: Նշե՛ք դրանց ընդհանրություններն ու տարբերությունները:

1.5 ԳԼՈՒԽ Վանի թագավորության վերելքն ու անկումը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Վանի թագավորության ընդլայնումը փոխեց նաև ուժերի հավասարակշռությունը տարածաշրջանում: Տերության միասնականությունը պահպանելու համար անհրաժեշտ էին ուժեղ բանակներ և խելացի առաջնորդներ: Ժամանակի ընթացքում, սակայն, խախտվեց երկրի հավասարակշռությունը, և այն փլուզվեց:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր, թե արդյո՞ք կայսրությունները (կամ պետությունները) բացառապես ռազմական ուժին պետք է ապավինեն: Ի՞նչ ես կարծում, որո՞նք են արդյունավետ կառավարման բաղադրիչները: Ըստ կարևորության՝ դասակարգի՛ր քո առանձնացրած բաղադրիչները: Ի՞նչ տեղ կզբաղեցնի քո կազմած ցանկում ռազմական ուժը:***

Ք. ա. IX դարի վերջից Ասորեստանում սկսվեցին պարբերական խռովություններ, որոնք մեծապես սահմանափակեցին նրա նվաճողական հնարավորությունները: Բացի մի քանի պատահական արշավանքներից՝ Ասորեստանը միառժամանակ խոշոր հարձակումներ չձեռնարկեց ո՛չ դեպի արևմուտք և ո՛չ էլ դեպի հյուսիս: Այդ ընթացքում սկսվեց Վանի թագավորության ընդարձակման շրջանը: Այն արդեն պատրաստ էր վճռական ճակատամարտի մեջ մտնելու Ասորեստանի հետ՝ Արևելյան Ասիայում առաջնորդության, ինչպես նաև Միջերկրական ծովի արևելյան կողմով անցնող հիմնական առևտրային ուղիներում գերիշխանության համար:

Բառարան

Կայսրություն | քաղաքական միավոր է, որը կազմված է տարբեր պետություններից և ժողովուրդներից: Սովորաբար ստեղծվում է նվաճումների արդյունքում:

Բեհիսթունյան արձանագրություն | Աքեմենյան Պարսկաստանի Բեհիսթուն ժայռի վրա փորագրված (Ք. ա. 523-521 թթ.) եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և բաբելոներեն) տեքստ:

Կայսրություն կերտողները. Արգիշտի I և Սարդուրի II

Վանի թագավորության տարածքային ամենամեծ ընդլայնման շրջանը համընկնում է Արգիշտի I-ի և նրա որդու՝ Սարդուրի II-ի գահակալության հետ: Պետության ծավալումը կատարվեց ռազմական կազմակերպվածության բարձր մակարդակի և թարմացված սպառազինության միջոցով:

Արգիշտի I (786-764) արքան, գահ բարձրանալով, շարունակեց հոր ակտիվ նվաճողական քաղաքականությունը հատկապես *հյուսիսային* ուղղությամբ: Այս տարածքները, բացի ռազմական նշանակությունից, պետության համար տնտեսական մեծ նշանակություն ունեին: Ք. ա. 782 թ. Արգիշտիի զորքերն անցան Արաքս գետը, հաստատվեցին Սևանի ավազանում: Այս տարածաշրջանում ամրապնդվելու նպատակով նույն թվականին կառուցվեց **Էրեբունի**

U1 Ձայներ անցյալից

Իշպուինիի վանյան (ուրարտերեն) լեզվով գրված արձանագրություններից (Վան)

«Խալդի տիրոջն իր Իշպուինի Սարդուրորդին (և) Մենուա Իշպուինորդին Խալդյան տաճարը կառուցեցին: Խալդյան զորությամբ Իշպուինի Սարդուրորդին և, **(որ) արքա (է) հզոր, արքա մեծ, արքա Բիաինիլի (երկրի), իշխանը Տուշպա քաղաքի**, հաստատեց կարգ – Ցուրաքանչյուր (?) ամսում (?) (մեկ) ուլ Խալդիին թող ողջակիզեն, (մեկ) եզ Խալդիին թող զոհաբերեն, (մեկ) կով՝ Արուբանիին, (մեկ) ոչխար՝ Խալդյան դարպասներին, (մեկ) ոչխար՝ Խալդյան զենքերին»: **(Աշոտակերտից)**:

քաղաք-ամրոցը: Ռազմական գործողությունների մյուս կարևոր ուղղությունները *հարավային և արևմտյան* ուղղություններն էին: Այս արշավանքները ևս պսակվեցին հաջողությամբ, իսկ դա նշանակում էր շահերի բախում անմիջապես Ասորեստանի հետ: Արդյունքում Ասորեստանը զրկվեց փոքրասիական երկաթի և այլ մետաղների հանքավայրերից, ինչպես նաև հիմնական առևտրային ուղիները վերահսկելու հնարավորությունից: Ուշագրավ է, որ Արգիշտիի կառավարման տարիներին ռազմական արշավանքները նախկինի պես տարին մեկ անգամ չէին լինում. միևնույն տարում անգամ մի քանի ռազմարշավ էր կազմակերպվում, ընդ որում՝ միաժամանակ տարբեր ուղղություններով: Սա ևս հզորության ցուցանիշ է: Մի շարք ռազմական արշավների միջոցով թագավորությունը կլանեց նոր տարածքներ: Ք.ա. VIII դարում վերահսկողություն սահմանվեց Հայկական բարձրավանդակի տարածքի մեծ մասի վրա՝ Եփրատ գետից մինչև Սևանա լիճը: Այդուհետ, մի տևական շրջան, Վանի թագավորությունը տարածաշրջանի ուժեղագույն պետությունն էր, որն արդեն վերածվել էր **կայսրության:**

Վանի տերությունն աննախադեպ վերելքի հասավ և տարածքային հսկայական աճ արձանագրեց **Սարդուրի II (Ք.ա. 764-735)** արքայի օրոք: Դա արտացոլվեց արքայի տիտղոսաշարում: Սարդուրի II-ը միաժամանակ կրում էր **«արքայից արքա»** և **«երկրների արքա»** տիտղոսները: Տևական մի շրջան Վանի թագավորության գերիշխանությունն Արևելյան Ասիայում հակազդեցության չէր հանդիպում: Սակայն Մերձավոր Արևելքում քաղաքական իրավիճակը շուտով փոխվեց, երբ Ասորեստանում գահ բարձրացավ **Թիգլաթպալասար III** արքան:

Վերաբնակեցումների քաղաքականությունը

Վանի թագավորության նվաճողական քաղաքականությունը միշտ չէ, որ հարթ էր ընթանում. հաճախ հանդիպում էր տեղական կատաղի դիմադրության: Դրան հակազդելու համար դեռ Իշպուինի արքայի ժամանակներից

Նայելով քարտեզին

Վանի թագավորության սահմանները Ք. ա. 743-700 թթ.

1. Բացահայտիր քարտեզը: Վանի թագավորության ընդարձակումն ի՞նչ մարտահրավերների առջև էր կանգնեցնում Ասորեստանին: Ի՞նչ հետևանքներ կարող էր դա ունենալ Ասորեստանի համար:

2. Կիրառիր աշխարհագրական հմտություններդ: Ինչո՞ւ Վանի թագավորությունն ավելի հիմնավոր հաստատվեց հատկապես Հայկական լեռնաշխարհի հյուսիսում:

Վանի թագավորները կիրառում էին նվաճված բնակչության զանգվածային տեղափոխությունների քաղաքականությունը՝ մարդկանց վերաբնակեցնելով տերության այլ տարածքներում: Վանի արքաների թողած արձանագրությունների մոտավոր տվյալներով՝ տերության գոյության ընթացքում գերեվարված կամ վերաբնակեցված բնակչության թիվը հասնում է շուրջ 700 հազար մարդու: Ընդ որում՝ դրանից շուրջ 500 հազարը եղել է Հայկական լեռնաշխարհի ներքին շրջաններից տեղահանված բնակչությունը: Այսպիսով՝ հարկադիր տեղահանումները կամ վերաբնակեցումները նվաճված ժողովուրդների նկատմամբ վերահսկողությունը պահպանելու միջոց էին:

Հարկադիր վերաբնակեցումներն ունեին այլ նպատակներ ևս: Այդպիսի վերաբնակեցումներով փորձում էին նպաստել գյուղատնտեսական տեխնոլոգիաների տարածմանը կամ նոր հողերի մշակմանը: Ավելի կարևոր նպատակ էր թագավորության ժողովրդագրական և լեզվական միասնացման խնդրի լուծումը: Դրա արդյունքում ձևավորվեց ավելի միատարր հասարակություն:

Այսպիսով՝ վերաբնակեցումներն ինքնանպատակ չէին. կառավարությունը մանրակրկիտ ծրագրել էր դրանք՝ հնարավորինս արդյունավետ դարձնելու համար: Կայսերական կառավարիչները ծրագրում էին բնակչության տեղա-

փոխությունները՝ հաշվի առնելով քաղաքական, տնտեսական և մշակութային հանգամանքները: Այդ կերպ ամրապնդվում էր երկրի քաղաքական միասնությունը, ճնշվում էին հնարավոր ապստամբությունները:

Թագավորության թուլացումն ու անկումը

Ք.ա. 745 թ. Ասորեստանում գահ բարձրացավ **Թիգլաթպալասար III** արքան: Վերջինս մի շարք վերափոխությունների շնորհիվ կարողացավ կրկին ուժի կանգնեցնել Ասորեստանը: Նրա վերափոխությունների մեջ կարևոր էր ռազմական ուղղությունը: Բանակի գլխավոր ուժը դարձավ մշտական զորքը՝ «արքայական գունդը», որը պահվում էր կենտրոնական իշխանության միջոցներով: Ասորեստանի և Վանի թագավորության միջև բախումն անխուսափելի էր: Սարդուրի II-ը պարտություն կրեց և կորցրեց վերահսկողությունը հարավային ու հարավարևմտյան նահանգների և կարևոր առևտրային ուղիների նկատմամբ:

Նրա իրավահաջորդ **Ռուսա I-ը (Ք.ա. 735-713)** ներքին և արտաքին պայքարի դժվարին պայմաններում միաժամանակ կարողացավ վերականգնել Վանի թագավորության սասանված ուժն ու իշխանությունը: Արքան ստիպված էր պայքարել երեք ճակատով՝ կենտրոնախույս ուժերի, կիմերական ցեղերի ներխուժումների և ասորեստանյան սպառնալիքի դեմ միաժամանակ: Զգույշ քաղաքականություն վարելով՝ Ռուսան միաժամանակ խուսափեց Ասորեստանի հետ առճակատումից, մեծ կորուստներով շեղեց կիմերական արշավանքների ուղին և վերամիավորեց երկիրը:

Սակայն Ասորեստանի նոր արշավանքը չուշացավ: **Ք.ա. 714 թ.** Ասորեստանի **Սարգոն II** արքան մեծ բանակով ներխուժեց Վանի թագավորություն: Վճռական ճակատամարտում Ռուսան պարտություն կրեց: Ամենամեծ կորուստը **Մուսասիրի** գրավումն էր ու Խալդիի տաճարի թալանը: Բայց չնայած պարտությանը՝ Վանի թագավորությունը չկործանվեց: Ընդհակառակը, հաջորդ արքաներին հաջողվեց վերականգնել թագավորության տարածքները՝ վերանվաճելով նաև Մուսասիրը: Իսկ քանի որ թե՛ Վանի թագավորության, թե՛

U2 Ձայներ անցյալից

Սարդուրի I-ի ասուրերեն արձանագրություններից (Վան)

«Սարդուրիի արձանագրությունը, որդու Լութիպրիի, **մեծ արքայի, հզոր արքայի, տիեզերքի արքայի, Նաիրիի արքայի**, արքայի, որին հավասարը չկա, **զարմանահրաշ հովվի**, (որ) չի վախենում կռվից, արքայի, որ ենթարկում է անհնազանդներին: Սարդուրին՝ որդին Լութիպրիի, արքան (է) արքաների, որը բոլոր արքաներից հարև վերցրեց: Սարդուրին՝ որդին Լութիպրիի, ասում է այսպես. «Ես քարերն այս Ալնիունու (քաղաքի) միջից բերեցի, ես պարիսպն այս կառուցեցի»»: **(Վանից)**:

Ասորեստանի համար հայտնվել էին նոր և վտանգավոր հակառակորդներ (կիմերներ, սկյութներ և մարեր), ապա երկու մրցակից տերությունների միջև լարվածությունը թուլացավ, և հարաբերությունները կայունացան:

Վանի վերջին արքաների գործունեության մասին կցկտուր տեղեկություններ կան, ուստի թագավորության կործանման մասին պատկերացումներն էլ հստակ չեն: Մինչ օրս այդ հարցում գիտնականները միակարծիք չեն: Բազմաթիվ վարկածներից մեկն այն է, որ Վանի թագավորությունը կործանվել է մարերի, բաբելացիների և սկյութների դեմ մղած պայքարում: Մեկ այլ վարկածի համաձայն՝ թագավորությունը կործանվել է Ք. ա. VII դարի սկզբին՝ ներքին պատերազմների, քաղաքական մասնատումների պատճառով: Սակայն մեկ ուրիշ վարկած էլ պնդում է, որ Վանի թագավորությունն իրականում չի կործանվել. տեղի է ունեցել ընդամենը արքայատոհմի փոփոխություն:

Վանի թագավորության անվան հիշատակություն գտնում ենք նաև **Բեհիսթունյան** եռալեզու արձանագրության մեջ: Այն անվանվում է *Ուրաշտու*՝ բաբելոներեն, *Արմինա*՝ պարսկերեն և *Հարմինույա*՝ էլամերեն: Բոլոր դեպքերում էլ խոսքը Հայաստանի մասին է:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Վանի թագավորության ժամանակաշրջանում Հայկական լեռնաշխարհում գերիշխող տարրն արդեն հայերն էին: Նրանք հետագայում Վանի թագավորության տարածքում և Վանի թագավորության ժառանգության հիման վրա ստեղծեցին մի նոր թագավորություն՝ Երվանդական թագավորությունը:

Այսպիսով՝ Վանի թագավորության ձևավորման և կայացման պատմությունը Հայկական լեռնաշխարհում բնակվող ցեղերի համախմբման, միաձուլման և հայ ժողովրդի կայացման պատմությունն է:

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Ներկայացրու:** Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան Սարդուրի I և Իշպուինի արքաների արձանագրությունների միջև (ուշադրություն դարձրեք հատկապես ընդգծված հատվածներին):

2 | **Համեմատիր:** Ի՞նչ եզրակացություն կարող եք անել Սարդուրի I արքայի նշած «Նաիրիի արքա» և Իշպուինի արքայի նշած «արքա Բիահինիլի (երկրի)» ձևակերպումներից:

3 | **Մեկնաբանիր:** Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ է Իշպուինի արքան կարևոր համարում հիշատակել «Իշխան Տուշպա քաղաքի» տիտղոսը:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Արգիշտի I • Սարդուրի II • Ռուսա I • Սարգոն II • Էրեբունի • Մուսասիր
Կայսրություն • Բեհիսթունյան արձանագրություն

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչպե՞ս հաջողվեց Արգիշտի I և Սարդուրի II արքաներին Վանի թագավորությունը վերածել տարածաշրջանի ուժեղագույն պետության:

բ. Վերլուծիր: Ինչո՞ւ էր Վանի կառավարությունը վերաբնակեցումներն իրագործելիս մանրակրկիտ ծրագրում դրանք:

գ. Բացատրիր: Ինչո՞ւ էր Սարգոն II-ի կողմից Մուսասիրի նվաճումը Վանի թագավորության համար ամենամեծ կորուստը:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչո՞վ էր պայմանավորված Վանի արքաների կողմից իրագործվող հարկադիր տեղահանության և վերաբնակեցման քաղաքականությունը:

2. Ընդհանրացրու: Ի՞նչ հետևանքներ կարող էր ունենալ Ասորեստանի համար փոքրասիական երկաթի և այլ մետաղների հանքավայրերից, ինչպես նաև հիմնական առևտրային ուղիները վերահսկելու հնարավորությունից զրկվելը:

3. Գնահատիր: Որո՞նք էին Վանի թագավորության անկման ներքին և արտաքին պատճառները:

Ա4 | Փաստարկում և հիմնավորում

Պատկերացրու, որ դու Վանի թագավորության **սպարապետն** ես, որն Արգիշտի արքային պետք է համոզի դեպի արևմուտք ռազմարշավի կարևորությունը: Բացատրիր և հիմնավորիր քո ծրագրի թե տնտեսական, թե ռազմավարական կարևորությունը: Ստեղծիր գովազդային պաստառ, որտեղ այդ ամենը ներկայացված կլինի նաև պատկերներով:

Ի՞նչ ես կարծում, քո նախաձեռնությանը, արքայից բացի, հասարակության ո՞ր շերտերը կարող էին աջակցել: Իսկ ընդդիմանա՞լ (յուրաքանչյուր պատասխան հիմնավորիր առանձին):

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ ստեղծիր պաստառ՝ օրինակներով ցույց տալով, որ Վանի թագավորությունը ինքնուրույն քաղաքակրթություն է (հիշիր քաղաքակրթության հիմնարար բաղադրիչները): Ներկայացման մեջ ներառե՛ք պատկերներ ենթագրերով:

1.6 ԳԼՈՒԽ Վանի թագավորության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Վանի թագավորությունում ձևավորված ռազմական և սոցիալական կառույցը, տեխնոլոգիաները և արվեստը նպաստեցին լեռնաշղթաներով մասնատված միջավայրի խոչընդոտների հաղթահարմանը: Միասնացման գործում հատկապես մեծ էր կրոնի դերը, որն ուժեղացրեց թագավորության բնակիչների պատկանելության զգացումը: Այսօր մեզ հայտնի են թագավորության բազմաթիվ աստվածների անուններ:

Ո՞րն էր աստվածների նշանակությունը Վանի թագավորությունում: Դասարանում քննարկե՛ք, թե արդյո՞ք այսօր կրոնը նման նշանակություն ունի:

Վանի թագավորներն իրենց կառավարման ընթացքում թողել են բազմաթիվ սեպագիր արձանագրություններ: Այդ գրավոր տեքստերի ճնշող մեծամասնությունը վերաբերում է ռազմական արշավանքներին և շատ քիչ տեղեկություններ է տալիս սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի մասին: Չնայած տեքստային տվյալների նման սահմանափակությանը՝ հնագիտական և պատկերագրական տվյալների միջոցով այսօր գոնե մասնակիորեն հնարավոր է վերականգնել թագավորության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի պատկերը:

Բառարան

Բազմաստվածություն | Շատ աստվածների և աստվածուհիների հանդեպ հավատը կոչվում է բազմաստվածություն:

Թագավորական հարստություն | գահատոհմ) – միևնույն (թագավորական) ընտանիքի կամ տոհմի կառավարիչների հաջորդականությունը:

Սոցիալական խմբեր (դասեր) | Մարդկանց համեմատաբար մեծ խմբեր են, որոնք տարբերվում են հասարակության մեջ իրենց զբաղեցրած տեղով և դիրքով: Սովորաբար առանձնացվում են վերին, միջին և ստորին խավերը:

Հարեմ | բազմանության դեպքում պալատի կամ տան փակ և հսկվող հատված, որտեղ ապրում են արքայի կանայք: Մեր օրերում հատուկ է մահմեդականներին:

Կրոնը

Վանի թագավորությունում ընդունված էր **բազմաստվածությունը**. երկրպագում էին բազմաթիվ աստվածների և աստվածուհիների: Աստվածները հաճախ պատկերվում էին մարդու տեսքով, ավելի հազվադեպ՝ կենդանու տեսքով կամ խառը ձևերով (մարդու մարմին և կենդանու գլուխ): Ուշագրավ է, որ Վանի թագավորությունում պաշտել են ոչ միայն տեղական աստվածներին ու աստվածուհիներին, այլև նվաճված երկրների: Նպատակն էր ցեղային տարբեր աստվածների համախմբմամբ ապահովել երկրի տարածքային, մշակութային և քաղաքական միասնությունը:

Իշպուինի արքայի վերափոխությունների արդյունքում գերագույն աստված և **թագավորական հարստության** հովանավոր հռչակվեց **Խալդին:** Խալդին նաև պատերազմի և հաղթանակի աստվածն էր: Վանի թագավորության ժողովրդի պատկերացմամբ՝ նա էր գլխավորում ուրարտական բանակները: Նա էր, որ հաղթում և հնազանդեցնում էր թագավորության թշնամիներին: Հենց Խալդին էր թագավորին տալիս իշխանություն և օրինականություն:

Խալդի աստվածն ամպրոպի և կայծակի **Թեյշեբա** աստծու և արևի **Շիվինի** աստծու հետ կազմում էր աստվածների գերագույն եռյակը: Բացի այս եռյակից՝ պաշտվում էին լուսնի, ցամաքի, ջրերի և այլ աստվածներ:

Սոցիալական կարգը

Վանի թագավորության հասարակությունը բաժանված էր մի քանի անհավասար **սոցիալական խմբերի կամ դասերի:** Կենտրոնում **արքան** էր, որն ամբողջ երկրի բացարձակ տիրակալն էր: Գահը ժառանգվում էր հորից որդուն:

Արքան համարվում էր Խալդի աստծո տեղապահը երկրի վրա, Խալդիի «ստվերը», և նրա գլխավոր պարտավորություններից մեկն էր երկրի բարգավաճումն ապահովելը: Արքան էր վճռում երկրի ներքին կյանքին և արտաքին քաղաքականությանը վերաբերող հարցերը: Նա օժտված էր քրմական, ռազմական, վարչական, դատական իշխանությամբ:

Վանի **թագուհիների** մասին տեղեկությունները չափազանց սուղ են: Հայտնի է Մենուայի կնոջ՝ **Թարիրիայի** հիշատակումն արձանագրություններից մեկում: Այստեղ Մենուա արքան տեղեկացնում է, որ խաղողի այգի է նվիրել իր տիկնոջը և այն անվանակոչել նրա պատվին: Վանի արքաներն ունեցել են **հարեմ:** Մենուան իր մի արձանագրության մեջ իրեն գովաբանում է որպես թագավոր, որն ամենաշատ կանայք է բերել մայրաքաղաք Տուշպայի հարեմ:

U2 Ձայներ անցյալից

Մուսասիրի տաճարը (վերակազմություն)
Ք. ա. մոտ IX դար

Հատված Իշպուինիի և Մենուայի արձանագրությունից

«Երբ Խալդի աստծու առջև քաղաք Արդինի (Մուսասիր) եկան Իշպուինին՝ Սարդուրիի որդին՝ մեծ արքան, հզոր արքան, տիեզերքի արքան, Բիայնիլի երկրի արքան, իշխանը Տուշպա քաղաքի, (և) Մենուան՝ Իշպուինիի որդին, նրանք աղոթատուն կառուցեցին Խալդի աստծուն: Բարձր ճանապարհին նրանք քարակոթող դրեցին:

Աղոթատան առջև Սարդուրիի որդի Իշպուինին նվիրեց գեղեցիկ զենքեր, հրաշալի արջառներ (?), [...] նվիրեց պղնձե անոթներ, [...], դրեց այս ամենը Խալդի աստծո դարպասների մոտ և տվեց Խալդիին՝ տիրոջը, հանուն իր կյանքի:

Ով այս քարակոթողը գցի այստեղից, ով քարդի, ով ինչ-որ մեկին ստիպի այս բաներն անել, ասի՝ «զնա (և) կործանիր (այն)», թող Խալդին, Թեյշեբան, Շիվինին, Արդինի (Մուսասիր) **քաղաքի (բոլոր) աստվածները ոչնչացնեն (նրա) սերմը երկրի վրա»:**

Նայելով նկարին

Վանի թագավորության մասնագիտություններ ունեցող կանայք



Հատված Վանի բրոնզե նեղ գոտուց (աշխատող կանայք), Ք. ա. IX - VIII դդ.

1. **Պատկերների մեկնաբանում:** Նկարագրիր, թե ինչ ես տեսնում պատկերներից յուրաքանչյուրում: Վերնագրիր պատկերները:
2. **Համադրիր:** Նկարների տրամադրած տեղեկությունները համադրելով՝ ներկայացրու կանանց առօրյան Վանի թագավորությունում:

Երկրի կառավարման գործում մեծ էր արքային մշտապես շրջապատող **խորհրդականների** դերը, բայց կարևորագույն պաշտոնյաները եղել են **փոխարքաները** («մարզերի կառավարիչները») և **քրմերը:**

Մարդկանց մեծամասնությունն աշխատում էր որպես **հողագործ, արհեստավոր կամ վաճառական**: Տերության ընդլայնմանը զուգընթաց ավելի կարևոր էին դառնում **զինվորականները:** Գյուղատնտեսական արտադրության մեջ կարևոր դերակատարում ունեցող հատուկ միավոր էր **համայնքը,** որը որոշ չափով պահպանել էր ինքնակառավարումը: Վանի թագավորության մեջ բացակայում էր ստրկական ուժի կիրառումը: Այն ստրկատիրական պետություն չէր, ինչպես կարծում էին նախկինում:

Տնտեսությունը

Ռազմական և քաղաքական խնդիրներից բացի Վանի թագավորության ընդարձակումը լուծեց նաև բավականին կոնկրետ տնտեսական խնդիրներ: Թեպետ սկզբում պետության մեջ մեծ էր **անասնապահության** դերը, բայց աստիճանաբար թագավորության հիմնական տնտեսական զբաղմունքը

դարձավ **երկրագործությունը:** Իսկ դրա զարգացումը հնարավոր չէր լինի առանց արդյունավետ ոռոգման: Սեպագիր արձանագրությունները ցույց են տալիս, որ Վանի արքաներն ակտիվորեն զբաղվել են ջրանցքների և ջրամբարների շինարարությամբ: Ամենամեծ ձեռքբերումն էր Մենուայի կառուցած ջրանցքը, որը մինչ օրս էլ գործում է: Բարելավված գյուղատնտեսական մեթոդները նույնպես կարևոր գործոն էին առևտրի և արդյունաբերության աճի համար: Երկաթի օգտագործումը հանգեցրեց երկաթե գութանների կիրառմանը, ինչը հնարավորություն տվեց հերկել բազմաթիվ չօգտագործված հողատարածքներ: Արդյունքում ավելացան մշակաբույսերի աճեցման համար հասանելի հողատարածքները:

Պետության գլխավոր տնտեսական խնդիրներից էր Տավրոսի շրջանի ոսկու, արծաթի և երկաթի հանքավայրերի տիրապետումը, ինչպես նաև հիմնական **առևտրային ուղիների** վերահսկումը: Միջերկրական ծովի երկրներ հասնելու համար Հնդկաստանից, Կենտրոնական Ասիայից և նույնիսկ Չինաստանից եկող ապրանքները պետք է անցնեին կամ Միջագետքով (հարավում), կամ Փոքր Ասիայով և Վանի թագավորությունով (հյուսիսում): Բացի դրանից՝ հյուսիս-հարավ առևտրային ճանապարհն անցնում էր անմիջապես Վանի թագավորության միջով: Հմուտ կառավարմամբ երաշխավորված էր երկրի հզորությունը, որի միջոցով նման առևտուր էր իրականացվում:

Վանի թագավորությունը **որդան կարմիր,** ինչպես նաև մետաղական հանքաքարեր և մետաղական արտադրանք էր մատակարարում մի շարք երկրների: Այն նաև միջնորդ էր հնդկական հա-

S Վանի թագավորության կանայք

Ազնվական կնոջ կերպար բրոնզե գոտու վրա

Վանի թագավորության մեջ կանանց զբաղեցրած դիրքի մասին գրավոր տեղեկությունները գրեթե բացակայում են: Դա պայմանավորված էր հասարակության մեջ տղամարդու գերակայությամբ: Սակայն պահպանված կրծքազարդերի, բրոնզե գոտիների, մետաղյա թիթեղների, արձանիկների և այլ հնագիտական գտածոների հիման վրա հնարավոր է ինչ-որ չափով լրացնել գրավոր տեղեկությունների բացը:

Կանայք հագնում էին զարդարված զգեստ, որը հասնում էր մինչև կոճերը: Աստվածուհիները, թագուհիները կամ ազնվական կանայք սովորաբար կրում էին գլխաշոր, որը երբեմն իջնում էր գլխից մինչև գոտկատեղը: Ե՛վ միածոյլ զգեստը, և գլխաշորը զարդարված էին երկրաչափական նախշերով: Արքունիքում կամ ազնվականների տներում ծառայող կանայք պատկերված են գլխաբաց: Ոչ ազնվական կանայք զբաղվել են անասնապահությամբ, գյուղատնտեսությամբ, զամբյուղի պատրաստմամբ, խեցեգործությամբ, ջուլհակագործությամբ և այն: Կանայք կարող էին նաև հոգևոր ծառայության անցնել իբրև քրմուհիներ:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Տրամադրած տեղեկության հիման վրա վերլուծիր վերևում պատկերված նկարը և վերնագրիր այն:

մեմունքների և չինական մետաքսի վաճառքում: Վանի թագավորության առևտրային հարաբերությունները տարածվել են մինչև Նեղոսի ափերը և դրանից հեռու:

Նշանակալի էին **չափի և կշռի** բնագավառում Իշպուինի և Մենուա արքաների վերափոխությունները, որոնք նպաստեցին առևտրի զարգացմանը:

Ձեռքբերումներ արվեստի և գիտության բնագավառում

Հարմարավետ քաղաքները, ամրոցները, տաճարները և այլ հուշարձաններ՝ կառուցված խնամքով տաշված հսկայական քարերից, վկայում են թագավորության շինարարների ու ռազմական մասնագետների մեծ վարպետության, ինչպես նաև **մաթեմատիկայի** բնագավառում առաջադիմության մասին: Աչքի է ընկնում նաև երկաթի կիրառման վարպետությունը: Բացառիկ նրբությամբ և զարդապատկերների շքեղությամբ են աչքի ընկել Վանի թագավորության վարպետների բրոնզե ստեղծագործությունները՝ զենք ու զրահ, գահի մասեր, արձանիկներ և այլն:

Վանի թագավորությանը հատուկ են մի շարք նորարարություններ՝ ժայռի մշակումից և որպես ճարտարապետության կարևոր տարր օգտագործելուց մինչև մետաղամշակման արվեստը: Դրանք չանհետացան Վանի թագավորության փլուզման արդյունքում: Ձևավորված ավանդույթներն ու կանոնները ժառանգեցին հայկական հաջորդ թագավորություններն ու այլ ժողովուրդներ, ինչպես սկյութական ցեղերը: Վանի թագավորության մշակույթի որոշ տարրեր ներթափանցեցին Հին Իրանի և վաղ Հունաստանի մշակույթներ:

U2 Ձայներ անցյալից

Մուսասիրի տաճարի կողոպուտը Սարգոն II-ի զորքերի կողմից (Ք. ա. 714 թ.)
Դուրշարուկինի (խորսաբադ) պալատի խորաքանդակ, այժմ անհետացել է

Հատված Ռուսա Սարդուրորդու արձանագրությունից

«Ռուսան՝ Սարդուրիի որդին, այսպես է ասում. [...]

Ես՝ Ռուսան, Խալդի աստծո ծառան, ժողովրդի հավատարիմ հովիվը, (որը) Խալդիի օգնությամբ և զորքերի ուժով չի երկնչում հակառակությունից: Խալդի աստվածն ինձ տվել է ուժ, իշխանություն (և) ուրախություն իմ ողջ կյանքի ընթացքում: Ես կառավարում էի Բիայնիլի երկիրը (և) ենթարկել եմ թշնամական երկրները:

Աստվածներն ինձ տվել են ուրախության երկար օրեր, (և) բացի ուրախության օրերից [...] դրանից հետո [...] խաղաղություն հաստատվեց:

Ով քանդում է (այս արձանագրությունը), ով կոտրում է (այն), ով կատարում է (նման արարք), թող Խալդի, Թեյշեբա, Ծիվինի աստվածները (և բոլոր աստվածները) կործանեն նրա սերմը և նրա անունը»:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Չնայած Վանի թագավորությունից ունեցած մեր մի քանի հազար տարվա հեռավորությանը՝ նրա հետ ունենք ընդհանուր ժառանգության վրա հիմնված բազմաթիվ կապեր: Թագավորության մասին հիշում են, օրինակ, անուններով. որոշ մարդիկ Վանի թագավորության արքաների անուններով են կոչում իրենց նորածիններին, խանութներ կամ ֆուտբոլային թիմ են անվանում «Ուրարտու»: Մարդիկ պատրաստում են զարդեր և կենցաղային իրեր՝ Վանի թագավորության դեկորատիվ կիրառական արվեստի և ճարտարապետության որոշ տարրերի կիրառմամբ:

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Ներկայացրու** | Ի՞նչ տեղեկություններ է պարունակում արձանագրություններից յուրաքանչյուրը: Հաշվի՛ր, թե քանի տեղեկություն գտար դրանցում (կրոնական, ռազմական և այլն):

2 | **Համեմատի՛ր** | Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան Իշպուինի և Ռուսա I արքաների արձանագրությունների միջև (ուշադրությո՛ւն դարձրու, օրինակ, արձանագրությունների վերջին հատվածին՝ «անեծքի բանաձևին»):

3 | **Մեկնաբանի՛ր** | Ինչպե՞ս են իրենց ներկայացնում արքաները: Ի՞նչ կարելի է ասել արքաների և նրանց գահակալման ժամանակաշրջանի մասին՝ հիմնվելով նրանց ինքնաներկայացման վրա (պետական կարգ, կրոն և այլն):

Միերի դուռ կամ Ագռավու քար, սրբազան քարաժայռ Վանա բերդի մոտ:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

խալդի • Թեյշեբա • Շիվինի

բազմաստվածություն • սոցիալական խմբեր (դասեր) • հարեմ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչպե՞ս հաջողվեց Արգիշտի I և Սարդուրի II արքաներին Վանի թագավորությունը վերածել տարածաշրջանի ուժեղագույն պետության:

բ. Բացատրիր: Ո՞րն էր արքաների (կառավարիչների) շահը, երբ պնդում էին, որ իրենց ընտրում են աստվածները:

գ. Պարզաբանիր: Ինչո՞ւ էին առավել կարևոր պաշտոնյաներ համարվում տոհմարքաները (մարզերի կառավարիչները) և քրմերը:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ընդհանրացրու: Ինչի՞ց ենք իմանում մաթեմատիկայի քնագավառում Վանի թագավորության առաջադիմության մասին:

2. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ եք կարծում, թագավորության տնտեսական խնդիրների լուծման մեջ ի՞նչ նշանակություն ունեցավ հիմնական առևտրային ուղիների վերահսկումը:

3. Համակարգիր տեղեկատվությունը: Ստեղծե՛ք աղյուսակ, որը ցույց կտա Վանի թագավորություն ներմուծվող և այնտեղից արտահանվող հիմնական ապրանքները:

Երկիրը	Ներմուծում	Արտահանում

Ա4 | Պատմական նշանակություն

Պատրաստիր Վանի թագավորության սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքի մասին պատմող պաստառ՝ ընտրելով քննարկված ոլորտներից մեկը (օր.՝ կրոն, տնտեսություն և այլն):

Ըստ ձեզ՝ ի՞նչ կարևոր մարդկանց, կրոնական համոզմունքների կամ սոցիալական զարգացումների պետք է ուշադրություն դարձնեն ձեր դասընկերները:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջ հետ վերանայե՛ք Վանի թագավորության սոցիալական կարգը և կազմե՛ք բուրգի գծապատկեր: Ըստ կարևորության՝ բուրգի տարբեր մասերում տեղադրե՛ք Վանի թագավորության սոցիալական դասերը:

ԹԵՄԱ 2

Երվանդական Հայաստան

Ուսումնասիրելով այս թեման՝ կկարողանաս.

- **ա. Նկարագրել** Երվանդական Հայաստանի պետական կարգը, բանակը, տնտեսությունը, դիցարանը:
- **բ. Բնորոշել** Երվանդունի արքաների և սատրապների գործունեությունը, կարծիք հայտնել նրանց գործունեության և ռազմաքաղաքական հարաբերությունների վերաբերյալ:
- **գ. Գնահատել** և արժևորել Երվանդական Հայաստանի քաղաքակրթական ժառանգության տեղն ու դերը հայոց և համաշխարհային մշակույթների համատեքստում:

Արծաթե պտյակ՝ ձիու առաջամասով
Երևան, Էրեբունի
Ք. ա. VI-IV դդ.

2.1 ԳԼՈՒԽ Երվանդական Հայաստանի կազմավորումը և Աքեմենյան Պարսկաստանը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Փոքր և նոր կազմավորված Երվանդական պետությունը կարողանում էր պահպանել անկախությունը, քանի դեռ մի ավելի մեծ պետություն գերիշխանության չհասավ Հարավ-արևմտյան Ասիայում: Ծուտով ստեղծված նոր կայսրությունները՝ Մարաստանը, իսկ հետո Աքեմենյան Պարսկաստանը, նվաճեցին հին աշխարհի հսկայական տարածքներ: Երվանդական Հայաստանը դաշնակցից վերածվեց հպատակ տերության, բայց կարողացավ պահպանել ներքին ինքնուրույնությունը:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր՝ արդյոք մի՞շտ է արդարացված կայսրությունների հետ առճակատումը: Կարելի՞ է գնալ նաև զիջումների: Ըստ կարևորության՝ դասակարգի՛ր առճակատման և փոխզիջման առավելություններն ու պակասությունները: Ինքդ ո՞ր տարբերակը կընտրեիր և ինչո՞ւ:***

Վանի թագավորության անկման արդյունքում **Ք. ա. VII դարի վերջին** Հայկական լեռնաշխարհի տարածքում կրկին ի հայտ են գալիս մրցակից թագավորություններ: Դրանցից առանձնանում է **Պարույր Սկայորդու** իշխանությունը լեռնաշխարհի հարավ-արևմտյան մասում: Պատմահայր Մովսես Խորենացու հաղորդած տեղեկության համաձայն՝ Պարույրը Հայկ Նահապետի սերնդից էր: Նա միացել էր Ասորեստանի դեմ Մարաստանի (Մեդիայի) և Բաբելոնի թագավորների դաշինքին: **Ք. ա. 612 թ.** դաշինքի երկրները գրավում և ավերում են Ասորեստանի մայրաքաղաք Նինվեն: Մի քանի տարի անց արդեն կործանվում է Ասորեստանի կայսրությունը: Գործուն մասնակցության համար Պարույր Սկայորդին Մարաստանի արքա Կիաքսարի կողմից թագադրվում և ճանաչվում է Հայաստանի թագավոր: Պարույր արքան իր իշխանության տակ միավորել էր Վանա լճից մինչև Եփրատ ընկած տարածքները՝ նպատակ ունենալով իր վերահսկողությունը հաստատել ամբողջ լեռնաշխարհի վրա:

Բառարան

Սատրապ | հին պարսկերեն «խշաթրապավան» բառի հունարեն տարբերակը: Բառացի նշանակում է «[արքայական] իշխանության պաշտպան»: Նա արքայի անմիջական ներկայացուցիչն էր մարզում՝ **սատրապությունում**, որտեղ օգտվում էր թագավորական բոլոր արտոնություններից:

Արքայական ճանապարհ | հինավուրց առևտրային և ռազմավարական նշանակության ճանապարհ, որը կառուցվել է Աքեմենյան կայսրության արքա Դարեհ I-ի կողմից Ք. ա. 5-րդ դարում: Ենթադրվում է, որ ձիավոր սուրհանդակները դրա մի ծայրից (Սուսա) մյուսը (Սարդես) անցնում էին 9 օրում: Այն շուրջ 2700 կմ երկարություն ուներ:

Երվանդ I Սակավակյաց և Տիգրան Երվանդյան

Պարույր Սկայորդուն հաջորդած արքաներից **Երվանդ Սակավակյացին** է հաջողվում Հայկական լեռնաշխարհում հաստատել իր հսկողությունը: Քանի որ սկզբնաղբյուրների սակավություն կա, միայն կարելի է ենթադրել, որ նա իր տիրապետությունը հաստատում է այն հողերի վրա, որոնք ժամանակին Վանի թագավորությունն էր վերահսկում: Թագավորության սահմանները հյուսիս-արևմուտքում հասնում են մինչև Սև ծովի ափեր, հարավ-արևելքում՝ Մարաստան, հարավում՝ Հյուսիսային Միջագետք: Արքայական նոր հարստությունը նրա անունով կոչվում է **Երվանդական** կամ **Երվանդյան**: Կենտրոնն էր **Տուշպա-Վան** քաղաքը:

Հատկապես նշանակալից էր Երվանդունիների կարողությունը՝ հավաքագրելու զգալի կենդանի ուժ ռազմական արշավների և վերահսկվող տարածքներում իրենց քաղաքական ու ռազմական ներկայությունն ամրապնդելու նպատակով: Այդպիսով՝ Երվանդ I-ին հաջողվում է վերակազմավորել բանակը՝ ստեղծելով շուրջ **40 հազարանոց հետևակ և 8 հազարանոց հեծելազոր:** Սա չէր կարող չազդել Մարական տերության (Մեդիայի) հետ հարաբերությունների վրա: Վերջինս փորձում է խստացնել իր վերահսկողությունն ընդլայնվող Հայաստանի նկատմամբ: Դա հաջողվում է մանավանդ այն ժամանակ, երբ Մարաստանը տիրում է Արաքսի հովտին և Միջագետքում գտնվող հաղորդակցական ուղիներին: Դաշնակցային հարաբերությունները շուտով վերածվում են Մարաստանից Հայաստանի կախվածության:

Սակայն մարական տիրապետության դեմ շուտով լայնածավալ ապստամ-

U1 Ձայներ անցյալից

Դարեհ I-ի Եռալեզու արձանագրությունից

«Դարեհ թագավորն ասում է. «Երրորդ անգամ ապստամբները հավաքվեցին և նորից դուրս ելան Դադարշիշի դեմ ճակատամարտի: Ույամա[1] անունով մի բերդ կա Արմինայում. ճակատամարտը տեղի ունեցավ այնտեղ: Ահուրամազդան ինձ օգնեց: Ահուրամազդայի շնորհիվ իմ բանակն այն ապստամբ բանակից բավական մարդ սպանեց: [...]: Հետո Դադարշիշը մնաց Արմինայում, մինչև ես հասա Մեդիա»:

Դարեհ թագավորն ասում է. «Ապստամբները երկրորդ անգամ հավաքվեցին (և) դուրս ելան Վահումիսայի դեմ ճակատամարտի: Արմինայում Աուտիարա[2] անունով մի գավառ կա, այնտեղ նրանք ճակատամարտ տվեցին: Ահուրամազդան ինձ օգնեց. Ահուրամազդայի շնորհիվ իմ բանակն այն ապստամբ բանակից բավականին մարդ սպանեց: [...]: Հետո Վահումիսան մնաց Արմինայում, մինչև ես հասա Մեդիա»»: **(Բեհիսթուն):**

1. **Ույամա (Ուհիամա) բերդը** տեղադրվում է պատմական Հայաստանի Կորճայք նահանգում:
2. **Աուտիարա** - ուսումնասիրողները սույն գավառը համապատասխան են համարում «Աշխարհացույց»-ի Այտվանք («Այտուանք») գավառի անվանը, որը ևս գտնվում էր Կորճայք նահանգում:

Նայելով քարտեզին

Հայաստանը Ք. ա. 522-520 թթ.
Պայքար Աքեմենյան տերության դեմ (Ք. ա. 522-521)

1. **Բացահայտիր քարտեզը:** Որո՞նք էին Երվանդական Հայաստանի հարևան պետությունները Ք. ա. 612-201 թթ. (հարցին պատասխանելու համար օգտվիր նաև համաշխարհային պատմության դասագրքից և համացանցից):

2. **Կիրառիր աշխարհագրական հմտություններդ:** Ինչո՞վ կբացատրես այն, որ ճակատամարտերից մեկը Հայաստանի տարածքից դուրս է եղել:

բություն է կազմակերպվում պարսից ապագա թագավոր **Կյուրոս Մեծի** կողմից: Ըստ հույն պատմիչ Քսենոփոնի՝ Կյուրոսին այդ ջանքերում ակտիվորեն աջակցում է նրա մանկության ընկերը՝ հայոց թագաժառանգ **Տիգրան Երվանդյանը:** Ք. ա. 550 թ. մարական տիրապետության տապալման արդյունքում ձևավորվում է Աքեմանյան Պարսկաստանը՝ Կյուրոս Մեծի գլխավորությամբ: Հայաստանը՝ իբրև դաշնակից երկիր, թեպետ առաջատար դիրք ուներ նորաստեղծ Աքեմենյան կայսրության մեջ, սակայն ներքին ինքնավարությունը պահպանում էր հարկ վճարելու և պատերազմի ժամանակ զորք տրամադրելու պայմանով: Դա հայկական կողմին թույլ է տալիս պահպանել ձեռք բերված տարածքները՝ չհրաժարվելով լիակատար անկախությունից, միայն թե հետաձգելով այն ավելի պատեհ ժամանակների:

Հակաաքեմենյան ապստամբությունը

Չնայած Կյուրոս Մեծի տված ներքին ինքնավարությանը՝ հայերը չէին հաշտվում ստեղծված իրավիճակի հետ և ձգտում էին անկախանալ արտաքին ուժերից: Հարմար առիթ է ստեղծվում Ք. ա. 520-ական թթ., երբ Աքեմենյան

Պարսկաստանում ներքին երկպառակություններ են սկսվում: Ի վերջո գահ է բարձրանում **Դարեհ I-ը (Ք. ա. 522-486)**, որի կառավարման առաջին իսկ տարում ապստամբում են հպատակ մի շարք երկրներ: Դրանց թվում էր և Հայաստանը: Այս ապստամբությունների և դրանց ճնշման մասին մանրամասն պատմվում է **Բեհիսթունի ժայռի** եռալեզու (հին պարսկերեն, էլամերեն և բաբելոներեն) արձանագրության մեջ: Հայաստանում ապստամբությունը ճնշելու համար Դարեհ I-ի զորահրամանատարները ստիպված են լինում հինգ ճակատամարտ տալ: Ինչպես պարզ է դառնում արձանագրությունից, Հայաստանը նվաճելու համար Դարեհը մեծ ճիգ է գործադրել: Հակառակ արձանագրության մեջ Դարեհի պարծենկոտ հայտարարությունների՝ արշավանքները, ըստ էության, անհաջողությամբ են ավարտվել, դրա համար էլ երկարաձգվել են: Միայն հինգերորդ ճակատամարտից հետո է, որ հայերն ընդունել են Դարեհի գերիշխանությունը:

Հայաստանը Աքեմենյան տերության կազմում

Դարեհ արքան ապստամբությունները ճնշելուց հետո ձեռնամուխ է լինում կայսրության սահմանների ընդլայնմանը: Արևելքում նրա տարածքները հասնում էին մինչև Ինդոս գետը, իսկ արևմուտքում՝ Թրակիա՝ կազմելով աշխարհի ամենամեծ կայսրությունը: Իր իշխանությունն այդ հսկայածավալ կայսրության մեջ ուժեղացնելու համար Դարեհն ամբողջությամբ վերանայում է Կյուրոսի կողմից հաստատված կառավարման համակարգը: Նա կայսրությունը բաժանում է 20 մարզերի, որոնք կոչվում էին **սատրապություններ**: Դրանք կառավարվում էին **սատրապների** կողմից, որոնք հավաքում էին հարկերը, ապահովում էին արդարադատությունն ու անվտանգությունը, զինվորներ էին հավաքում թագավորական բանակի համար: Սատրապների կողմից մարզերի կառավարման քաղաքականությունը Դարեհի կայսրությունը միավորելու ճանապարհներից մեկն էր: Հայաստանը կազմում էր **XIII սատրապությունը** և այդպիսին մնաց մինչև Աքեմենյան կայսրության կործանումը:

Հաջորդ կարևոր քայլն այս ուղղությամբ **Արքայական ճանապարհի** կառուցումն էր: Ճանապարհն ուներ ինչպես տնտեսական, այդպես և ռազմական նշանակություն: Կարևոր էր, որ այդ ճանապարհի մի որոշ մաս (շուրջ 330 կմ) անցնում էր Հայաստանի հարավային սահմանով, ինչը նպաստում էր առևտրի ծաղկմանը:

Այս և այլ մանրամասների մասին մենք իմանում ենք հույն զորավար և պատմիչ **Քսենոփոնից**, որը Ք. ա. 401 թ. անցել է Հայաստանով: Ըստ նրա՝ այդ ժամանակ Հայաստանի սատրապը **Երվանդն (Օրոնտեսն)** էր, որն ամուսնացած էր Աքեմենյան արքայադստեր հետ և սեփական պատկերով դրամներ էր հատում: Այդ ամենը վկայում է կայսրության մեջ Երվանդական արքայատոհմի առանձնահատուկ դիրքի և հավակնությունների մասին:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Երվանդական արքաները Վանի թագավորության ժառանգության հիման վրա ստեղծեցին մի նոր թագավորություն՝ Երվանդական Հայաստանը: Նրանք ապստամբությունների միջոցով կարողացան պահպանել իրենց ինքնուրույնությունն անգամ սատրապության շրջանում և առանձնահատուկ տեղ զբաղեցնել Աքեմենյան կայսրության համակարգում:

Նրանք ցույց տվեցին, որ հանդուրժողականության քաղաքականությամբ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ նաև ապստամբությունների միջոցով կարող են երկիրը պահել կայուն և խաղաղ վիճակում: Խնդիր, որն արդիական է մինչ օրս:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Պարույր Սկայորդի • Երվանդ I Սակավակյաց • Տիգրան Երվանդյան • Կյուրոս Մեծ • Դարեհ I • Քսենոփոն • սատրապ • արքայական ճանապարհ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչպե՞ս հաջողվեց Պարույր Սկայորդուն ճանաչվել հայոց արքա և հաստատվել Հայաստանի գահին:

բ. Բացատրիր: Ի՞նչ դեր ունեցան Երվանդ I Սակավակյացը և Տիգրան Երվանդյանը Հայաստանի ինքնուրույնության պահպանման գործում:

գ. Վերլուծիր: Ի՞նչ մեթոդներ օգտագործեց Դարեհը իր սայսրության միասնականությունը պահելու համար: Ինչպե՞ս էր ազդում նրա քաղաքականությունը Հայաստանի վրա:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Երվանդական արքաներն իբրև մայրաքաղաք ընտրեցին Վան-Տոսպը:

2. Ընդհանրացրու: Ինչպե՞ս հաջողվեց Երվանդական արքաներին պահպանել իրենց ինքնուրույնությունը սատրապության ժամանակաշրջանում:

3. Գնահատիր: Նշիր և հիմնավորիր, թե տնտեսական և ռազմական ինչ նշանակություն ուներ Հայաստանի համար «Արքայական ճանապարհը»:

Ա4 | Պատմական հեռանկար

Պատկերացրու, որ դու Տիգրան Երվանդյանի **խորհրդականն** ես, որը արքային պետք է խորհուրդ տա Կյուրոս Մեծի հետ հարաբերությունների հարցում, երբ վերջինս փոխում է վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ: Ի՞նչ խորհուրդ կտաս դու արքային. գնալ առճակատմա՞ն, թե՞ փոխզիջման: Ինչո՞ւ:

Ի՞նչ ես կարծում, քո նախաձեռնությանը ո՞ր վերնախավի (ռազմական, քրմական, առևտրական...) ներկայացուցիչներն ավելի շատ կաջակցեն:
Ինչո՞ւ: Իսկ ովքե՞ր կընդդիմանային (յուրաքանչյուրի համար հիմնավորիր առանձին):

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ ստեղծի՛ր պաստառ՝ օրինակներով ցույց տալով Երվանդ I-ի ինքնուրույն քաղաքականության կարևոր բաղադրիչները: Ներկայացման մեջ ներառե՛ք տեսողական պատկերներ ենթագրերով:

U2 Ձայներ անցյալից

Դարեհ I-ի եռալեզու արձանագրությունից Ստացված էրեբունի թանգարանից

«Դարեհ թագավորն ասում է. «Ահա թե ինչ արեցի: Ահուրամազդայի շնորհիվ եմ ես միշտ գործել: Թագավոր դառնալուց հետո մեկ տարում տասնինը կռիվ տվեցի. Ահուրամազդայի շնորհիվ ինը թագավորի գահընկեց արեցի ու գերի տարա:

Մեկի անունը **Գաումատա** էր՝ մոգը. նա ասաց՝ ասելով. «Ես Սմերդիսն եմ՝ Կյուրոսի որդին»: Նա Պարսկաստանին ստիպեց ապստամբության:

Մեկ ուրիշի անունը **Աշշինա** էր՝ Էլամացի: Նա ասաց՝ ասելով. «Ես Էլամի թագավորն եմ»: Նա Էլամին ստիպեց ապստամբության:

Մեկ ուրիշի անունը **Նիդինտու-Բել** էր՝ բաբելոնացի: [...]: Նա Բաբելոնին ստիպեց ապստամբության:

Մեկ ուրիշի անունը **Մարտիյա** էր՝ պարսիկ: [...]: Նա Էլամին ստիպեց ապստամբության:

Մյուսը Ֆրաորտեսն էր՝ մար: [...]: Նա Մեդիային ստիպեց ապստամբության:

Մյուսը **Տրիտանտաեքմեսն** էր՝ Սագարտացի: [...]: Նա Սագարտիային ստիպեց ապստամբության:

Մեկ ուրիշի անունը **Ֆրադա** էր՝ Մարգիանայից: [...]: Նա Մարգիանային ստիպեց ապստամբության:

Մեկը **Վահյազդատան** էր՝ պարսիկ [...]: Նա Պարսկաստանին ստիպեց ապստամբության:

Մեկը հայ **Արախան** էր: Նա ասաց՝ ասելով. «Ես Նաբուգոդոնոսորն եմ՝ Նաբոնիդի որդին»: Նա Բաբելոնին ստիպեց ապստամբության:

Դարեհ թագավորն ասում է. «Այս ինը թագավորներին ես գերեցի այս պատերազմներում»». **(Բեհիսթուն):**

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Ներկայացրո՛ւ** | Ո՞ր ապստամբության մասին են Դարեհ I-ի այս արձանագրությունները (մանրամասնիր իրադարձությունը):

2 | **Համեմատի՛ր** | Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ արձանագրություններից առաջինում խոսվում է Հայաստանի (Արմինայի) ապստամբության մասին, բայց երկրորդում, երբ թվարկում է գահընկեց 9 թագավորներին, Հայաստանի մասին ոչ մի խոսք չկա:

3 | **Մեկնաբանի՛ր** | Ինչո՞վ կբացատրես այն, որ ապստամբած Հայաստանը նվաճելու համար Դարեհ I-ը ստիպված է լինում իր զորավարներ Դադարշի-շի և Վոհումիսայի միջոցով 5 ճակատամարտ տալ: Արդյո՞ք դրանից կարելի է եզրակացնել, որ նա Հայաստանին հնազանդեցրել է: Փաստարկի՛ր և հիմնավորի՛ր դասանյութի օգնությամբ:

2.2 ԳԼՈՒԽ Երվանդական Հայաստանի անկախության վերականգնումն ու Սելևկյանները

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Հակամարտությունը հաճախ մեծ փոփոխություններ է բերում: Աքեմենյան կայսրությունը շուտով փլուզվում է Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքի հետևանքով, և հպատակ ժողովուրդները կորցրած անկախությունը վերականգնելու հնարավորություն են ստանում: Հայաստանը ևս վերականգնում է իր անկախությունը:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր, թե ինչ հնարավորություններ կարող էր տալ անկախությունը Հայաստանին. չէ՞ որ սատրապական շրջանում նրանք պահպանել էին իրենց ինքնավարությունը և Աքեմենյան կայսրության մեջ նշանակալի դիրք ունեին: Ըստ կարևորության՝ դասակարգի՛ր անկախության ստեղծած հնարավորությունները և դրանից բխող դժվարությունները:***

Ք. ա. 334 թվականին **Ալեքսանդր Մակեդոնացու** բանակը ներխուժեց Փոքր Ասիա՝ նշանավորելով հայտնի **Արևելյան արշավանքի** սկիզբը, որն Աքեմենյան կայսրությունը նվաճելու նպատակ ուներ: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ **Ք. ա. 331 թ.** Բաբելոնից ոչ հեռու՝ **Գավգամելայի** մոտ: Ճակատամարտին մասնակցում էին և հայկական զորքերը: Հին պատմիչների վկայությամբ՝ նրանք գտնվում էին աջ թևում և ոչ միայն հետ մղեցին հունա-մակեդոնական զորքերի հարձակումը, այլև ներխուժեցին նրանց թիկունք: Չնայած այդ ամենին՝ պարսկական զորքերը ճակատամարտում պարտվեցին, և **Դարեհ III** արքան փախավ մարտադաշտից: Դարեհի՝ իր իսկ մերձավորների կողմից սպանվելուց հետո շուտով փլուզվեց Աքեմենյան կայսրությունը: Ստեղծվեց մի նոր հսկայական կայսրություն՝ **Ալեքսանդր Մակեդոնացու կայսրությունը**: Մայրաքաղաքն էր **Բաբելոնը:**

Բառարան

Հելլենիստական պետություններ | թագավորություններ, որոնք ձևավորվել են Ալեքսանդր Մակեդոնացու իշխանության փլուզման արդյունքում և որդեգրել հունական մշակույթն ու ապրելակերպը:

Հանդուրժողական քաղաքականություն | նշանակում է ընդունել և հարգել այն մարդկանց և խմբերի հիմնական իրավունքները, կրոնական ծեսերը, հավատքը, մշակույթը, տեսակետները, որոնք տարբերվում են սեփականից:

Երվանդական Հայաստանի անկախության վերականգնումը

Աքեմենյան կայսրության փլուզումը Երվանդունիներին հնարավորություն էր տալիս հավակնելու ինքնիշխանության և վերականգնելու Հայաստանի անկախությունը: **Մեծ Հայքում** Ք. ա. 331 թ. գահ է բարձրանում **Երվանդ III**-ը:

Մայրաքաղաքը տեղափոխվում է Արարատյան դաշտ՝ քաղաք **Արմավիր**, որը վերածվում է քաղաքական, տնտեսական, մշակութային և հոգևոր խոշոր կենտրոնի: Մայրաքաղաքի տեղափոխությունը նշանավորում էր սատրապական կարգավիճակի թոթափումը և պետության անկախացումը:

Երվանդ III-ի աջակցությամբ նույն տարում **Փոքր Հայքում** գահ է բարձրանում **Միթրաուստեսը:** Մեծ Հայքը միաժամանակ նաև Փոքր Հայքի անկախության երաշխավորն էր: Թեպետ Հայաստանը դեռ ամբողջությամբ ներգրավված չէր Արևելքի և Արևմուտքի աշխարհաքաղաքական պայքարում, բայց ակտիվ դեր էր խաղում Փոքր Ասիայի քաղաքական կյանքում: Այսպես՝ Երվանդ արքան քանիցս աջակցում է այն պետություններին, որոնք փորձում էին պահպանել նոր իրավիճակում ձեռք բերված անկախությունը: Նա աջակցում էր կամ ռազմական ուժով, կամ էլ քաղաքական ապաստան տալով: Օրինակ՝ մակեդոնական զորքերին պարտված Կապադովկիայի թագաժառանգին Երվանդը նախ ապաստան է տալիս Հայաստանում, իսկ հետո նաև ռազմական ուժով վերականգնում գահին:

Այդուամենայնիվ, անկախությունը հնարավոր է լինում պահպանել նախ և առաջ շնորհիվ այն բանի, որ Ալեքսանդր Մեծի ռազմաքաղաքական առաջնահերթությունների մեջ դեռ ներառված չէր Հայաստանի նվաճումը: Ալեքսանդր Մեծն ուղարկում է բանակներ, որոնք ջախջախվում են հայերի կողմից, սակայն նա անձամբ ռազմական արշավանք չի առաջնորդում Հայաստան: Հայկական թագավորությունների համար նպաստավոր էին նաև Ալեքսանդր Մակեդոնացու մահվանը հաջորդած տարիները: Նրա զորավարների, իսկ ապա **հելլենիստական պետությունների** միջև տևական պատերազմներ էին մղվում: Դրանք միաժամանակ շեղում են ուշադրությունը հայկական նորաստեղծ պետություններից: Բացի դրանից՝ Երվանդը կարողանում էր դիվանագիտական ճկունություն ցուցաբերել Ալեքսանդրի հաջորդների ճամբարում սկսված երկպառակությունների ընթացքում՝ աջակցելով իրեն ցանկալի ուժին: Այսպիսով՝ անկախությունը հնարավոր է լինում պահպանել նաև ճկուն դիվանագիտության շնորհիվ: Սա էլ նպաստում է հայկական թագավորությունների ամրապնդմանը:

Սելևկյան պետությունը

Ալեքսանդրի վաղաժամ վախճանից հետո նրա կայսրությունը շուտով բաժանվեց նրա զորավարների միջև: Արդյունքում Ալեքսանդրի կայսրությունը մասնատվեց մի քանի թագավորությունների միջև: Դրանցից ամենամեծը **Սելևկյան պետությունն** էր, որը տարածվում էր Փոքր Ասիայից մինչև Սիրիա և Հնդկաստան: Նոր կայսրության կառավարիչները բախվեցին բազմաթիվ մարտահրավերների: Նրանց թագավորությունն ընդգրկում էր նախկին Պարսկական կայսրության մեծ մասը: Այնտեղ ապրում էին տարբեր ժողովուրդներ՝ տարբեր սովորույթներով: Այդ ժողովուրդներից շատերը,

դժգոհ լինելով նոր իշխանությունից, ապստամբում էին իրենց առաջնորդների դեմ: Խնդիրը կարգավորելու համար սելևկյանները որդեգրեցին Ալեքսանդր Մակեդոնացու **հանդուրժողական քաղաքականությունը:** Ըստ այդմ՝ պետք է քաղաքացիություն տրվեր ոչ միայն հույներին, այլև բնիկ ժողովուրդներին, ոչ հունական համայնքները պետք է ստանային շնորհներ և հովանավորություն իրենց Սելևկյան տիրակալներից, նրանց կրոնական ծեսերը, հավատքներն ու սրբավայրերը պետք է պաշտպանվեին ու հարգվեին: Մերձավորարևելյան ավանդույթների նկատմամբ հանդուրժող սելևկյան տիրակալները սկսեցին ընդունել և յուրացնել այդ ավանդույթներից մի քանիսը՝ անկասկած, քաղաքական նպատակներով:

Այնուամենայնիվ, սելևկյանների ծրագրերը ներառում էին շատ ավելին, քան պարզապես հանդուրժողականության քաղաքականությունը: Զուգահեռաբար նրանք մեծ ծավալներով սկսեցին նոր քաղաքներ կառուցել: Քաղաքներն այն կարևոր հանգրվաններն էին, որոնց միջոցով իրականացվելու էր թե՛ իշխանության ամրապնդումը և թե՛ նոր աշխարհի յուրացումը: Դրանք նպաստեցին նաև հունական լեզվի ու մշակույթի տարածմանը Սելևկյան թագավորության բոլոր մասերում: Չնայած այդ ամենին՝ Սելևկյանները ստիպված էին դիմակայել բազմաթիվ տարածքների անջատողական ձգտումներին, մինչդեռ նրանց տարածքային նկրտումները դեռ չէին բավարարվել:

Հայկական թագավորությունները և Սելևկյանները Ք. ա. III դարում

Երվանդական Հայաստանն անկախության վերականգնումից հետո զգալի փոփոխության ենթարկվեց Ք. ա. III դարում: Թագավորության արևմտյան շրջանները, ներգրավվելով հելլենիստական երկրների զարգացած առևտրատնտեսական հարաբերությունների մեջ, աստիճանաբար սկսեցին տարբերվել թագավորության մյուս տարածքներից: Սա հանգեցրեց նաև այդ հատվածի քաղաքական տարանջատմանը: Ք. ա. III դ. կեսերին Մեծ Հայքից անջատվեցին **Ծոփքն** ու **Կոմմագենեն** և առանձին միացյալ թագավորություն կազմեցին: Հարկավ, այդ մասնատման մեջ իր մեծ ներդրումն ուներ Սելևկյան կայսրությունը, որը ձգտում էր տիրել ամբողջ Հայաստանին: Նորաստեղծ հայկական թագավորության գահին Երվանդական արքայատան կրտսեր ճյուղի ներկայացուցիչ **Սամոսն** (Ծամն) էր: Վերջինս նաև իր անունով դրամներ էր հատում, որոնք մինչ օրս հայտնի ամենահին հայկական մետաղադրամներն են: Որոշ ժամանակ անց Ծոփք-Կոմմագենեի թագավորությունը ևս տրոհվեց, և ստեղծվեցին **Ծոփքի** ու **Կոմմագենեի** առանձին թագավորությունները: Այդպիսով՝ Հայաստանի տարածքում ձևավորվեցին հայկական չորս թագավորություններ՝ **Մեծ Հայք, Փոքր Հայք, Ծոփք** և **Կոմմագենե**: Իսկ արդեն Ք. ա. III դարի վերջին Երվանդական այդ պետությունների համար ստեղծվել էին անբարենպաստ պայմաններ. մոտ էր դրանց վախճանը:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Երվանդական Հայաստանը Ք. ա. III դարի կեսերին մասնատվեց մի քանի պետությունների՝ չկարողանալով պահպանել երկրի ներքին հավասարակշիռ զարգացումը: Սա հնարավորություն տվեց արտաքին ուժերին միջամտելու երկրի ներքին գործերին:

Թե՛ անցյալում և թե՛ մեր օրերում պետության քաղաքական, տնտեսական և մշակութային կայուն աճի ապահովումն առանցքային խնդիր է: Այն պահանջում է հաշվի առնել տարբեր գործոններ: Հույժ կարևոր է երկրի հավասարաչափ զարգացումը: Տարածքային անհավասարաչափ զարգացումը միշտ բացասաբար է ազդում ամբողջ երկրի զարգացման վրա:

S Պատմությունը և մարդը

ՍԵԼԵՎԿՈՍ I ՆԻԿԱՏՈՐ
(Ք. ա. 312-281)

Սելևկոս I Նիկատորը Ալեքսանդր Մեծի զորավարներից մեկն էր, որը մյուս զորավարների հետ պատերազմների արդյունքում Ք. ա. 312 թ. հիմնադրեց Սելևկյան պետությունը:

Սելևկոս I Նիկատորի այս դիմապատկերը երևար ժամանակ եղել է բանավեճի առարկա. դրամագետներն այդ պատկերի մեջ տեսնում են թե՛ Դիոնիսոս աստծուն, թե՛ Ալեքսանդր Մեծին և թե՛ Սելևկոսին: Նրանցից շատերը կարծում են, որ յուրաքանչյուր նույնականացում ճիշտ է. պատկերը երեքի յուրացումն է մեկ դիմապատկերի մեջ: Դրամի դարձերեսը վերաբերում է Սելևկոսի արևմտյան հաղթանակին, իսկ դիմերեսի դիմանկարը վերաբերում է Սելևկոսի արևելյան (Հնդկաստանի) հաղթանակին: Բանն այն է, որ ըստ հունական դիցաբանության՝ Դիոնիսոսը Հնդկաստանի առաջին նվաճողն է, իսկ Ալեքսանդրը՝ երկրորդ նվաճողը: Այսպիսով՝ այս մետաղադրամը նշում է Սելևկոսի բոլոր

Սելևկոսի պատկերով մետաղադրամ
դիմերես դարձերես

հաղթանակներն արևելքում ու արևմուտքում՝ ամրացնելով նրա նոր արքայատոհմը և վարպետորեն դիրքավորելով նրան որպես Ալեքսանդր Մակեդոնացու նոր ժառանգորդ:

Ալեքսանդր Մակեդոնացու հետ զուգահեռման մեկ այլ վկայություն է Սելևկոսի սաղավարտի վրա եղջյուրների առկայությունը: Այն շատ նման է Ալեքսանդրի կրած խոյի եղջյուրներով սաղավարտին, որն ուժի և իշխանության խորհրդանիշ էր:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Ինչո՞ւ է Սելևկոս I Նիկատորն իր մետաղադրամի վրա կիրառել Ալեքսանդր Մեծին առնչվող խորհրդանիշներ:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Ալեքսանդր Մակեդոնացի • Դարեհ II • Երվանդ III • Միթրաուստես • Գավգամելա • Արմավիր • Մեծ Հայք • Փոքր Հայք • Եոփք • Կոմմագենե • հելլենիստական պետություններ • հանդուրժողական քաղաքականություն

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչպե՞ս հաջողվեց Երվանդական արքաներին վերականգնել և պահպանել Հայաստանի անկախությունը:

բ. Վերլուծիր: Ինչո՞վ էր պայմանավորված Սելևկյանների հանդուրժողական քաղաքականությունը:

գ. Հիմնավորիր: Ինչու՞ Եոփքն ու Կոմմագենեն տրոհվեցին Մեծ Հայքից՝ կազմելով միացյալ թագավորություն:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչո՞ւ էին քաղաքները կարևոր հունական մշակույթի, այդպիսով՝ Սելևկյանների իշխանության տարածման համար:

2. Ընդհանրացրու: Որո՞նք էին Երվանդական Հայաստանի մասնատման ներքին և արտաքին պատճառները:

3. Գնահատիր: Ի՞նչ հետևանքներ կարող էին լինել Սելևկյանների համար, եթե Մեծ Հայքի թագավորությունը չտրոհվեր մի քանի այլ թագավորությունների:

Ա4 | Շարունակականություն և փոփոխություն

Պատկերացրու, որ դու Երվանդ III արքայի **խորհրդականն** ես և նրա հետ միասին մասնակցում ես Գավգամելայի ճակատամարտին: Երբ պարզ է դառնում, որ Դարեհ III-ը փախել է մարտադաշտից, հարկավոր է լինում արագ կողմնորոշվել հետագա գործողությունները ծրագրելիս: Ի՞նչ խորհուրդ կտաս Երվանդ արքային. կռվե՞լ մինչև վերջ Ալեքսանդր Մակեդոնացու դեմ, թե՞ նահանջել Հայաստան և հռչակել Հայաստանի անկախությունը:

Ի՞նչ ես կարծում, քո նախաձեռնությանը, արքայից բացի, հասարակության ո՞ր շերտերը կարող էին աջակցել: Իսկ ընդդիմանա՞լ (յուրաքանչյուր պատասխան հիմնավորիր առանձին):

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ ստեղծիր պաստառ՝ օրինակներով ցույց տալով, թե ինչու Մեծ Հայքի թագավորությունը տրոհվեց մի քանի այլ թագավորությունների: Ներկայացման մեջ ներառե՛ք տեսողական պատկերներ ենթագրերով:

2.3 ԳԼՈՒԽ Երվանդական Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Հայաստանի աշխարհագրական դիրքը հանգեցրեց հարևան երկրների հետ մի շարք կարևոր մշակութային փոխանակումների: Մերձավորության և քաղաքական գերակայության պատճառով ամենից ազդեցիկը Պարսկաստանն էր: Ազդեցությամբ երկրորդը Հունաստանն էր հատկապես հելլենիստական ժամանակաշրջանում: Հելլենիզմը Հայաստան ներթափանցեց Երվանդունիների կառավարման վերջին տարիներին:

* ***Ի՞նչ ես կարծում, որո՞նք էին մշակութային փոխանակությունների առավելություններն ու պակասությունները: Դասընկերներիդ հետ քննարկի՛ր, թե այսօր ինչպես է հայկական մշակույթը հարաբերվում տարբեր մշակույթների հետ, ինչպե՞ս է տեղի ունենում մշակութային փոխանակությունը: Կարո՞ղ ես գծապատկերով ցույց տալ ազդեցության ուղղությունները:***

Հին աշխարհի երկրներին ու ժողովուրդներին, ինչպես մեր ժամանակների երկրներին ու ժողովուրդներին, բնորոշ էին մշակութային և սոցիալ-տնտեսական ակտիվ փոխանակությունները: Դրանք կարևոր խթան էին ժողովուրդների ստեղծագործական ներուժի զարգացման և ազգային մշակույթների փոխհարստացման համար: Այդ առումով ուշագրավ է Երվանդական Հայաստանի պատմությունը: Այն ձևավորվել է Վանի թագավորության ավանդների հիման վրա, այնուհետև եղել է Աքեմենյան, իսկ ապա հելլենիստական մշակույթի ազդեցության ոլորտում: Թեև հզոր հարևանները կարևոր ազդեցություններ են գործել, սակայն հայկական թագավորությանը հաջողվել է պահպանել իր լեզուն, հավատալիքները և կառավարման համակարգերը:

Բառարան

Հելլենիզմ (հունականություն) | հունական մշակույթի և տեղական մշակույթների համադրությունը:

Հյուպարքոս | հին հունարեն բառ է, որ նշանակում է ենթաիշխան: Ենթարկվում էին սատրապներին:

Ապրանքափոխանակություն | տնտեսության կազմակերպման ձև, երբ մարդիկ իրենց արտադրած ապրանքները փոխանակում են այլ ապրանքներով:

Դրամական տնտեսություն | տնտեսության կազմակերպման ձև, երբ առևտուրը կատարվում է դրամով:

Կրոնը

Երվանդական Հայաստանում, ինչպես այդ ժամանակների այլ երկրներում, պաշտում էին **բազմաթիվ աստվածների:** Երվանդական նոր արքայատոհմը գերագույն աստվածների եռյակը փոխարինեց նոր եռյակով՝ **Արամազդ՝** աստվածների հայրը, երկնքի ու երկրի արարիչը, **Անահիտ՝** հայոց աշխարհի խնա-

U1 Ձայներ անցյալից

ՔՍԵՆՈՓՈՆ
հույն պատմիչ
(Ք. ա. շուրջ 430-354 թթ.)

«Տներն այստեղ գետնափոր էին, մուտքը ինչպես ջրհորի բերան, իսկ ներքևի մասն ընդարձակ: Մինչդեռ անասունների համար մուտքը տորված էր [հողի մեջ], մարդիկ ցած էին իջնում աստիճաններով: Տներում կային այծեր, ոչխարներ, եզներ, հավեր և սրանց ձագերը: Բոլոր անասունները ներսում կերակրվում էին խոտով: Այնտեղ կար նաև ցորեն և գարի և ընդեղեն և կրատերների[1] մեջ գարուց պատրաստած գինի, որի երեսին լողում էին գարու հատիկներ. կրատերների մեջ կային նաև եղեգներ՝ մեծ ու փոքր, առանց ծնկի: Ծարավելու դեպքում մարդ պետք է այդ եղեգի ծայրը բերանին դներ ու ծծեր: Եվ այն շատ թունդ էր, եթե ջուր չխառնեին, իսկ սովոր մարդու համար շատ ախորժելի ըմպելիք էր»:

1. Հատուկ կավե անոթներ, որոնց մեջ հույները գինին խառնում էին ջրի հետ: Տվյալ դեպքում կրատերների մեջ ոչ թե գինի էր, այլ գարեջուր:

ՔՍԵՆՈՓՈՆ, Անաբասիս, Գիրք IV, Գլուխ V:25:

մակալը, խոհեմության ու պարկեշտության մայրը, մարդկանց բարերարը, և **Միհր՝** արդարության և ճշմարտության պահապանը, մարդկային օրենքների աղբյուրը, որն իր ճառագայթներով լուսավորում է հանուր տիեզերքը և իր ջերմությունը հասցնում մարդկանց ու կենդանիներին: Երվանդական Հայաստանում պաշտում էին այլ աստվածների ևս, սակայն խորն էր հատկապես Միհրի և Անահիտի պաշտամունքը: Այն գոյատևեց մինչև քրիստոնեության ընդունումը և անգամ դրանից հետո: Միհրի պաշտամունքի վկայություններից է հատկապես հայկական «Սասնա ծռեր» էպոսը, մասնավորապես դրան առնչվող **«Միհրի դուռը»,** որտեղից պետք է վերածնվեր **Փոքր Միհրը:** «Միհրի դուռը» վկայում է նաև ուրարտական ժառանգության մասին՝ ուղղակիորեն կապվելով **«Խալդիի դուռ»** հասկացությանը: Այստեղից էլ՝ Խալդիի և Միհր/Միհրի հաջորդականությունը:

Աստվածների մասին պատմություններից զատ Երվանդական Հայաստանում գոյություն ունեին պատմություններ հին հերոսների մասին: Սերնդեսերունդ փոխանցված այդ պատմություններն ու ավանդազրույցները կոչվել են **վիպասք:** Դրանց մեծ մասը մեզ է հասել Մովսես Խորենացու միջոցով: Մեզ հասած ավանդազրույցներից Երվանդական ժամանակաշրջանին են վերաբերում **«Մեծն Տիգրանի վեպը»** և մասամբ **«Արտաշեսի վեպը»:** Առաջինի մեջ պատմվում է մարաց Աժդահակ արքայի դեմ Տիգրան Երվանդյանի տարած հաղթանակի մասին: Երկրորդը պատմում է Երվանդական արքայատան վերջին ներկայացուցչի՝ Երվանդ IV-ի դեմ Արտաշեսի տարած հաղթանակի մասին:

Սոցիալական կարգը

Երվանդական թագավորության հասարակությունը, ինչպես Վանի թագավորության հասարակությունը, բաժանված էր մի քանի անհավասար **սոցիալական խմբերի** կամ **դասերի:** Կենտրոնում **արքան** էր, որի ձեռքում էր երկրի ռազմաքաղաքական և կրոնական գերագույն իշխանությունը: Այդ իրավունքները որոշակիորեն սահմանափակվեցին, երբ Հայաստանը վերածվեց սատրապության, իսկ **սատրապին** արդեն նշանակում էր պարսից «արքայից արքան»: Երվանդունիների դեպքում, ինչպես վկայում են սկզբնաղբյուրները, արվել է որոշակի բացառություն. նրանք ունեցել են ոչ միայն քաղաքական և դատական, այլև ռազմական իշխանություն: Նրանք ռազմադաշտ կարող էին դուրս բերել 48 հազարանոց բանակ (40 հզ. հետևակ, 8 հզ. հեծելազոր): Սատրապի իշխանությունն ինչ-որ առումով սահմանափակվում էր նաև **ավագների խորհրդով,** որը բաղկացած էր ազնվականության ներկայացուցիչներից:

Հայաստանի սատրապը երկիրը կառավարելու համար ուներ իրեն ենթակա պաշտոնյաներ: Հույն զորավար-պատմիչ Քսենոփոնից իմանում ենք սատրապին ենթակա **հյուպարքոսի** մասին: Սատրապության կարևոր հաստատություններից էր պետական գրագրությունը վարող **դիվանատունը՝** իր հատուկ **դպիրով:** Կային նաև **հացարարներ, մատռվակներ, հարկահավաքներ** և այլք:

Երկրի քաղաքական, տնտեսական և մշակութային կյանքում այդ ժամանակ մեծ էր քրմական դասի կշիռը: Քրմերի բարձր դիրքը և հեղինակությունը մեծապես հիմնված էին տաճարների և տաճարային տնտեսությունների նյութական հզորության վրա: Եթե նախկինում գերագույն իշխանության մարմնացումը արքան էր, ապա այժմ այդ իշխանությունը սատրապի հետ կիսում էր **քրմապետը:** Դա թերևս պայմանավորված էր նրանով, որ Հայաստանի քրմապետները նույնպես սերում էին արքայական տոհմից: Հայտնի է, որ վերջին երվանդական արքա Երվանդ IV-ի օրոք քրմապետը նրա եղբայր **Երվազն** էր:

U2 Ձայներ անցյալից

ՍՏՐԱԲՈՆ
հույն պատմիչ և աշխարհագրագետ
(Ք. ա. շուրջ 62-24 թթ.)

«Ոսկու հանքեր կան Այուսպիրիտիսի[1] մեջ, Կաբալայում[2], որտեղ Ալեքսանդրը ուղարկեց Մենոնին գինվորներով, սա խեղդամահ արվեց տեղաբնակների կողմից: Կան նաև այլ հանքեր, հատկապես սանդիկս կոչվածը, որը կոչում են նաև «Հայկական գույն» [...]: Երկիրը այնքան հարուստ է ձիաբուծման արոտներով, ոչ պակաս Մեդիայից, որ Նեսայան ձիերը[3], այստեղ ևս լինում են, որ օգտագործում էին Պարսից արքաները, և Հայաստանի սատրապը Պարսիկին ամեն տարի ուղարկում էր երկու բյուր մտրուկ [...]:»:

1. Բարձր Հայքի Սպեր գավառը:
2. Քաղաք Բարձր Հայքում:
3. Արագավազ և դիմացկուն ձիերի մի տեսակ, որ տարածված էր Մարաստանում և Պարսկաստանում:

ՍՏՐԱԲՈՆ, Աշխարհագրություն, XI, 14:9:

Նայելով քարտեզին

Հայաստանը Աքեմենյանների օրոք: Արքայական ճանապարհի մի հատվածն անցնում էր Հայաստանի հարավային սահմանով

1. **Բացահայտիր քարտեզը:** Ինչո՞ւ է կառուցվել Արքայական ճանապարհը, և ո՞ր քաղաքներն էր այն կապում միմյանց:
2. **Կիրառիր աշխարհագրական հմտություններդ:** Աշխարհագրական ո՞ր առանձնահատկությունն է Հայաստանի գտնվելու վայրը դարձնում կարևոր:

Մարդկանց մեծամասնությունն աշխատում էր որպես **հողագործ, արհեստավոր** կամ **վաճառական:** Գյուղատնտեսական արտադրության մեջ կարևոր դերակատարում ունեցող միավորը **համայնքն** էր, որը ղեկավարվում էր **գեղջավագի** կողմից:

Տնտեսությունը

Երվանդական անկախ թագավորության, հետո նաև սատրապական Հայաստանի տնտեսության մեջ առանցքային դեր ուներ **երկրագործությունը:** Նշանակալի էր մնում նաև **անասնապահության դերը**: Այս մասին տեղեկությունների հիմնական սկզբնաղբյուրը Քսենոփոնի աշխատություններն են, որոնցում նա բազմիցս խոսում է հայերի բարեկեցության մասին: Գյուղատնտեսության հիմնական ճյուղերի՝ երկրագործության ու անասնապահության մասին կարելի է որոշակի եզրակացություն անել հայերի տներում Քսենոփոնի հանդիպած սննդամթերքից *(ցորենի հաց, գարեհաց, գարուց պատրաստված գինի*

(գարեջուր), հորած գինիներ, չամիչ, ընդեղեն, ձեթ և այլն): Իսկ երկրագործության նման բարձր մակարդակը վկայում է նաև **ոռոգման համակարգի** առկայության մասին, որը մասամբ ժառանգվել էր Վանի թագավորությունից: Ոռոգելի տարածքների վարն ու հերկը կատարվել են երկաթե խոփ ունեցող արորներով: Գործածվել են նաև մետաղե ծայրով բրիչներ: Երկաթից էին մանգաղներն ու գերանդի հիշեցնող գործիքները:

Քսենոփոնը վկայում է նաև Հայաստանում բուծվող ազնվացեղ **ձիերի** մասին, որոնք «փոքր էին պարսկականներից, բայց ավելի աշխույժ էին»:

Զարգացման բավարար մակարդակի էր հասել նաև **ներքին** ու **արտաքին առևտուրը**, որի մասին վկայում են Հերոդոտոսն ու Քսենոփոնը: Ուշագրավ է մանավանդ Բաբելոն արտահանվող գինու մասին Հերոդոտոսի վկայությունը: Արտահանումը կատարվում էր Եփրատ գետով: Բայց և հարկ է նշել, որ Հայաստանի մեծ մասում դեռ անծանոթ էին **դրամական տնտեսությանը**, և առևտուրը կատարվում էր հիմնականում **ապրանքափոխանակության** ձևով: Առևտրի զարգացման համար հատկապես կարևոր նշանակություն ունեցավ Դարեհ I-ի կառուցած բարեկարգ և անվտանգ **«արքայական ճանապարհը»**:

Քաղաքներն ու արհեստները

Վանի թագավորությունից հետո Հայաստանում նոր **քաղաքների** ստեղծման մասին վկայություններ գրեթե չկան: Երվանդական պետության կարևոր կենտրոնները շարունակում էին մնալ **Վան-Տոսպը, Արմավիր-Արգիշտիխինիլին, Էրեբունին** և այլն անգամ սատրապության ժամա-

S Պատմությունը և մարդը

Սամոս Երվանդունու պատկերով մետաղադրամ

ՍԱՄՈՍ (ՇԱՄ) ԵՐՎԱՆԴԱԿԱՆ
(Ք. ա. 260-240)

Ծոփք-Կոմմագենե միացյալ թագավորության արքան, որն Աքեմենյան արքա Արտաշես II-ի (Ք. ա. 404–358 թթ.) տեսան էր: Հաջորդել է հորը՝ Երվանդունիների կրտսեր ճյուղի ներկայացուցիչ Երվանդ III-ին: Շարունակել է Աքեմենյաններից անկախացած երկրների ինքնուրույնության պահպանման և կենտրոնացված պետականության ստեղծման՝ հոր վարած քաղաքականությունը: Կառուցել է բազմաթիվ քաղաքներ, որոնցից նշանավոր էր հատկապես մոտ Ք. ա. 245 թ. հիմնված **Սամոսատ (Շամուշատ)** քաղաքը: Այն դարձավ պետության մայրաքաղաքը: Այժմ գտնվում է Թուրքիայում՝ Աթաթյուրքի անվան ջրամբարի տակ:

Այս դիմապատկերի մեջ Սամոսն անմորուս է: Սա հելլենիստական մշակույթի ազդեցության վկայություն է. մորուքի բացակայությունը հատուկ էր բոլոր հելլենիստական երկրներին:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ներկայացված տեղեկության հիման վրա վերլուծի՛ր Սամոսի դիմապատկերը: Վերնագրի՛ր քո կատարած վերլուծությունը:

նակաշրջանում: Հայաստանի անկախության վերականգնումից հետո **հելլենիզմի** ազդեցությամբ քաղաքաշինությունը նոր թափ հավաքեց: Այն ավելի վաղ զարգացավ Ծոփք-Կոմմագենեի միացյալ թագավորությունում: Մեծ Հայքում քաղաքաշինությունն ակտիվացավ Երվանդունի վերջին արքա **Երվանդ IV-ի** ժամանակ: Նա մայրաքաղաքը Արմավիրից տեղափոխեց նոր կառուցված **Երվանդաշատ:** Կառուցեց նաև Երվանդակերտ, Երվանդավան և Բագարան քաղաքները: Քաղաքները նաև արհեստագործության կենտրոններ էին:

Երվանդական Հայաստանի մշակույթում նկատելի է կապը Վանի թագավորության մշակութային ժառանգության հետ: Ժառանգված ավանդույթները տեսանելի են քանդակներում, մետաղամշակման արվեստում, զարդարվեստում, կավագործության, մանածագործության և այլ արհեստներում:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Երվանդական Հայաստանը գտնվում էր տարբեր քաղաքակրթությունների և առևտրային ճանապարհների խաչմերուկում: Ծարունակական շփումների պայմաններում այն կարողացավ թե՛ պահպանել իր ինքնատիպությունը և թե՛ վերածվել շեշտված համադրական բնույթ ունեցող քաղաքակրթության: Համադրականությունը դարձավ հայկական քաղաքակրթության առանձնահատկություններից մեկը և կարևորվում է նաև մեր օրերում:

Գործնական առաջադրանք

1. Դասընկերոջդ հետ համացանցի օգնությամբ Երվանդական Հայաստանի վերաբերյալ Մովսես Խորենացու՝ փոխանցած ավանդազրույցների մասին տեղեկություններ գտիր: Ձեր գտած տեղեկությունները և դրանց հիման վրա ձեր արած եզրակացությունները դասարանին ներկայացրե՛ք բանավոր: Ինչպե՞ս հաջողվեց Տիգրան Երվանդյանին հաղթել մարաց Աժդահակ արքային:
2. Դասընկերոջ հետ վերանայե՛ք Երվանդական Հայաստանի թագավորության սոցիալական կարգը և կազմե՛ք բուրգի գծապատկեր: Ըստ կարևորության՝ բուրգի տարբեր մասերում տեղադրե՛ք Երվանդական թագավորության սոցիալական դասերը: Հետո համեմատե՛ք ձեր աշխատանքը Վանի թագավորությունն ուսումնասիրելիս կատարած համապատասխան աշխատանքի հետ:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Արամազդ • Անահիտ • Միհր • հելլենիզմ (հունականություն) • հյուպարքոս
ապրանքափոխանակություն • դրամական տնտեսություն

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ի՞նչ առանձնահատկություն ուներ Երվանդական Հայաստանի մշակույթը:

բ. Բացատրիր: Երվանդական Հայաստանի և Վանի թագավորության ժառանգական կապը:

գ. Վերլուծիր: Ինչո՞ւ քաղաքաշինությունն ավելի մեծ թափ հավաքեց հելլենիզմի ժամանակաշրջանում:

դ. Պարզաբանիր: Ինչո՞վ էր պայմանավորված Երվանդական Հայաստանում քրմական դասի ազդեցության աճը:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ընդհանրացրու: Ինչպե՞ս ենք իմանում Երվանդական Հայաստանի ներքին և արտաքին առևտրի զարգացման մակարդակի մասին:

2. Ճանաչիր ազդեցությունը: Ինչո՞վ կբացատրես Ծոփք-Կոմմագենե թագավորությունում քաղաքաշինության ավելի վաղ զարգացումը:

3. Որոշարկիր պատմական համատեքստը: Ինչո՞վ էր պայմանավորված Երվանդական Հայաստանի մշակույթի շեշտված համադրական բնույթը:

Ա4 | Պատմական հեռանկար

Պատկերացրու, որ դու **շրջիկ վաճառական** ես և որոշել ես, որ ժամանակն է վերջապես հաստատվել ինչ-որ քաղաքում: Ընկերներն առաջարկում են ընտրություն կատարել երկու քաղաքների միջև: Մեկում գերակայում է ապրանքափոխանակությունը, իսկ մյուսում՝ դրամական տնտեսվարությունը: **Ո՞ր քաղաքը կընտրեիր դու և ինչո՞ւ:**

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | Ներկայացրու: Ի՞նչ տեղեկություններ է պարունակում սկզբնաղբյուրներից յուրաքանչյուրը:

2 | Համեմատիր: Ինչպե՞ս են բնութագրում Երվանդական (սատրապական) Հայաստանը հույն պատմիչները: Որքանո՞վ են լրացնում իրար նրանց տեղեկությունները: Նշիր դրանց նմանություններն ու տարբերությունները:

3 | Մեկնաբանիր: Ի՞նչ եզրակացություն կարող ես անել վերոհիշյալ սկզբնաղբյուրներից Երվանդական Հայաստանի առևտրատնտեսական կյանքի մասին: Փաստարկիր և հիմնավորիր:

ԹԵՄԱ 3

Արտաշեսյան Հայաստան

Ուսումնասիրելով այս թեման՝ կկարողանաս.

- **ա. Նկարագրել** Արտաշեսյան Հայաստանի պետական կարգը, բանակը, տնտեսությունը, դիցարանը և դրանց կրած փոփոխությունները, մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները՝ համեմատելով արդի իրողությունների հետ:
- **բ. Արժևորել** Արտաշեսյան Հայաստանի քաղաքակրթական ժառանգության դերը հայոց և համաշխարհային մշակույթների համատեքստում:
- **գ. Բացատրել և կարծիք հայտնել** Արտաշեսյան արքաների գործունեության, կատարած վերափոխությունների և ռազմաքաղաքական հարաբերությունների, դրանց արդյունքների և հետևանքների մասին:
- **դ. Գնահատել և եզրահանգումներ անել** Արտաշեսյան Հայաստանի հզորացման, հայոց աշխարհակալության ստեղծման նախադրյալների, կործանման պատճառների ու հետևանքների մասին:

Արծաթե մեդալիոն
Հայաստան, Սիսիան
Ք. ա. II դար

3.1 ԳԼՈՒԽ Արտաշեսյան Հայաստանի կազմավորումը. Արտաշես I

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Հելլենիզմի տարածման արդյունքում Մեծ Հայքում տեղի ունեցան զարգացումներ, որոնք համապատասխան վերափոխությունների անհրաժեշտություն առաջացրին: Վերափոխությունները կարող են լինել միակողմանի և համալիր: Որպես օրենք՝ միակողմանի վերափոխությունները կարճաժամկետ լուծումներ են և միշտ ձախողվում են, եթե չեն վերաճում համալիր վերափոխությունների՝ ներառելով միաժամանակ տնտեսական, քաղաքական, մշակութային, սոցիալական ոլորտները և այլն:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր՝ արդյոք հնարավոր է պետության զարգացումը կամ առաջադիմությունն առանց վերափոխությունների: Հատկապես ե՞րբ են անհրաժեշտ վերափոխությունները:***

Ի՞նչ վերափոխություններ գիտես, որ իրականացվել կամ իրականացվում են ժամանակակից Հայաստանի Հանրապետությունում:

Երվանդականների միասնական պետության տրոհումից հետո Մեծ Հայքի թագավորությունը դեռ պահպանում էր իր անկախությունն ու ինքնուրույնությունը, սակայն աստիճանաբար թեքվում էր դեպի անկում: Երվանդունի վերջին՝ **Երվանդ IV (Ք. ա. մոտ 220-201)** արքան մի շարք վերափոխություններ ձեռնարկեց՝ ավելի շատ իր իշխանության պահպանման, քան թե պետության փլուզումը կասեցնելու համար: Ուշագրավ վերափոխություն էր նոր մայրաքաղաքի՝ **Երվանդաշատի** և կրոնական նոր կենտրոնի՝ **Բագարանի** կառուցումը: Դրանով միմյանցից անջատվեցին թագավորանիստ և պաշտամունքային կենտրոնները, որոնք նախկինում մեկտեղվում էին: Երվանդաշատի կառուցմամբ երկրում ստեղծվեց յուրօրինակ **երկիշխանություն**՝ արքայի և քրմապետի: Վերջինս Երվանդ IV-ի եղբայր Երվազն էր: Երկիշխանության հետևանքով երկրի թուլացումը համընկավ Սելևկյան պետության նոր վերելքի հետ. **Անտիոքոս III-ը** փորձում էր վերականգնել Սելևկյան կայսրությունը: Նա հաջողությամբ օգտվեց Մեծ Հայքի ներքին անկայունությունից և հրահրելով խորացրեց ներքին տարաձայնությունները: Երվանդ IV-ը **Ք. ա. 201 թ.** պարտություն կրեց կենտրոնախույս ուժերի դեմ պայքարում, որոնք գլխավորում էին Անտիոքոսի հայ զորավարներ **Արտաշեսն** ու **Զարեհը:** Հեղաշրջումից հետո Արտաշեսը նշանակվեց **Մեծ Հայքի,** իսկ Զարեհը՝ **Ծոփքի ստրատեգոս:**

Բառարան

Երկիշխանություն | երբ իշխանությունը բաժանված է երկու մասի՝ աշխարհիկ և հոգևոր:

Ստրատեգոս | սկզբնապես զինվորական պաշտոն, բայց Անտիոքոս III-ի ժամանակ՝ նաև քաղաքական-վարչական պաշտոն, որը նույնացվում է մարզի կառավարչի պաշտոնի հետ:

Արտաշես Ի-ը և Հայաստանի անկախացումը

Սելևկյաններն իրագործեցին իրենց կարևոր նպատակներից մեկը՝ Հայաստանի չեզոքացումը, և անցան ամբողջ Փոքր Ասիան, Մակեդոնիան ու Եգիպտոսը գրավելու մեծ ռազմավարությանը: Տարածքային նման նկրտումները, սակայն, այս անգամ հաջողություն չունեցան: Արևմուտքում այդ ժամանակ ի հայտ էր եկել մի նոր ուժ՝ **Հռոմը,** որը արմատապես փոխեց տարածաշրջանի ուժային հավասարակշռությունը: Բախումն անխուսափելի էր: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ **Ք. ա. 190 թ. Մագնեսիա** քաղաքի մոտ, որտեղ Սելևկյանները պարտություն կրեցին: Արտաշեսն օգտվեց ստեղծված իրավիճակից, դիվանագիտական հարաբերություններ հաստատեց Հռոմի հետ և իրեն հռչակեց Մեծ Հայքի թագավոր: Իսկ Զարեհը դարձավ Ծոփքի թագավոր: Նորաստեղծ պետությունների անկախություններն ամրագրվեցին **Ք. ա. 188 թ. Ապամեայի** պայմանագրով: Անկախություն ձեռք բերած Մեծ Հայքի թագավորությունն այնուհետև ճեռնամուխ եղավ հայկական պետությունների քաղաքական միավորմանը և կենտրոնացված միասնական պետության ստեղծմանը:

U1 Ձայներ անցյալից

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ
(մոտ 45/50-120)

«Պատմում են, թե կարթագենացի Հաննիբալը հռոմեացիներից Անտիոքոսի կրած վերջնական պարտությունից հետո գնաց հայ Արտաշեսի մոտ և հրահանգիչ ու խորհրդատու դարձավ նրան օգտավետ ճեռնարկներում: Բացի դրանից, նկատելով երկրում չօգտագործված և անտեսված հարմարագույն և խիստ հաճելի մի վայր՝ նա այդ տեղում ուրվագծեց քաղաքի հատակագիծ: Հաննիբալը այնտեղ տարավ Արտաշեսին և ցույց տալով տեղանքը՝ համոզեց նրան այդ վայրում քաղաք հիմնել: [...] Այսպիսով՝ կառուցվեց մեծ և շատ գեղեցիկ քաղաք, որը կոչվեց թագավորի անունով և հռչակվեց Հայաստանի մայրաքաղաք»: **(Զուգահեռ կենսագրություններ, Լուկուլլուս, 31):**

Հայկական հողերի վերամիավորումն ու արտաքին քաղաքականությունը

Ք. ա. III դարում Երվանդական Հայաստանի թուլացման և տրոհման արդյունքում զգալի տարածքներ նվաճվել էին հարևան պետությունների կողմից: Գահ բարձրանալով՝ Արտաշես Ի-ը ճեռնամուխ եղավ զավթված տարածքների հետ նվաճմանը և թագավորության սահմանների ընդարձակմանը: Նպատակին հետամուտ՝ մի շարք արշավանքների արդյունքում **Մարաստանից** (Ատրպատականից), հետո **Վրաստանից, Պոնտոսից**, իսկ ավելի ուշ՝ նաև **Սելևկյաններից** նա հետ գրավեց և Հայաստանին միացրեց զավթված բոլոր հայաբնակ տարածքները: Տարածքային նման աճի կարևոր արդյունքներից էր հայ ժողովրդի մշակութային և լեզվական համախմբումը. երկրի սահման-

Նայելով քարտեզին

Հայաստանը Արտաշես I արքայի օրոք (Ք. ա. 189-160)

1. **Բացահայտիր քարտեզը:** Քարտեզի վրա ցույց տուր՝ որոնք էին Արտաշեսյան Հայաստանի հարևան պետությունները Ք. ա. 189-160 թթ., և որ թագավորություններն էին Երվանդականներ Ժամանակ Հայաստանից տարածքներ գավթել:

2. **Կիրառիր աշխարհագրական հմտություններդ:** Ի՞նչ ես կարծում, Արտաշես արքային կհաջողվե՞ր Մեծ Հայքին միացնել Ծոփքի և Փոքր Հայքի թագավորությունները: Ի՞նչը կարող էր խանգարել նրան:

ները հասնում էին այնտեղ, ուր, Մովսես Խորենացու ձևակերպմամբ, «հայերեն խոսքը վերջանում էր»: Հույն աշխարհագրագետ Ստրաբոնի ձևակերպմամբ՝ Արտաշեսի ջանքերով միավորված հողերում «բոլորը միալեզու» էին:

Նոր մայրաքաղաքի հիմնադրումը. Արտաշատ

Արքայի հաջորդ քայլը եղավ երկրի նոր կենտրոնի՝ մայրաքաղաքի հիմնումը: Այն կառուցվեց մոտավորապես **Ք. ա. 185 թ.** Արարատյան դաշտում՝ Արաքս գետի ափին, ինը բլուրների վրա: Արքայի անունով այն անվանվեց **Արտաշատ:** Հույն պատմիչների վկայությամբ՝ քաղաքի տեղանքն ընտրել էր կարթագենացի հռչակավոր զորավար **Հաննիբալը,** որն իր պարտությունից հետո ապաստանել էր նախ Սելևկյան արքա Անտիոքոս III-ի մոտ, իսկ ապա Արտաշեսի: Ծուտով Արտաշատը դարձավ Արաքսի հովտով դեպի Հնդկաստան, ինչպես նաև դեպի Սև ծով տանող առևտրային ճանապարհների հիմնական հանգույցը: Երվանդաշատից, Արմավիրից և այլ բնակավայրերից արքան մայրաքաղաք տեղափոխեց մեծ թվով բնակչություն՝ այն արագորեն բնակեցնելու և զարգացնելու նպատակով: Բագարանից այստեղ տեղափոխվեցին աստվածների և նախնիների արձանները՝ մայրաքաղաքն օժտելով նաև

U2 Ձայներ անցյալից

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ
(մոտ 410-490)
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

«Արտաշեսը գնում է այն տեղը, որտեղ Երասխը և Մեծամորը խառնվում են, և այնտեղ բլուրը հավանելով՝ քաղաք է շինում և իր անունով կոչում Արտաշատ: Երասխն էլ օգնում է նրան անտառի փայտով: Ուստի առանց դժվարության և արագ շինելով՝ այնտեղ մեհյան է կանգնեցնում և Բագարանից այնտեղ է փոխադրում Արտեմիսի արձանը և բոլոր հայրենական կուռքերը: Բայց Ապողոնի արձանը կանգնեցնում է քաղաքից դուրս՝ ճանապարհին մոտ: Երվանդի քաղաքից դուրս է բերում հրեա գերիներին, որ այնտեղ տարված էին Արմավիրից, և բերում նստեցնում է Արտաշատում: Նա Երվանդի քաղաքի բոլոր վայելչությունները, ինչ որ նա փոխադրել էր Արմավիրից, և ինչ որ հենց ինքն էր շինել, բերում է Արտաշատ և ավելի շատ բան էլ իր կողմից շինելով՝ [այդ քաղաքը] սարքավորում է իբրև արքայանիստ քաղաք»:
(Պատմություն Հայոց, Գիրք II:ԽԹ):

S Պատմությունը և մարդը

ՀԱՆՆԻԲԱԼ
(Ք. ա. 247-183)
Կարթագենցի զորավար և պետական գործիչ: Հին աշխարհի մեծագույն զորավարներից մեկը:

Ինը տարեկանում երդվել է լինել Հռոմի թշնամի: Դառնալով Իսպանիայում կարթագենյան զորքերի գլխավոր հրամանատարը՝ սանձազերծել է երկրորդ Պունիկյան պատերազմը (Ք. ա. 218-201): Չնայած սկզբնական շրջանում Հռոմի նկատմամբ տարած իր հաղթանակներին ու հաջողություններին՝ ի վերջո 201 թ. պարտություն է կրել Զամայի ճակատամարտում:

Չհաշտվելով իրավիճակի հետ՝ Ք. ա. 189 թ. ժամանել է Հայաստան՝ հույս փայփայելով հակահռոմեական պայքարի մեջ ներքաշել Արտաշես I արքային: Մեծ Հայքի արքան Հաննիբալի խորհրդով հիմնադրել է Արտաշատ (Արտաքսատա) քաղաքը և նրան է հանձնարարել շինարարական աշխատանքների ղեկավարությունը: Այդ իսկ պատճառով քաղաքը հին աշխարհում կոչվել է նաև հայկական Կարթագեն: Չնայած այդ ամենին՝ Արտաշես արքան չի աջակցել Հաննիբալին՝ նախընտրելով պահպանել Հռոմի հետ բարիդրացիական հարաբերությունները:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Արտաշես արքան հրաժարվեց աջակցել Հաննիբալին:

կրոնական կենտրոնի գործառույթով: Բացի մայրաքաղաք Արտաշատից՝ Արտաշես արքան կառուցեց այլ քաղաքներ ևս, որոնցով զարկ տվեց Հայաստանի տնտեսական, մշակութային և քաղաքական կյանքին:

Ներքին քաղաքականությունը (վերափոխություններ)

Արտաշես I-ի գահակալությունը նշանավորվեց մի քանի այլ նախաձեռնություններով ևս, որոնք նպաստեցին հայկական քաղաքակրթության առաջխաղացմանը, մերձեցրին այն հելլենիստական պետություններին: Միևնույն ժամանակ ազդեցություններին դիմադրելու համար (մանավանդ Սելևկյանների) արքան հունարենի փոխարեն պաշտոնական լեզու դարձրեց **արամերենը:**

Կարևոր էր **հողային** վերափոխությունը. Արտաշես I-ը հողերի վերաբաժանում կատարեց և իր անունով հատուկ սահմանաքարեր դրեց գյուղերի ու ագարակների միջև: Այդպիսով նա նախ և առաջ հոգ էր տանում, որ ավագանու ներկայացուցիչներն իրենց տիրույթները չընդարձակեն գյուղերի հաշվին՝ օգտագործելով իրենց ուժն ու հեղինակությունը: Արտաշեսը հստակ գիտակցում էր, որ իր իշխանության կարևորագույն հենարանը ազատ համայնականներն էին: Կարևոր վերափոխություն էր նաև թագավորությունը **120 վարչական շրջանների** կամ **գավառների** բաժանելը՝ պետության կառավարումը բարելավելու նպատակով: Արանցից մի քանիսը հետագայում վերածվեցին նախարարական իշխանությունների:

Արտաշես արքան վերափոխեց նաև **հայոց բանակը**՝ բաժանելով այն **չորս զորավարությունների**: Այդպիսով ավելի ճկուն և արդյունավետ էր դառնում բանակի կառավարումը, բարձրանում էր նրա մարտունակությունը:

Բազմաթիվ վերափոխությունների մեջ առանձնանում է նաև միասնական տոմարի ներմուծումը. գործելու էր ժամանակը հաշվելու, տոները նշելու միասնական համակարգ:

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Ներկայացրո՛ւ:** Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան Պլուտարքոսից և Մովսես Խորենացուց մեջբերված տեքստերի միջև:

2 | **Համեմատի՛ր:** Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ է սկզբնաղբյուրներից առաջինում շեշտվում Հաննիբալի դերը Արտաշատ մայրաքաղաքի հիմնադրման գործում, մինչդեռ երկրորդում նրա մասին ոչ մի խոսք չկա:

3 | **Մեկնաբանի՛ր:** Ինչո՞վ կբացատրես այն, որ նոր մայրաքաղաք հիմնադրելուց հետո Արտաշես արքան Բագարանից, Արմավիրից և Երվանդաշատից այստեղ է բերում աստվածների և հայրենական կուռքերի արձանները, հրեա գերիներին և անհրաժեշտ այլ բաներ: Փաստարկի՛ր և հիմնավորի՛ր պատասխանդ դասանյութի օգնությամբ:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ ստեղծի՛ր պաստառ-քարտեզ՝ օրինակներով և քարտեզի վրա կատարած նշումներով ցո՛ւյց տալով Արտաշես I-ի ռազմական գործողությունների տարբեր ուղղությունները:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Հայաստանի անկախության վերականգնումից հետո Արտաշես արքան կատարեց մի շարք վերափոխություններ: Դրանց շնորհիվ Հայաստանը ոչ միայն ամրապնդեց իր ներքին կայունությունը, այլև դարձավ տարածաշրջանի ազդեցիկ պետություններից մեկը: Ինչպես Ուրարտուի դեպքում, այդպես և այժմ տեսնում ենք վերափոխությունների դրական հետևանքները: Այսօր ևս պետության կամ հասարակության զարգացումն ապահովելու համար անհրաժեշտ են համապատասխան վերափոխություններ, որոնք կարող են նպաստել նաև ակտիվ արտաքին քաղաքականություն վարելուն:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

երկիշխանություն • ստրատեգոս • Արտաշես I • Զարեհ • Մագնեսիա • Անտիոքոս III • Հաննիբալ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչպե՞ս հաջողվեց Անտիոքոսի հայ զորավարներ Արտաշեսին ու Զարեհին տապալել Երվանդականների թագավորությունը և ճանաչվել Մեծ Հայքի և Ծոփքի արքաներ:

բ. Բացատրիր: Ինչո՞վ կբացատրես այն, որ Արտաշես I արքայի ջանքերով միավորված հողերում բոլորը միալեզու էին:

գ. Վերլուծիր: Ի՞նչ վերափոխություններ կատարեց Արտաշես I արքան իր թագավորության դիրքն ու վարկանիշը բարձրացնելու համար:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչպե՞ս էին ազդում Արտաշես I արքայի վերափոխությունները Հայաստանի արտաքին քաղաքականության վրա:

2. Ընդհանրացրու: Ինչպե՞ս էր Արտաշես I արքան փորձում խուսափել հելլենիստական (մանավանդ Սելևկյան) ազդեցություններից. փաստարկիր և հիմնավորիր պատասխանդ:

3. Գնահատիր: Նշիր և հիմնավորիր, թե ինչից ենք իմանում, որ Արտաշես I արքայի կառավարմամբ Մեծ Հայքը դարձավ տարածաշրջանի ուժեղ և ազդեցիկ պետություններից մեկը:

Ա4 | Պատճառ և հետևանք

Պատրաստիր Արտաշես I արքայի իրականացրած ներքին վերափոխությունների մասին պատմող պաստառ՝ ընտրելով քննարկված ոլորտներից մեկը (օրինակ՝ բանակ, տնտեսություն և այլն): Դասակարգիր դրանք ըստ կարևորության:

Ըստ քեզ՝ ինչո՞ւ է կարևոր վերափոխություններից յուրաքանչյուրը: Եթե դու լիներիր այդ ժամանակվա Հայաստանի արքան, հատկապես ո՞ր վերափոխությանը մեծ ուշադրություն կդարձնեիր:

3.2 ԳԼՈՒԽ Հայկական աշխարհակալ տերությունը. Տիգրան II Մեծ

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Արտաշես I արքայի վերափոխությունները և ճկուն դիվանագիտությունը հող նախապատրաստեցին հետագայում Հայաստանի մեծագույն նվաճումների համար բոլոր բնագավառներում: Տիգրան Մեծի օրոք (Ք. ա. 95-55) Հայաստանը կարճ ժամանակով հասավ կայսերական հզորության: Տիգրան Մեծը ոչ միայն Մեծ Հայքին միացրեց հայկական հողերը, այլև ընդլայնեց պետության տարածքներն այլ պետությունների հաշվին՝ հանդես գալով որպես Հռոմի և Պարթևստանի նվաճողականության հակառակորդ:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր կայսրության ընդլայնման տարբեր ուղիներ: Ի՞նչ տարբերակ կամ տարբերակներ կընտրեիր դու. հիմնավորիր քո մոտեցումը: Ըստ կարևորության՝ դասակարգի՛ր կայսրության ընդլայնման հնարավորությունները և դրանից բխող դժվարությունները:***

Ք. ա. II դարից սկսած՝ միջազգային ասպարեզում գրեթե միաժամանակ հանդես են գալիս **Հռոմը, Պարթևստանը և Մեծ Հայքը:** Այս պետություններն ավելի ու ավելի վճռական ազդեցություն էին գործում Արևելյան Միջերկրածովքի հելլենիստական պետությունների վրա: Մեծ չափով ուժեղանում է Պարթևական թագավորությունը:

Բառարան

Լևանտ | Միջերկրածովքի տարածաշրջանի արևելյան հատվածի երկրների ընդհանուր անվանումը:

Դաշինք | պաշտոնական համաձայնություն երկու կամ ավելի պետությունների միջև պատերազմի դեպքում փոխադարձ աջակցության վերաբերյալ:

Գրավելով Պարսկաստանը, Ատրապատականը և Միջագետքը՝ պարթևները Արտաշես I-ի կառավարման տարիներից հետո սպառնալիք են դառնում Հայաստանի համար: Պարթևական թագավորության հետ գրեթե միաժամանակ Արևելքում իր նվաճումներն է սկսում նաև հանրապետական Հռոմը: Երբ հռոմեական զորքերը նվաճում են Հայաստանին սահմանակից Կապադովկիան, անմիջական սպառնալիք է ստեղծվում նաև Հայաստանի համար: Այսպիսին էր վիճակը, երբ **Ք. ա. 95 թ.** Մեծ Հայքում գահ է բարձրանում Տիգրան II-ը, որը մինչ այդ պատանդ էր Պարթևական թագավորությունում: Ք. ա. 115 թ. Արտավազդ I արքան պարտություն էր կրել պարթևներից և ստիպված իր զարմիկին պատանդ էր ուղարկել Տիզբոն:

Հոր՝ Տիգրան I-ի մահից հետո Տիգրան II-ը ստիպված էր որպես փրկագին պարթևներին զիջել հարավ-արևելքից Պարթևստանին սահմանակցող **«Յոթանասուն հովիտներ»** կոչված տեղանքը: Պարթևների Միհրդատ II արքան օգնում է նրան գահ բարձրանալ:

U1 Ձայներ անցյալից

ՄԱՐԿՈՍ ՅՈՒՆԻԱՆՈՍ ՀՈՍՏԻՆՈՍ
(II-III դարեր) - հռոմեացի պատմիչ

«Ի վերջո [Ասորիքի] ժողովուրդը դիմեց օտարի օգնությանը և սկսեց փնտրել օտարերկրացի թագավոր: Ոմանք կարծում էին, որ պետք է հրավիրել Միհրդատ Պոնտացուն, մյուսները՝ Եգիպտոսի Պտղոմեոսին: Սակայն իրերի բերմամբ Միհրդատը պատերազմների մեջ էր հռոմեացիների դեմ, իսկ Պտղոմեոսը Ասորիքի մշտական թշնամին էր եղել: Այսպիսով՝ բոլորը համաձայնության եկան Հայաստանի թագավոր Տիգրանի շուրջ, որը, սեփական ռազմական ուժ ունենալուց բացի, պարթևների թագավորության դաշնակիցն էր ու Միհրդատի խնամին: Եվ այսպես, հրավիրված լինելով Ասորիքի գահին բազմելու, նա 17 տարի շարունակ կառավարում էր ամենայն անդորրությամբ» **(Քաղվածքներ, XL, 1)**:

U2 Ձայներ անցյալից

ՀՈՎՍԵՓՈՍ ՓԼԱՎԻՈՍ
(Ք. ա. շուրջ 30 թ. – մ. թ. 100 թ.) հրեա պատմիչ

«Լուր է հասնում, թե Հայոց թագավոր Տիգրանը երեսուն բյուր զորքով ներխուժել է Սիրիա (Ասորիք) և գալիս է Հրեաստանի դեմ: Այս, բնականաբար, ահաբեկեց թագուհուն և ժողովրդին: Ուստի նրանք բազում և արժանավայել ընծաներ ուղարկեցին նրան և դեսպաններ, երբ նա դեռևս պաշարում էր Պտղոմայիս քաղաքը: Որովհետև Սելենե թագուհին, որը կոչվում էր նաև Կլեոպատրա, այդ ժամանակ տիրում էր Սիրիային և հորդորել էր բնակիչներին՝ դռները փակել Տիգրանի առաջ: Ուստի դեսպանները, հանդիպելով նրան, խնդրում էին բարենպաստ պայմաններ շնորհել թագուհուն և ժողովրդին: Իսկ նա, գնահատելով այն, որ նրանք ժամանել են այդքան հեռու տարածությունից, լավագույնս հուսադրեց» **(Հրեական պատերազմի մասին, Գիրք XIII:419-421)**:

Մեծ Հայքի ամբողջականության վերականգնումը

Տիգրան II-ը գահ բարձրացավ շատ բարեպատեհ ժամանակահատվածում: Հռոմեական իշխանությունը Փոքր Ասիայում մեծապես խարխլվել էր Պոնտոսի թագավոր **Միհրդատ VI Եվպատորի** ռազմական արշավանքների պատճառով: Միհրդատը սպառնում էր հռոմեացիներին ընդհանրապես վտարել Ասիայից: Օգտվելով այս իրավիճակից, իսկ թիկունքում ունենալով պարթևական աջակցությունը՝ Տիգրան արքան առաջին հերթին Ծոփքը վերամիացրեց Մեծ Հայքին: Մի բան, որը չէր հաջողվել նրա նշանավոր պապին՝ Արտաշես I-ին: **Ք. ա. 94 թ.** Տիգրանի զորքը մտավ Ծոփք և առանց դժվարության գրավեց այն: Այս և հետագա իրադարձությունները թույլ են տալիս ենթադրել, որ Տիգրանն ուներ Հայաստանի ներքին ու արտաքին քաղաքականության մի ծավալուն ծրագիր, որը մտահղացել էր դեռ պատանդ եղած ժամանակ:

Նայելով քարտեզին

Տիգրան Մեծի կայսրությունը Ք. ա. 80 թ. (ժամանակակից սահմաններով)

1. **Բացահայտիր քարտեզը:** Տիգրան Մեծի կայսրության ընդարձակումը դեպի արևմուտք ի՞նչ մարտահրավերների առջև էր կանգնեցնում Հայաստանին: Ի՞նչ հետևանքներ կարող էր դա ունենալ Հայաստանի համար:
2. **Կիրառիր աշխարհագրական հմտությունները:** Ի՞նչ պետություններ էր ընդգրկում Տիգրան Մեծի կայսրությունը: Այսօրվա ո՞ր երկրների տարածքներն է ընդգրկել այն:

Ծոփքի միացումը միջազգային ասպարեզ դուրս գալու առաջին քայլն էր Հայաստանի համար: Հաջորդ քայլը եղավ Հռոմի աճող վտանգի չեզոքացումը Պոնտոսի հետ դաշինք կնքելու միջոցով: **Ք. ա. 94 թ.** կնքվեց հայ-պոնտական դաշինքը, ըստ որի՝ Հայաստանը պարտավորվում էր ռազմական աջակցություն ցույց տալ Պոնտոսին ընդդեմ Կապադովկիայի: Նվաճվող քաղաքներն ու հողերը պատկանելու էին Միհրդատին, իսկ շարժական գույքն ու գերիները՝ Տիգրանին: Դաշինքն ամրապնդվեց Տիգրանի և Միհրդատի դստեր՝ **Կլեոպատրայի** ամուսնությամբ: Տիգրանը նպատակ ուներ այդ դաշինքով կանխել Հայաստանի արևմտյան սահմաններում Հռոմի տիրապետության հաստատումը: Թեպետ նա հակադրվում էր հռոմեական շահերին, բայց և Հայաստանի դիրքերն էր ամրապնդում ժամանակի քաղաքական համատեքստում: Արդյունքում Ք. ա. 93 թ. հայ-պոնտական զորքերը նվաճեցին Կապադովկիան:

S Պատմությունը և մարդը

ՄԻՀՐԴԱՏ II ՊԱՐԹԵՎ

(Ք.ա. 124/123-88/87)

Միհրդատ II-ը համարվում է պարթևների ամենանշանավոր տիրակալը, որի օրոք կայսրությունը տարածքներ կորցնելուց հետո վերականգնեց իր դիրքը որպես մեծ տերություն և հասավ իր ամենամեծ սահմանին:

Նա առաջին պարթև արքան էր, որը կիրառեց ***Արքայից արքա*** տիտղոսը, այդպիսով ընդգծելով պարթև Արշակունի իշխող արքայատան սաաը Իրանական Աքեմենյան կայսրության հետ: Իր մետաղադրամների դիմերեսին իրեն պատկերում էր իրանական ապարոշով (դիադեմով), հակառակ հելլենիստական դիադեմի, որն օգտագործում էին իր նախորդները: Նրա կառավարման տարիներին բացվեց ***Մետաքսի ճանապարհը*** և դարձավ հիմնական ճանապարհը Արևելքի և Արևմուտքի միջև:

Պարթև Միհրդատ II-ը ևս մի քանի հաջող արշավանքներ է կատարում դեպի արևմուտք և

Միհրդատ II-ի պատկերով մետաղադրամ

պարթևների տերության սահմանագիծը հասցնում մինչև Եփրատ: Նա նկատել է Հայաստանի ռազմավարական դիրքը Փոքր Ասիայի, Կովկասի և Իրանի միջև և Ք. ա. 115 թ. Միհրդատ II-ը ներխուժել է Հայաստան: Հայոց թագավոր Արտավազդ I-ին ստիպել է ճանաչել պարթևների գերիշխանությունը և պատանդ վերցրել թագաժառանգ Տիգրանին:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞վ էր կարևոր Հայաստանը Միհրդատ II Պարթևի համար: Ինչու՞ Միհրդատ II -ը, չնայած Հայաստանի նկատմամբ իր հաղթանակին, ստիպեց հայոց արքային, որ պատանդ հանձնի արքայազն Տիգրանին:

Տիգրան Մեծի նվաճումները

Հայ-պոնտական դաշինքին ընդդեմ՝ **Ք. ա. 92 թ.** կնքվեց հռոմեա-պարթևական ռազմական դաշինքը: Ըստ այս դաշինքի՝ կողմերը համաձայնության էին գալիս Եփրատ գետը համարել սահման Հռոմի և Պարթևստանի միջև: Նոր իրադրության պայմաններում Տիգրան II-ը անցավ հարձակողական քաղաքականության: **Ք. ա. 87 թ.** հայկական զորքերը հարձակվեցին Պարթևստանի վրա: Նախ հետ գրավեցին Յոթանասուն հովիտները, իսկ ապա գրավեցին Ատրպատականը, նաև Մարաստանը: Պարթևստանի **Գոտերզ** արքան հաշտություն խնդրեց: Հաշտությունը կնքվեց **Ք. ա. 85 թ.**: Պարթևստանի արքան հրաժարվեց Ատրպատականից և Հյուսիսային Միջագետքից, ինչպես նաև **«արքայից արքա»** տիտղոսից՝ այդպիսով ընդունելով հայոց թագավորի գերիշխանությունը:

Այնուհետև հայկական զորքերը մեկը մյուսի հետևից գրավեցին Հյուսիսային Միջագետքի երկրները՝ ընդհուպ մոտենալով Եփրատ գետին, հասնելով Սելևկյան թագավորությանը: Ք. ա. 83 թ. գրավեցին Սելևկյանների մայրաքաղաք **Անտիոքը,** որը դարձավ Տիգրան Մեծի գլխավոր վարչական կենտրոնը **Լևանտում:** Սելևկյաններից նա սեփականեց **«աստված»,** ավելի ճիշտ՝ **«աստվածային»** տիտղոսը, որը նշված է նրա մետաղադրամների վրա: Ասորիքի միացումից հետո արքան ձեռնամուխ եղավ Կոմմագենեի, Կիլիկիայի և ապա

Փյունիկիայի նվաճմանը: Այսպիսով՝ Տիգրան Մեծի տերության սահմաններն ընդհուպ մոտեցել էին Եգիպտոսի սահմաններին:

Տիգրանակերտը՝ կայսրության մայրաքաղաք

Տիգրան Մեծի ստեղծած աշխարհակալ տերությունն այժմ ձգվում էր Միջերկրական ծովից մինչև Կասպից ծով: Գործող մայրաքաղաքը՝ Արտաշատը, մնացել էր տերության ծայր հյուսիսում և չէր կարող կատարել նորաստեղծ հսկայածավալ կայսրության կենտրոնի դերը: Այդ դերը չէր կարող ստանձնել նաև Անտիոքը, որը դուրս էր բուն հայկական հողերից: Հույժ անհրաժեշտ էր դարձել նոր մայրաքաղաքի կառուցումը: Եվ ահա 80-ական թթ. վերջերին սկսվեց նոր մայրաքաղաքի կառուցումը, որն արքայի անունով կոչվեց **Տիգրանակերտ:** Այն գտնվում էր Աղձնիք նահանգում՝ այն վայրում, որտեղ թագադրվել էր արքայազն Տիգրանը:

Նոր հիմնադրված մայրաքաղաքը բնակեցնելու նպատակով Տիգրան Մեծը հարկադրական մի շարք վերաբնակեցումներ կատարեց Կիլիկիայից, Կապադովկիայից և Միջագետքից: Մայրաքաղաքում բնակեցվեցին նաև հայ ավագանու շատ ներկայացուցիչներ: Նոր մայրաքաղաքը գտնվում էր Աքեմենյան ***արքայական ճանապարհի*** մոտ և շուտով ձեռք բերեց ռազմավարական և առևտրային առավելություններ՝ որպես միջազգային առևտրի աճող կենտրոն:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Տիգրան II-ն իր նախորդներից ժառանգել էր ներքին և արտաքին ցնցումները հաղթահարած և բավականին կայուն թագավորություն: Նա կարողացավ ոչ միայն ապահովել իր տերության ներքին զարգացումը, այլև վարել ակտիվ արտաքին քաղաքականություն՝ դաշինքների և հզոր բանակի միջոցով ապահովելով Հայաստանի հավասարակշիռ դիրքը տարածաշրջանում:

Այսօր ևս արտաքին հարաբերություններում հույժ կարևոր է բազմակողմանի համագործակցությունը առևտրի, դիվանագիտության, ռազմական և այլ ուղղություններով: Այդպես հնարավոր է հօգուտ պետության կարգավորել խաղաղության և պատերազմի հարցերը, մինչդեռ միակողմանի հարաբերության դեպքում անհնար է նման ճկունություն դրսևորել:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ ստեղծի՛ր պաստառ՝ օրինակներով ցույց տալով, թե ինչու Արտաշատ մայրաքաղաքն այլևս չէր բավարարում Տիգրան Մեծի քաղաքականությանը, և ի՞նչ առավելություններ ուներ նոր՝ Տիգրանակերտ մայրաքաղաքը: Ներկայացման մեջ ներառե՛ք նաև քարտեզ կամ քարտեզներ (քաղաքական, ճանապարհային և այլն):

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Ներկայացրու:** Ի՞նչ տեղեկություններ են պարունակում հույն և հռոմեացի պատմիչների տեքստերը: Ո՞ր իրադարձությունների մասին է խոսքը:

2 | **Համեմատիր:** Ի՞նչ նմանություններ և տարբերություններ կան Հովսեփոս Փլավիոսի և Հուստինուսի տեղեկությունների միջև:

3 | **Մեկնաբանիր:** Ինչո՞ւ առաջարկված բոլոր թեկնածուներից հատկապես Տիգրանի թեկնածությունը համարվեց Ասորիքի (Սիրիայի) գահի համար լավագույնը:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Տիգրան II Մեծ • Միհրդատ VI Եվպատոր • Կլեոպատրա • Գոտերզ • Անտիոք • Տիգրանակերտ • «Յոթանասուն հովիտներ» • արքայից արքա • Լևանտ • դաշինք

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ի՞նչ սպառնալիք էին Հայաստանի համար ներկայացնում Պարթևական թագավորությունն ու հանրապետական Հռոմը, մանրամասնել յուրաքանչյուրի համար:

բ. Վերլուծիր: Ի՞նչ հնարավորություններ և վտանգներ ստեղծեցին Հայաստանի համար Տիգրան Մեծի ռազմական նվաճումները:

գ. Բացատրիր: Ինչո՞ւ արքայազն Տիգրանը համաձայնեց իր՝ հայոց գահին հաստատվելու դիմաց պարթևներին գիջել «Յոթանասուն հովիտները»:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչո՞վ էր Հռոմի համար վտանգավոր հայ-պոնտական դաշինքը:

2. Ընդհանրացրու: Որո՞նք էին հայ-պոնտական դաշինքի ընձեռած հնարավորությունները Հայաստանի համար: Արդյո՞ք այն արդարացրեց Տիգրան II-ի հույսերը:

3. Գնահատիր: Ինչո՞ւ Տիգրան Մեծը չբավարարվեց Պարթևստանի նվաճմամբ ու արքայից արքայի տիտղոսով և նվաճեց նաև Սելևկյան թագավորությունն ու Լևանտի այլ երկրներ:

Ա4 | Պատճառ և հետևանք

Պատկերացրու՝ դու Հայաստան վերադարձած արքայազն Տիգրանն ես: Հայոց գահին հաստատվելու, ինչպես նաև Հայաստանի դիրքերն ամրապնդելու համար խիստ անհրաժեշտ է դաշինք կնքել Պոնտոսի հետ: Ավելին՝ դաշինքը պետք է ամրագրվի նաև Պոնտոսի արքայի աղջկա հետ քո ամուսնությամբ, թեպետ դու արդեն ունես քո ընտրյալը:

Ինչպե՞ս կբացատրես քո ընտրյալին ստեղծված իրավիճակը:

3.3 ԳԼՈՒԽ Հայ-հռոմեական պատերազմներն ու Տիգրան Մեծի կայսրության փլուզումը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Արդեն Վանի թագավորության, երվանդական Հայաստանի օրինակներով գիտես պետության ընդլայնմանը զուգահեռ առաջացող փոփոխությունների և խնդիրների մասին: Տիգրան Մեծի օրոք Հայաստանի ընդլայնումը փոփոխեց երկրի ներքին ու արտաքին հավասարակշռությունը: Մեծ էր արտաքին մարտահրավերը՝ հռոմեական վտանգը, որը թույլ չտվեց, որ Տիգրան Մեծը կայսրության ընդլայնմանը համապատասխան վերափոխություններ կատարի:

* ***Ի՞նչ ես կարծում, ի՞նչ միջոցներով (վերափոխություններ, դաշինքներ և այլն) հնարավոր կլիներ կարգավորել երկրի խախտված ներքին ու արտաքին հավասարակշռությունը և փրկել կայսրությունը: Արդյո՞ք բոլոր կայսրություններն են դատապարտված կործանման:***

Բառարան

Փոխարքայություն | տոհմարքայի կառավարմանը ենթակա երկրամասը կամ գավառը: Փոխարքաները նշանակվում էին արքայի կողմից:

Արքայական գանձարան | արքայական գանձերի, զարդերի և պետական միջոցների պահեստարան, որտեղ դրանք ստացվում, պահվում և կառավարվում էին: Տեղակայվում էին սովորաբար անմատչելի բերդերում, ընդ որում՝ բաշխելով մի քանի բերդերի միջև:

Իր հզորության գագաթնակետին՝ մոտ Ք. ա. 80 թվականի դրությամբ, Տիգրան Մեծի ստեղծած կայսրությունը ներառում էր Հարավարևմտյան Ասիայի գրեթե բոլոր քաղաքակրթական կենտրոնները: Նորաստեղծ տերության մեջ խոսում էին մեկ տասնյակից ավել լեզուներով: Դրա կազմում գտնվող երկրները միմյանցից շատ էին տարբերվում թե՛ իրենց պատմական անցյալով և թե՛ զարգացման մակարդակով: Նվաճված երկրներում իր տիրապետությունն ամրապնդելու, դրանք կառավարելու և առաջացած ապստամբությունները ճնշելու նպատակով Տիգրան Մեծը հիմնում է **փոխարքայություններ:** Ընդ որում՝ նորաստեղծ կայսրության կենտրոնը մնում էր Հայաստանը և ոչ նվաճված տարածքներից որևէ մեկը:

Չնայած Տիգրան Մեծը ջանադրաբար կազմակերպում էր լայնածավալ կայսրության կյանքը, օտարազգի հպատակների հավատարմությունն անկայուն էր: Նվաճված որոշ երկրներ պարբերաբար ապստամբում էին: Կար անգամ ներքին հեղաշրջման վտանգը: Այս խնդիրները խաթարում էին կայսրության կայունությունը: Հարկավ, արտաքին ուժերը (Հռոմը և անգամ Պոնտոսը) ևս անկայունություն էին հրահրում: Նրանցից յուրաքանչյուրը ձգտում էր Մեծ Հայքում առկա իրադրությունը ծառայեցնել իր նպատակներին:

Այսպիսով՝ մինչ Տիգրան Մեծը զբաղված էր կայսրության կառավարման հարցերով, հռոմեական վտանգը քայլ առ քայլ մոտենում էր Հայաստանին:

Հռոմեա-հայկական պատերազմը. Լուկուլլուսի արշավանքը

Հայկական կայսրությունն իր հզորության գագաթնակետին էր, երբ Տիգրան II-ը բախվեց Հռոմի հետ: Տիգրան Մեծի կայսրության հզորացումն ու ընդլայնումը հակասում էին Հռոմեական կայսրության շահերին: Հռոմը ձգտում էր հաստատվել Մերձավոր Արևելքում: Առիթը չուշացավ: Հերթական հռոմեա-պոնտական պատերազմն ավարտվեց Ք. ա. 71 թ. Պոնտոսի ջախջախմամբ: Պարտված Միհրդատ Եվպատորը փախավ Հայաստան: Տիգրան արքան չհրաժարվեց նրան ընդունելուց, թեպետ չընդունեց նրան արքունիքում՝ փորձելով խուսափել Հռոմի հետ առճակատումից: Ու թեև նա մերժեց հռոմեացիների՝ Եվպատորին իրենց հանձնելու պահանջը, հռոմեացի զորավար **Լուկիուս Լուկուլլուսը** չշտապեց հարձակվել Հայաստանի վրա: Նա դեռ պետք է ավարտեր Պոնտոսի նվաճումը և ամրապնդվեր այնտեղ: Լուկուլլուսը, սակայն, միաժամանակ օգտագործում էր հռոմեական դիվանագիտության փորձված միջոցները (կաշառք, խոստումներ, դավադրություններ և այլն)՝ հող նախապատրաստելով առաջիկա պատերազմի համար:

Տիգրանակերտի և Արածանիի ճակատամարտերը

Մինչ Տիգրան Մեծը զբաղված էր իր տերության հարավային մասին սահմանակից վայրերի նվաճմամբ, **Ք. ա. 69 թ.** Լուկուլլուսի բանակն անսպասելիորեն ներխուժեց Հայաստան: Հռոմեական զորքերը շուտով պաշարեցին մայրաքաղաք Տիգրանակերտը: Այդ ընթացքում Տիգրան Մեծը մոտեցավ պաշարված Տիգրանակերտին: Նրա 6 հազարանոց թիկնազորը հանկարծակի գրոհով կարողացավ մտնել պաշարված քաղաք և այնտեղից դուրս բերել արքայի ընտանիքն ու **գանձարանը:** Ճակատամարտը տեղի ունեցավ հոկտեմբերի 6-ին: Հռոմեացիները, օգտվելով Տիգրանի թույլ տված ռազմավարական սխալից, կարողացան հաղթել ճակատամարտում: Լուկուլլուսը նախապես կարողացել էր շրջանցել հայկական զորաբանակը և նշանակալի ուժեր էր կուտակել հայոց զորքի թիկունքում: Թիկունքից անակնկալ հարձակումն էլ վճռորոշ եղավ ճակատամարտում. հայկական զորքը, զգալի կորուստներ տալով, ստիպված եղավ նահանջել երկրի խորքը: Հռոմեացիների հաղթանակը վճռեց և Տիգրանակերտի ճակատագիրը:

Տիգրանակերտի պարտությունից հետո հայկական կողմը որդեգրեց նոր ռազմավարություն: Տիգրանը և Միհրդատ Եվպատորը, որին իր մոտ էր կանչել հայոց արքան, Ք. ա. 69-68 թվականների ձմռանը եռանդուն կերպով մարզում էին բանակը:

S Պատմությունը և մարդը



Կիկերոնի դիմաքանդակը

ՄԱՐԿՈՒՍ ՏՈՒԼԻՈՒՍ ԿԻԿԵՐՈՆ
(Ք.ա. 106-43)

Հին հռոմեական քաղաքական գործիչ և փիլիսոփա, նշանավոր հռետոր: Երիտասարդ տարիքում հետաքրքրվում էր հունական գրականությամբ, ուսանում էր հունական ճարտասանություն հանրահայտ հռետորների մոտ՝ դատական հռետոր դառնալու նպատակով: Զբաղվել է ակտիվ քաղաքականությամբ: Կողմ էր հանրապետական կարգերի վերականգնմանը: Դա, սակայն, տեղի չունեցավ, թեև Օկտավիանուսի, Անտոնիուսի և Լեպիդուսի ճնավորած նոր՝ **Երկրորդ եռապետության** (Ք. ա. 43) պաշտոնական նպատակն էր «հանրապետությունը կարգի բերելը»: Սպանվել է եռապետների հրամանով:

Իր ճառերից մեկում անդրադարձել է նաև Տիգրան Մեծի գործունեությանը, որտեղ մասնավորապես ասել է.

«Մենք ինքներս վերջերս վարել ենք Հայոց թագավոր Տիգրանի դեմ երկարատև և ծանր պատերազմ, քանզի նա, անօրենություններ գործելով մեր դաշնակիցների հանդեպ, կարելի է ասել, պատերազմ է սանձազերծել մեր դեմ:

Եվ նա անձամբ ինքնին շատ զորեղ էր և մեր տերության ոխերիմ թշնամուն՝ Պոնտոսից վտարված Միհրդատին իր զորքերով իր թագավորության մեջ պաշտպանեց: [...]

Այսպիսով նա (Տիգրանը), որը ինքը Հռոմի ժողովրդի թշնամին էր, որն ընդունել էր մեր չարագույն ոսոխին իր տերության մեջ, որը բախման մեջ էր մտել մեզ հետ, որը մարտի էր բռնվել, որը պայքարեց գրեթե տիրակալության համար, այժմ թագավորում է և օգտվում բարեկամի և դաշնակցի կոչումից, որոնց նա ինքը իր գենքով բռնացել էր» **(Ի պաշտպանություն Պուբլիուս Սեստիուսի» ճառից)»:**

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Ի՞նչ իրադարձություն նկատի ունի Կիկերոնը: Հիմնավո՞ր է արդյոք նրա մեղադրանքը Տիգրան Մեծի նկատմամբ:

Պատերազմական գործողությունները վերսկսվեցին Ք.ա. 68 թ. գարնան վերջին: Լուկուլլուսը, որն իր զորքով ճմեռել էր Կորդուքում, զորաբանակը շարժեց դեպի «հայկական Կարթագեն»՝ Արտաշատ: Հայկական բանակն այս անգամ գործադրեց ակտիվ պաշտպանական նահանջի, մանր ու անկանոն կռիվներում հակառակորդին հյուծելու և բարոյալքելու մարտավարությունը:

Ի վերջո նույն թվականի սեպտեմբերին **Արածանի** գետի ափին տեղի ունեցավ երկրորդ խոշոր ճակատամարտը, որտեղ հռոմեական զորքը ծանր պարտություն կրեց: Կորուստն այնքան մեծ էր, որ զինվորները հրաժարվեցին շարունակել ռազմերթը: Լուկուլլուսն ստիպված էր լքել Հայաստանը: Մեկ տարվա ընթացքում Տիգրան Մեծին գրեթե հաջողվեց վերականգնել իր ռազմական ու քաղաքական հեղինակությունը և տիրապետությունն Ասորիքում (Սիրիայում) ու Միջերկրածովքի ափերին:

Պոմպեուսի արշավանքը և Արտաշատի պայմանագիրը

Արևելքում Հռոմի լրջորեն խախտված հեղինակությունը վերականգնելու նպատակով հռոմեական Սենատը գլխավոր հրամանատար նշանակեց **Գնեուս**

Պոմպեուսին: Վերջինիս հաջողվեց հռոմեա-պարթևական դաշինք կնքել ընդդեմ Տիգրան Մեծի և Միհրդատ Եվպատորի: Ք. ա. 66 թ. գարնանը սկսվեց հռոմեա-հայկական պատերազմի երկրորդ փուլը: Պոմպեուսը նախ պարտության մատնեց Միհրդատ Եվպատորին, որից հետո զորաբանակը շարժեց դեպի Հայաստան: Մինչ այդ Տիգրան Մեծը կարողացել էր պարտության մատնել Հայաստան ներխուժած պարթևական զորքին, որին Հայաստան էր առաջնորդում Տիգրան Մեծի դեմ ապստամբած որդին՝ **Տիգրան Կրտսերը:** Վերջինս Արտաշատի մոտ կրած պարտությունից հետո փախավ Պոմպեուսի մոտ: Տիգրան Մեծի համար ստեղծվեց բավականին բարդ իրավիճակ: Հայաստանն առանց դաշնակիցների միայնակ էր մնացել Հռոմի և Պարթևստանի դեմ: Ընդ որում՝ ներքին իրավիճակը ևս անկայուն էր: Տիգրան Մեծին մնում էր հաշտություն առաջարկել Պոմպեուսին: Վերջինս համաձայնեց, քանի որ մտադիր չէր նպաստել Պարթևստանի ուժեղացմանը: Երկու կողմերի միջև **Ք. ա. 66 թ.** աշնանն **Արտաշատում** դաշնագիր կնքվեց: Ըստ դաշնագրի՝ Տիգրան Մեծը, հօգուտ Հռոմեական հանրապետության, հրաժարվում էր Հայաստանից դուրս կատարած իր բոլոր նվաճումներից: Ծոփքն անջատվում էր Մեծ Հայքից իբրև առանձին թագավորություն: Այստեղ պետք է թագավորեր Տիգրան Կրտսերը՝ պայմանով, որ նա էր ժառանգելու հայոց գահը Տիգրան Մեծից հետո: Հայաստանը նաև ռազմատուգանք էր վճարելու Հռոմին, ընդ որում՝ Ծոփքի **արքայական գանձարանից:** Հայաստանը ճանաչվում էր «Հռոմեական ժողովրդի բարեկամ և դաշնակից»: Տիգրանին անգամ հաջողվեց պահպանել «արքայից արքա» տիտղոսը:

Այսպիսով՝ Տիգրան Մեծը, օգտագործելով հռոմեա-պարթևական հակասությունները, ոչ միայն կարողացավ պահպանել Մեծ Հայքի տարածքային ամբողջականությունը, այլև Մեծ Հայքին վերադարձնել Կորդուքն ու Հյուսիսային Միջագետքը, որոնք գրավել էին պարթևները:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Տիգրան Մեծը քաղաքական մեծ փոփոխություններ առաջացրեց թե՛ Արևելքում և թե՛ Արևմուտքում: Նորաստեղծ կայսրության կայունությունը միառժամանակ հնարավոր եղավ պահպանել դաշինքների և ռազմական գործողությունների միջոցով: Սակայն իրավիճակը կտրուկ փոխվեց, երբ Փոքր Ասիայում ձևավորվեց նոր ռազմաքաղաքական կացություն. Հռոմի հանրապետությունը չէր հանդուրժում ո՛չ հայ-պոնտական կամ այլ դաշինքներ, ո՛չ էլ Հայաստանի աննախադեպ ընդարձակումը դեպի Լևանտյան տարածքներ: Ժամանակակից կառավարությունները ևս մշտապես կանգնած են դաշինքների և հակադաշինքների խնդրականի առջև: Հույժ կարևոր է իրավիճակներին ճիշտ գնահատական տալը և հեռանկարային հարաբերություններ հաստատելու ուղղությամբ աշխատանքներ տանելը:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր՝

փոխարքայություն • արքայական գանձարան • Լուկիուս Լուկուլլուս • Գնեուս Պոմպեուս • Տիգրան Կրտսեր • Տիգրանակերտի ճակատամարտ • Արածանիի ճակատամարտ • Արտաշատի դաշնագիր

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու՝ Ի՞նչ սպառնալիք էին Հայաստանի համար ներկայացնում Պարթևական թագավորությունն ու հանրապետական Հռոմը, մանրամասնել յուրաքանչյուրի համար:

բ. Բացատրիր՝ Ինչո՞ւ հռոմեացի զորավար Լուկիուս Լուկուլլուսը չշտապեց հարձակվել Հայաստանի վրա, երբ Միհրդատ Եվպատորը, պարտվելով Լուկուլլուսին, փախավ Հայաստան:

գ. Ներկայացրու և վերլուծիր՝ Ինչո՞ւ հայկական զորքերը պարտվեցին Տիգրանակերտի ճակատամարտում և ինչպե՞ս կարողացան հաղթել Արածանիի ճակատամարտում:

դ. Հիմնավորիր՝ Ինչո՞ւ հաղթանակած Պոմպեուսը որոշեց պահպանել Մեծ Հայքի թագավորությունը:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը՝ Ի՞նչ ես կարծում, արդյո՞ք հնարավոր կլիներ խուսափել հռոմեա-հայկական պատերազմից, եթե Տիգրան Մեծը հռոմեացիներին հանձներ Միհրդատ Եվպատորին, որն իր աներհայրն էր: Ինքդ ինչպե՞ս կվարվեիր:

2. Ընդհանրացրու՝ Ինչպե՞ս Տիգրան Մեծին հաջողվեց համաձայնության գալ Պոմպեուսի հետ և պահպանել թե՛ Մեծ Հայքի թագավորությունը, թե՛ «արքայից արքա» տիտղոսը:

3. Գնահատիր՝ Որքանո՞վ էր հաջողված կամ ձախողված Արտաշատի դաշնագիրը:

Ա4 | Պատճառ և հետևանք

Պատկերացրու, որ դու Տիգրան Մեծի զորավարներից մեկն ես: Տիգրանակերտի ճակատամարտին նախապատրաստվելիս ի՞նչ խորհուրդ կտայիր արքային, որ խուսափեիք պարտությունից: Պատրաստիր պաստառ-քարտեզ, որով կհիմնավորես քո առաջարկը:

Ի՞նչ ես կարծում, պատմությունն ի՞նչ ընթացք կունենար, եթե Տիգրանակերտի ճակատամարտում հայկական զորքերը հաղթանակ տանեին, և Տիգրանակերտը շարունակեր մնալ տերության մայրաքաղաքը:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ օգտագործիր համացանցն այս գլխում նշված ճակատամարտերից մեկն ուսումնասիրելու համար: Ձեր գտած տեղեկությունները և դրանց հիման վրա արված ձեր եզրակացությունները դասարանին ներկայացրե՛ք բանավոր հնարավորության դեպքում՝ քարտեզներով:

Առանձնացրու քեզ հետաքրքրող տեղեկությունը և քննարկի՛ր դասարանում: Ո՞ր տեղեկությունն է քեզ ավելի հիմնավոր կամ հետաքրքիր թվում: Ինչո՞ւ:

3.4 ԳԼՈՒԽ Արտավազդ II-ը և վերջին Արտաշեսյանները

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Տիգրան Մեծի օրոք Հայաստանը տարածաշրջանում ուներ զգալի ներուժ ու ռազմաքաղաքական ազդեցություն և կարող էր հանդես գալ աշխարհակալական նկրտումներով: Արտաշատի պայմանագրից հետո իրավիճակը փոխվեց: Հայաստանը կանգնել էր քաղաքակրթական երկընտրանքի առջև: Երկու հզոր տերությունների՝ Հռոմի և Պարթևստանի գերիշխանության պայմաններում պետք էր ապահովել սեփական անվտանգությունը:

Դասընկերներիդ հետ քննարկի՛ր, թե հնարավո՞ր է արդյոք բազմակողմ հարաբերություններում որոշակի հավասարակշռություն պահպանելը: Ինչպե՞ս: Զուգահեռնե՛ր անցկացրեք այսօրվա իրավիճակի հետ:

Բառարան

Կոնսուլ | Հանրապետական Հռոմի ամենաբարձր ընտրովի պաշտոնը:

Լեգեոն | Հին Հռոմի բանակի հիմնական կազմակերպական միավորը ուշ հանրապետության և կայսրության ժամանակներում:

Արտաշատի դաշնագրի կնքումից հետո Հայաստանը ստիպված էր հրաժարվել աշխարհակալական ձգտումներից: Տարածաշրջանում փոփոխվել էր քաղաքական և ռազմական ուժերի հարաբերակցությունը, և արդյունքում առաջնային էր դարձել անկախության ու տարածքային ամբողջականության պահպանումը: Հայաստանը թեպետ պահպանում էր մեծ տերության իր կարգավիճակը, բայց երկու հզոր հարևանների՝ Հռոմի և Պարթևստանի միջև դարձել էր խոցելի: Երբ Հռոմի հենակետերն Արևելքում ամրապնդվեցին, վերջինս Հայաստանի հետ հարաբերություններում դրսևորում էր ավելի շատ նվաճողի, քան դաշնակցի վերաբերմունք: Այսպիսին էր դրությունը, երբ հայոց գահին բարձրացավ Տիգրան Մեծի որդի **Արտավազդ II-ը (Ք. ա. 55-34):** Նրա հիմնական խնդիրը դարձավ Հայաստանի հավասարակշիռ դիրքի ապահովումը, այն է՝ բարեկամական հարաբերություններ պահպանելը միաժամանակ երկու տերությունների հետ: Արտավազդ արքան որդեգրեց չեզոքության ռազմավարությունը՝ **չպատերազմել Պարթևստանի հետ, չաջակցել Հռոմին:**

Մարկուս Կրասսուսն Արևելքում

Ք. ա. 54 թվականից՝ Հռոմն ակտիվացրեց իր քաղաքականությունը Հայաստանի, Մերձավոր Արևելքի և Պարթևստանի ուղղությամբ: Արտավազդի գահակալությունից կարճ ժամանակ անց **Մարկուս Կրասսուսը**, որը նոր էր նշանակվել Ասորիքի **կոնսուլ**, առանց բավարար նախապատրաստության պարթևների դեմ պատերազմ սկսեց: 54 թ. գարնանը նա ժամանեց Ասորիք՝ ծրագրելով

U1 Ձայներ անցյալից

ՊԼՈՒՏԱՐՔՈՍ
(մոտ 45/50-120)

«Սուրենը Կրասսուսի գլուխը և ձեռքը ուղարկեց Հայաստան՝ Որոդեսին [...]:

Երբ այս անցքերը տեղի էին ունենում, Որոդեսն արդեն հաշտվել էր Արտավազդ Արմենի հետ. նրանք համաձայնվել էին, որ Արտավազդի քույրն ամուսնանա Որոդեսի որդու՝ Բակուրի հետ, նրանք տոնադարձաբար իրար մոտ խնջույքներ ու կերուխում էին կազմակերպում, հաճախ հունական ներկայացումներ էին տրվում, քանի որ Որոդեսին օտար չէին հունարեն լեզուն ու գրականությունը, իսկ Արտավազդը նույնիսկ ողբերգություններ էր հորինում, գրում էր ճառեր ու պատմական երկեր, որոնց մի մասը պահպանվել է: Երբ պալատ բերեցին Կրասսուսի գլուխը, սեղաններն արդեն հավաքել էին, և ողբերգակ դերասան Յասոն Տրալլացին արտասանում էր Եվրիպիդեսի «Բաքոսուհիները» ողբերգությունից Ագավեին վերաբերող հատվածը: Այն պահին, երբ նրան ծափահարում էին, սրահ մտավ Սիլլակեսը, երկրպագեց թագավորին և սրահի մեջտեղ նետեց Կրասսուսի գլուխը»: **(Զուգահեռ կենսագրություններ, Կրասսուս, 32-33):**

ոչնչացնել Պարթևստանը: Պարթևների արքա **Որոդես II-ի** պատվիրակները նրա մոտ եկան խաղաղության առաջարկով, որը, սակայն մերժվեց: Արտավազդ II արքան նույնպես ներկայացավ Կրասսուսին՝ դրանով վերահաստատելով «հռոմեական ազգի բարեկամի» իր կարգավիճակը: Հայոց արքան Կրասսուսին առաջարկեց Պարթևստան արշավել ոչ թե Միջագետքի տափաստաններով, այլ Հայաստանի հարավային լեռնոտ շրջաններով: Այդպես նա Հայաստանից կստանար թե՛ ռազմական և թե՛ նյութական աջակցություն: Սակայն Կրասսուսը մերժեց Արտավազդի առաջարկը և արշավեց Միջագետքի տափաստաններով: Վճռական ճակատամարտը տեղի ունեցավ **Ք. ա. 53 թ. Խառան (Կարրա)** քաղաքի մոտ, որտեղ հռոմեական **լեգեոնները** ջախջախվեցին: Զոհվեց նաև Կրասսուսը:

Մինչ այդ պարթևական մեկ այլ բանակ **Որոդես արքայի** գլխավորությամբ պատրաստվում էր հարձակվել Հայաստանի վրա: Արտավազդ արքան չէր կարող հռոմեացիներին տրամադրել խոստացված զորքը, քանի որ ինքն էլ խնդիր ուներ: Սակայն պարթևա-հայկական պատերազմ տեղի չունեցավ. կողմերը դադարեցրին ծայր առած ընդհարումները և նախընտրեցին խաղաղությունը: Արդյունքում կնքվեց հայ-պարթևական դաշինք, որն ամրապնդվեց պարթև թագաժառանգի և Արտավազդ II-ի քրոջ ամուսնությամբ:

Այսպիսով՝ Արտավազդ II-ը կարողացավ Հայաստանը հեռու պահել ռազմական գործողություններից՝ մնալով Հռոմի դաշնակիցն ու բարեկամը և չպատերազմելով Պարթևաստանի դեմ:

Մարկուս Անտոնիուսն Արևելքում

Կրասսուսի արևելյան արշավանքին հաջորդած մոտ 20 տարին Հայաս-

Տ Պատմությունը և մարդը

Եգիպտոսի Կլեոպատրա VII թագուհու մարմարե կիսանդրին

ԿԼԵՈՊԱՏՐԱ VII (Ք. ա. 69-30)

Հելլենիստական Եգիպտոսի ամենահայտնի և վերջին թագուհին Պտղոմեոսների մակեդոնական տոհմից:
Կլեոպատրան ցանկանում էր ամրապնդել և ընդլայնել իր կայսրությունը, սակայն չկարողացավ իրագործել իր այդ նպատակը՝ Հռոմի հակադարձման արդյունքում: Նա իր գեղեցկությամբ և սիրով նվաճեց իր ժամանակի երկու ամենահզոր հռոմեացիներին՝ նախ Գայուս Հուլիուս Կեսարին, ապա Մարկուս Անտոնիուսին, և նրանց օգնությամբ որոշ ժամանակով կարողացավ զգալիորեն բարելավել Պտղոմեական կայսրության դիրքը, սակայն Անտոնիուսի պարտությունը ապագա կայսր Օգոստուսից վերջ դրեց նրանց թագավորությանը: Կլեոպատրան և Անտոնիուսն ինքնասպան եղան, իսկ Եգիպտոսը դարձավ հռոմեական նահանգ:
Սակայն մինչ այդ Կլեոպատրան հասցրել էր մահապատժի ենթարկել Մեծ Հայքի արքայից արքա Արտավազդ II-ին: Բանն այն էր, որ Հայոց արքան և նրա ընտանիքի անդամները Ալեքսանդրիայում Անտոնիուսի կազմակերպած հաղթահանդեսի ժամանակ Կլեոպատրայից «ոչ գթություն խնդրեցին, ոչ էլ խոնարհվեցին, թեպետ նրանց խստիվ պարտադրում էին կամ էլ համոզում մեծ հույսերով, թեպետև նրանց շատ էին ստիպում և շատ էին հուսադրում՝ ազատություն խոստանալով»
(Դիոն Կասսիոս, XLIX, 40, 4):

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ եք կարծում, արդյո՞ք Կլեոպատրան վրեժխնդրությունից դրդված գլխատել տվեց Արտավազդ II-ին, թե՞ այլ դրդապատճառ ևս կարող էր լինել:

տանի համար համեմատաբար խաղաղ տարիներ էին: Սակայն ուժերի հավասարակշռությունը շուտով խախտվեց: Հռոմում ավարտվեց քաղաքացիական պատերազմը, իսկ Հուլիուս Կեսարի սպանությունից հետո ձևավորվեց **երկրորդ եռապետությունը:** Եռապետներից **Մարկուս Անտոնիուսն** արևելյան նոր արշավանքի էր պատրաստվում: Այդ նույն ժամանակ Պարթևաստանում գահակալական պայքարը հանգեցրեց հայ-պարթևական դաշինքի փլուզմանը:

Ք. ա. 36 թ. եռապետ Մարկուս Անտոնիուսը սկսեց իր պարթևական արշավանքը: Այս անգամ երթուղին անցնում էր Մեծ Հայքի հարավային այն հատվածով, որը ժամանակին Կրասսուսին առաջարկել էր Արտավազդ արքան: Ստանալով հայոց արքայի հավաստումը, թե շուտով կմիանա իրեն, Անտոնիուսը շտապեց Մեծ Հայքի վրայով ներխուժել Ատրպատական: Կայծակնային գրոհով հաղթանակի հասնելու հռոմեացիների ցանկությունը ձախողվեց մի շարք մարտավարական բացթողումների հետևանքով: Պարթևները կրկին ջախջախեցին հռոմեական բանակը: Արտավազդ արքան, գիտակցելով, որ հռոմեացիների ռազմերթն արդեն անհաջողության է դատապարտված, հրաժարվեց ռազմական գործողություններին մասնակցելուց: Ի վիճակի չլինելով մնացած

U2 Ձայներ անցյալից

ԴԻՈՆ ԿԱՍՍԻՈՍ
(մոտ 155-235)

«Կրասսուսը երբ ներխուժեց Միջագետք, [...], Որոդեսը նրա մոտ՝ Սիրիա, դեսպաններ ուղարկեց՝ մեղադրելով նրան ներխուժման համար, և պահանջեց հայտնել պատերազմի պատճառները: Միաժամանակ նա Սուրենին զորքով ուղարկեց նվաճված և ապաստամբած շրջանները, քանզի ինքը մտադիր էր արշավել Հայաստան, որը մի ժամանակ Տիգրանի երկիրն էր, որպեսզի Արտավազդը՝ Տիգրանի որդին, որն այդ ժամանակ թագավորում էր (այնտեղ), իր սեփական երկրի վիճակով մտահոգված, որևէ օգնություն չուղարկի հռոմեացիներին»: **(Հռոմեական պատմություն, գիրք 40:16,1-16,3)**

զորքով դիմակայել պարթևական նոր զորաբանակին՝ Անտոնիուսը շուտով ստիպված նահանջեց Հայաստան: Այստեղ կարգի բերելով իր բարոյալքված բանակը՝ Անտոնիուսը շտապ վերադարձավ Եգիպտոս:

Իր ձախողման բուն պատճառը քողարկելու նպատակով նա հռոմեական զորքերի պարտության համար մեղադրեց Արտավազդին: Սա հրաշալի պատրվակ էր Հայաստանը նվաճելու և կողոպտելու համար: Եվ դա չուշացավ:

Ք. ա. 34 թ. Անտոնիուսն անսպասելի ներխուժեց Հայաստան: Օգտվելով Արտավազդ արքայի դեմ տոհմիկ ավագանու ընդվզումից՝ նա խաբեության միջոցով ձերբակալեց Արտավազդ II-ին ու նրա ընտանիքին և իր հետ տարավ Եգիպտոս: Հայաստանը հռչակվեց հռոմեական նահանգ: Ի նշանավորումն «Հայաստանի նվաճման»՝ Անտոնիուսը դրամ հատեց, իսկ հայոց թագավոր հռչակեց իր և Եգիպտոսի թագուհի **Կլեոպատրա VII-ի** որդուն: Հետագայում Եգիպտոսի մայրաքաղաք **Ալեքսանդրիայում** Արտավազդ արքան մահապատժի ենթարկվեց, իսկ ավելի ուշ նրա ընտանիքը տեղափոխվեց Հռոմ:

Վերջին Արտաշեսյանները

Արտավազդ II-ի և նրա ընտանիքի գերեվարությունից հետո Հայաստանում գահի բարձրացավ գերեվարությունից խուսափած ավագ որդին՝ **Արտաշեսը:** Չկարողանալով գերությունից ազատել հարազատներին՝ նա ստիպված եղավ ապաստանել Պարթևստանում:

Նույն այդ ժամանակ Հռոմեական կայսրության միասնական ղեկավարության համար պայքարը Մարկուս Անտոնիուսի և Օկտավիանուսի միջև ավարտվեց Անտոնիուսի պարտությամբ և մահով: Հայոց արքա հռչակված **Արտաշես II-ը (Ք. ա. 30-20)**՝ օգտվելով ստեղծված իրավիճակից, Ք. ա. 30 թ. Պարթևաստանի օգնությամբ դուրս մղեց հռոմեական զորքերը Հայաստանից և վերականգնեց երկրի անկախությունը: Պարթևների **Հրահատ IV** արքայի համաձայնությամբ՝

Արտաշես II-ն իր թագավորության մեջ ներառեց նաև Ատրպատականը, որի զորքերին պարտության էր մատնել և գերեվարել թագավորին: Արտաշես II-ը փորձում էր վերականգնել Հայաստանի տարածաշրջանային կարևորությունը, բայց այս անգամ շեշտված հակահռոմեական կեցվածքով:

Հարկավ, հռոմեացիները չէին կարող երկար հանդուրժել այդ վիճակը: Միառժամանակ հրաժարվելով ռազմական ներխուժումից՝ հռոմեական դիվանագիտությունը հարցը կարողացավ լուծել փորձված միջոցով. արքունիքում դավադրություն նյութվեց, որին և զոհ գնաց Արտաշես II-ը:

Արտաշես II-ի մահվանը հաջորդած տասնամյակները, ըստ էության, Արտաշեսյանների աստիճանական անկման ժամանակաշրջան էին: Խախտվել էր Տիգրան Մեծի և Արտավազդ II-ի մշակած ակտիվ **չեզոքության հայեցակարգը**: Այդուհետ հայ քաղաքական վերնախավը հայացքն ուղղում էր մերթ դեպի Հռոմ, մերթ դեպի Պարթևստան: Այլևս հնարավոր չեղավ համարժեք հարաբերություններ զարգացնել երկու զորեղ հարևանների հետ: Մի կողմում Հռոմն էր, որի համար դաշնակիցն այլևս հավասարեցվել էր ենթակա պետության, մյուս կողմում՝ Պարթևստանը, որը բնավ էլ շահագրգիռ չէր Հայաստանի հզորացմամբ:

Հայաստանում ստեղծվել էր մի իրավիճակ, որը հղի էր անկայունության վտանգներով: **1 թվականին** Հայաստան ներխուժած լեռնականների դեմ պատերազմում զոհվեց Արտաշեսյան վերջին արքան՝ **Տիգրան IV-ը**, իսկ նրա քույր և գահակից **Էրատոն** հրաժարվեց գահից: Այդպիսով ավարտվեց Արտաշեսյան հարստությունը:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Մեծ Հայքն Արտավազդ II արքայի օրոք որդեգրել էր չեզոք քաղաքականություն, որով փորձում էր հեռու մնալ ծայրահեղություններից՝ հզոր հարևանների նկատմամբ անհիմն նվիրվածությունից կամ թշնամանքից: Արևելքի և Արևմուտքի հավասարակշռությունը, սակայն, հնարավոր չեղավ տևական դարձնել ներքին երկպառակությունների, իսկ ապա՝ միակողմանի դիրքորոշման գերակայության պատճառով:

Ակտիվ չեզոքության քաղաքականության հայեցակարգն այսօր ևս միջազգային հարաբերություններում հնարավոր դիրքավորումներից մեկն է:

Գործնական առաջադրանք

Օգտագործի՛ր համացանցը Առաջին և Երկրորդ եռապետությունների վերաբերյալ լրացուցիչ տեղեկություններ հավաքելու համար: Քո գտած տեղեկությունները համեմատի՛ր այդ ժամանակվա Հայաստանի կացությանը վերաբերող տեղեկությունների հետ: Եզրակացություններդ դասարանին ներկայացրո՛ւ բանավոր:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Արտավազդ II • Մարկուս Կրասսուս • Որոդես II • Մարկուս Անտոնիուս • Կլեոպատրա VII • Արտաշես II • Հրահատ IV • Տիգրան IV • Էրատո • Կոնսուլ • լեգեոն • Երկրորդ եռապետություն

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչո՞վ էր պայմանավորված Արտավազդ II արքայի որդեգրած չեզոքության քաղաքականությունը:

բ. Վերլուծիր: Որքանո՞վ էր պարթևական արշավանքի երթուղու վերաբերյալ Մարկուս Կրասսուսին Արտավազդ II-ի արած առաջարկը օգտակար Հայաստանի համար: Ինչո՞ւ:

գ. Պարզաբանիր: Ո՞նչ դեր ունեցավ հայ-հռոմեական հարաբերություններում Անտոնիուսի պարթևական արշավանքը, ինչո՞ւ:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչո՞ւ էր Հռոմը շահագրգիռ պարթևական արշավանքներով: Ո՞րն էր այդ թագավորությունից եկող վտանգը:

2. Ընդհանրացրու: Ինչո՞ւ հնարավոր չէր Հայաստանի տարածաշրջանային կարևորությունը շեշտված հակահռոմեական կամ հակապարթևական կեցվածքով վերականգնելը:

3. Գնահատիր: Որո՞նք էին Արտաշեսյան թագավորության անկման ներքին և արտաքին պատճառները:

Ա4 | Փաստարկում և հիմնավորում

Պատկերացրու, որ դու Արտաշես II արքայի խորհրդականն ես, որն արքային պետք է համոզի հրաժարվել շեշտված հակահռոմեական քաղաքականությունից կամ ծայրահեղ պարթևասիրությունից: Բացատրիր և հիմնավորիր քո դիրքորոշման տնտեսական և ռազմավարական կարևորությունը: Ստեղծիր գովազդային պաստառ, որտեղ այդ ամենը ներկայացված կլինի նաև պատկերներով:

Ո՞նչ ես կարծում, քո նախաձեռնությանը ինչպե՞ս կարձագանքեր տոհմիկ ավագանին: Ինչո՞ւ:

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Ներկայացրու:** Ո՞ր դեպքերի մասին է խոսքը: Կա՞ն հակասություններ պատմիչների տեղեկություններում:

2 | **Համեմատիր:** Ինչո՞ւ պարթևների Որոդես արքան անձամբ չգլխավորեց Կրասսուսի դեմ ռազմարշավը և նախընտրեց Հայաստանի վրա արշավանքը:

3 | **Մեկնաբանիր:** Ինչպե՞ս կմեկնաբանեք այն, որ պատերազմող կողմերը Հռոմն ու Պարթևական թագավորությունն էին, բայց հաղթանակի ավետումը տեղի ունեցավ Հայաստանում՝ թատերական ներկայացման ժամանակ:

3.5 ԳԼՈՒԽ Արտաշեսյան Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Հայաստանում հելլենիզմի ժամանակաշրջանը շատ ոլորտներում մշակութային նվաճումների ժամանակաշրջան էր: Արտաշատը, հետո նաև Տիգրանակերտը դարձան բանաստեղծների, գրողների, փիլիսոփաների և գիտնականների կենտրոնատեղիներ:

* ***Ի՞նչ ես կարծում, որքանո՞վ է կարևոր քաղաքի դերը մշակույթի զարգացման և տարածման համար: Դասընկերներիդ հետ քննարկիր, թե այսօր ինչպես է մշակույթը ձևավորում քաղաքային կյանքը, իսկ քաղաքը՝ մշակութային կյանքը: Ինչպիսի՞ն կլիներ մարդկանց կյանքն առանց քաղաքների:***

Ալեքսանդր Մակեդոնացու արշավանքները (Ք. ա. IV դարի վերջ) նոր դարաշրջան բացեցին Արևմտյան Ասիայի երկրների պատմության մեջ: Հին Արևելքում սկսվեց հելլենիզմի (հունականության) դարաշրջանը: Հայաստանում հելլենիզմը համեմատաբար ավելի դանդաղ էր տարածվում: Իրավիճակը փոխվեց Երվանդականների կառավարման վերջին տարիներին, իսկ արդեն Արտաշեսյանների հաստատման ժամանակաշրջանում հելլենիզմը լայն տարածում գտավ Հայաստանում: Հայկական հելլենիզմը, սակայն, ինչպես բոլոր մյուս հելլենիստական մշակույթները, ևս զարգանում էր ինքնուրույն ուղիով, այն է՝ տեղական ավանդույթի ինքնատիպ հատկանիշների պահպանումով:

Բառարան

Մեհենական նշանագրեր (մեհենագրեր) | գրանշանների համակարգ, որը, որոշ գիտնականների կարծիքով, գործածվել է նախաքրիստոնեական Հայաստանում՝ որպես հայ մեհենական գրականության գիր:

Ընդհանուր առմամբ Հայաստանում հելլենիզմն ընթացավ երկու փուլով, առաջին փուլը կամ **բուն հելլենիզմը**՝ Ք. ա. III-I դդ., և երկրորդ կամ **ուշ հելլենիզմը**՝ Ք. հ. I-III դդ.: Այն Հայաստանում տևեց գրեթե վեց դար:

Կրոնը

Արտաշեսյան Հայաստանում կրոնը ևս ենթարկվեց հելլենականացման: Հայկական աստվածները նույնացվում էին հին հունական աստվածների հետ՝ օժտվելով նոր գծերով: Որոշ առումներով փոփոխվեցին նաև պաշտամունքի ձևերը: Մեծ տարածում ունեին մի քանի համընդհանուր աստվածություններ: Նրանցից էին **Արամազդ-Զևսը, Անահիտ-Արտեմիսը, Վահագն-Հերակլեսը, Աստղիկ-Ափրոդիտեն, Միհր-Հելիոսը, Տիր-Ապոլոնը, Նանե-Աթենասը** և այլն: Չնայած նման նույնականացմանը՝ հայկական աստվածները պահպանում էին իրենց պաշտամունքային ինքնատիպ տեղական հատկանիշները:

Արտաշեսյան Հայաստանում հատկապես ուշագրավ է մերթ Վահագնի, մերթ Միհրի պաշտամունքի ակտիվացումը: Դիցուք՝ Տիգրան Մեծի կառավարման տարիներին մեծացավ Վահագնի, մինչդեռ Արտավազդ II արքայի կառավարման տարիներին՝ Միհրի պաշտամունքը: Վահագնի պաշտամունքի ակտիվացումը պայմանավորված էր արքայական իշխանության և ռազմավարչական ավագանու դերի բարձրացմամբ: Միհրի պաշտամունքը միտված էր համայնական շինականության դերի կարևորումով: Այս առանձնահատկությունների մասին են վկայում Տիգրան Մեծի և Արտավազդ II արքայի դրամների դարձերեսի վրա Վահագնի կամ Միհրի պատկերները:

Հասարակական-պետական կարգը

Արտաշեսյան թագավորության հասարակությունը, ինչպես նախորդ թագավորությունների որոք, ևս բաժանված էր մի քանի անհավասար **սոցիալական խմբերի** կամ **դասերի**: Կենտրոնում **արքան էր,** որը կոչվում էր **թագավոր** կամ **արքա Հայոց Մեծաց:** Վերջինս օժտված էր բացարձակ իշխանությամբ. նա երկրի գերագույն կառավարիչն էր, զորքի գերագույն հրամանատարն ու երկրի գերագույն դատավորը: Նա էր պատերազմ հայտարարում կամ խաղաղություն կնքում, հարկեր սահմանում, պաշտոններ տալիս: Արքան էր Մեծ Հայքի հողերի և բնական հարստությունների գերագույն սեփականատերը: Նրան էր պատկանում թե՛ քաղաքներ հիմնելու և թե՛ դրամ հատելու մենաշնորհը:

Արքան երկիրը կառավարում էր **արքունիքի** և **արքունի գործակալների** միջոցով: Արքունիքը կազմված էր տոհմիկ և ծառայողական ավագանուց: Տոհմիկ ավագանու քաղաքական ազդեցության կարևորագույն օրգանը սրբազան **Նպատ լեռան** լանջերին պարբերաբար հրավիրվող **Աշխարհաժողովն** էր, ծառայողական ավագանունը՝ մայրաքաղաք **Արտաշատի հրապարակը:**

Երկիրը բաժանված էր նահանգների և գավառների, որոնք կառավարում էին արքայի նշանակած կառավարիչները: Արտաքին հարձակումներից պաշտպանելու համար Հայաստանը բաժանված էր սահմանապահ չորս խոշոր զինվորական շրջանների՝ **բդեշխությունների,** որոնց զորահրամանատարն էր **բդեշխը:** Եթե նախկինում **քրմապետն** էր տերության երկրորդ մարդը, ապա այժմ, մանավանդ Տիգրան Մեծի ժամանակներից, նա դուրս է մղվում «մեծ բդեշխի» կողմից: Արքան ուներ բազմաթիվ պատվանուններ՝ «մեծ արքա», «բարեպաշտ արքա», իսկ Տիգրան Մեծից հետո՝ նաև «արքայից արքա», «աստված» և այլն:

Քաղաքներն ու տնտեսությունը

Հելլենիստական դարաշրջանի Հայաստանում հիմնվեցին և զարգացան նոր քաղաքներ, որոնցից հատկապես նշանավոր էին Արտաշատն ու Տիգրանակերտը: Դրանք մի կողմից ենթարկվում էին կենտրոնական իշխանությանը, մյուս կողմից ունեին ներքին ինքնավարություն: Յուրաքանչյուր քաղաք ուներ արքայի կողմից նշանակված կառավարիչ: Քաղաքներն ունեին նաև սեփա-

Նայելով դրամներին

Արտաշեսյան խույրի (թագի) և ապարոշի (գլխանոցի) պատկերագրությունը Տիգրան Մեծի և Արտավազդ II-ի դրամների վրա

Արտաշեսյան գահակալները կրում էին երկակի թագ՝ խույր (թագ) և ապարոշ (գլխանոց): Համաձայն արդի հետազոտությունների՝ առաջինը խորհրդանշում էր նրանց կապն ավանդական **Աշխարհաժողովի** հետ: Երկրորդը խորհրդանշում էր նրանց **իշխանության օրինականությունը:** Ապարոշ կրում էին հելլենիստական այն գահակալները, որոնք հավակնում էին միջազգային հարաբերություններում ներկայանալ իբրև ինքնիշխան երկրի ինքնիշխան գահակալներ: Խույրի վրա պատկերված էր **ութանկյուն արեգակը՝ «տիեզերական լույսի աղբյուրը»**, որին նայում էին երկու **արծիվներ:** Արծիվները խորհրդանշում էին Աշխարհաժողովը:

Տարեսկզբին՝ Նավասարդյան տոնակատարության ժամանակ, Նպատ լեռան լանջերին հրավիրվում էր Աշխարհաժողովը, որին մասնակցում էին զորք-ժողովուրդը, ավագանին և արքան: Այստեղ արքան ստանում էր իր խույրը: Այդպես արքան որոշակի կախվածություն էր ունենում Աշխարհաժողովից, այն է՝ տոհմիկ ավագանուց: Հետագայում արդեն Արտաշեսյան արքաները կտրուկ դա հանձնեցին **մայրաքաղաքի հրապարակով,** որտեղ գերակայում էր ծառայողական ավագանին, իսկ արքայի կամքն անառարկելի էր:

1. Մեկնաբանիր: Ինչո՞վ կբացատրեք, որ Արտավազդ II արքայի խույրի վրա արծիվները բացակայում են՝ ի տարբերություն Տիգրան Մեծի խույրի:

2. Պատճառաբանիր: Ո՞ր կապ կարելի է տեսնել հռոմեացի եռապետ Անտոնիուսին Արտավազդ II արքայի հանձնվելու և նրա խույրի վրա արծիվների բացակայության միջև:

կան զորամասերը: Քաղաքներին տրված արտոնությունների միջոցով արքաները ձգտում էին զարկ տալ առևտրին ու արհեստներին, ինչպես նաև իրենց համար սոցիալական և տնտեսական հենարան ստեղծել: Այդպես նրանք կկարողանային թե՛ կանխել ներքին սոցիալական ընդվզումները, թե՛ պայքարել արտաքին թշնամու դեմ:

Դեռ Երվանդունիների ժամանակներից Հայաստանը, ընդգրկվելով հելլենիստական երկրների տնտեսական հարաբերություններում, առևտրական կապեր էր հաստատել Միջագետքի, Ասորիքի, Պարթևստանի, Պոնտոսի, Ատրպատականի, Վրաստանի և այլ երկրների հետ: Միջագետքից, Հնդկաստանից, Չինաստանից ու այլ երկրներից սկիզբ առնող և Հայաստանով անցնող ճանապարհների հանգուցակետը կրկին մնում էր Արարատյան դաշտը: Տիգրանակերտի կառուցումից հետո հույժ կարևորվեց Արտաշատ-Տիգրանակերտ ճանապարհը. այս քաղաքների կապն ապահովելու համար Տիգրան Մեծը կառուցեց **«Հայոց արքունի պողոտան»:**

Գիրը և գրականությունը

Հելլենիստական Հայաստանում գրագրության լեզուները արամեերենն ու հունարենն էին: Ուշագրավ է, որ Արտաշես Ի-ի կառավարման տարիներին դեռևս գերակայող էր արամեերենը. թերևս պետությունն այդպես հակադրվում էր հելլենիստական Սելևկյան տերությանը: Հետագայում արդեն ակտիվացավ հունարենը: Կան տեղեկություններ, որ Հայաստանում այդ ժամանակ գոյություն են ունեցել նաև հայերեն **մեհենական նշանագրեր**, որոնք, ամենայն հավանականությամբ, սահմանափակ՝ միայն կրոնածիսական կիրառություն են ունեցել: Այն, որ հայերը սեփական գիր են ունեցել, վկայված է նաև անտիկ հեղինակների կողմից: Ուշագրավ է և այն, որ նախաքրիստոնեական Հայաստանում գոյություն ուներ գիրն ու գրականությունը հովանավորող Տիր աստծո պաշտամունքը:

Առաջին հայ հեղինակը, որի մասին մեզ տեղեկություն է հասել, հայոց Արտաշես Ի արքայի որդի **Վրույրն** է: Խորենացին Վրույրին անվանում է «այր իմաստուն և բանաստեղծ»: Տիգրան Մեծի օրոք Արտաշատ և Տիգրանակերտ մայրաքաղաքները դառնում են հելլենական մշակութային կենտրոններ և դեպի իրենց են ձգում հռոմեացիներից հալածված մի շարք հույն գիտնականների: Հայտնի է Տիգրանակերտում հաստատված հույն նշանավոր հռետոր **Ամփիկրատես Աթենացին:** Նրա հեղինակած բազմաթիվ պատմագիտական երկերից նշվում է հատկապես «Տիգրանի վարքը», որը, ցավոք, մեզ չի հասել: Տիգրան Մեծի արքունիքում էր ապաստանել մեկ այլ հույն նշանավոր **փիլիսոփա՝ Մետրոդորոս Սկեպսացին:** Նա հեղինակել է «Մեծ մարդկանց մասին» երկը, որը ևս մեզ չի հասել:

Այս ժամանակ Հայաստանում եղել են նաև հայ նշանավոր գիտնականներ և մտածողներ: Հելլենիստական փայլուն կրթություն ստացած հայ գիտնականներից էր **Տիրանը,** որին Լուկուլլուսը գերեվարեց և հետը տարավ Հռոմ: Տիրանը Հռոմում հռչակված էր իբրև նշանավոր հռետոր և քերականագետ: Հունարենով գրված բազմաթիվ ողբերգությունների, ճառերի և պատմական աշխատությունների հեղինակ է հայոց **Արտավազդ II** արքան, որի ստեղծագործությունները պահպանվել են մինչև II դար: Դրանցից ոչինչ չի հասել մեզ:

Թատրոնը և արվեստը

Թատրոն հաճախելը հելլենիստական քաղաքների բնակչության կենցաղի անբաժանելի մասն էր: Ուշագրավ է, որ թատրոն էին հաճախում ոչ միայն տղամարդիկ, այլև կանայք: Հարկավ, խոսքն ազնվականության մասին է: Թեպետ մեզ հայտնի չէ Արտաշատի և Տիգրանակերտի թատրոնների խաղացանկը, բայց գիտենք, որ այդ թատրոններում, բացի հին Հունաստանի մեծագույն ողբերգակների երկերից, ներկայացվել են նաև **Արտավազդ II-ի գրած ողբերգությունները:** Պլուտարքոսի շնորհիվ հայտնի է Արտաշատի թատրոնի մեկ բեմադրություն՝ **Եվրիպիդեսի «Բաքոսուհիները»** ողբերգությունը:

Հելլենիստական թատրոնից բացի գոյություն ուներ նաև հայկական **ժողովրդական թատրոնը**, որի դերասանները գուսաններն էին: Նրանք ներկայացնում էին ողբերգություններ, կատակերգություններ կամ խեղկատակություններ: Վերջին երկու ժանրերի ներկայացումների նյութը մեծ մասամբ վերցվում էր առօրյա կյանքից:

Հելլենիստական Հայաստանում զարգացում ապրեց նաև քանդակագործությունը: Քանդակն արտահայտում էր ավելի շատ առօրյա կյանքն ու մարդկային հույզերը, ուստի ձեռք բերեց շարժունություն: Այն տեսանելի էր բոլոր կողմերից, այլ ոչ թե նախկինի պես միայն դիմացից: Արքաները, հարուստ վաճառականներն ու քաղաքներն արձաններ էին գնում՝ աստվածներին փառաբանելու, հերոսներին հիշատակելու և սովորական մարդկանց առօրյա իրավիճակներում պատկերելու համար: Այդ արձաններից մեզ միայն մի քանի նմուշներ ու բեկորներ են հասել: Դրանցից նշանավոր է Անահիտ աստվածուհու բրոնզաձույլ գլուխը: Պահպանված պաշտամունքային կառույցներից ուշագրավ է **Նեմրութ լեռան** արևելյան և արևմտյան լանջերին Կոմմագենեի երվանդական արքա Անտիոքոս Ի-ի (Ք. ա. 69-34) կառուցած սրբատեղին: Քանդակներն արված են հելլենիստական ոճով, բայց և տեղական առանձնահատկությունների ընդգծմամբ:

Հելլենիստական հայկական խեցեգործության մեջ ևս ճաշակի փոփոխություն նկատվեց: Առարկաները դարձան ավելի զարդարուն և գունեղ: Կավագործության այլ ոճեր ընդօրինակում էին շքեղ բրոնզե, արծաթե և ոսկյա սպասքը, որ օգտագործվում էր թագավորական ընտանիքների և այլ ազնվականների կողմից:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Հայկական հելլենիզմը, ինչպես բոլոր մյուս հելլենիստական մշակույթները, ևս ենթադրում էր որոշակի ինքնուրույնություն, այն է՝ պահպանվում էին տեղական ավանդույթի ինքնատիպ հատկանիշները: Դա հնարավորություն տվեց ինչպես զարգացնելու տեղական (ազգային) ինքնատիպությունը, այդպես և մասնակցելու անդրազգային սոցիալական ու մշակութային հարաբերություններին: Տեղականի և անդրազգայինի երկխոսությունը կարևոր է նաև այսօր:

Անտոնիո Վիվալդի, Սիրո և ատելության նկատմամբ հաղթանակող առաքինությունը կամ Տիգրան (օպերա):

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

բուն հելլենիզմ • ուշ հելլենիզմ • մեհենական նշանագրեր • Աշխարհաժողով • Արտաշատի հրապարակ • բդեշխություն • Հայոց արքունի պողոտա • թատրոն • Վրույր Ամփիկրատես Աթենացի • Մետրոդորոս Սկեպսացի • Տիրան

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրո՛ւ: Ի՞նչ առանձնահատկություն ուներ Արտաշեսյան հելլենիստական Հայաստանի մշակույթը: Ինչպիսի՞ փոփոխությունների ենթարկվեցին արվեստի տարբեր ոլորտները:

բ. Հիմնավորի՛ր: Ինչո՞վ էր պայմանավորված Արտաշեսյան Հայաստանում քրմապետի, հետևաբար նաև քրմական դասի ազդեցության թուլացումը:

գ. Բացատրի՛ր: Ի՞նչ նշանակություն ուներ քաղաքաշինությունը Արտաշեսյան Հայաստանում:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ընդհանրացրո՛ւ: Ինչպե՞ս էին Արտաշեսյան արքաները Աշխարհաժողովի և Արտաշատի հրապարակի միջոցով հավասարակշռում իրենց իշխանությունը: Արդյո՞ք միշտ էր դա հնարավոր (օրինակներ բեր):

2. Ճանաչի՛ր ազդեցությունը: Ինչո՞վ կբացատրես այն, որ Արտաշես Ի-ի կառավարման տարիներին դեռևս գերակայող էր արամեերենը, մինչդեռ Տիգրան Մեծի ժամանակ՝ հունարենը:

3. Վերլուծի՛ր: Ինչպե՞ս կարող էին քաղաքներին արքաների տված արտոնությունները խթանել առևտուրն ու արհեստները:

Ա4 | Փաստարկում և հիմնավորում

Պատկերացրո՛ւ, որ դու Արտավազդ II արքան ես և Տիգրանակերտի թատրոնի համար պետք է դրամա գրես ինչ-որ թեմայով՝ նախնիների քաջագործության, հայ-պոնտական կամ հայ-պարթևական հարաբերությունների, Աստվածների կյանքի կամ այլ:

Ո՞ր թեմայով կնախընտրեիր գրել և ինչո՞ւ:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ կազմի՛ր բուրգի գծապատկեր՝ ցույց տալով Արտաշեսյան Հայաստանի սոցիալական կարգը: Այդպես արդեն արել եք Վանի թագավորության և Երվանդական Հայաստանի դեպքում: Ըստ կարևորության՝ բուրգի տարբեր մասերում տեղադրե՛ք Արտաշեսյան թագավորության սոցիալական դասերը: Հետո համեմատե՛ք ձեր աշխատանքը Վանի թագավորությունն ու Երվանդական Հայաստանն ուսումնասիրելիս կատարած համապատասխան աշխատանքի հետ:

ԹԵՄԱ 4

Արշակունյաց Հայաստան

Ուսումնասիրելով այս թեման՝ կկարողանաս.

- **ա. Նկարագրել** Արշակունյաց Հայաստանի պետական կարգը, բանակը, տնտեսությունը, դիցարանը և դրանց կրած փոփոխությունները, մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները:
- **բ. Բնութագրել** Արշակունյաց արքաների գործունեությունն ու կատարած վերափոխությունները, նրանց ռազմաքաղաքական հարաբերությունների արդյունքները և **կարծիք հայտնել** դրանց վերաբերյալ:
- **գ. Քննել** Արշակունյաց Հայաստանում ավատատիրական հարաբերությունների ձևավորման ընթացքը, քրիստոնեության ընդունման նախադրյալները, հայոց եկեղեցու դերը և ազդեցությունը, կենտրոնաձիգ պետության ստեղծման փորձերը, թագավորության կործանման պատճառներն ու հետևանքները:
- **դ. Արժևորել** Արշակունյաց Հայաստանի քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթների համատեքստում:

Արշակունիների դրոշը
(վերակազմություն)

Գառնու հեթանոսական տաճարն ու Սուրբ Սիոն եկեղեցին
Սրբ. Սիոն եկեղեցու վերակազմությունը՝ Տիրան Մարությանի, եռաչափ մոդելավորումը՝ Ռուբեն Սարգսյանի

4.1 ԳԼՈՒԽ Արշակունիների հաստատումը Հայոց գահին

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Հռանդեայի դաշնագրով Հայաստանում գահ բարձրացած Տրդատ I Արշակունին խնդիր ուներ պահպանելու մի կողմից՝ Հայաստանի միասնությունը, մյուս կողմից՝ ձեռք բերված իշխանությունը: Եվ այդ ամենը պետք է իրականացներ հռոմեա-պարթևական մրցակցության պայմաններում:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր, թե ինչպես է հնարավոր երկու (կամ ավելի) մրցակցող պետությունների միջև պահել հավասարակշռությունը: Ե՞րբ է դա հնարավոր և ե՞րբ հնարավոր չէ: Արդյո՞ք այս երկընտրանքը չկա նաև այսօր:***

Հայաստանում Արտաշեսյան արքայատոհմի անկումից հետո հռոմեա-պարթևական մրցակցությունը նոր թափ ստացավ: Հայաստանը որոշիչ դերակատարություն ուներ երկու տերությունների համար էլ: Մրցակցող կողմերից որևէ մեկի վերահսկողությունը Հայաստանի նկատմամբ սպառնալիք էր մյուսի համար: Սկզբնապես Հռոմն ուներ անժխտելի գերակայություն և Հայաստանում հաստատեց ենթակա վարչակարգ: Չնայած դրան՝ Մեծ Հայքը ծավալվող իրադարձություններում սոսկ կրավորական դեր չուներ: Հռոմեացիների հովանավորած գահակալները, որպես կանոն, կամ վտարվում էին Հայաստանից, կամ էլ զոհ էին գնում հայ ազնվականության դավադրություններին: Հայոց ինքնիշխան կեցվածքն ընկճելու համար Հռոմն աստիճանաբար իջեցնում էր Հայաստանի կարգավիճակը և ի հակակշիռ դրան՝ բարձրացնում Ատրպատականի, հետո Վիրքի կարգավիճակը: Թվում էր՝ անխուսափելի էին նաև հայոց ավագանու պառակտչական բախումներն ու երկրի սոցիալական կյանքի փլուզումը: Բայց տեղի ունեցավ ճիշտ հակառակը. հայոց ավագանին, մի կողմ թողնելով ներքին հակասություններն ու խնդիրները, միասնաբար ստանձնեց սոցիալական և իշխանական կառույցների պահպանման պատասխանատվությունը:

Բառարան

Անդրեփրատյան համադաշնություն | պարթև Վաղարշ I-ի (51-79) ջանքերով կազմավորված համադաշնությունը, որը նախ և առաջ պաշտպանական միություն էր ընդդեմ Հռոմի: Անդամակցում էին Պարթևստանը, Ատրպատականը, Ադիաբենեն և (թերևս) Աղվանքը: Նրանց միացավ նաև Մեծ Հայքը:

Տասնամյա կամ Հայոց գահաժառանգության պատերազմը (54-64)

Հայաստանի նկատմամբ վերահսկողություն հաստատելու հռոմեա-պարթևական պայքարը կողմերից ոչ մեկին վերջնական հաղթանակ չբերեց: Մինչ

Հռոմեական կայսրությունը փորձում էր Հայաստանում իր ազդեցությունը պահպանել դրածո թագավորների միջոցով, Պարթևստանը հրաժարվեց Հայաստանի նվաճման ծրագրերից՝ փոխարենը որդեգրելով հայերի հետ համագործակցելու քաղաքականություն: Սա հանգեցրեց հայ-պարթևական փոխշահավետ դաշինքի 50-ական թվականների սկզբին, երբ պարթևական գահին բարձրացավ **Վաղարշ Ի-ը (51-79):** Վերջինս ստեղծեց այսպես կոչված **«Անդրեփրատյան համադաշնություն»,** որին հարում էր նաև հայոց ավագանին: Հայ-պարթևական համաձայնությամբ Մեծ Հայքի գահը հանձնվեց Վաղարշ արքայի եղբորը՝ **Տրդատին:** Վերջինս ժամանեց Հայաստան: Արտաշատն ու Տիգրանակերտը հոժարությամբ հանձնվեցին նրան: **Հռադամիզդը,** որն այդ ժամանակ հայոց գահակալն էր, պարտություն կրելով, փախավ Վիրք:

Մեծ Հայքում շուրջ 40 տարի հաստատված հռոմեական գերակայությունը հարցականի տակ էր դրվել: Այդ ժամանակ Հռոմի կայսրն էր **Ներոնը (54-68),** որը փորձում էր ամեն կերպ փրկել իրավիճակը: Նա կարևորում էր ոչ այնքան Հայաստանի նվաճումը, որքան այն, որ հակառակորդ Պարթևական պետությանը թույլ չտրվեր հասնել դրան: Բայց ապարդյուն. Հայաստանը հաստատապես պարթևական կողմնորոշում ուներ՝ կայուն պետականություն ստեղծելու նպատակով: Պատերազմն անխուսափելի էր:

Սկսված պատերազմը, որը տևեց տասը տարի **(54-64),** իր գագաթնակետին հասավ մասնավորապես 58-63 թվականներին: Հաջողությունն ուղեկցում էր մերթ հռոմեական, մերթ հայ-պարթևական ուժերին: Հռոմեական զորքերի գլխավոր հրամանատար **Գնեուս Կորբուլոնը** 58 թվականի ձմռանը ներխուժեց Հայաստան, հիմնահատակ կործանեց և կողոպտեց Արտաշատ մայրաքաղաքը, բայց շուտով ստիպված եղավ հեռանալ Ասորիք: Դրանից անմիջապես հետո հայ-պարթևական զորքերը ռազմակալեցին Հայաստանը՝ մաքրելով այն հռոմեական կայազորներից: Վաղարշ արքան **Մծբին** քաղաքում Տրդատին թագադրեց արքայական խույրով, որն օրինավորված էր Նպատի Աշխարհաժողովով:

Տրդատ Ի-ի գահակալումը

Տրդատի՝ հայոց արքա ձեռնադրվելը կրկին սրեց իրավիճակը: Վաղարշ Ի-ը, ցանկանալով խուսափել հետագա հարձակումներից, փորձում էր խաղաղ ճանապարհով լուծել Հայաստանի հարցը: Սկսվեցին բանակցությունները, սակայն Ներոնը որոշել էր նվաճել Հայաստանը և վերածել նահանգի: **62 թվականին** հռոմեական մի նոր բանակ հատեց Հայաստանի սահմանը՝ այս անգամ զորավար **Լուկիուս Պետուսի** գլխավորությամբ: Հռոմեական զորքերին ընդառաջ շարժվեցին հայ-պարթևական մեծաքանակ զորքերը: Պետուսի բանակը մի քանի ճակատամարտերում ջախջախվեց և ստիպված էր նահանջել: Սակայն վճռական գործողությունները տեղի ունեցան Արածանիի ափին՝ **Հռանդեա** բնակավայրի մոտ: Հռոմեական զորքը շրջափակվեց հայ-պարթևական զորքերի կողմից,

Նայելով քարտեզին

Հռոմեա-պարթևական տասնամյա պատերազմը (54-64 թթ.)

1. Բացահայտի՛ր քարտեզը: Ինչո՞ւ Կորբուլոնը նախ հարձակվեց և գրավեց Արտաշատը, իսկ հետո միայն Տիգրանակերտը:

2. Կիրառի՛ր աշխարհագրական հմտություններդ: Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ Կորբուլոնն իր հաղթական ռազմարշավը չզարգացրեց Ատրպատականի ուղղությամբ:

ինչը ստիպեց հուսալքված Պետուսին իր ողջ բանակով անձնատուր լինել հակառակորդի ողորմածությանը: Զինաթափված հռոմեական լեգեոններն անցկացվեցին անարգանքի լծի տակով: Պատերազմն այլևս չվերսկսվեց: Հռանդեայում ձեռք բերված համաձայնությունը վերահաստատվեց **64 թվականին՝** Տրդատ I-ի և Կորբուլոնի միջև նույն Հռանդեայում կնքված **դաշնագրով:** Այս անգամ Ներոն կայսրը համաձայնեց փոխզիջման տարբերակին. Տրդատը հաստատվում էր Հայոց գահին, սակայն անձամբ պետք է գնար Հռոմ՝ Ներոնի ձեռքից թագը ստանալու համար: Մեծ շքախմբով Հռոմ մեկնած Տրդատը վերադարձավ **66 թ.՝** արդեն որպես Հայաստանի օրինավոր թագավոր: Հռոմի կայսրը նաև Արտաշատը վերականգնելու համար զգալի գումար և մի խումբ արհեստավորներ էր տրամադրել: Տրդատը վերակառուցեց երկրի ավերված տնտեսությունը, վերականգնեց Արտաշատ մայրաքաղաքը և զարգացրեց ներքին ու արտաքին առևտուրը:

Այսպիսով՝ Հայաստանի նկատմամբ վերահսկողության համար Հռոմի և Պարթևաստանի միջև գրեթե հարյուրամյա մրցակցությունն այլ ելք ունեցավ:

Թե՛ Հռոմը, թե՛ Պարթևստանը, չկարողանալով նվաճել Հայաստանը, ստիպված եղան ճանաչել Հայաստանի պետական ինքնիշխանությունը և հանդես գալ որպես դրա համատեղ երաշխավորներ: Տրդատ Ի-ի գահ բարձրանալով Հայաստանում սկզբնավորվեց պարթև Արշակունիների հայկական ճյուղը: Արքայական իշխանության փոխանցումը, սակայն, դեռ ժառանգական չէր:

Հայ Արշակունիների ժառանգական իշխանության հաստատումը

Ներոնը և նրա հաջորդները Հայաստանի նկատմամբ դրսևորեցին չափավոր քաղաքականություն՝ փորձելով պահպանել այն որպես չեզոք պատվար հյուսիսկովկասյան տափաստանների քոչվորների և պարթևների արշավանքների դեմ: **Տրայանուսի** օրոք տեղի ունեցավ քաղաքականության կտրուկ փոփոխություն: Նա փորձեց խախտել «Հռանդեայի համաձայնությունը» և Հայաստանին պարտադրել հռոմեական լիակատար վերահսկողություն: 114 թ. Տրայանուսը ներխուժեց Հայաստան՝ նպատակ ունենալով Հայոց թագավորությունը վերածել հռոմեական **նահանգի:** Հռոմեական նահանգի վերածված Հայաստանը, սակայն, շուտով վերականգնեց նախկին կարգավիճակը: Տրայանուսին հաջորդած նոր կայսրը ճանաչեց Մեծ Հայքի թագավորության անկախությունը: Հռոմեական զորքերը դուրս բերվեցին Հայաստանից, և գահ բարձրացավ Հռոմի կողմից ճանաչված **Վաղարշ Ի-ը (117-140):** Նոր արքան աչքի ընկավ շինարարական աշխատանքներով: Կառուցվեցին և վերակառուցվեցին մի շարք քաղաքներ: Վերակառուցված քաղաքներից էր Վարդգեսավանը, որը կոչվեց **Վաղարշապատ:**

Սակայն ո՛չ Հռոմը, ո՛չ էլ Պարթևստանը չէին հրաժարվել Հայաստանը վերջնականապես նվաճելու և իրենց տիրույթներին միավորելու մտքից: Պատահական չէ, որ հաջորդ տասնամյակներում պարբերաբար խախտվում էր «Հռանդեայի համաձայնությունը», և Հայաստանում հաջորդաբար նշանակվում էին մերթ պարթևներին, մերթ հռոմեացիներին ցանկալի արքաներ: Ի վերջո Հայոց գահը, Հռոմի համաձայնությամբ, անցավ **Վաղարշ II-ին (186-198):** Վերջինս Հռոմի հետ վարում էր ճկուն և հեռատես քաղաքականություն, շնորհիվ որի հռոմեական կայազորը դուրս բերվեց երկրից: Հռոմը նույնիսկ ֆինանսական օգնություն ցուցաբերեց Վաղարշ II-ին, որպեսզի օգներ հզորացնել հայկական բանակը: Բանն այն է, որ նա ձգտում էր պաշտպանել երկիրը և կայսրության արևելյան գավառները լեռնային ցեղերի կրկնվող արշավանքներից: Այս ցեղերից մեկի դեմ պատերազմում Վաղարշ II-ի մահից հետո գահ բարձրացավ նրա որդին՝ **Խոսրով Ի-ը (198-215):** Հայաստանում հաստատվեց Արշակունիների թագավորական հարստությունը: Այդպիսով՝ Վաղարշ II-ից և Խոսրով Ի-ից սկիզբ է առնում **հայ Արշակունիների ժառանգական իշխանությունը Հայաստանում:**

Առանձնացրու՛ քեզ հետաքրքրող տեղեկությունը և քննարկի՛ր դասարանում:
Ո՞ր տեղեկությունն է քեզ ավելի հիմնավոր կամ հետաքրքիր թվում: Ինչո՞ւ:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Արտաշեսյան հարստության անկումից հետո հայոց ավագանին, մի կողմ թողնելով ներքին հակասություններն ու խնդիրները, միասնաբար ստանձնեց սոցիալական և իշխանական կառույցների պահպանման պատասխանատվությունը: Այն կարողանալով ճիշտ գնահատել Հռոմի և Պարթևստանի համար Հայաստանի ռազմավարական նշանակությունը՝ վերականգնեց Հայաստանի անկախությունը: Հայաստանում գահին անցավ նոր՝ Արշակունյաց հարստությանը, որը Մեծ Հայքի համար ապահովեց ևս մի քանի հարյուր տարվա պատմական հեռանկար: Այսօր ևս պետության և պետականության, սոցիալական և իշխանական կառույցների պահպանման ու զարգացման համար կարևոր է հասարակական շերտերի համագործակցությունը:

S Պատմությունը և մարդը

ՏՐԱՅԱՆՈՍ (98-117)

Հռոմեական կայսր, որի օրոք կայսրության տարածքը հասավ իր առավելագույն չափին: Նրա լայնածավալ նվաճումները դարձան վերջինը Հռոմի պատմության մեջ:

Տրայանուսի կառավարումը կապված է նախ և առաջ հռոմեական արտաքին քաղաքականության փոփոխման հետ: Մինչ այդ հռոմեական քաղաքականությունը թե՛ արևմուտքում, թե՛ արևելքում գերազանցապես պաշտպանողական էր: Տրայանուսի ժամանակաշրջանը նշանավորվեց հռոմեացիների լայն հարձակողական գործողություններով:

Արևմուտքում իր դիրքերն ամրապնդելուց հետո Տրայանուսն արտաքին քաղաքականության ծանրության կենտրոնը տեղափոխեց Արևելք: 112-113 թթ. **Խոսրով I Պարթև** արքայի հետ անհաջող բանակցություններից հետո պատերազմն անխուսափելի էր: Առիթը դառնում է այն, որ Խոսրով Պարթևն առանց Տրայանուսի կարծիքը հաշվի առնելու Հայաստանում գահընկեց է անում **Սանատրուկ** (88-110) արքային հաջորդած **Աշխադարին** և տոխարենը Հայոց թագավոր նշանակում **Պարթամասիրին:** Այդպիսով՝ խախտվում է Հռանդեայի համաձայնությունը: Տրայանուսը, օգտագործելով այս հանգամանքը, 114 թ. պատերազմ է հայտարարում պարթևներին ու հայերին և ներխուժում Հայաստան: Նպատակն էր Հռանդեայի դաշնագիրը չեղարկելն ու Մեծ Հայքը հռոմեական նահանգ դարձնելը:

Երիտասարդ Պարթամասիրը ներկայանում է Հռոմի կայսերը, սակայն Տրայանուսը նրան չի ճանաչում որպես Հայոց արքա և գլխատել է տալիս: Հայաստանը հռչակվում է հռոմեական նահանգ և մնում այդպիսին մինչև 117 թ., երբ Տրայանուսը մահանում է: Հռոմեացի հաջորդ կայսրերը հրաժարվում են իրենց նախորդի բոլոր նվաճումներից և հարձակողական քաղաքականությունից անցնում պաշտպանողականի: Վերականգնվում է Հռանդեայի համաձայնությունը:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ եք կարծում, ինչո՞ւ Տրայանուսին հաջորդած կայսրերը հրաժարվեցին Հայաստանը Հռոմի նահանգ դարձնելուց:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր՝

Վաղարշ I Պարթև • Տրդատ I • Ներոն • Գնեուս Կորբուլոն • Լուկիուս Պետուս • Վաղարշ I (հայ Արշակունի) • Վաղարշ II (հայ Արշակունի)

Խոսրով • Անդրեմիրատյան համադաշնություն • Հռանդեա

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու՝ Ե՞րբ մնքվեց Հռանդեայի դաշնագիրը և ի՞նչ էր այն ենթադրում:

բ. Բացատրիր՝ Ինչո՞վ էր կարևոր հայ ավագանու կողմից սոցիալական և իշխանական կառույցների պահպանման պատասխանատվությունը ստանձնելը:

գ. Վերլուծիր՝ Ի՞նչ միջոցների էր դիմում Հռոմը՝ Հայաստանի դիմադրությունն ընկճելու և իր գերակայությունը պահպանելու համար:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը՝ Ինչո՞ւ թե՛ Հռոմին, թե՛ Պարթևաստանին ձեռնտու չէր Հայաստանում արքայական իշխանության փոխանցման ժառանգական կարգը:

2. Ընդհանրացրու՝ Ինչպե՞ս էր աշխատում «Հռանդեայի համաձայնությունը», ե՞րբ էին կողմերը խախտում այն և ե՞րբ կրկին վերականգնում:

3. Գնահատիր՝ Ինչպե՞ս հաջողվեց հայոց ավագանուն Հայաստանում վերականգնել թագավորությունը:

Ա4 | Պատճառ և հետևանք

Պատկերացրու՝ որ դու Տրդատ I արքայի խորհրդատուն ես և պետք է Տրդատին խորհուրդ տաս, թե ինչպես արձագանքի Հռոմի կայսր Ներոնի առաջարկին. գնա՞լ Հռոմ և նրանից ստանալ թագը, թե՞ մնալ Հայաստանում և շարունակել պայքարը: Ինչպե՞ս կհիմնավորես Տրդատի Հռոմ մեկնելու անհրաժեշտությունը:

Ըստ քեզ՝ ի՞նչ ընթացք կարող էին ունենալ հայ-հռոմեական հարաբերությունները, եթե Տրդատ արքան մերժեր Ներոնի առաջարկն ու շարունակեր պատերազմը:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ ստեղծի՛ր պաստառ Հռանդեայի դաշնագրի վերաբերյալ՝ օրինակներով ցույց տալով դրա և Ք. ա. 66 թ. Արտաշատի պայմանագրի միջև եղած ընդհանրություններն ու տարբերությունները:

4.2 ԳԼՈՒԽ Տրդատ Մեծի գահակալումը և քրիստոնեության ընդունումը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Քրիստոնյաները հրաժարվում էին հին աստվածներին զոհեր մատուցելուց և թագավորական պաշտամունքին մասնակցելուց: I-III դարերից նրանք թագավորների կողմից պարբերաբար ենթարկվել են հալածանքների:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր, թե ինչու պետք է թագավորները կամ կայսրերը հալածեին քրիստոնյաներին: Ի՞նչ տարբերակ կամ տարբերակներ կընտրեիր դու, եթե ինքդ լինեիր կայսրը կամ արքան, ինչո՞ւ. հիմնավորի՛ր քո մոտեցումը: Իսկ ի՞նչ կանեիր, եթե ինքդ լինեիր հալածվողի դերում:***

Բառարան

Նվիրապետություն | Հայ առաքելական եկեղեցու հոգևոր աստիճանակարգը, որն ունի հետևյալ բաժանումները՝ կաթողիկոս, պատրիարք, արքեպիսկոպոս, վարդապետ, քահանա, սարկավագ, դպիր:

Ձեռնադրություն | Կրոնական կարգ, Հայ եկեղեցու յոթ խորհուրդներից մեկը, որով դառնում են հոգևորական և լիազորվում կատարել տարբեր կրոնական ծեսեր և արարողություններ:

Նահատակ | մարդ, որը նախընտրում է մահանալ (հաճախ խոշտանգումներով), քան հրաժարվել իր կրոնից:

226 թ. Պարթևստանում տեղի ունեցավ քաղաքական հեղաշրջում, և գահ բարձրացավ **Արտաշիր Սասանյանը:** Հեղաշրջման արդյունքում տարածաշրջանում առաջացավ մի ավելի վտանգավոր ռազմական ուժ՝ **Սասանյան թագավորությունը:** Հայաստանի և նոր թագավորության հարաբերությունները լարված էին: Բանն այն էր, որ Հայաստանում իշխում էր Արշակունի արքայատոհմը, որը սերում էր պարթև Արշակունիներից, ուստի Սասանյանները չէին կարող հանդուրժել իրենց տոհմական հակառակորդների իշխանությունը Հայաստանում: Ստեղծված իրավիճակում Հայաստանի գահակալները որդեգրեցին քաղաքական նոր դիրքորոշում՝ ամրապնդել կապերը Հռոմի հետ: Հռոմի համար ևս սպառնալիք էին Սասանյանների հավակնությունները. վերջիններս, իրենց հռչակելով Աքեմենյանների ժառանգորդ, ձգտում էին վերածնել գոյություն ունեցող քաղաքական քարտեզը: Այսպիսով՝ Հռոմը ևս շահագրգռված էր Մեծ Հայքի աջակցությամբ: Հակասասանյան պայքարը, որի մասին մեզ հասած տեղեկությունները բավականին հակասական են, հատկապես սրվեց հայոց **Խոսրով II** արքայի օրոք: Խոսրով II-ին հաջողվել էր վերականգնել իր իշխանությունը ողջ Հայաստանում, բայց նա շուտով դավադրության զոհ դարձավ Սասանյան շահի առաջադրանքով Հայաստան ուղարկված պարթև **Անակի** ձեռքով: Վերջինս Հայաստան էր փախել՝ իբր Սասանյանների

S Պատմությունը և մարդը

Աբգար V-ը Թադեոս Առաքյալից ստացել է Քրիստոսի անձեռակերտ պատկերը

Հովնաթանյան Մկրտում Հովնաթանի (1779 - 1846) Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

ԱԲԳԱՐ V ՈՒՔՔԱՄԱ

(Ք. ա. 1-ին դար - Ք. հ. 5)

*Օսրոյենեի թագավորը (Ուքքամա մականունն արամերենով նշանակում է «սև»): Ըստ ավանդության՝ Քրիստոսի աշակերտներից **Թադեոս առաքյալի** կողմից ընդունել է քրիստոնեություն՝ դառնալով պատմության մեջ հայտնի առաջին քրիստոնյա թագավորը:*

Ըստ ավանդության՝ Աբգար V-ը՝ պարթև Արշակունի Արշամի որդին, Հիսուս Քրիստոսի հետ ունեցել է նամակագրություն: Հույն եկեղեցական գործիչ և պատմիչ Եվսեբիոս Կեսարացին նշում է, որ Եդեսիայի արխիվները պարունակում էին Աբգար Եդեսացու և Հիսուսի փոխանակած նամակների պատճենները: Նամակագրությունը բաղկացած էր Աբգարի նամակից և Հիսուսի թելադրած պատասխանից: Այս մասին վկայում է նաև պատմահայր Մովսես Խորենացին, ըստ որի՝ Աբգար V-ը, լսելով Հիսուս Քրիստոսի սքանչելագործությունների մասին, իր բանբերների միջոցով նամակ է ուղարկում Քրիստոսին, որպեսզի նա գա և բժշկի իրեն (նա բորոտությամբ էր հիվանդ): Աբգարն արժանանում է Քրիստոսի պատասխանին, որտեղ ասվում է, որ Քրիստոսը կուղարկի իր աշակերտներից մեկին, որը կգա և կբժշկի Աբգարին: Քրիստոսի համբարձվելուց հետո Եդեսիա է գալիս Թադեոս առաքյալը՝ բերելով իր հետ նաև Քրիստոսի կենդանագիր պատկերը: Թադեոսը բուժում է Աբգարին և քաղաքի բոլոր հիվանդներին, քարոզում Ավետարանը: Այնուհետև մեկնում է, ըստ Մովսես Խորենացու, Աբգարի քեռորդու՝ Հայոց Սանատրուկ թագավորի արքունիք, որտեղ էլ նահատակվում է:

Պատմաբանները հակված են քրիստոնեության ընդունումը վերագրել Աբգար V-ի ժառանգ Աբգար IX Մեծին, որը քրիստոնեություն է ընդունել մոտ 200 թվականին:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչո՞ւ է Հայոց եկեղեցին կոչվում առաքելական:

հալածանքներից խուսափելու նպատակով: Հայաստանը վերածվեց Սասանյանների երկրորդ թագավորության, որտեղ շուրջ 30 տարի գահի էին բարձրանում Սասանյան թագաժառանգները:

Մծբինի հաշտությունը և Տրդատ III-ի գահակալումը

Խոսրով II-ի սպանությունից հետո հավատարիմ մարդիկ մանկահասակ թագաժառանգ Տրդատին փախցնում են Հռոմ: Հռոմի արքունիքում նա ստանում է փայլուն կրթություն. կատարելապես տիրապետում է հունարենին և լատիներենին, ինչպես նաև ռազմական գործին: Կայսերը ցուցաբերած կարևոր ծառայությունների դիմաց արժանանում է մեծ պատիվների: Որոշ ժամանակ անց Հռոմի օժանդակությամբ Տրդատը վերահաստատում է Արշակունիների իրավունքը հայոց գահի նկատմամբ և 287 թ. գահ բարձրանում Մեծ Հայքի արևմտյան տարածքում: Նա հռոմեացիների օգնությամբ սկսում է Մեծ Հայքի վերանվաճումը:

Հռոմեա-պարսկական պատերազմն ի վերջո ավարտվում է պարսիկների պարտությամբ: Պարսիկների այս պարտության արդյունքը լինում է **298 թ.** կնքված **Մծբինի 40-ամյա հաշտության դաշնագիրը**: Դաշնագրով երկու կողմերն էլ ճանաչում էին Մեծ Հայքի ինքնավարությունը Հռոմի գերիշխանության ներքո, իսկ **Տրդատ III-ին (298-330)** էլ՝ Հայոց թագավոր:

Հետագա քաղաքական կայունության կարճ ժամանակահատվածում Տրդատը համախմբում է Մեծ Հայքն իբրև մեկ քաղաքական միավոր:

Քրիստոնեության ընդունումը

Տրդատ Մեծի իրագործած ամենանշանակալի փոփոխություններից մեկը **քրիստոնեության** ընդունումն էր որպես պետական կրոն: Վարելով կենտրոնացված պետություն ստեղծելու քաղաքականություն՝ Տրդատ III-ը կարիք ուներ թագավորական իշխանության գաղափարական հիմնավորման: Բանն այն է, որ արքայական իշխանությունը շնորհվում էր Հռոմի կայսեր կողմից՝ այդպիսով զրկելով հայոց արքային աստվածատուր իշխանությունից: Իսկ քրիստոնեության մեջ արքայական իշխանության աստվածատուր լինելն ընդգծված էր: Մյուս կողմից՝ դա անհրաժեշտ էր Սասանյանների նկատմամբ վարվող քաղաքականության մեջ: Քրիստոնեությունը նաև կզսպեր կենտրոնախույս ուժերին: Եվ ի դեմս **քրիստոնեության՝** Տրդատ արքան գտավ ամենահարմար գաղափարական հենքը, որով կամրապնդվեր կենտրոնական իշխանությունը:

Ամենայն հավանականությամբ սրանք այն դրդապատճառներից էին, որ Տրդատին մղեցին ուշադրություն դարձնելու քրիստոնեությանը. նոր կրոնը որոշակի հնարավորություններ էր ընձեռում նրան իր նոր ձեռնարկումներում:

Ս Ձայներ անցյալից

«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Ագաթանգեղոսը, Տրդատ III-ը և Գրիգոր Լուսավորիչը

(XVI դ. մանրանկար)

[Տրդատ]. «Մի օտարական ու անծանոթ մարդ էիր, եկար մեզ միացար և ինչպե՞ս ես համարձակվում պաշտել այն Աստծուն, որին ես չեմ պաշտում»: [...] «Ինչո՞ւ չես կատարում իմ կամքը»:

Պատասխան տվեց Գրիգորը և ասաց. «Աստված հրամայել է, որ «ծառաները հնազանդ լինեն մարմնավոր տերերին», ինչպես որ վայել է, և ինչպես դու ինքդ վկայեցիր, որ ծառայել եմ քեզ իմ ամբողջ էությամբ: Իսկ Աստծո պատիվն ու պաշտամունքը չի կարելի որևէ մեկին տալ. քանզի միայն նա է արարիչը երկնքի ու հրեշտակների, որոնք նրա մեծության փառավորիչներն են, և երկրի ու մարդկանց, որոնք նրա ձեռքով են ստեղծված և որոնց պարտքն է պաշտել նրան ու կամքը կատարել, ինչպես նաև այն ամենի, որոնք ապրում են դրանց վրա թե ծովում, թե ցամաքում»:

ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍ, Ե.51-52:

Մինչ այդ քրիստոնեությունը Հայաստան մուտք էր գործել Ասորիքից (Սիրիայից) և Կապադովկիայից: Հայաստանում դեռ Ի-ին դարում քարոզել էին **Թադեոս և Բարդուղիմեոս** առաքյալները: Ստեղծվել էին քրիստոնեական համայնքներ Հայաստանի տարբեր կողմերում: Սկզբում նոր կրոնի հետևորդները Հայաստանում ևս ենթարկվում էին հալածանքների: Չնայած առաջին քրիստոնյաների հալածանքներին՝ քրիստոնեությունը ժամանակի ընթացքում արմատավորվեց Հայաստանում: Նոր կրոնի եռանդուն քարոզիչներից էր **Գրիգոր Պարթևը,** որը հետագայում հայտնի դարձավ **Լուսավորիչ** անվամբ: Նա ևս հալածվեց և բանտարկվեց **Խոր Վիրապում:** Ի վերջո, սակայն, Տրդատ Մեծը փոխեց վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ և դադարեցրեց հալածանքները: Բանտարկությունից ազատված Գրիգոր Պարթևն արքայի կողմից նշանակվեց Հայոց հայրապետ և մի խումբ հայ մեծամեծ իշխանների հետ ուղարկվեց Կեսարիա (Կապադովկիա)՝ **ձեռնադրվելու** Հայոց մեծ եպիսկոպոս կամ կաթողիկոս: Այնտեղից վերադառնալով Հայաստան՝ Գրիգորը Նպատ լեռան մոտ՝ Արածանի գետում մկրտեց Տրդատ արքային ու նրա ընտանիքին, նախարարներին, զորքին ու ժողովրդին: Այսպիսով՝ Տրդատ III-ը **301 թ.** առաջինն աշխարհում քրիստոնեությունը հռչակեց պետական կրոն և հիմնեց **Հայ Առաքելական եկեղեցին:** Այնուհետև Գրիգոր Լուսավորիչն արքայի հովանավորությամբ և բանակի գործուն մասնակցությամբ ձեռնամուխ եղավ Հայաստանում նոր վարդապետության տարածմանը: 303 թ. կառուց-

S1 Պատմությունը և մարդը

ՀՌԻՓՍԻՄՅԱՆՑ ԿՈՒՅՍԵՐ

Սպրել են Հռոմի Դիոկղետիանուս կայսեր օրոք Հռոմի լեռներում գտնվող Ս. Պողոս վանքում: Քրիստոնյաների նկատմամբ իրականացվող հալածանքներից խուսափելով՝ ի վերջո ապաստանել են Հայաստանում, որտեղ և նահատակվել են:

Ըստ ավանդության՝ հալածանքների պատճառը եղել է կույսերից Հռիփսիմեն: Կայսր Դիոկղետիանուսը գերվում է նրա շլացուցիչ գեղեցկությամբ և կամենում է անհապաղ կնության առնել նրան: Չկամենալով, սակայն, ենթարկվել կայսեր ցանկությանը՝ կույսերն իրենց մայրապետի՝ Գայանեի առաջնորդությամբ փախչում են Ալեքսանդրիա, իսկ հետո Հայաստան: Կայսրը լուր է ուղարկում հայոց Տրդատ Մեծ թագավորին, որ գտնի Հայաստանում ապաստանած կույսերին և վերադարձնի Հռոմ: Տրդատ արքան, գտնելով կույսերին և տեսնելով Հռիփսիմեի գեղեցկությունը, ինքն է ցանկանում տիրանալ գեղեցիկ կույսին: Սակայն Տրդատն այդպես էլ չի կարողանում տիրանալ գեղեցկատես Հռիփսիմեին և զայրացած հրամայում է սպանել բոլոր կույսերին: Նահատակ կույսերի մարմիններն ինն օր անց գտնում և հողին է հանձնում Գրիգոր Լուսավորիչը: Հետագայում հենց այդ վայրերում կառուցվում են Ս. Հռիփսիմե, Ս. Գայանե և Ս. Շողակաթ եկեղեցիները:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ի՞նչ եք կարծում, քրիստոնեության տարածման մեջ ի՞նչ ներդրում ունեն կանայք:

վեց Ս. Էջմիածնի Մայր տաճարը: Եկեղեցիներ հիմնվեցին նաև Հայաստանի տարբեր քաղաքներում ու գյուղերում:

Հատկանշական է, որ չնայած քրիստոնեության հանդեպ իր սկզբնական թշնամանքին՝ հռոմեական կայսր **Դիոկղետիանուսը (284-305)** հանդուրժեց Հայաստանում քրիստոնեության հաստատումը, քանի որ դա ավելի շատ դիտվում էր որպես Սասանյանների դեմ հակադրության դրսևորում: Իսկ արդեն 313 թ. **Միլանի կայսերական հրովարտակով** քրիստոնեությունը հավասարազոր կրոն ճանչվեց: Հռչակված կրոնական հանդուրժողականությամբ մեղմանում է այդուամենայնիվ առկա լարվածությունը:

Հայոց եկեղեցական կառույցի ձևավորումն ու ամրապնդումը

Հարկավ, քրիստոնեությունը Հայաստանում հեշտությամբ չտարածվեց. եղան համառ դիմադրություններ: Դիմադրողների մեջ քիչ չէին նախարարական դասի ներկայացուցիչները: Ավերվում էին հեթանոսական տաճարներն ու մեհյանները, և դրանց տեղերում կառուցվում էին քրիստոնեական եկեղեցիներ: Որոշ հեթանոսական կառույցներ պահպանվում էին և վերածվում քրիստոնեական եկեղեցիների: Նոր հավատքի ներկայացուցիչների օգտին բռնագրավվում էին հեթանոսական տաճարային տնտեսություններին պատկանող կալվածքները: Դա նշանակում էր նաև այդ տնտեսությունների հետ կապված անհնազանդ վերնախավի ոչնչացում, որին այժմ փոխարինում էին Տրդատ Մեծի կողմնակիցները: Իրենց հողերի ու գույքի նկատմամբ ժառանգական իրավունքները պահպանելու նպատակով հոգևորականության շարքերը համալրում էին նաև քրմական դասին պատկանող մարդիկ:

Կարգվելով Հայոց եկեղեցու կաթողիկոս՝ Գրիգոր Լուսավորիչը ձեռնամուխ է լինում եկեղեցական համակարգի ստեղծմանը: Հաստատվում է հայ եկեղեցու **նվիրապետությունը՝** հոգևոր աստիճանակարգը, որի գլուխն էր **Ամենայն հայոց կաթողիկոսը:** Հայաստանի տարբեր գավառներում ստեղծվում են **եպիսկոպոսություններ,** որոնց միջոցով իրականացվում էր եկեղեցական իշխանությունը:

Այսպիսով՝ եկեղեցին շուտով դառնում է երկրի խոշորագույն կալվածատերերից մեկը, որն իր տիրույթներով գիջում էր միայն թագավորական տիրույթներին:

Մի էջ ձեռագիր մատյանից
«Մատենադարան»
Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի
գիտահետազոտական ինստիտուտ

Առանձնացրու քեզ հետաքրքրող տեղեկությունը և քննարկի՛ր դասարանում:
Ո՞ր տեղեկությունն է քեզ ավելի հիմնավոր կամ հետաքրքիր թվում:
Ինչո՞ւ:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Հայոց պատմության ամենաարմատական իրադարձություններից է քրիստոնեության ընդունումը, որով Հայաստանը, հրաժարվելով իր հեթանոսական անցյալից, հակադրվեց և առանձնացավ թե՛ Արևմուտքից (Հռոմ), թե՛ Արևելքից (Իրան): Այսօր ևս հայության համար հույժ կարևոր է քրիստոնեությունը՝ իբրև ազգային անցյալի անքակտելի մաս, դարերով ձևավորված սոցիալ-մշակութային ժառանգություն և ... (շարունակի՛ր ինքդ):

S2 Պատմությունը և մարդը

Հիսուս Քրիստոսի լուսապսակով առաջին պատկերներից: Հատված Հռոմի կատակոմբներից մեկի որմնանկարներից (IV դ.):

ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉԸ ԵՎ ԱՎԵՏԱՐԱՆԻՉՆԵՐԸ

Վաղ քրիստոնեական ուսմունքը տոխանցվում էր բանավոր, սակայն ժամանակի ընթացքում հայտնվեցին նաև գրավոր նյութեր: Հիսուսի աշակերտների՝ առաքյալների և այլ հետևորդների գրությունների հիման վրա ուրվագծվեցին քրիստոնեական հավատալիքները: Ավելի ուշ 40-100-ական թվականներին, այս պատմությունները դարձան գրավոր Ավետարանների հիմքը՝ Հիսուսի մասին «բարի լուրը»: Այսպիսով՝ Հիսուս Քրիստոսի մասին մենք գիտենք չորս պատմություններից, որոնք կոչվում են **Ավետարաններ**: Դրանք գրվել են նրա մահից հետո *Մատթեոսի, Մարկոսի, Ղուկասի և Հովհաննեսի* կողմից: Ավետարանները և այլ գրություններ կազմում են **Նոր Կտակարանը՝ Աստվածաշնչի** երկրորդ մասը:

Հիսուսը քարոզեց արդարություն, կարեկցանք և Աստծո արքայության գալուստը: Նա հաճախ այդ պատգամները փոխանցում էր առակների միջոցով: Ամենահայտնի առակներից են *Բարի սամարացու, Անառակ որդու* և *Մոլորյալ ոչխարի* առակները: Բարի Սամարացու առակը սովորեցնում է այլ մարդկանց օգնելու կարևորությունը, նույնիսկ եթե նրանք տարբերվում են մեզանից և չեն կիսում մեր հավատքը կամ կրոնը: Անառակ որդու առակն ապաշխարության կոչ է անում: Մոլորյալ ոչխարի առակը վերաբերում է Աստծո հոգածությանը յուրաքանչյուր անհատի նկատմամբ՝ անկախ նրանից, թե որքան կորած կամ աննշան է թվում նա:

Հիսուսի մահապատժից հետո երրորդ օրը, ըստ Ավետարանի, նրա հետևորդները հայտարարեցին, որ նա հարություն է առել և հայտնվել է իրենց: Նրանք հավատում էին, որ Հիսուսն Աստծո Որդին է, երկար սպասված Փրկիչը, որը եկել էր երկիր՝ տրկելու մարդկությանը:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ: Ի՞նչ եք կարծում, Բարի սամարացու, Անառակ որդու և Մոլորյալ ոչխարի առակները, բացի հոգևոր նշանակությունից, ի՞նչ նշանակություն կարող էին ունենալ Տրդատ Մեծի համար՝ որպես պետության ղեկավարի:

Գործնական առաջադրանք

Օգտվելով համացանցից՝ դասընկերոջդ հետ տեղեկությունները հավաքիր **Հայոց եկեղեցու յոթ խորհուրդների մասին:** Ստեղծե՛ք պաստառ՝ օրինակներով ցույց տալով, թե ինչ է ենթադրում դրանցից յուրաքանչյուրը: Ձեր գտած տեղեկությունները և դրանց հիման վրա արված ձեր եզրակացությունները դասարանին ներկայացրե՛ք նաև բանավոր:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Արտաշիր Սասանյան • Խոսրով II • Անակ • Տրդատ III • Գրիգոր Լուսավորիչ • Թադեոս և Բարդուղիմեոս • Մծբինի դաշնագիր (298) • քրիստոնեության ընդունում (301) • նվիրապետությունը • ճեռնադրություն

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչո՞ւ հայ Արշակունիները որդեգրեցին հռոմեամետ քաղաքականություն, որքանո՞վ էր այն ողջամիտ:

բ. Վերլուծիր: Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ արքայի և նրա ընտանիքի, նախարարների, զորքի և ժողովրդի մկրտությունը տեղի ունեցավ Նպատ լեռան մոտ՝ Արածանի գետում:

գ. Բացատրիր: Ինչո՞ւ Տրդատ III արքան փոխեց վերաբերմունքը քրիստոնեության նկատմամբ և այն հռչակեց պետական կրոն:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Արդյո՞ք քրիստոնեության ընդունումը տեղի ունեցավ առանց դիմադրության, ի՞նչ ընթացք և հետևանքներ այն ունեցավ:

2. Ընդհանրացրու: Ի՞նչ վտանգ էին ներկայացնում հայ Արշակունիները Սասանյան հարստության համար:

3. Մեկնաբանիր: Ինչո՞ւ Հռոմը հանդուրժեց Հայաստանում քրիստոնեության հռչակումը պետական կրոն, մինչդեռ իր տարածքում հալածում էր նոր կրոնը:

Ա4 | Պատմական հեռանկար

Պատկերացրո՛ւ դու ապրում ես Աշտիշատ քաղաքում II դ. վերջերին և Անահիտ աստվածուհու քրմերից մեկի որդին ես: Մի օր երկու քրիստոնյա գալիս են Անահիտ աստվածուհու տաճար և խոսում իրենց կրոնի մասին: Նրանք խրախուսում են մարդկանց հրաժարվել իրենց հին աստվածներից և հետևել քրիստոնեությանը: Որոշ քաղաքաբնակներ ցանկանում են լսել նրանց, սակայն մյուսները վրդովված են:

Ի՞նչ ես կարծում, ի վերջո ի՞նչ կանեն քաղաքացիները: Ինքդ ինչպե՞ս կվարվես:

Աշխատանք սկզբնաղբյուրի հետ

1 | Համեմատիր | Տրդատ Մեծի և Գրիգոր Լուսավորչի հարաբերությունների ո՞ր փուլն է բնորոշում Ագաթանգեղոսից բերված զրույցը: Վերնագրի՛ր այն:

2 | Մեկնաբանիր | Ինչպե՞ս է Գրիգոր Լուսավորիչը հիմնավորում իր անհնազանդությունը: Ուշադրությունդարձրու «Աստված հրամայել է, որ «ծառաները հնազանդ լինեն մարմնավոր տերերին», ինչպես որ վայել է» նախադասությանը:

4.3 ԳԼՈՒԽ Արշակունյաց Հայաստանի բաժանումն ու անկումը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Տրդատ III արքան Հռոմի օժանդակությամբ կարողացավ վերահաստատել Արշակունիների իրավունքները Մեծ Հայքի նկատմամբ: Արքային հաջողվեց հնարավորինս չեզոքացնել օտար ազդեցությունները՝ վերականգնելով գահի և նախարարությունների երբեմնի հարաբերությունները:

* ***Ի՞նչ ես կարծում, հնարավո՞ր է հասարակական առաջընթացի ապահովումը հասարակության տարբեր շերտերի փոխադարձ անվստահության պայմաններում: Ի՞նչ խնդիրներ գիտես ժամանակակից Հայաստանի Հանրապետությունում, որոնց լուծումն ավելի արդյունավետ և փոխշահավետ կլինի, եթե համագործակցեն հասարակության տարբեր շերտերը:***

IV դարում Հայաստանը թևակոխեց նոր՝ **ավատատիրական (ֆեոդալական)** հարաբերությունների դարաշրջան: Տոհմիկ ավագանու և պետական պաշտոնեության առավել խոշոր ներկայացուցիչներին հատկացված պետական (արքայական) հողերը վերածվեցին ժառանգական սեփականության՝ **ավատի** (ֆեոդի), իսկ այդ հողերում ապրող բնակչությունը (գյուղացի ազատ համայնականներ)՝ ավատատերերից կախյալ հարկատու բնակչության: Քաղաքական իշխանության մասնատումը (և թուլացումը) և բնակչության խոցելիությունը ստեղծեցին այնպիսի սոցիալ-տնտեսական, քաղաքական և իրավական հարաբերություններ, որոնց ամբողջությունը հետագայում կոչվեց **ավատատիրություն:** Դա սոցիալական և տնտեսական խիստ աստիճանակարգային համակարգ էր՝ հիմնված հողերի (ավատի) բաշխման և անձնական հավատարմության վրա: Հողատերը (արքան, նախարարները և այլք) ավատ էր տալիս և դրա հետ մեկտեղ՝ զինվորական ու իրավական պաշտպանության խոստում: Փոխարենը նա **ավատառուից** (ավատը ստացողից) որևէ տեսակի վճար էր ստանում: Դա կարող էր ենթադրել զինվորական ծառայություն, ապրանքի կամ փողի կանոնավոր վճարում:

Բառարան

Ավատ | տիրակալի կողմից ավատառուին (վասալին) տրված հողային տիրույթ:

Ավատառու | անձ, որը տիրոջից հողի շնորհ է ստացել՝ հավատարմության և ծառայությունների դիմաց:

Ավատատիրություն | սոցիալ-տնտեսական խիստ աստիճանակարգված համակարգ՝ հիմնված հողերի բաշխման և անձնական հավատարմության վրա:

Ազատներ և անազատներ | միմյանցից իրավունքներով և պարտականություններով առանձնացած հասարակական խավեր:

Ավատատիրական հարաբերությունների խորացմանը զուգընթաց ավելի որոշակիորեն դրսևորվեցին սոցիալական շերտերի տարբերությունները: Հասարակության մեջ առանձնացան երկու դասեր՝ **«ազատներ»** և **«անազատներ»**, որոնք միմյանցից առանձնանում էին իրավունքներով և պարտականություններով: Ազատների դասի ներկայացուցիչներն էին խոշոր և միջին հողատեր ազնվականները (նախարարներ, հոգևորականներ և այլք), իսկ անազատների դասի ներկայացուցիչներն էին քաղաքացիները (արհեստավորներ և առևտրականներ) և ազատ կամ կախյալ գյուղացիները (շինականները):

Պայքար թագավորական իշխանության համար

Ավատատիրական հարաբերությունների արմատավորմանը զուգընթաց խոշոր կալվածատերերը ձեռք բերեցին ավելի մեծ անկախություն: Այդուհետ հայ թագավորները հաճախ ստիպված էին դիմակայել միաժամանակ կենտրոնախույս ուժերին և արտաքին թշնամիներին: Վիճակը սրվում էր, հատկապես երբ անհրաժեշտ էր լինում հավասարակշռություն ապահովել Հռոմեական և Սասանյան կայսրությունների միջև: Երկրի կայունությունը պահպանելու առումով եկեղեցու և թագի դաշինքը սկզբում փոխշահավետ էր: Սակայն ժամանակի ընթացքում եկեղեցական կալվածատիրությունը լայն չափերի հասավ և արդեն մրցակցում էր ոչ միայն նախարարական տների, այլև թագավորի հետ: Տրդատ Մեծին հաջորդած **Խոսրով III Կոտակի (330-338)** օրոք արդեն արքան, նախարարները և եկեղեցին բաժանվեցին Հռոմի, Սասանյանների և կենտրոնաձիգ իշխանության կողմնակիցների: Խոսրով Կոտակին հաջողվեց ճնշել կենտրոնախույս նախարարական ելույթները և վերահսկողություն հաստատել ավագ նախարարների վրա: Ապագա անհնազանդությունները կանխելու համար նա օրենք սահմանեց, ըստ որի՝ հազար և ավելի զինվոր ունեցող նախարարները պիտի ապրեին արքունիքում՝ թագավորի հսկողության ներքո: Խոսրովի կարճատև թագավորումը նշանավորվեց նաև **Դվին** քաղաքի կառուցմամբ, որը դարձավ նոր մայրաքաղաքը՝ փոխարինելով Արտաշատին: Խոսրով Կոտակի կառավարման վերջին տարիներին կրկին լարվեցին հռոմեա-պարսկական հարաբերությունները:

338 թ. սկսված պարսկա-հռոմեական պատերազմի ժամանակ գահաժառանգ **Տիրանը** հարկադրաբար ապաստանեց Հռոմում: Հաջորդ տարի նա վերադարձավ Հայաստան և Հռոմի աջակցությամբ հաստատվեց գահին: Տիրանը փորձում էր ճնշել նախարարական ապստամբությունները: Լարված էին նրա հարաբերությունները եկեղեցու հետ, քանի որ վերջինս սկսել էր հարել ընդդիմադիր շարժմանը: Տիրանի անհավասարակշիռ և կտրուկ միջամտությունների արդյունքում ի վերջո ձախողվեց թագավորական իշխանության կենտրոնացման քաղաքականությունը:

Նայելով քարտեզին

387 թ. Հայաստանի բաժանումը Հռոմի և Սասանյան Իրանի միջև

1. **Բացահայտիր քարտեզը:** Ինչո՞ւ էին Հռոմն ու Պարսկաստանը ձգտում, որ Մեծ Հայքն իրենց դաշնակիցը լինի:
2. **Կիրառիր աշխարհագրական հմտություններդ:** Ի՞նչ ես կարծում, ինչո՞ւ են Մեծ Հայքից Հռոմին անցած տարածքները զիջում Պարսկաստանին անցած տարածքներին:

Արշակ II արքան և պարսկա-հռոմեական պատերազմները

Տիրանին հաջորդած **Արշակ II-ը (350-368)** Հայաստանը կառավարում էր ներքին հակամարտությունների պայմաններում: Լարվածությունը թուլացնելու նպատակով նա փորձում է համերաշխության եզրեր գտնել եկեղեցու և նախարարների հետ: Վերականգնում է տոհմիկ ավագանու ժառանգական արտոնությունները: Կաթողիկոսությունը վերադարձնում է Լուսավորչի տոհմին՝ **Ներսես Պարթևի** գլխավորությամբ: Երկրի ներքին կայունությունն ապահովելու համար ձեռնամուխ է լինում օրենսդրական մի շարք կարգավորումների: **354 թ.** հրավիրվում է առաջին հայկական եկեղեցական ժողովը **Աշտիշատում,** որտեղ ընդունվում են աշխարհիկ և կրոնական մի շարք կանոններ: Ժողովի որոշմամբ որոշ չափով կրճատվում են ժողովրդից գանձվող հարկերը: Որոշվում է բոլոր գավառներում հիմնել հունական և ասորական դպրոցներ և արգելել պարսկերենի ուսուցումը: Որոշվում է նաև բացել որբանոցներ, հիվանդանոցներ, անկելանոցներ, աղքատանոցներ: Սակայն իրավիճակը շուտով կտրուկ փոխվում է: Կենտրոնական իշխանությունն ամրապնդելու նպատակով արքան կառուցում

U1 Ձայներ անցյալից

ՄՈՎՍԵՍ ԽՈՐԵՆԱՑԻ
(մոտ 410-490)

«Արշակն ավելի ևս հանդգնելով մի անմիտ գործ գործեց: Մասիս լեռան թիկունքում նա շինեց մի դաստակերտ՝ մեղավոր մարդկանց ժողովատեղի, և հրաման արձակեց, թե ով կարողանա այդտեղ ընկնել ու բնակվել, նրա վրա դատական օրենքը չի գործի: Անմիջապես ամբողջ հովիտը ծովացած լցվեց մարդկանց բազմությամբ, որովհետև ավանդառուներն ու պարտապանները, ծառաներն ու հանցագործները, գողերն ու մարդասպանները, ուրիշների կանանց փախցնողները և ուրիշ սրանց նմանները փախչում ապաստանում էին այնտեղ,- և նրանց դեմ հարցաքննություն ու դատաստան չկար: Նախարարները շատ անգամ բողոքեցին, բայց Արշակը նրանց չլսեց այն աստիճան, որ նրանք մինչև [անգամ] Շապուհին դիմեցին»:
(Պատմություն Հայոց, Գ:Գլ. ԻԷ)

է նոր քաղաք, որն իր անունով կոչում է **Արշակավան:** Նախարարները, սակայն, դժգոհ լինելով կենտրոնական իշխանության ամրապնդման քաղաքականությունից, ապստամբում և ավերում են Արշակավանը:

Երկրում այս իրադրությունն էր տիրում, երբ նոր պատերազմ է սկսվում պարսիկների և հռոմեացիների միջև (359 թ.): Հայաստանին կրկին ընտրություն էր պարտադրվում՝ ի նպաստ կողմերից մեկի: Արշակ արքային միառժամանակ հաջողվում է պահել երկրի հավասարակշռությունը, սակայն 363 թ. կնքված Մծբինի հռոմեա-պարսկական հաշտության դաշնագրից հետո դա այլևս անհնար էր: Դաշնագրով, որը հայտնի է նաև «ամոթալի» անվամբ, հռոմեացիները խոստանում էին չօգնել Արշակ II-ին, եթե Շապուհը նրա դեմ պատերազմ սկսեր: Շուտով սկսվում է **պարսկա-հայկական քառամյա պատերազմը (364-368)**: Սկզբնապես հայկական կողմը հաջողությամբ էր պայքարում պարսկական բանակի դեմ, սակայն նախարարներից ոմանք կամ աստիճանաբար անցնում են պարսիկների կողմը, կամ էլ չեզոքություն են պահպանում: Արքան մնում է միայնակ և ստիպված է լինում ներկայանալ Շապուհ II-ին: Նա ձերբակալվում է և իր մահկանացուն կնքում Անհուշ բերդում (368 թ.): Այդ նույն ժամանակ **Արտագերս** ամրոցում ամրացած **Փառանձեմ թագուհին** փորձում էր դիմադրել պարսիկներին, մինչ որդին՝ Պապը, կվերադառնար Բյուզանդիայից: Սակայն համաճարակի և սովի պատճառով դիմադրությունը թուլանում է: Պարսիկներին հաջողվում է գրավել բերդն ու գերեվարել թագուհուն:

Պապ արքան և նրա վերափոխությունները

Արշակին հաջորդած երիտասարդ Պապ արքան (70-74) գահ է բարձրանում շատ ծանր պայմաններում: Պատերազմական գործողությունների արդյունքում ավերվել էին հայոց քաղաքային կենտրոնները՝ Արտաշատը, Երվանդաշատը, Տիգրանակերտը, Դվինը, Վաղարշապատը, Վանը և այլն: Չնայած դրան՝ **371 թ.**

Ձիրավի դաշտում՝ Նպատ լեռան փեշերին, Պարսկաստանի նկատմամբ տարած փայլուն հաղթանակը հնարավորություն է տալիս զբաղվել երկրի ներքին գործերով և ձեռնարկել երկրի վերակառուցումը: Իր կարճատև կառավարման տարիներին նա փորձում է իրագործել մի շարք վերափոխություններ, որոնք միտված էին երկրի բարեկեցության ամրապնդմանն ու թագավորության ամբողջականության վերականգնմանը:

Պապի առաջին ձեռնարկումներից է լինում **ուժեղ բանակի** ստեղծումը՝ հասցնելով այն **90 հազարի**: Կարճ ժամանակում նա հետ է նվաճում Հայաստանից զավթված գրեթե բոլոր ծայրագավառները: Կենտրոնախույս ուժերի հնազանդեցումից հետո Պապը ձեռնամուխ է լինում եկեղեցու վերափոխությանը: Նա վճռական է գտնվում և հայոց եկեղեցին դուրս է բերում հունադավանությունից ունեցած կախվածությունից: Ներսես կաթողիկոսի մահվանից հետո հայ եպիսկոպոսներն են ձեռնադրում հայոց նոր կաթողիկոսին՝ շրջանցելով Կեսարիայում ձեռնադրվելու ավանդույթը: Շնորհիվ այս վերափոխության՝ հայոց եկեղեցին ձեռք է բերում ինքնուրույնություն: Եկեղեցու նկատմամբ գահի անվերապահ գերակայությունը հաստատելու նպատակով Պապ արքան նաև կրճատում է եկեղեցու արտոնությունները. սահմանափակում է նրա եկամտի աղբյուրները (կալվածքներ և այլն), փակում է բազմաթիվ մենաստաններ և կուսանոցներ: Արտաքին քաղաքականության ոլորտում փորձում է հարաբերություններ հաստատել Պարսկաստանի հետ: Բայց այդ ամենն առաջացնում է թե՛ նախարարների, թե՛ եկեղեցականների և թե՛ դաշնակից Հռոմի թշնամանքը: Արդյունքում Հռոմի կայսրի հանձնարարությամբ Պապը դավադրաբար սպանվում է 374 թվականին:

U2 Ձայներ անցյալից

ՓԱՎՍՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ (IV-V ԴԴ.)

«Այս ժամանակ թագավորն իր համար մի դաստակերտ շինեց Հովիտ կոչված Կոգ գավառում և իր իշխանության բոլոր գավառներին հրաման ուղարկեց, հրամայեց, որ ամեն տեղ մունետիկները կանչեն հրապարակներում, բոլոր գավառներում, բոլոր կողմերում հայտնեն թագավորական հրամանը, որ «եթե մեկը մեկին պարտք է, եթե մեկը ուրիշին մի բանով վնասել է, թող բոլորը գան այդ դաստակերտը և ապահով կլինեն: Եթե մեկը (ուրիշի) արյուն է թափել, մեկին վնասել է, կինը տարել է, կամ պարտապան է, կամ մեկի գույքը գրաված է, կամ որևէ մեկից երկյուղ ունի, թող գա այնտեղ, նրա դեմ դատ ու պահանջ չի լինի: Եվ եթե մեկը մեկին մի բան պարտք է, և պարտատերը այդ տեղը գա (պահանջելու), նրան առանց դատի ու արդարադատության բռնեն ու դուրս հանեն»:

Երբ թագավորից այս հրամանը դուրս եկավ, ապա այդտեղ հավաքվեցին բոլոր գողերը, ավազակները, արյունապարտները, մարդասպանները, ստախոսները, խաբեբաները, վնասարարները, գանձագողերը, գրկողները, դատի մեջ ստողները, գրպարտողները, կողոպտողները, հափշտակողները, ժլատները»: **(Պատմություն Հայոց, Դ:Գլ. ԺԲ)**

Մեծ Հայքի բաժանումն ու թագավորության կործանումը

Պապ արքան, թերևս, Արշակունիների վերջին զորեղ և գործունյա արքան էր, որի սպանությունից հետո արքայական իշխանության, եկեղեցու և նախարարների միջև առաջացած անջրպետն էլ ավելի խորացավ: Այս ընթացքում զորեղացավ **Մամիկոնյան** նախարարական տոհմը՝ դառնալով երկրի փաստական կառավարիչը: Հայաստանում կենտրոնական իշխանությունը վերջնականապես կազմալուծվեց: Իսկ արդեն **387 թ.** Պարսկաստանի և Հռոմի համաձայնությամբ այն բաժանվեց երկու անհավասար մասի, որի մեծագույն մասն անցավ Պարսկաստանի հսկողության տակ: Ձևականորեն Հայաստանի երկու մասերում էլ շարունակում էին կառավարել Արշակունի թագավորները: Մի վերջին անգամ Հայաստանի միասնականությունը վերականգնելու փորձ արվեց հայոց **Վռամշապուհ արքայի (388-414)** օրոք. նա փորձեց երկու մասի բաժանված Հայաստանները միավորել հոգևոր-մշակութային ճանապարհով: Նրա աջակցությամբ էր, որ 405 թ. Մեսրոպ Մաշտոցը ստեղծեց հայոց այբուբենը, և դպրոցներ բացվեցին թե՛ պարսկական, թե՛ հռոմեական (բյուզանդական) Հայաստաններում: Սակայն Արշակունյաց Հայաստանի փլուզումն այլևս հնարավոր չեղավ կասեցնել: Հաղթեց ավագանու ծրագիրը: 428 թ. նրանց պահանջով Պարսից շահը գահընկեց արեց Արշակունյաց վերջին հայ արքային՝ **Արտաշես-Արտաշիրին:**

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Արշակունյաց Հայաստանի կործանումն իր ազդեցությունն ունեցավ ոչ միայն հայոց պատմության ընթացքի, այլև ողջ արևելյան միջերկրածովյան աշխարհի վրա: Բանն այն է, որ Հայաստանը կարող էր Մերձավոր Արևելքում դառնալ քրիստոնեության գլխավոր հենակետը՝ ընդդեմ արաբական արշավանքների, որոնք 250 տարուց քիչ անց պետք է նոր հավատք բերեին այս տարածաշրջան: Արդյունքում կտրուկ փոխվեց տարածաշրջանի թե՛ քաղաքական-տնտեսական, թե՛ մշակութային և թե՛ կրոնական պատկերը:

Իսկ թույլ տված սխալները մեզ հիշեցնում են, որ կառավարիչները, իշխանությունը և վերահսկողությունը պահպանելու համար, պետք է հաջողությամբ հաղթահարեն բազմաթիվ տարբեր խնդիրներ:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ օգտագործի՛ր համացանցը Ձիրավի ճակատամարտն ուսումնասիրելու համար: Ձեր գտած տեղեկությունները և դրանց հիման վրա արված ձեր եզրակացությունները դասարանին ներկայացրե՛ք բանավոր և քարտեզներով:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

ավատ և ավատառու • ավատատիրություն • ազատներ և անազատներ • Խոսրով III Կոտակ (330-338) • Տիրան • Արշակ II • Պապ • Ներսես Պարթև • Վռամշապուհ • Դվին • Արշակավան • Աշտիշատ • Ձիրավի ճակատամարտ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչպե՞ս արմատավորվեց ավատատիրությունն Արշակունյաց Հայաստանում:

բ. Բացատրիր: Ինչո՞վ էր պայմանավորված թագավորական իշխանության թուլացումը ավատատիրության ձևավորման ընթացքում:

գ. Հիմնավորիր: Ինչու՞ Հռոմը չիանդուրժեց Պապ արքայի ձեռնարկած վերատիխությունները և կազմակերպեց նրա սպանությունը:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ առավելություն տվեց Հայոց եկեղեցուն այն, որ Պապ արքան արգելեց կաթողիկոսի ձեռնադրումը Կեսարիայում:

2. Ընդհանրացրու: Ի՞նչ հետևանքներ ունեցավ և կարող էր ունենալ այն, որ արքան, նախարարներն ու եկեղեցին բաժանվեցին Հռոմի, Սասանյանների և կենտրոնաձիգ իշխանության կողմնակիցների:

3. Գնահատիր: Որքանո՞վ էր հիմնավոր Վռամշապուհ արքայի Հայոց հողերը հոգևոր-մշակութային ճանապարհով միավորելու փորձը:

Ա4 | Փոփոխություն և շարունակականություն

Պատկերացրու, որ դու Վռամշապուհ արքան ես և մտածում ես հայոց գրեր ստեղծելու մասին, բայց պարսից արքայի թույլտվությունը չունես: Ինչպե՞ս կփորձես համոզել պարսից արքային, որ նա թույլ տա, որ հայերը սեփական գիրն ու գրականությունը ստեղծեն:

Ի՞նչ ես կարծում, եթե Վռամշապուհ արքան չդիմեր պարսից արքային՝ հայոց գրերի ստեղծումը թույլ տալու հարցով, դա ի՞նչ խնդիրներ կառաջացներ:

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Համեմատիր և ներկայացրու:** Կա՞ն արդյոք տարբերություններ երկու պատմիչների փոխանցած տեղեկություններում: Յուրաքանչյուր պատմիչի տեքստում գտիր այն տեղեկությունները, որ բացակայում են մյուսի մոտ: Ի՞նչ են հավելում դրանք հիմնական տեղեկությանը:

2 | **Մեկնաբանիր:** Ինչպե՞ս կմեկնաբանեք այն, որ թե՛ Փավստոս Բուզանդը, թե՛ Մովսես Խորենացին սև գույներով են ներկայացնում նոր քաղաքի բնակչությունը:

4.4 ԳԼՈՒԽ Արշակունյաց Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Արշակունիների կառավարման տարիներին Հայաստանը մշտապես գտնվում էր արևմուտքի և արևելքի՝ Հռոմի և Պարթևստանի, իսկ ապա Սելևկյանների լարված մրցակցության պայմաններում: Կողմերից յուրաքանչյուրը Հայաստանում իր ազդեցությունն ակտիվ պահելու նպատակով փորձում էր այն իրեն ենթարկել կրոնական և մշակութային ճանապարհով:

* ***Ի՞նչ ես կարծում, ռազմական ուժո՞վ նվաճումն էր ավելի տևական ազդեցություն ապահովում, թե՞ կրոնական-մշակութային ազդեցությամբ նվաճումը: Գուցե երբեմն մեկը, երբեմն մյո՞ւսը: Իսկ մե՞ր օրերում:***

Արշակունյաց Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը դեռևս որոշակիորեն հելլենիստական էր: Սկսվել էր **ուշ հելլենիզմի (կամ հետհելլենիզմի) փուլը**, որը նշանավորվեց դրա անկմամբ: Երկրում արմատավորվեցին ավատատիրական հարաբերություններ, քաղաքները կորցրին իրենց ազդեցությունը հասարակական կյանքի վրա, թուլացան տարբեր շրջանների տնտեսական ու մշակութային կապերը: Թուլացավ նաև հայկական պետությունը՝ չկարողանալով դիմակայել Հռոմի և Պարսկաստանի քաղաքական ճնշմանը: Հելլենիստական ավանդույթները կորցրին իրենց ազդեցությունը, և Հայաստանում դրվեց նոր՝ քրիստոնեական մշակույթի հիմքը:

Բառարան

Հայրենիք | միջնադարյան Հայաստանում սեփականության իրավունքի (ժառանգական) հիմնական տեսակը:

Պարգևականք | ծառայության դիմաց արքայի և խոշոր նախարարների շնորհած հողի պայմանական սեփականությունը:

Գանձագին | առք ու վաճառքի ենթակա մասնավոր սեփականությունը:

Հողատիրության ձևերը և ավատատիրական աստիճանակարգը

Ավատատիրական համակարգի զարգացումն ու ամրապնդումն Արշակունյաց Հայաստանում ուղեկցվում էր արքայի իշխանության աստիճանական թուլացմամբ: Հայ Արշակունիները հետզհետե կորցնում էին իրենց ենթակաների նկատմամբ ունեցած անսահմանափակ իշխանությունը: Նրա իշխանությունն ավելի ու ավելի էր սահմանափակվում արքայատոհմին պատկանող տարածքով: Թագավորական (պետական) հողերը մասնատվում էին, ծառայող ազնվականության հողատարածքները՝ աճում: Ժառանգաբար նախարարներին պատկանող հողերը, որ կոչվում էին **հայրենիք**, աստիճանաբար մեծանում էին ի

հաշիվ **պարգևականք** հողերի: Դրանք պետական պաշտոնյաներին կամ զինվորականներին արքայի կողմից շնորհված հողերն էին: Ծառայության դիմաց ստացված այդ հողերը վերադարձվում էին ծառայությունը դադարեցնելու դեպքում, սակայն ժամանակի ընթացքում դրանք ևս վերածվում են հայրենիքի: Կային նաև **գանձագին** հողեր, որոնք ենթակա էին առք ու վաճառքի: Սրանք, ըստ էության, չէին տարբերվում հայրենիքից: Քրիստոնեության ընդունումից հետո առաջացավ հողատիրության նոր՝ **վանքապատկան** ձևը:

Այդուամենայնիվ, երկրի գերագույն տերը **Հայոց արքան** էր, որին անվանում էին «մեծ արքա Հայոց Մեծաց»: Նրա իրավունքների թվում էին պատերազմ հայտարարելը և վարելը, խաղաղություն կնքելը, հարկեր կամ պաշտոններ սահմանելը, բայց այդ ամենը ենթակա էր **ավագանու խորհրդի** քննարկմանը: Քննարկումներին մասնակցում էր նաև **Աշխարհաժողովը,** որը, սակայն, Արշակունիների կառավարման տարիներին ավելի ու ավելի հազվադեպ էր հրավիրվում: Հետագայում Աշխարհաժողովի գործառույթներ են ստանձնում Հայոց կաթողիկոսի կողմից հրավիրվող **եկեղեցական ժողովները:**

S Առավել կարևոր գործակալությունները

Հազարապետության պարտականությունն էր տնտեսական-հարկային գործերի ղեկավարումը:

Սպարապետությունը ղեկավարում էր զինված ուժերի գլխավոր հրամանատարը: Ենթարկվում էր թագավորին և գործում նրա հրամանանով, իսկ պատերազմի ժամանակ նրան էին ենթարկվում բոլոր նախարարների զորամասերը:

Մարդպետությունը թագավորական հողերի, բերդերի և գանձերի վերահսկման ու պահպանման գործակալությունն էր, երկրի ներքին կարգ ու կանոնի ապահովողը:

Մաղխազությունն իրականացնում էր արքունական պահակազորի և թիկնազորի ղեկավարումը:

Թագակապ ասպետության պարտականությունն էր պալատական արարողությունների, վարվելակարգի վերահսկումը և թագն արքայի գլխին դնելը:

Մեծ դատավարությունը մինչ քրիստոնեությունը ղեկավարում էր քրմապետը, իսկ քրիստոնեության ընդունումից հետո՝ կաթողիկոսը:

Մենեկապետության գործառույթն արքունի գրասենյակի ղեկավարումն էր: Մենեկապետը թագավորի անձնական քարտուղարն էր:

Գործակալությունները որոշ չափով հիշեցնում են ժամանակակից նախարարությունները:

Պետական կառավարման համակարգը (գործակալությունները)

Հայոց արքան երկիրը կառավարել է **գործակալությունների** միջոցով: Գործակալներն իրականացնում էին վարչական, տնտեսական, զինվորական, դիվանագիտական, դատական և այլ գործառույթներ: Արքունական այդ պաշտոնը ստացողը գլխին հատուկ ժապավեն էր կրում, որը կոչվում էր «պատիվ» (այստեղից էլ «պատվական» բառը): Ժամանակի ընթացքում գործակալությունները ևս դառնում են ժառանգական: Դիցուք՝ սպարապետությունը պատկանում էր **Մամիկոնյանների** տոհմին, թագադիր ասպետությունը՝ **Բագրատունիների,** և այլն:

Թագավորի և նախարարների հարաբերությունները կարգավորվում էին **«Գահնամակ» և «Զորանամակ»** փաստաթղթերով: Գահնամակը Հայաստանի բոլոր ավատատերերի ցուցակն էր՝ ըստ քաղաքական կշռի և ազդեցության: Դրանով էլ ամրագրվում էր արքունիքում նրանց գրաված դիրքը: Նախարարներն իրավունք ունեին նստել թագավորական համաժողովներում և խնջույքներում Գահնամակի սահմանած հերթականությամբ: Զորանամակով սահմանվում էին ավատատերերի զինվորական ծառայության ժամկետներն ու զորաքանակը: Արշակունիների օրոք հայկական բանակի թվակազմը հասավ 120 հազարի: Բանակի կեսից ավելին կազմում էին արքունական զորքերը, մնացածը ներկայացնում էին նախարարական զորքերը:

Կրոնը

Արշակունիների կառավարման սկզբում Հայաստանում կրոնական մեծ տեղաշարժեր չեն լինում: Սակայն իրավիճակը փոխվում է Հայոց Խոսրով II արքայի սպանությունից հետո: Սասանյան տիրապետության ժամանակաշրջանում (շուրջ 30 տարի), երբ գահ է բարձրանում Ծապուհ I-ի որդին՝ Որմիզդ-Արտաշիրը, Հայաստանում խիստ պայքար է սկսվում Արևմուտքի ազդեցության և հելլենիստական մշակույթի դեմ: Սասանյան նոր արքան փորձում է Հայաստանում տարածել իրանական մշակույթն ու **զրադաշտական** կրոնը: Այդպես փորձ էր արվում Հայաստանում նոր՝ Սասանյան հարստություն հաստատել, և դրան պետք է նպաստեր զրադաշտականությունը: Ստեղծված պայմաններում քրիստոնեական կրոնի քարոզիչների գործունեությունն ավելի պարարտ հող է գտնում Մեծ Հայքում: Հայաստանը հակասասանյան իր քաղաքականությամբ ամենահարմար միջավայրն էր նման քարոզչության համար:

Քաղաքներն ու տնտեսությունը

Արշակունյաց Հայաստանում շարունակում էին զարգանալ հին քաղաքները, ինչպես նաև կառուցվում էին նորերը՝ **Մծուրք, Վաղարշապատ, Դվին, Արշակավան:** Պարբերաբար ընդհատվող միջազգային քարավանային առևտուրը վերստին սկսում է աշխուժանալ 298 թ. Մծբինի հաշտության դաշնագրի կնքումից հետո: Այս շրջանում **Արտաշատը** դառնում է մեկն այն չեզոք վայրերից, ուր Հռոմեական կայսրության և Սասանյան պետության վաճառականների միջև ապրանքափոխանակություն է կատարվում: Սակայն IV դարի կեսերից՝ հայ-պարսկական պատերազմների ընթացքում, քաղաքները հիմնականում ավերվում են: Արդյունքում քաղաքային կյանքը Հայաստանում միառժամանակ մարում է, իսկ քաղաքները վերածվում են խոշոր գյուղերի կամ ավանների: Միակ բացառությունը նորաստեղծ մայրաքաղաք Դվինն էր: Քաղաքային կյանքի անկմանը զուգընթաց անկում է ապրում և հելլենիստական մշակույթը, որը մեծապես կապված էր քաղաքների և քաղաքային կյանքի հետ:

Գիրը և գրականությունը

Արշակունյաց Հայաստանում գրագրության լեզուները շարունակում էին մնալ արամեերենն ու հունարենը, ինչպես նաև մեհենական նշանագրերը: Սակայն քրիստոնեության ընդունումից հետո հայկական մեհենագրությունն արգելվում է: Տրդատ III-ի հրամանով պետական գրագրության և քարոզչության լեզուներ են դառնում **հունարենն ու ասորերենը:**

Ուշ հելլենիստական Հայաստանում ևս շարունակվում էր գիտության, գրականության և մշակույթի մյուս ճյուղերի զարգացումը: Հայ Արշակունի թագավորները ևս Հայաստան էին հրավիրում ու հովանավորում հելլենիստական մշակույթի մի շարք ներկայացուցիչների: Հայտնի է II դարում Հայաստան եկած և երկար ժամանակ Արտաշատում ապրած հայտնի ճարտասան, գրող և մանկավարժ Յամբլիքոս Բաբելոնացին: Նա ոչ միայն զբաղվել է հայ արքայազնների դաստիարակությամբ, այլև գրել է 39 գրքից բաղկացած «Բաբելոնիկա» պատմա-վիպական երկը, որից միայն առանձին հատվածներ են մեզ հասել: Հայկական արքունի դիվանում պահվող ժողովրդական ավանդությունների, առասպելների ու երգերի ժողովածուների հիման վրա Հայաստանի նախնական պատմությունն է գրել ասորի փիլիսոփա և պատմագիր **Մար Աբաս Կատինան (III-IV դդ.):** Հայ պատմիչներից Մովսես Խորենացին և Սեբեոսը իրենց աշխատությունների մեջ մեծապես օգտվել են նրա աշխատությունից:

S Հատված Գառնիի բաղնիքի խճանկարից

Հայաստանում ամբողջապես պահպանված միակ խճանկարն է: Առասպելական բովանդակությամբ հորինվածքը կազմված է 15 տարբեր երանգների բնական քարերից: Խճանկարի գլխավոր դրվագում ծովային տեսարան է, բաց կանաչավուն ֆոնի վրա պատկերված են ծովի աստված Թետիսը և այլ դիցաբանական կերպարներ: Խճանկարի գրությունները հունարեն են, բայց պատկերները (ձկներ, քրահարսեր, իխտիոկենտավրոսներ) արևելյան դիմագծեր ունեն: Խճանկարի հունարեն արձանագրություններից մեկը, որը թողել են վարպետները, բառացի թարգմանվում է այսպես. «Չստացանք անգամ սատկած (ձուկ) ոչ ծովից, ոչ օվկիանոսից»:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս կմեկնաբանես խճանկարի վրայի հունարեն գրությունը:

Արվեստը և ճարտարապետությունը

Արշակունիների արքայատոհմի օրոք ևս հայկական մշակույթը զարգանում է հարևան երկրների մշակույթների հետ փոխազդելով: Մի կողմից՝ թուլանում են հելլենիստական ավանդույթները, մյուս կողմից՝ արևելք է թափանցում հռոմեական ազդեցությունը: Զգալի չափով առաջադիմում են **ճարտարապետությունը, զինագործությունը, ոսկերչությունը, մանածագործությունը:** Նոր առաջացած և բարձր աստիճանի հասած արհեստագործության ճյուղերից էր **ապակեգործությունը:** Այդ ամենի մասին իմանում ենք հատկապես հնագիտական գտածոներից:

Հայաստանում նախաքրիստոնեական շրջանի սրբազան շինությունների մեծ մասն ավերվում է քրիստոնեության ընդունման ժամանակ և հետո, բայց որոշ կառույցներ էլ վերափոխումներից հետո օգտագործվում են որպես քրիստոնեական եկեղեցիներ: Պահպանված միակ ճարտարապետական կոթողը **Գառնիի** տաճարն է (վերականգնվել է 1970-ական թթ. իր պահպանված հիմքի վրա): Տաճարի ճակատը, խոյակները, եզրերը, քարե առաստաղը և այլ մասեր գեղազարդված են բուսական ու երկրաչափական նուրբ քանդակներով: Այս կառույցից հարավ-արևմուտք հնագետները հայտնաբերել են պալատական **բաղնիքների** մի փոքրիկ համալիր: Այս բաղնիքները պահպանում են ուշ հռոմեական ոճով խճանկարային սալահատակ՝ 15 տարբեր գույների քարերի նուրբ համադրություններով:

Սկզբնաղբյուրներից գիտենք, որ հայկական հեթանոսական տաճարներում եղել են մարմարից, փղոսկրից, ոսկուց, բրոնզից և այլ նյութերից պատրաստված աստվածների և թագավորների մեծ ու փոքր բազմաթիվ արձաններ: Այդպիսիք եղել են նաև քաղաքներում, քաղաքատիպ ավաններում, ամրոցներում, թագավորական պալատներում և այլուր: Սակայն դրանցից մեզ միայն մի քանի նմուշներ ու բեկորներ են հասել: Քրիստոնեություն ընդունելուց հետո արվեստի այդ հուշարձանները գրեթե իսպառ ոչնչացվել են:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Հայաստանում Արշակունիների իշխանության ժամանակաշրջանը նշանավորվեց մշակութային այնպիսի անցումներով, որոնք պայմանավորեցին նաև սոցիալական փոփոխություններ: Այդպիսին էր հելլենիստական մշակույթի նահանջը, որի հետևանքները նաև քաղաքական էին: Տեղի ունեցող փոփոխություններն ազդում էին ինչպես մարդկային հարաբերությունների, այնպես էլ հասարակության կառուցվածքի ու կազմակերպման ձևերի վրա:

Այսօր ևս մշակույթն այնպես է ազդում մեր հայացքների և վարքագծի վրա, որ հաճախ մենք նույնիսկ տեղյակ չենք լինում այդ ազդեցության մասին:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

ուշ հելլենիզմ (կամ հետհելլենիզմ) • հայրենիք • պարգևականք • գանձագին • վանքապատկան • գործակալություններ • Յամբլիքոս Բաբելոնացի • Մար Աբաս Կատինա • ապակեգործություն • Գառնի

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ի՞նչ առանձնահատկություն ուներ Արշակունյաց ուշ հելլենիստական (կամ հետհելլենիստական) Հայաստանի մշակույթը: Ինչպիսի՞ փոփոխությունների ենթարկվեց մշակույթն այդ շրջանում:

բ. Հիմնավորիր: Ի՞նչ քայլերի դիմեցին Սասանյանները՝ Հայաստանում իրենց արքայատոհմը հաստատելու համար, ինչո՞ւ:

գ. Բացատրիր: Ինչպե՞ս էին կարգավորվում արքայի և նախարարների հարաբերությունները:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ընդհանրացրու: Ինչո՞վ էր պայմանավորված Արշակունյաց Հայաստանում արքայական իշխանության թուլացումը:

2. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ քաղաքների անկումն Արշակունյաց Հայաստանում:

3. Վերլուծիր: Ի՞նչ փոփոխությունների հանգեցրեց ավատատիրական կարգերի ճնավորումը Արշակունյաց Հայաստանում:

Ա4 | Փոփոխություն և շարունակականություն

Պատկերացրու, որ դու խոսրով III Կոտակ արքայի գրագիրն ես, և քեզ հանձնարարվել է շարադրել մի պայմանագիր, որը պետք է կնքվի արքայի և իր նախարարներից մեկի (որոշիր ինքդ) միջև: Պայմանագիրը պետք է ներառի յուրաքանչյուր կողմի պարտականությունները և իրավունքները:

Ինչպիսի՞ պարտավորություններ և իրավունքներ կունենար կողմերից յուրաքանչյուրը:

Գործնական առաջադրանք

Օգտվելով համացանցից կամ «Համաշխարհային պատմություն» դասագրքից՝ դասընկերոջդ հետ ստեղծիր պաստառ՝ օրինակներով ցույց տալով, թե ինչպես են թագավորական (պետական) հողերը աստիճանաբար մասնատվում, և դա ինչպես է նպաստում արքայի իշխանության թուլացմանը: Ներկայացման մեջ ներառե՛ք պատկերներ ենթագրերով:

ԹԵՄԱ 5

Հայաստանը Պարսկաստանի, Բյուզանդիայի և Արաբական Խալիֆայության միջև

Ուսումնասիրելով այս թեման՝ կկարողանաս.

- **ա. Նկարագրել** V-IX դդ. միջազգային և ներքաղաքական իրավիճակի փոփոխությունները, պատմության առանցքային դրվագները, ինքնիշխանության վերականգնման ներքին և արտաքին նախադրյալները և դրանցում նախարարների ու եկեղեցու դերակատարումը:
- **բ. Բնութագրել** V-IX դդ. հայ ժողովրդի միասնականությանը, հոգևոր ինքնուրույնությանն ու ինքնությանը սպառնացող մարտահրավերները և դրանց դիմագրավելու քայլերը՝ քննարկելով լուծումների հնարավոր տարբերակներ:
- **գ. Համեմատել և մեկնաբանել** Հայաստանի դրությունն ու կարգավիճակը պարսկական և բյուզանդական հատվածներում, իսկ ապա՝ Արաբական տիրապետության ժամանակաշրջանում:
- **դ. Արժևորել և գնահատել** հայոց եկեղեցու ինքնուրույնության պահպանմանն ուղղված քաղաքականությունը՝ կարևորելով համաժողովրդական միասնական պայքարի նշանակությունը:
- **ե. Կարծիք հայտնել** պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու փոխանցման անհրաժեշտության վերաբերյալ:

Մարզպանական Հայաստանի դրոշը
(վերակազմություն)

«Վարդանանք»,
Գրիգոր Խանջյան
Երևանի Գաֆեսճյան արվեստի կենտրոնում

5.1 ԳԼՈՒԽ Պայքար ինքնավարության համար

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա:
Արշակունյաց թագավորության անկումից հետո էլ Սասանյան կառավարիչներն այդուամենայնիվ չէին հրաժարվել Արևելյան Հայաստանի ներքին ինքնուրույնությունը վերացնելու և հայերին զրադաշտականությունը պարտադրելու իրենց վաղեմի ծրագրից:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր՝ մի՞շտ են գերտերությունները ձգտում իրենց հսկողությունը սահմանել այլ պետությունների նկատմամբ: Արդյո՞ք այդպիսի խնդիրներ չկան նաև այսօր:***

Բառարան

Աշխարհագիր | մարդկանց և գույքերի ցուցակագրություն՝ վիճակագրություն, մարդահամար:

Բյուզանդիա | 395 թ. Հռոմեական կայսրության բաժանումից հետո Արևելահռոմեական կայսրությանը տրված անվանումը:

428 թ. Արշակունյաց թագավորության անկումից հետո Պարսկաստանի հսկողության տակ անցած Արևելյան Հայաստանը վերածվեց Սասանյան պետության վարչական միավորի՝ մարզպանության: Հաջորդ երկու դարերի ընթացքում պարսկական Հայաստանը կառավարում էին **մարզպանները,** որոնք նշանակվում էին Սասանյան տիրակալների կողմից: Ի տարբերություն մյուս մարզպանությունների՝ Հայաստանն օժտված էր ավելի մեծ իրավունքներով. երկրի կարևորագույն պաշտոնները (հազարապետություն, սպարապետություն և այլն) թողնվել էին նախարարներին, միաժամանակ պահպանվել էր նախարարների իրավունքների անձեռնմխելիությունը:

Սակայն **Հազկերտ II-ի (439-457)** օրոք վերջ դրվեց քրիստոնյաների նկատմամբ մինչ այդ եղած հարաբերական հանդուրժողականությանը: Տերության նվաճողական նպատակների համար կրկին սկսեց օգտագործվել զրադաշտականությունը:

Սասանյանների քաղաքականության փոփոխությունը

Պարսկաստանի հսկողության տակ անցած Արևելյան Հայաստանի ներքին ինքնուրույնությունը թուլացնելու, իսկ ապա վերացնելու նպատակով Հազկերտը նախ հայ նախարարներին ներգրավեց կայսրության արևելյան սահմաններում անվերջանալի արշավանքների մեջ՝ ընդդեմ հոների: Արքան հույս ուներ այդպես զրկել հայերին ռազմական դիմադրական ուժից: Հայերին ինքնուրույնությունից զրկելու լուրջ խոչընդոտ էր նաև Հայոց եկեղեցին, որը Արշակունիների անկումից հետո մարմնավորում էր երկրի պետականությունը: Ուստի պարսկական ազդեցությունն ուժեղացնելու և երկիրն ապակայունացնելու նպատակով 447 թ.

անցկացվեց **աշխարհագիր՝** հողերի և բնակչության հաշվառում: Արդյունքում հարկերն ավելի ծանրացան, և հարկման ենթարկվեցին հասարակության բոլոր շերտերը, անգամ եկեղեցին, որը մինչ այդ ապահարկ էր: Պարսիկ ավագանուն հանձնվեցին երկրի գործակալությունները՝ բացի սպարապետությունից: Հայերի ձեռքում էր նաև մարզպանությունը: Մարզպանը **Վասակ Սյունին** էր, սպարապետը՝ **Վարդան Մամիկոնյանը:**

Նախապատրաստական այս աշխատանքներից հետո արդեն պարսից կառավարությունն անցավ վճռական գործողության: Հազկերտ II-ը **449 թ.** հատուկ հրովարտակով հայերից պահանջում էր անհապաղ զրադաշտականություն ընդունել:

Ավարայրի ճակատամարտը

Արտաշատում հայ հոգևոր առաջնորդների և նախարարների մասնակցությամբ գումարվում է հատուկ ժողով: Չնայած առկա որոշ տարաձայնություններին՝ ժողովի մասնակիցները կազմում են պատասխան հայտարարություն, որով իրենց հավատարմությունն են հայտնվում թե՛ Սասանյան կայսրությանը, թե՛ քրիստոնեությանը: Ստանալով այս պատասխանը՝ Հազկերտ II-ը Տիզբոն է կանչում անվանի հայ նախարարներին: Նրանց հետ էին մարզպան Վասակ Սյունին և սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Տիզբոն ժամանած նախարարներից պահանջվում էր հրաժարվել քրիստոնեությունից և զրադաշտականություն ընդունել: Հայրենիք վերադառնալու և դիմադրություն կազմակերպելու նպատակով նախարարները որոշում են առերես ուրանալ քրիստոնեությունը և ընդունել զրադաշտականությունը: Բայց պարսից արքան նրանց Հայաստան է ուղարկում հատուկ զորախմբի և մոգերի ուղեկցությամբ, որոնք պետք է ամենուր զրադաշտական սովորույթներ պարտադրեին:

Հայրենիք վերադարձած նախարարները միանում են Հայաստանում ծայր առած ժողովրդական շարժմանը, որը վերածվում է կազմակերպված ապստամբության: Սակայն նախարարների միաբանությունը պառակտվում է: առաջանում է երկու խմբավորում՝ Վասակ Սյունու և Վարդան Մամիկոնյանի գլխավորությամբ: Վասակ Սյունին հույս ուներ Պարսկաստանի հետ բանակցությունների միջոցով հասնել փոխզիջման՝ պահպանելով հայկական ինքնավարությունն ու դավանանքի ազատությունը: Այդպես հնարավոր կլիներ նաև խուսափել պատերազմական գործողություններից և հաշվեհարդաներից: Դրան հակառակ՝ Վարդան Մամիկոնյանը գտնում էր, որ հարկավոր է գնալ վճռական ռազմական գործողությունների և ամեն գնով հասնել հաղթանակի: Այդ որոշումը չի բեկանվում նաև այն ժամանակ, երբ Հազկերտը, նկատի ունենալով ապստամբության ծավալումը, չեղարկում է հայերի հավատափոխության իր հրովարտակը: Ռազմական բախումն անխուսափելի էր:

451 թ. մայիսի 26-ին Տղմուտ գետի ափին՝ **Ավարայրի դաշտում,** տեղի է ունենում վճռական ճակատամարտը: Հայերը, չնայած իրենց հերոսական և անձնու-

U1 Ձայներ անցյալից

ՂԱԶԱՐ ՓԱՐՊԵՑԻ
(442-510)

«Մատենադարան» Մ. Մաշտոցի անվան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտ

Վարդանի հեռանալը նախարարներից՝ դեպի Հունաց աշխարհը

«Եվ արդ այս բոլոր չարիքները տեսնելով՝ Մամիկոնեից տեր և հայոց սպարապետ Վարդանն իր մոտ կանչեց ամբողջ ընտանիքը, եղբայրներին, ազատներին, ծառաներին և առհասարակ իր պալատի ամբողջ բազմությանը: Սկսեց խոսել նրանց հետ և ասաց. «[...] Կամենում եմ իսկապես թողնել այս կյանքի ամեն ինչը մինչև վերջ: [...] Հանձն եմ առնում՝ ձեզ հետ միասին, Քրիստոսի անվան համար ընտրել օտարություն գնալը»:

Եվ այսպես, միահամուռ արհամարհելով՝ ոչինչ համարեցին այս կյանքի ամեն տեսակ անիմաստ մեծությունները և իրենց հետ միաբանած պալատով ու ընտանիքով ճանապարհ ընկան՝ շտապելով դեպի Հունաց իշխանությունը, ուր որ միաբանությամբ թաքնված նամ այս ու այնտեղ ցրված՝ կարող էին իրենց անձերը պաշտպանել:

Հայոց մեծ սպարապետ ու Մամիկոնեից Վարդանի [...] Հայոց աշխարհից գնալու այս խորհուրդը հանկարծ հայտնեցին Սյունյաց իշխան Վասակին, որն այդ ժամանակ մարզպան էր Հայոց: [...] Սյունյաց իշխան Վասակը նամակ գրեց, ննքեց իր մատանիով [...]: [...] Ապա տարան նաև երդման Ավետարանը՝ այն բռնեցին Վարդանի ու նրա եղբայրների առաջ: Եվ նրա ձեռքը տվեցին Սյունաց Վասակի, Հայոց մյուս ազատների, եպիսկոպոսների և սեպուհների նամակները. [...] «Ահա դու՝ եղբայրներով ու քեզ հետ միաբանած ընտանիքովդ, որոնք համբուրելով քեզ հետ, հոգացել են, որ քեզ հետ ապրեցնեն իրենց, ձեր անձերն եք պանծացնում: Իսկ մենք ամենեքյան մատնվում ենք հավիտենական կորստի: Քանի որ ո՛չ մենք, ո՛չ մեր զավակներն առանց ձեզ ոչ մի հնար չունենք տրկվելու և ապրելու, ապա ինչպես որ հոգալով խնամք եք տանում ձեր նկատմամբ, այդպես էլ մի՛ թողնեք, որ կորչեն այսքան մարդիկ»: [...]»:
(Պատմություն Հայոց, Դրվագ Բ:Լ):

րաց դիմադրությանը, պարտություն են կրում: Զոհվում է սպարապետ Վարդան Մամիկոնյանը: Չնայած դրան՝ ապստամբությունը չի մարում՝ ստանալով պարտիզանական բնույթ: Այդ ժամանակ պարսիկները հասկանում են, որ Հայաստանի բռնի կրոնափոխությունը պահանջում է չափազանց թանկ ռազմական ջանք: Ծանր կացության մեջ հայտնված սասանյան արքունիքը ստիպված էր գնալ զիջումների: Տրվում է կրոնի ազատություն, հանվում են հարկերը, բայց և Վասակ Սյունին զրկվում է մարզպանի պաշտոնից, ձերբակալվում է և մահանում բանտում: Միառժամանակ պարսից արքունիքը հայերին սիրաշահելու քաղաքականություն է որդեգրում:

Նվարսակի պայմանագիրը

Ավարայրին հաջորդած ժամանակաշրջանում սասանյան արքունիքի արած զիջումները ժամանակավոր էին: Պարսկաստանի վարած կրոնափոխու-

թյան քաղաքականությունն ավելի նուրբ է դառնում. բռնի հավատափոխության փոխարեն պարսիկները պայմաններ էին ստեղծում, որ հայերն իրենց կամքով ուրանան հայրենի կրոնը և տարրալուծվեն պարսկական քաղաքակրթության մեջ: Զանգվածային դժգոհություններ են առաջանում՝ վերաճելով հակապարսկական ապստամբությունների: **482 թ.,** երբ հայտնի է դառնում **հեփթաղներից** պարսիկների կրած պարտությունը, ապստամբում են նախ աղվանները, ապա վրացիները: Նույն թվականին ապստամբում են նաև հեփթաղական պատերազմից վերադարձած հայ նախարարները: Հայաստանում շուտով ապստամբ ուժերը գրավում են **Դվին քաղաքը** և այնտեղ կազմավորում նոր կառավարություն. **Սահակ Բագրատունին** դառնում է Հայաստանի մարզպան, **Վահան Մամիկոնյանը՝** Հայոց սպարապետ:

Ապստամբությունը ճնշելու անհաջող փորձից հետո հաջորդ տարի՝ 483 թ. գարնանը, մի նոր բախում է տեղի ունենում հայ-պարսկական զորքերի միջև Արտազ գավառի **Ներսեհապատ գյուղի** մոտ: Ճակատամարտն ավարտվում է հայերի լիակատար հաղթանակով: Սակայն դրան հաջորդում է ապստամբների լուրջ անհաջողությունը Վրաստանում: Վրաց թագավոր Վախթանգ Գորգասալի խնդրանքով օգնության հասած հայ ապստամբական ուժն այստեղ՝ **Ճարմանայի ճակատամարտում,** պարտություն է կրում: Ճակատամարտում զոհվում են Սահակ Բագրատունին և Վասակ Մամիկոնյանը: Վահան Մամիկոնյանը մնացած ուժերը ոչնչացումից փրկելու նպատակով ստիպված էր նահանջել և ամրանալ Տայքի իր կալվածքում:

Ապստամբությունը վերջնականապես ճնշելու ևս մի քանի ապարդյուն փորձերից հետո շուտով պարսիկները ստիպված փոխում են իրենց քաղաքականությունը հեփթաղներից կրած նոր պարտության պատճառով: Պերոզին հաջորդած արքա **Վաղարշը** փորձում է զիջումներով սիրաշահել հայ նախարարներին, և Նվարսակ գյուղում **484 թ.** կնքվում է **Նվարսակի հաշտության պայմանագիրը:** Համաձայն այդ պայմանագրի՝ (1) վերականգնվում են հայ նախարարների ժառանգական իրավունքները, (2) դադարեցվում են կրոնական հալածանքները, և (3) պարսկական կողմն այլևս չէր միջամտելու հայ նախարարների ներքին գործերին: Այս պայմանները վավերացնելու համար պարսկական կողմը 485 թվականին Տիզբոն է կանչում Վահան Մամիկոնյանին, որին նախ ճանաչում է Հայաստանի սպարապետ, իսկ որոշ ժամանակ անց՝ նաև մարզպան:

Առանձնացրու՛ քեզ հետաքրքրող տեղեկությունը և քննարկի՛ր դասարանում:
Ո՞ր տեղեկությունն է քեզ ավելի հիմնավոր կամ հետաքրքիր թվում: Ինչո՞ւ:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

450-451 և 482-484 թթ. ապստամբությունների և հայ ժողովրդի մղած ազատագրական համառ պայքարի արդյունքում ձախողվեցին Հայաստանը Պարսկաստանի մի սովորական մարզ դարձնելու, հայերին դավանափոխելու և ձուլելու բոլոր փորձերը: Հայաստանը պահպանեց իր քաղաքական ինքնուրույնությունը և տնտեսական ու մշակութային զարգացման հնարավորությունները: Այսօր ևս քաղաքական ինքնուրույնությունը, տնտեսական և մշակութային զարգացումն ապահովելու համար մտավոր ու ֆիզիկական համարժեք ջանք է անհրաժեշտ: Պետական քաղաքականության խնդիրներից է կայուն, երկարաժամկետ միջազգային հարաբերությունների ստեղծումը պաշտպանության, տնտեսության ու մշակույթի ոլորտներում:

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Վերլուծի՛ր և ներկայացրո՛ւ:** Ի՞նչը ստիպեց Վարդան Մամիկոնյանին, որ կրկին վերադառնա Արևելյան Հայաստան և ստանձնի ապստամբության պատասխանատվությունը:

2 | **Մեկնաբանի՛ր:** Ինչպե՞ս կմեկնաբանեք այն, որ Տիզբոնում կեղծ ուրացությունից հետո Հայաստան վերադառնալով՝ Վարդան Մամիկոնյանը, ըստ Ղազար Փարպեցու, ուզում է մեկնել Բյուզանդիա (Հունաց աշխարհ):

«Հայկական զորքերի հրամանատար Վահան Մամիկոնյանի և հայ ազնվականների վերադարձը հայրենիք»
Նկարը՝ **Ջուլիան Զասսոյի** (1833-1889)
Վենետիկի Մխիթարյան միաբանություն

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

աշխարհագիր • Հազկերտ II • Վասակ Սյունի • Վարդան Մամիկոնյան • Սահակ Բագրատունի • Վահան Մամիկոնյան • Ավարայրի ճակատամարտ • Նվարսակի հաշտություն

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ի՞նչ քայլերի դիմեց Հազկերտ II-ը՝ Արևելյան Հայաստանի ներքին ինքնուրույնությունը ոչնչացնելու ուղղությամբ:

բ. Բացատրիր: Ինչո՞վ էր պայմանավորված Արևելյան Հայաստանում Սասանյանների վարած հանդուրժողական քաղաքականությունը:

գ. Վերլուծիր: Արդյո՞ք հնարավոր էր խուսափել Ավարայրի ճակատամարտից: Ինչպե՞ս և ինչու:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ նշանակություն ունեցան Վարդանանց և Վահանանց պատերազմները. արդյո՞ք դրանք հասան իրենց նպատակին, ինչպե՞ս:

2. Ընդհանրացրու: Ինչու՞ էին Սասանյան արքաները ձգտում հայերին դավանափոխ անել:

3. Գնահատիր: Որքանո՞վ էին արդարացված Վասակ Սյունու և Վարդան Մամիկոնյանի խմբավորումների մոտեցումները. հիմնավորիր և փաստարկիր:

Ա4 | Պատճառ և հետևանք, պատմական նշանակություն

Պատկերացրու, որ դու Վասակ Սյունին ես և արդեն գիտես, որ Վարդան Մամիկոնյանն ու իր կողմնակիցները վճռել են մինչև վերջ պայքարել Սասանյանների դեմ: Իսկ քո երկու որդիները պատանդ են Սասանյան արքունիքում: Ի՞նչ քայլերի կդիմես այդ վճռական պահին և ինչպե՞ս կհիմնավորես քո արարքը:

Ըստ քեզ՝ ի՞նչ ընթացք կարող էին ունենալ հայ-պարսկական հարաբերությունները, եթե Վարդան Մամիկոնյանն ու իր կողմնակիցները վստահեին Վասակ Սյունուն և դադարեցնեին ռազմական գործողությունները: Կամ հակառակը՝ եթե Վասակ Սյունին միանար Վարդան Մամիկոնյանին:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ քննարկի՛ր Տիզբոնում հայ նախարարների կեղծ ուրացությունը: Յուրաքանչյուրդ փորձե՛ք հիմնավորել դրա անհրաժեշտությունն այդ պահին, կամ ի՞նչ կլիներ, եթե նրանք հրաժարվեին առերես ուրանալուց:

5.2 ԳԼՈՒԽ Հայաստանը և Պարսկա-Բյուզանդական մրցակցությունը VI Դարում

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Քրիստոնեական եկեղեցիների զարգացման և կայունացման ընթացքում մեծ բանավեճեր են ծավալվում: Չնայած քրիստոնեական ուսմունքների վեճերն աստվածաբանական էին, հետագայում դրանք ձեռք են բերում սուր քաղաքական բովանդակություն: Թե՛ Բյուզանդիան, թե՛ Սասանյան կայսրությունն օգտագործում էին այս վեճերն իրենց նվաճողական քաղաքականության մեջ:

* ***Ի՞նչ ես կարծում, արդյո՞ք այսօր դադարել են կրոնական վեճերը: Դրանք այսօր ունե՞ն քաղաքական երանգավորում: Դասընկերներով քննարկե՛ք այդպիսի մի օրինակ, որն, ըստ ձեզ, արդիական է Հայաստանում:***

Նվարսակի հաշտությունից հետո Արևելյան Հայաստանը վերջապես խաղաղ զարգանալու հնարավորություն է ստանում: Հարկավ, դա չէր նշանակում, թե հայ-պարսկական հարաբերությունները վերջնականապես խաղաղության փուլ են մտնում: Ճիշտ հակառակը՝ պարսից արքաները պարբերաբար փորձում էին խարխլել նախարարների դիրքերը՝ ձգտելով սահմանափակել ինքնավարությունը, իսկ նախարարներն էլ սովորաբար դիմադրում էին զրադաշտականության ներդրմանը՝ կազմակերպելով ապստամբություններ: Այդ ապստամբություններն ի վերջո վերաճում են պարսկա-բյուզանդական երկարամյա պատերազմների, որոնց հաջորդում է Հայաստանի նոր բաժանումը:

Բառարան

Երկաբնակություն (քաղկեդոնականություն) | քրիստոնեական ուսմունք՝ ամրագրված 451թ. Քաղկեդոնի եկեղեցական ժողովում: Քրիստոսին վերագրում է երկու բնություն՝ մարդկային և աստվածային, որոնք գոյակցում են Հիսուս Քրիստոսի եզակի անձի մեջ:

Միաբնակություն (հակաքաղկեդոնականություն) | քրիստոնեական ուսմունք, ըստ որի՝ Հիսուս Քրիստոսն ունի միայն մեկ՝ աստվածային բնություն, որը կլանել է նրա մարդկային բնույթը: Այն ժխտում է Քրիստոսի մարդկային բնության գոյությունը:

Նեստորականություն | քրիստոնեական ուսմունք, որը ճանաչում է Քրիստոսի մեջ երկու բնություն և երկու դեմք: Անվանումը ստացել է 428-431 թթ. Կ. Պոլսի պատրիարք Նեստորի անունից:

Քուստակ | վարչական միավոր Սասանյան Պարսկաստանում: Բառացի՝ կուսակալություն:

Հուստինիանոս I-ի վերափոխությունները և Արևմտյան Հայաստանը

Հայաստանի արևմտյան մասում՝ Բյուզանդական Հայաստանում, 387 թվականի բաժանումից հետո իրավիճակը փոքր-ինչ այլ էր: Բյուզանդիան աստիճանաբար սկսեց վերացնել հայոց քաղաքական և տնտեսական ինքնուրույնությունը՝ անշրջելի կերպով վերածելով այն Բյուզանդիայի հերթական վարչական

միավորի: Այդպես Արևմտյան Հայաստանը զրկվեց քաղաքական, տնտեսական և մշակութային միասնականությունից: Ավելի մեծ փոփոխություններ եղան **Հուստինիանոս Ի-ի (527-565)** օրոք: Բյուզանդական Հայաստանի վարչական շրջանի վերաձևման արդյունքում ստեղծվեցին չորս վարչական միավորներ՝ **Առաջին Հայք, Երկրորդ Հայք, Երրորդ Հայք** և **Չորրորդ Հայք** նահանգները: Վերացվեցին հայ նախարարների ինքնավարությունը, արտոնություններն ու սեփական զորք ունենալու ժառանգական իրավունքը: Անհամեմատ ավելի էական նշանակություն ուներ ժառանգական իրավունքին վերաբերող օրենքը, որով վնասվում էր նաև **նախարարական համակարգը:** Համաձայն բյուզանդական օրենքի՝ ժառանգությունը պետք է բաժանվեր թե՛ արական, թե՛ իգական սեռի երեխաների միջև: Այսպես մեծ կալվածքները, որոնք հայ ազնվական ընտանիքների հզոր հիմքն էին, ավագ որդու կողմից ժառանգվելու և անձեռնմխելի մնալու փոխարեն արագորեն մասնատվեցին:

Հուստինիանոսի օրենսդրությունը և հայ հասարակության ավանդական կառուցվածքն ակնհայտորեն անհամատեղելի էին, և սա ապստամբությունների տեղիք տվեց: Դրանցից ամենախոշորը 539 թ. ապստամբությունն էր՝ **Հովհաննես Արշակունու** գլխավորությամբ: Ապստամբությունը ճնշվեց. ապստամբներից ոմանք աքսորվեցին Բալկաններ, ոմանք պաշտոններ ստացան բյուզանդական վարչական համակարգում, իսկ ոմանք էլ լքեցին Հայաստանի բյուզանդական հատվածը: Անզոր հայ վերնախավն արագ կլանվեց բյուզանդական աստիճանակարգության մեջ և ի վերջո ձուլվեց:

Դվինի 506 թ. և 554 թ. ժողովները

Պարսկա-բյուզանդական հակամարտության կարևորագույն բաղադրիչներից էր քրիստոնեական եկեղեցիների նկատմամբ վերահսկողության հարցը: Բյուզանդիան փորձում էր Հայոց եկեղեցուն պարտադրել իր դավանանքը, իսկ Պարսկաստանը՝ իր հովանավորության ներքո գտնվող **նեստորականությունը:** Ռազմական պայքարը փոխարինվում էր եկեղեցու նկատմամբ վերահսկողություն սահմանելու քաղաքականությամբ: Իրավիճակը սրվեց հատկապես **451 թ.** գումարված չորրորդ՝ **Քաղկեդոնի** Տիեզերական ժողովից հետո: Այս ժողովում դավանաբանական վեճեր բռնկվեցին **միաբնակների** և **երկաբնակների** միջև. առաջինները պնդում էին, որ Քրիստոսն ունի միայն մեկ՝ աստվածային բնություն, դրան հակառակ՝ երկաբնակները Քրիստոսի մեջ ճանաչում էին երկու բնություն՝ աստվածային և մարդկային: Այնուհետև երկաբնակները կոչվեցին «քաղկեդոնականներ», իսկ միաբնակները՝ «հակաքաղկեդոնականներ»:

Հայաստանն այս ժողովին թեպետ չմասնակցեց, սակայն, ինչպես հետագայում պարզվեց, համակրանքը «հակաքաղկեդոնականների» կողմն էր: Հայ առաքելական եկեղեցին հավատարիմ մնաց Տիեզերական առաջին երեք՝ **Նիկեայի (325 թ.), Կոստանդնուպոլսի (381 թ.) և Եփեսոսի (431 թ.)** ժողովների վճիռ-

Նայելով քարտեզին

Հայաստանի երկրորդ բաժանումը Բյուզանդիայի և Սասանյան Իրանի միջև (591 թ.)

1. Կիրառի՛ր աշխարհագրական հմտություններդ: Ինչպիսի՞ հետևանքներ կարող էր ունենալ հայության համար Հայաստանի այս նոր բաժանումը, որով երկրի մեծագույն մասն անցնում էր Բյուզանդիային:

ներին: Այսպիսով՝ Քրիստոսի բնության մասին հայկական վարդապետությունը հաստատակամորեն պնդում էր Քրիստոսի երկու բնությունների միասնությունը և ոչ թե երկու բնությունների միավորումը՝ «մի անձ՝ երկու բնություն»: Թեպետ Հայոց եկեղեցին այս փուլում հեռու մնաց դավանաբանական վեճերից, բայց հետագայում, երբ դրանք ձեռք բերեցին քաղաքական երանգավորում, ստիպված էր հստակեցնել իր դիրքորոշումը՝ ընտրելով քաղկեդոնականության մերժման տարբերակը: Դա վերջնականապես ձևակերպվեց **Դվինի առաջին (506 թ.) և երկրորդ (554 թ.)** ժողովների ժամանակ: Դվինի երկրորդ ժողովը նշանակալի էր նաև նրանով, որ մերժում էր նեստորականությունը ևս, որին քաղաքական նպատակներով հովանավորում էր Սասանյան արքունիքը: Այդպիսով՝ Հայոց եկեղեցին մերժեց և՛ քաղկեդոնականությունը, և՛ նեստորականությունը: Այսպիսով այն տարանջատվեց թե՛ մեկից, թե՛ մյուսից՝ ինքնահաստատվելով և ձեռք բերելով իր անկախությունը:

Պարսկա-բյուզանդական պատերազմն ու Հայաստանի երկրորդ բաժանումը

Հայոց եկեղեցու հակաբյուզանդական դիրքորոշումը Սասանյան արքունիքին հետ չկանգնեցրեց Հայաստանում զրադաշտականությունը տարածելու մտքից: Այդ հարցը նորից առաջ քաշվեց **Խոսրով I Անուշիրվանի (531-579)** օրոք: Վերջինս, Բյուզանդիայից հետ չմնալով, վարչական վերափոխություններ կատարեց: Պարսկաստանը բաժանվեց **չորս քուստակների,** որոնցից **Հյուսիսային քուստակը** գրեթե ամբողջությամբ ներառում էր Արևելյան Հայաստանը: Իսկ 564 թ., երբ Հայաստանի մարզպան նշանակվեց Սուրենը, սկսվեցին կրոնական հալածանքների քաղաքականությունն ու զրադաշտականության պարտադրանքը: Սա հանգեցրեց հայերի ապստամբությանը 571 թ.: Իսկ քանի որ Բյուզանդիան չէր հրաժարվել ամբողջ Հայաստանը նվաճելու իր ցանկությունից, օգտվելով առիթից՝ ակտիվորեն միջամտում էր հակամարտությանն իբրև քրիստոնեական երկրների հովանավոր: Կնքվեց հայ-բյուզանդական համագործակցության դաշինք, որով ապստամբությունից հետո պարսկական Հայաստանն անցնելու էր Բյուզանդիայի գերիշխանության ներքո: Ընդ որում՝ հայերը երեք տարով ազատվելու էին հարկերից և պահպանելու էին իրենց դավանանքը: Ի վերջո հայերի սկսած ապստամբությունը վերաճեց պարսկա-բյուզանդական 20-ամյա պատերազմի, որն ավարտվեց Բյուզանդիայի հաղթանակով: Արդյունքում **591 թ.** Հայաստանը բաժանվեց Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև: Այս անգամ երկրի մեծ մասն անցավ Բյուզանդիային: Կողմերը հայերի նկատմամբ որդեգրեցին նոր քաղաքականություն, որով խրախուսվում էր հայկական զորքերի տեղակայումը երկրից դուրս: Այդպես թե՛ Բյուզանդիան, թե՛ Պարսկաստանն ազատվում էին ապստամբությունների վտանգից, քանի որ թուլացվում էր հայոց զինական ուժը: Բացի դրանից՝ կողմերն օգտագործելու էին հայկական զորքերն իրենց տերությունների ծայրամասերն օտար ներխուժումներից պաշտպանելու նպատակով:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Ավարայրը դարձավ կարևոր անջրպետ, որով Հայաստանը հստակորեն առանձնացավ Պարսկաստանից: Քաղկեդոնի ժողովն էլ եղավ մյուս անջրպետը, որով Հայ եկեղեցին վերջնականորեն զատվեց Արևելյան եկեղեցուց: Իսկ Դվինի առաջին և երկրորդ ժողովներով վերջնականապես հաստատագրվեց Հայոց եկեղեցու անկախությունը բոլոր մյուս եկեղեցիներից: Այսօրվա Հայոց եկեղեցին հենց այդ ինքնահաստատման արդյունքն է:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Հուստինիանոս I (527-565) • Հովհաննես Արշակունի • Խոսրով I Անուշիրվան (531-579) • Քաղկեդոնի Չորրորդ Տիեզերաժողով • Դվինի առաջին և երկրորդ ժողովներ • Հայաստանի 591 թ. բաժանումը • միաբնակ • երկաբնակ • Նեստորական • քաղկեդոնական • հակաքաղկեդոնական • քրիստան

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչպե՞ս էին տարբերվում Բյուզանդիայի և Սասանյանների վարած քաղաքականությունները Հայաստանի երկու հատվածների նկատմամբ:

բ. Բացատրիր: Ինչո՞վ էր պայմանավորված պարսկա-բյուզանդական 20-ամյա պատերազմը:

գ. Հիմնավորիր: Ինչո՞ւ էին կարևոր Տիեզերաժողովները և դրանց նկատմամբ Հայոց եկեղեցու վերաբերմունքը:

Ա3 | Փոփոխություն և շարունակականություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ ես կարծում, ի՞նչ առավելություն տվեց Հայոց եկեղեցուն Դվինի 554 թ. ժողովը:

2. Ընդհանրացրու: Ի՞նչ հետևանքներ ունեցան Հուստինիանոս I-ի վերափոխությունները հայ նախարարների համար:

3. Գնահատիր: Ինչո՞ւ թե՛ Պարսկաստանը, թե՛ Բյուզանդիան որդեգրեցին հայկական զորքերը երկրից դուրս տեղակայելու նոր քաղաքականություն:

Ա4 | Պատճառ և հետևանք, պատմական նշանակություն

Պատկերացրու, որ դու 591 թ. հակապարսկական ապստամբության առաջնորդ Վարդան Մամիկոնյանն՝ Կարմիր Վարդանն ես: Ի՞նչ գնահատական կտաս ապստամբությանը, երբ 591 թ. Հայաստանը հերթական անգամ բաժանվի Պարսկաստանի և Բյուզանդիայի միջև:

Արդյո՞ք ապստամբության արդյունքները կբացատրես Բյուզանդիայի խաբեությամբ կամ ապստամբների միամտությամբ: Իսկ գուցե մեկ այլ մեկնաբանություն կտաս:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ նախորդ և այս դասի հիման վրա համեմատե՛ք Պարսկաստանի և Բյուզանդիայի վարած քաղաքականությունը Հայաստանի նկատմամբ: Գծապատկերով ցո՛ւյց տվեք դրանց նմանություններն ու տարբերությունները (կարող եք օգտագործել նաև համացանցը):

5.3 ԳԼՈՒԽ Արաբական Խալիֆայության տիրապետությունը Հայաստանում. պայքար անկախության վերականգնման համար

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Արաբական արշավանքների արդյունքում Սասանյան կայսրությունը կործանվում է, Բյուզանդիան նահանջում է Եփրատից արևմուտք, և շուրջ հազար տարվա մեջ առաջին անգամ Հայաստանը դուրս է մնում Արևելք-Արևմուտք շարունակական պայքարից: 387 թվականից ի վեր մասնատված Մեծ Հայքը միավորվում է:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր, թե շուրջ 250 տարի արևելյան և արևմտյան մասերի բաժանված Հայաստանի միավորումն ինչ բարդություններ և արդյունքներ կարող էր ունենալ: Ի՞նչ զուգահեռներ կարող եք անցկացնել այսօրվա իրավիճակի հետ:***

Միմյանց դեմ տասնամյակներ շարունակ պատերազմող Պարսկական և Բյուզանդական կայսրությունները թե՛ տնտեսապես, թե՛ ռազմական առումով այնքան էին ուժասպառ եղել, որ 630-ական թվականներին ի վիճակի չեղան դիմակայելու Արաբիայից եկած և հանուն իսլամի մարտնչող զորքերին: Արաբները նախ **636 թ.** Ասորիքում պարտության մատնեցին բյուզանդական զորքերին, ապշեցուցիչ արագությամբ նվաճեցին Սիրիան, Միջագետքը և Եգիպտոսը: Հաջորդ տարի՝ **637 թ.**, Կադիսիայի ճակատամարտում պարտության մատնեցին Պարսկաստանին, իսկ որոշ ժամանակ անց կործանեցին Սասանյան թագավորությունը: Արաբների հետզհետե աճող սպառնալիքը հարկադրեց Բյուզանդիային որոշ առումներով մեղմացնել իր քաղաքականությունը հայերի նկատմամբ, ինչը չէր նշանակում հրաժարվել նրանց լիակատար հպատակեցման ծրագրերից: Այս պայմաններում մոտ 634 թ. Հայաստանի փաստական իշխանությունն անցավ սպարապետ **Թեոդորոս Ռշտունուն:** Վերջինս **639 թ.** Բյուզանդիայի կողմից ճանաչվեց նաև «հայոց իշխան»: Օգտվելով դրությունից՝ նույն տարում նա միավորեց Հայաստանի բյուզանդական և պարսկական մա-

Բառարան

Ոստիկան | Արաբական խալիֆայության գերագույն իշխանավորը: Հիմնական պարտականություններից էին երկրի ընդհանուր դրության հսկողությունը, հարկահավաքության գործի կազմակերպումը, երկրի ներքին կայունության ապահովումը և նրա պաշտպանությունն արտաքին հարձակումներից:

Խալիֆ (արաբ. բառացի՝ «փոխանորդ», «տեղապահ») | Խալիֆաթի (պետության) ղեկավարն է, բացարձակ միապետ, իսլամական աշխարհի կրոնապետ, զինվորական առաջնորդ: Համարվել է Մուհամմեդ մարգարեի հաջորդը, իսկ Ումմայաններից սկսած՝ աստծու տեղապահը:

սերը: Տևական բաժանումից հետո առաջին անգամ մասնատված Մեծ Հայքը միավորվեց մեկ կառավարչի իշխանության ներքո: Բայց հավասարակշռությունը փխրուն էր. ներսում հայ նախարարական տոհմերի անհամաձայնությունն էր Թեոդորոսի իշխանությանը, իսկ դրսից արաբական սպառնալիքն էր մոտենում: Բյուզանդիան չէր աջակցում, բայց հրահրում էր հայ նախարարներին միմյանց դեմ: Այսպիսով՝ յոթերորդ դարի կեսերի քաոսային իրադարձությունները նպաստեցին նաև հավակնոտ նախարարների միջև իշխանության համար մղվող պայքարին:

Թեոդորոս Ռշտունի. հայ-արաբական պայմանագիրը

Արաբների առաջին արշավանքը Հայաստան տեղի ունեցավ 640 թ.: Ավերվեց Դվինը: Արաբական արշավանքներ տեղի ունեցան նաև 642-643 և 650 թթ.: Դրանց հակակշռող և հայերին աջակցող ուժեր չկային. Սասանյան կայսրությունն իր մայրամուտն էր ապրում, Բյուզանդիան ինքն էլ մի կերպ էր պայքարում արաբների դեմ: Ավելին՝ այդ ծանր օրերին Բյուզանդիան շարունակաբար պահանջում էր ընդունել Քաղկեդոնի որոշումները՝ իբրև ցանկացած աջակցության նախապայման: Մնալով միայնակ արաբական արշավանքների դեմ, հնարավոր է, նաև դառնացած քաղաքական և կրոնական ճնշումներից՝ Թեոդորոս Ռշտունին կատարեց Բյուզանդիայի հետ հարաբերությունները խզելու վճռական քայլը: **652 թ.**, երբ պարզ դարձավ, որ արաբներին դիմադրելու միջոցներ չունի, Թեոդորոս Ռշտունին մեկնեց Դամասկոս և պայմանագիր կնքեց Ասորիքի արաբ փոխարքա **Մուավիայի** հետ: Ըստ այդ պայմանագրի՝ **(1)** Հայաստանը ճանաչում էր **խալիֆի** գերիշխանությունը և **(2)** երեք տարի ազատվում էր հարկային պարտականություններից: **(3)** Թույլատրվում էր 15-հազարանոց հեծելազոր պահել՝ խալիֆայության հաշվին, և **(4)** Հայաստանում արաբական զորքեր չէին տեղակայվելու: **(5)** Խալիֆայությունը հանձն էր առնում ռազմական օգնություն ցուցաբերել Հայաստանին, եթե ենթարկվեր հարձակման: Պայմանագիրն, ըստ էության, ուղղված էր Բյուզանդիայի դեմ և ծառայում էր երկու կողմերի շահերին: Այն թույլ տվեց Հայաստանին, որոշ ընդհատումներով, պահպանել փաստացի անկախությունը մինչև VII դարի վերջը: Խաղաղության այս կարճատև շրջանը հայ ժողովրդին զարգանալու և բարգավաճելու հնարավորություն տվեց: Հնարավոր եղավ ավարտին հասցնել հայկական ճարտարապետության երկու գլուխգործոցները՝ **Սուրբ Հռիփսիմեի** և **Զվարթնոցի** տաճարները:

Արաբների քաղաքականությունը Հայաստանում

VII դարի վերջին, երբ Արաբական խալիֆայությունը վերջնականապես հաղթեց Բյուզանդիային, նրան այլևս պետք չէր կիսանկախ Հայաստան: **701 թ.** արաբական հզոր բանակը ներխուժեց Հայաստան՝ ճանապարհին ավերածություններ գործելով: Բարեկեցիկ քաղաքներն ու եկեղեցիներն ավերվեցին, բերդերը գրավվեցին, բնակչությունը սպանվեց կամ ստրկացվեց ու տեղահանվեց:

Նվաճելով Հայաստանը և Հարավային Կովկասի մյուս տարածքները՝ արաբները հիմնեցին **Արմինիա** անունով փոխարքայություն, որը ներառում էր Արևելյան Վրաստանը, Աղվանքը և գրեթե ողջ Մեծ Հայքը: Դրա վարչական կենտրոնը սկզբում Հայաստանի մայրաքաղաք **Դվինն** էր: Արմինիայի կառավարիչ՝ **ոստիկան (էմիր)**, դառնում էր արաբ ազնվականներից մեկը և կառավարում խալիֆի անունից: Ոստիկանին էին ենթարկվում բոլոր պաշտոնյաները, այդ թվում՝ Հայոց իշխանն ու հայկական զորքերի հրամանատարը՝ սպարապետը:

Այս բավականին բարդ պայմաններում հայ քաղաքական և կրոնական գործիչների շրջանում հստակ ուրվագծվեց **երկու քաղաքական հոսանք:** Նրանց մի մասը կարծում էր, որ հարկավոր է ապստամբել և ապավինել Բյուզանդիայի հովանավորությանը, մյուս մասը՝ որ հարկավոր է հրաժարվել Բյուզանդիայի հովանավորությունից և սեփական ուժերով, դիվանագիտորեն պահպանել միավորված Հայաստանի ինքնուրույնությունը: Առաջին հոսանքը գլխավորում էին **Մամիկոնյանները**, իսկ երկրորդը՝ **Ռշտունիները**, իսկ ապա՝ **Բագրատունիները:** Երկրորդ հոսանքի ներկայացուցիչները, սակայն, չէին բացառում նաև հակաարաբական ապստամբությունները: Եվ պատահական չէ, որ Հայաստանի՝ արաբական Արմինիա փոխարքայության մաս դառնալուց հետո արաբ ոստիկանների բռնի քաղաքականությունից դժգոհ նախարարների ապստամբությունը գլխավորում էր Սմբատ Բագրատունին: Հետագա ապստամբությունների առաջնորդներն էին Մամիկոնյանները: Այդ

S Պատմությունը և մարդը

Մուավիայի դիմապատկերով արծաթե դրամ

ՄՈՒԱՎԻԱ (661-680)

Իսլամի մարգարեի՝ Մուհամմեդի ամենակատաղի հակառակորդներից մեկը, որը 630 թվականին Մեքքայի գրավման ժամանակ ընտանիքի հետ ընդունեց իսլամը, դարձավ մարգարեի գրագիր և կռվեց մուսուլմանների կողքին:

Առաջին խալիֆաների (632-661) տարիներին Մուավիան եղել է Սիրիայի կառավարիչ, բազմիցս հարձակումներ է կատարել Բյուզանդիայի հողերի վրա՝ նվաճելով նաև նրան պատկանող Հայաստանը: Ստանալով տեղական ցեղերի աջակցությունը՝ դարձել է խալիֆայության ամենահզոր գործիչներից մեկը: 656 թ. երրորդ խալիֆ Օսմանի սպանությունից հետո Մուավիան ձեռնամուխ եղավ սպանված խալիֆի վրեժը լուծելու գործին և դեմ արտահայտվեց Ալիի ընտրությանը՝ սանձազերծելով խալիֆայության պատմության մեջ առաջին քաղաքացիական պատերազմը, որն ավարտվեց Ալիի մահով:

661 թ. ինքն իրեն խալիֆ հռչակեց՝ այդպիսով հիմնելով Ումայյանների խալիֆայությունը՝ մայրաքաղաք Դամասկոսով:

Խալիֆա հռչակվելուց հետո Բյուզանդիայի դեմ պայքարում Հայաստանի չեզոքությունն ապահովելու համար 661 թվականին Մուավիան հայոց իշխան ճանաչեց Գրիգոր Մամիկոնյանին:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ: Ի՞նչ ես կարծում, ինչպե՞ս կարող էին զարգանալ դեպքերը, եթե Մուավիան Գրիգոր Մամիկոնյանին հայոց իշխան չճանաչեր:

ամենը վկայում է, որ քաղաքական իշխանությունը մերթ Մամիկոնյանների, մերթ Բագրատունիների ձեռքում էր, հարկավ՝ արաբական գերիշխանության ներքո:

Ապստամբությունները հիմնականում ճախողվում էին, թեպետ դրական նշանակություն ևս ունենում էին: Դրանք արաբներին ստիպեցին փոխել վերաբերմունքը Հայաստանի նկատմամբ և ճանաչել նախարարների հողատիրական ժառանգական իրավունքները: Բայց և մեծ էին նախարարների կորուստները: Նախարարական տներից մի քանիսն աստիճանաբար դուրս մղվեցին քաղաքական ասպարեզից, ինչպես Մամիկոնյանները, Կամսարականներն ու Ռշտունիները: Դա արտահայտվեց մանավանդ **774-775 թթ.** ապստամբությունից հետո, որը խլեց նախարարների մեծ մասի կյանքը ու լրջորեն թուլացրեց նախարարությունների դիրքերը: Արդյունքում նրանք այլևս երբեք կարևոր դերակատարում չունեցան հայոց կյանքում: Բայց քաղաքական հոսանքներից չափավոր թևի ներկայացուցիչները, որոնց մեջ հատկապես աչքի էին ընկնում Բագրատունիները, աստիճանաբար կարողացան վերականգնել հարաբերություններն արաբ խալիֆների հետ: Նրանք ազդեցիկ դիրքեր ձեռք բերեցին հայ նախարարների մեջ:

Աղանդավորական շարժումները Հայաստանում

Քրիստոնեական եկեղեցու սկզբնավորման ժամանակներից ի վեր առաջացան մի շարք ուսմունքներ, որոնք հակասում էին եկեղեցու կանոնական վարդապետությանը: Դրանց շարքում առանձնանում էին **բորբորիտների, մծղնեականների և պավլիկյանների** ուսմունքները: Առաջին երկուսը Հայաստանում տարածում էին գտել IV-V դարերում: Այս ուսմունքների մասին շատ բան չգիտենք, քանի որ դրանց տեքստերից մեզ ոչինչ չի հասել. օրենքով սահմանված էր, որ այդպիսի գրքեր պահպանողը ենթակա է մահապատժի: Դրանց մասին իմանում ենք միայն եկեղեցու ներկայացուցիչների հաղորդած տեղեկություններից, որոնցով հնարավոր չէ անգամ միմյանցից զատորոշել այդ ուսմունքները, քանի որ դրանք չեն մանրամասնվել: Այս ուղղությունների հետևորդները չէին ընդունում մկրտության խորհուրդը: Ըստ նրանց՝ թեպետ այն մաքրում է նախկին մեղքերը, բայց չի կարող ոչնչացնել մեղքի արմատը: Դա հնարավոր էր համարվում միայն տևական աղոթքների շնորհիվ (այստեղից էլ մծղնեականների անունը, որը արամերենով նշանակում է **աղոթել**): Շարժումներն աստիճանաբար ահագնանում էին, այդ պատճառով էլ եկեղեցին փորձում էր դրանք արմատախիլ անել խիստ պատժիչ միջոցներով: Հետագայում այդ ուսմունքի հետևորդները ձուլվեցին մեկ այլ՝ **Պավլիկյան** շարժմանը, որը, սկիզբ առնելով VI դարի վերջերին, մեծ թափ հավաքեց VII-VIII դարերում՝ արաբական տիրապետության ժամանակ: Ոմանք կարծում են, որ շարժման հետևորդներն իրենց անունը ստացել են Պողոս առաքյալի անունից, քանի որ իրենց համարել են առաքյալի հետևորդը: Ոմանք էլ կարծում են, որ անվանումը գալիս է շարժման առաջնորդ-

ներից մեկի՝ Պողոսի անունից: Պավլիկյանների սկզբունքները գրեթե չէին տարբերվում մյուս աղանդների սկզբունքներից: Նրանք հավատում էին, որ գոյություն ունի երկու աստված՝ Բարի (Երկնային Հայր) և Չար (Արարիչն աշխարհի): Տեսանելի աշխարհի արարիչը չար աստվածն է՝ սատանան, մինչդեռ ինչը հոգևոր է և անտեսանելի, բարի աստծո գործն է: Նրանք մերժում էին եկեղեցին՝ իբրև «դևերի կացարան»: Մերժում էին մկրտությունն ու հաղորդությունը: Դեմ էին մսակերությանն ու սեփականություն ունենալուն: Ուսմունքը համակարգված էր Ավետարանի հիման վրա կազմված մի գրքի մեջ, որ կոչվում էր «Զորություն»: Դրանից ոչինչ չի հասել մեզ: Պավլիկյան գաղափարախոսությունը ժամանակի ընթացքում ձեռք բերեց նաև սոցիալական երանգներ՝ պայքարելով հարուստների, իշխողների և հոգևորականության դեմ, որոնց համարում էին չարիքի կրողներ: Երբ շարժումը լայն թափ հավաքեց, պավլիկյանները Եփրատ գետի հյուսիս-արևմտյան ափին հիմնեցին **Տևրիկ** բերդաքաղաքը: Ստեղծեցին զորամասեր, որոնք պետք է պաշտպանեին փոքրիկ «հանրապետությունը»: Գտնվելով Բյուզանդիայի տարածքում և լայն աջակցություն ունենալով արաբներից՝ նրանք սկսեցին չենթարկվել կայսրությանը: Կայսրությունը կտրուկ միջոցներ կիրառեց՝ շարժումն արմատախիլ անելու համար: Ի վերջո **872 թ.** բյուզանդական բանակները պարտության մատնեցին պավլիկյաններին և ավերեցին Տևրիկ բերդաքաղաքը: Պավլիկյաններից շատերը տեղափոխվեցին Բալկաններ, որտեղ նրանց ազդեցությամբ նոր ուսմունքներ ու սոցիալական շարժումներ ի հայտ եկան, ինչպես Ֆրանսիայում՝ կատարների, Բուլղարիայում՝ բոգոմիլյան շարժումները:

Ըստ որոշ հետազոտողների՝ ընդհանուր առմամբ Պավլիկյան շարժումը Հայաստանի համար երկու կարևոր ներդրում ունեցավ: Նախ՝ պատճառ դարձավ, որ Հայոց եկեղեցին վերափոխվի, և նրա հիմքերն ամրանան: Ապա՝ Պավլիկյան «հանրապետության» ստեղծումը Հայաստանի հյուսիսարևմտյան շրջանը պաշտպանեց արևմուտքի ուղիղ հարվածից և հնարավորություն տվեց Բագրատունիներին վերականգնելու Հայաստանի անկախությունը:

Հայաստանի ինքնավարության վերականգնումը

Ումմայաններին հաջորդած **Աբբասյանների օրոք** նշանակալի փոփոխություններ տեղի ունեցան Հայաստանում: Ճնշելով ապստամբությունները՝ վերջիններս նվաճված երկրներում ամուր հիմքեր ստեղծելու նպատակով պարբերաբար արաբական ու մուսուլմանական ցեղերի վերաբնակեցում էին կազմակերպում: Նվաճված տարածքներում, այդ թվում և Հայաստանում, ձևավորվում էին նոր համայնքներ: Արաբ վերաբնակիչներն ամբողջ ցեղերով, տոհմերով ու ընտանիքներով հաստատվում էին Հայաստանում, խլում հայերին պատկանող հողերը: Արաբները բավականին հետևողական էին նաև տեղական նախարարական ընտանիքների նկատմամբ վարվող ջլատման և ոչնչացման քաղաքականության մեջ: **705 թ.** նրանք բազմաթիվ հայ իշխանների հավաքեցին Նախճավանի և Խրամի եկեղեցիներում և այրեցին նրանց: Որոշ գերիների

մահապատժի ենթարկեցին, մյուսներին արտաքսեցին: Սկզբում համեմատաբար մեղմ էին Հայոց եկեղեցու նկատմամբ, ինչի շնորհիվ այն հնարավորություն ունեցավ առաջին անգամ ի մի բերելու իր կանոնները: Սա Եկեղեցու դավանաբանական համակարգման համար նշանակալի քայլ էր: VIII դարի վերջերից արաբներն էլ ավելի խստացրին իրենց քաղաքականությունը: Հրաժարվելով իրենց հովանավորչական քաղաքականությունից՝ որոշեցին տոհմերին զրկել իշխանությունից և ուղղակիորեն կառավարել Հայաստանը, ինչպես նվաճված երկիր: Չնայած այդ ամենին՝ որոշ հայ իշխանական տներ ոչ միայն խուսափեցին ոչնչացումից, այլև բավականին ինքնուրույն դարձան, ինչպես Բագրատունիները, որոնք նաև ընդարձակել էին իրենց տիրույթները: Իսկ երբ Բագարատ Բագրատունին խալիֆի կողմից նշանակվեց Հայաստանի գերագույն կառավարիչ՝ իշխանաց իշխան, անգամ հրաժարվեց հարկեր վճարելուց: Խալիֆ **Մութավաքիլը** փորձեց նոր ոստիկանի միջոցով հավաքել չվճարված հարկերը և պաշտոններից հեռացնել հայոց իշխանաց իշխան Բագարատ Բագրատունուն ու գահերեց իշխան Աշոտ Արծրունուն, բայց անհաջողության բախվեց: Իսկ **850-851 թթ.** տեղի ունեցավ հայերի մյուս խոշոր ապստամբությունը: Այս անգամ ապստամբությանը հարում էր նախարարների մեծ մասը: **852 թ.** խալիֆը զորավար **Բուղայի** հրամանատարությամբ Հայաստան ուղարկեց պատժիչ մեծաքանակ մի զորաբանակ, որը հետագա մի քանի տարիների ընթացքում կարողացավ ավերել բազմաթիվ գավառներ և ճերբակալել բազմաթիվ նախարարների, բայց, այնուամենայնիվ, չկարողացավ ճնշել ապստամբությունը: Արշավանքն ի վերջո ձախողվեց, և Հայաստանը կրկին վերականգնեց իր ներքին ինքնավարությունը: Բոլոր նախադրյալները կային օտար տիրապետությունը թոթափելու և Հայաստանի անկախությունը վերականգնելու համար, ինչին ձեռնամուխ եղան Բագրատունիները:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Գրեթե մեկ հազարամյակ Հայաստանը միջազգային պատերազմի անմիջական թատերաբեմ էր: Արաբական գերիշխանության հաստատումից հետո առաջին անգամ արևելք-արևմուտք պատերազմները տեղի էին ունենում Հայաստանի տարածքից դուրս: Հայ նախարարները, երբեմն դիմելով ապստամբությունների, բայց ավելի շատ ապավինելով դիվանագիտությանը, ի վերջո կարողանում են թոթափել օտար տիրապետությունը և վերականգնել Հայաստանի անկախությունը:

Այսօր ևս կարևոր է բազմակողմանի (տնտեսական, մշակութային, գիտական, ռազմական) կապերի և խնդիրների վրա կենտրոնացած դիվանագիտությունը:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

ոստիկան • խալիֆ • Թեոդորոս Ռշտունի • Մուավիա • Ումմայաններ • Աբբասյաններ • Բագարատ Բագրատունի • Մութավաքիլ • բորբորիտներ • մծղնեականներ • պավլիկյաններ • հակաարաբական ապստամբություններ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ի՞նչ գաղափարներ էին քարոզում պավլիկյանները: Արդյո՞ք շարժումը միայն բացասական հետևանքներ ունեցավ Հայաստանի համար:

բ. Վերլուծիր: Ի՞նչ քաղաքականություն էին վարում արաբները Հայաստանում այն նվաճելուց հետո: Ինչո՞ւ:

գ. Պարզաբանիր: Որքանո՞վ էր արդարացված 652 թ. հայ-արաբական պայմանագիրը. մանրամասնիր՝ քննարկելով պայմանագրի կետերը:

Ա3 | Փոփոխություն և շարունակականություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ հետևանքներ ունեցան նախարարական տոհմերի համար հակաարաբական ապստամբությունները: Որո՞նք էին այդ ապստամբությունների դրական և բացասական կողմերը:

2. Ընդհանրացրու: Ինչո՞վ էր պայմանավորված Բյուզանդիայի քաղաքականության մեղմացումը հայերի նկատմամբ:

3. Գնահատիր: Որքանո՞վ էին արդարացված Մամիկոնյանների և Բագրատունիների խմբավորումների մոտեցումները. հիմնավորիր և փաստարկիր:

Ա4 | Փաստարկում և հիմնավորում

Պատկերացրու, որ դու ապրում ես Դվին քաղաքում, և քո հայրն իր պապից մեծ գրադարան է ժառանգել, որը պետք է նախիջևանից տեղափոխեք Դվին: Գրքերը դասավորելիս դու տեսնում ես այնտեղ պավլիկյանների սրբազան գիրքը՝ «Զորությունը»:

Ինչպիսի՞ն կլինի քո արձագանքը: Ինչու՞:

Գործնական առաջադրանք

Դասընկերներով բեմականացրե՛ք Մամիկոնյանների և Բագրատունիների խմբավորումների քննարկումները. մի խումբը պետք է հիմնավորի Մամիկոնյանների դիրքորոշումն ու հերքի Բագրատունիների դիրքորոշումը, մյուս խումբը՝ հակառակը՝ հիմնավորի Բագրատունիների դիրքորոշումն ու հերքի Մամիկոնյանների դիրքորոշումը:

ԹԵՄԱ 6

Հայաստանի վաղ միջնադարյան մշակույթը (V-IX դդ.)

Ուսումնասիրելով այս թեման՝ կկարողանաս.

- **ա. Նկարագրել** V-IX դդ. ազգային-քրիստոնեական մշակույթի զարգացման հիմնական առանձնահատկությունները, ընթացքը, ուղղությունները, բնագավառները, ձեռքբերումները:
- **բ. Բնութագրել** V-IX դդ. գիտելիքի բոլոր ոլորտները՝ ներառյալ աստվածաբանությունը, փիլիսոփայությունը, պատմությունը, աշխարհագրությունը և աստղագիտությունը:
- **գ. Գնահատել և արժևորել** գրերի գյուտը, ազգային-մշակութային ակնառու գործիչների ստեղծագործությունները, ոսկեդարյան մշակույթի ձեռքբերումները հայոց և համաշխարհային մշակույթի համատեքստում:
- **դ. Կարծիք հայտնել** պատմական փորձի, ձեռքբերումների յուրացման ու փոխանցման անհրաժեշտության վերաբերյալ:

Հայոց այբուբեն (ոսկեձույլ)
Էջմիածին
Հեղինակ՝ Բ. Արզումանյան

Առանձնացրու քեզ հետաքրքրող տեղեկությունը և քննարկի՛ր դասարանում: Ո՞ր տեղեկությունն է քեզ ավելի հիմնավոր կամ հետաքրքիր թվում: Ինչու՞:

6.1 ԳԼՈՒԽ Հայ մշակույթի ոսկեդարը

Հենվելով ձեր գիտելիքների վրա

387 թ. Հռոմեական և Սասանյան կայսրությունների միջև Հայաստանի բաժանումից հետո խիստ անհրաժեշտ էր հայ ժողովրդի ազգային ու մշակութային ինքնությունը պահպանելու և ամրապնդելու ուղիներ գտնել: Գրերի գյուտը դարձավ այն կենսական միջոցը, որով սկսվեց հայերի նոր՝ քրիստոնեական ինքնության ստեղծումը:

* ***Դասընկերներիդ հետ քննարկիր հայկական գրերի անհրաժեշտությունը: Ի՞նչ կլիներ, եթե չստեղծվեր հայերենի այբուբենը, այնուհետև հսկայածավալ գրականությունը: Ի՞նչ խնդիրների առջև է կանգնում հայոց լեզուն այսօր, երբ մարդկանց մի մեծ զանգված լատինատառ հայերեն է գրում համացանցում:***

Արշակունյաց թագավորության 387 թ. բաժանումը Հռոմեական և Սասանյան կայսրությունների միջև խախտեց ազգի միասնությունը. հայ ժողովուրդը կանգնած էր ոչ միայն պետականության կորստի, այլև ֆիզիկական ճուլման սպառնալիքի առաջ: Դրան կարող էր նպաստել նաև այն, որ եկեղեցիներում և դպրոցներում տիրում էին հունարենն ու ասորերենը: Արդյունքում քրիստոնեական ուսմունքը մնում էր անհասկանալի կամ դժվարըմբռնելի: Անհրաժեշտ էին հայերեն գրեր: Ավելի հստակ՝ հայերեն Սուրբ գիրք և եկեղեցական գրականություն: Այս խնդրով մտահոգ էին թե՛ Հայոց եկեղեցին և թե՛ արքունիքը, քանի որ արքայական և եկեղեցական իշխանությունը պահպանելու լավագույն միջոցը մնում էր հայոց լեզվի միավորող գործոնը: Հայերեն գրեր ստեղծելու գործը հանձն առավ **Մեսրոպ Մաշտոցը:** Ավելին՝ հետագայում վրացի և աղվան հոգևորականների օգնությամբ նա գրեր ստեղծեց նաև վրացերենի և աղվաներենի համար:

Բառարան

Միջնադար կամ Միջին դարեր | պատմության մի շրջան է, որը ծգվում է V դարի վերջից մինչև XV դարի վերջը: Սկսվում է Արևմտյան Հռոմեական կայսրության անկմամբ և ավարտվում Վերածննդով ու աշխարհագրական մեծ հայտնագործություններով: Ընկած է անտիկ և նոր ժամանակների միջև: Հաճախ բաժանվում է երեք փուլերի՝ վաղ միջնադար (V-X դդ.), բարձր միջնադար (XI-XIII դդ.) և ուշ միջնադար (XIV-XV դդ.):

Վարդապետարան | բարձրագույն դպրոց միջնադարյան Հայաստանում, որի շրջանավարտներին կարող էր շնորհվել վարդապետի աստիճան և ինքնուրույն գործելու (դպրոց հիմնել, քարոզել և այլն) իրավունք:

Դպրոցներ և թարգմանական գրականություն

Մեսրոպ Մաշտոցը դեռ իր կրոնական քարոզների ժամանակ հասկանում է, որ առանց Սուրբ գրքի հայերեն թարգմանության քարոզն անարդյունավետ է: Իր մտահոգությունները հայտնում է կաթողիկոս **Սահակ Պարթևին** և նրա միջնորդությամբ **Վռամշապուհ արքային** ներկայացնում հայ գրերի ստեղծման իր նախագիծը: Արքան տեղեկացնում է, որ ինքը Միջագետքում **Դանիել Ասորի**

անունով մի եպիսկոպոսի մոտ տեսել է հայկական գրեր: Որոշ ժամանակ անց պարզվում է, որ բերված «դանիելյան» նշանագրերը պիտանի չեն հայերենի բարդ հնչյունական համակարգն արտահայտելու համար: Մեսրոպ Մաշտոցը ձեռնամուխ է լինում բոլորովին նոր գրային համակարգի ստեղծմանը: Մեկնում է Ասորիք (Միջագետք), լինում Ամիդ, Եդեսիա և Սամոսատ քաղաքներում: Աշխատանքներն ավարտվում են **405 թ.:** Նոր ստեղծված այբուբենով Սամոսատում էլ Մաշտոցն ու իր աշակերտները կատարում են առաջին թարգմանությունը: Հայերեն թարգմանված առաջին նախադասությունը լինում է Սուրբ գրքից՝ Սողոմոնի առակներից. ***«Ճանաչել իմաստությունը և խրատը, իմանալ հանճարի խոսքերը»:*** Այն դառնում է նաև հայ նոր քաղաքակրթության նշանաբանը: Առաջին **վարդապետարանը՝** բարձրագույն դպրոցը, հիմնվում է Վաղարշապատում: Իսկ հետագայում դպրոցներ են բացվում թե՛ Արևելյան և թե՛ Արևմտյան Հայաստաններում: Սասանյանները շահագրգռված էին հայկական դպրոցների գործունեությամբ, քանի որ դրանում տեսնում էին հայերի տարանջատումը քրիստոնյա արևմուտքից՝ Բյուզանդիայից, և նրա ազդեցությունից: Բյուզանդիան ևս համաձայնում է, քանի որ մերժելու դեպքում կարող էր կորցնել Արևելյան Հայաստանի նկատմամբ իր հավակնությունները:

Մինչ հայերեն լեզվով ինքնուրույն գրականության ստեղծումը Մեսրոպ Մաշտոցն ու իր աշակերտները, որոնք արդեն կրթություն էին ստացել հելլենիստական հայտնի կենտրոններում (Աթենք, Ալեքսանդրիա, Անտիոք, Հռոմ, Կոստանդնուպոլիս), թարգմանական լայն գործունեություն են ծավալում: Առաջինը ասորերենից և հունարենից թարգմանվում է **Աստվածաշունչը:** Թարգմանությունն այնքան կատարյալ էր, որ հետագայում բնորոշվեց որպես ***«թարգմանությունների թագուհի»:*** Եկեղեցական գրքերի հետ մեկտեղ թարգմանվում են անտիկ աշխարհի հեղինակների լավագույն գործերը: Թարգմանական գրականությունը նրանց հնարավորություն է տալիս համակարգված կերպով զարգացնելու գիտելիքի բոլոր ոլորտները, ներառյալ աստվածաբանությունը, փիլիսոփայությունը, պատմությունը, աշխարհագրությունը և աստղագիտությունը:

Պատմագրություն

Վաղ միջնադարյան հայ դպրության մեջ առաջնակարգ տեղ է զբաղեցնում պատմագրությունը: Այն հայ գիր ու գրականության մեծագույն ձեռքբերումն է և բացառիկ է ոչ միայն հայ ժողովրդի, այլև հարևան և հեռու ժողովուրդների պատմության հետազոտության համար: Այն միտված էր ազգային ինքնաճանաչմանն ու ինքնահաստատմանը, ազգին ծանոթացնում էր իր պատմական անցյալին ու ստեղծած մշակույթին: Ինքնաճանաչմամբ հնարավոր էր նաև հակադրվել օտար (բյուզանդական, պարսկական և այլն) հարկադրանքներին:

Ամենավաղ հայալեզու հեղինակը, թերևս, **Կորյունն է:** Նրա «Վարք Մաշտոցի» երկը, ինչպես վերնագիրն է հուշում, մանրամասնորեն ներկայացնում է հայոց գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցի կյանքն ու ստեղծագործությունը,

հայալեզու դպրոցների բացման, գրագիտության տարածման ընթացքը և այլ իրողություններ:

Ուշագրավ է, որ պատմագրության զարգացման հենց սկզբից նկատվում է պատմագրական միասնական ավանդույթ և միասնական ժամանակագրություն ստեղծելու միտում: Այսպես՝ **Ագաթանգեղոսը, Փավստոս Բուզանդն ու Ղազար Փարպեցին,** միմյանց շարունակելով և լրացնելով, շարադրել են III-IV դդ. հայոց պատմությունը: Փարպեցու երկը համառոտ ներկայացնում է նաև Հին Հայաստանի պատմությունը, մի շարք դեպքերում ճշտում կամ լրացնում է **Եղիշեի** «Վարդանի և Հայոց պատերազմի մասին» երկը: Վերջինս իր պատմության մեջ նկարագրում է V դ. կեսերի իրադարձությունները, երբ հայ ժողովուրդը պայքար էր մղում պարսկական իշխանության դեմ՝ իր ազգային ինքնությունն ու քրիստոնեական հավատքը պահպանելու համար:

Վաղ միջնադարյան պատմագրության գլուխգործոցը համարվում է **Մովսես Խորենացու** «Հայոց պատմությունը»: Այն ընդգրկում է Հայաստանի ամբողջական պատմությունը՝ նախապատմական ժամանակներից մինչև հեղինակի դարաշրջանը՝ V դ. կեսերը: Հիմնված է բազմալեզու սկզբնաղբյուրների քննադատական կիրառման վրա: Խորենացին, հայոց պատմությունը ներկայացնելով հարևան ժողովուրդների պատմության համատեքստում, կարողացել է ազգային պատմությունը կապել ողջ մարդկության պատմության հետ:

V դ. պատմագրության բուռն զարգացմանը հաջորդում է պատմագրական երկերի հսպառ բացակայությունը: Ծուրջ 150-ամյա անբացատրելի լռությունից հետո միայն VII դ. կեսերին է, որ հանդես է գալիս նոր պատմիչ՝ **Սեբեոսն** իր «Պատմություն» աշխատությամբ: Գրել է բյուզանդական Հերակլ կայսրի և նրա ժամանակների պատմությունը (579-661 թթ.): Սեբեոսի գրքին կից կա նաև մի հատված, որը վերագրվում է Անանուն պատմիչին և վերաբերում է հայոց պատմության հնագույն ժամանակաշրջանին: Այստեղ ներկայացված տվյալները հաճախ տարբերվում են Խորենացու հաղորդած տվյալներից: VIII դ. պատմագիր է **Ղևոնդը,** որն իր «Պատմություն» երկում քննարկում է օտար արշավանքների և արաբական տիրապետության շրջանի իրադարձությունները:

Փիլիսոփայություն և իրավագիտություն

Վաղ միջնադարյան հայ հոգևոր մշակույթի կարևոր բաղկացուցիչներից է փիլիսոփայությունը, որն այդ ժամանակներում համարվում էր բոլոր գիտությունների մայրը: Առավել հայտնի փիլիսոփաներից են Եզնիկ Կողբացին և Դավիթ Անհաղթը:

Եզնիկ Կողբացին հեղինակել է փիլիսոփայական-աստվածաբանական մի երկ՝ «Աղանդների հերքում» վերնագրով: Աշխատության մեջ հեղինակը բանավիճում է հայոց եկեղեցուն խորթ կամ հակադիր ուսմունքների ներկայացուցիչների հետ:

Հայ փիլիսոփայական մտքի ամենանշանավոր ներկայացուցիչը **Դավիթ Անհաղթն** է, որը հայտնի է իր հանրագիտարանային գիտելիքներով: Ապրել և դասավանդել է Ալեքսանդրիայում, Հռոմում և Աթենքում: Փիլիսփայական բանավեճերում միշտ հաղթող է դուրս եկել՝ արժանանալով «Անհաղթ» տիտղոսին: Վերադառնալով Հայաստան՝ ծավալել է գիտական և մանկավարժական գործունեություն: Իր «Իմաստության սահմանները» դասական փիլիսոփայական աշխատության մեջ վարպետորեն կարողացել է համադրել փիլիսոփայական գաղափարներն ու քրիստոնեական վարդապետությունը:

Հայ մատենագրությունը հարուստ է նաև աշխարհիկ և եկեղեցական իրավունքի հուշարձաններով, որոնցով կանոնակարգվել է վաղմիջնադարյան Հայաստանի եկեղեցական և սոցիալական կյանքը: Հայ եկեղեցական իրավունքի մեզ հասած հնագույն հուշարձաններից է **Հովհաննես Օձնեցու** կազմած «Կանոնագիրք Հայոցը» (728 թ.): Այստեղ ի մի են բերված մինչ այդ Հայոց եկեղեցու կողմից արդեն ընդհանուր ճանաչում գտած կանոնական բնագրերը (տիեզերական, տեղական ժողովների, այլ եկեղեցիների ու ազգային եկեղեցու նշանավոր հայրերի կանոնադրություններ): Ժողովածուն ամրագրում էր Հայոց եկեղեցու ծիսական և դավանաբանական առանձնահատկությունները՝ պաշտպանելով այլ եկեղեցիների ոտնձգություններից և լրացուցիչ կենսունակություն հաղորդելով Հայոց եկեղեցուն:

S Ամուսնա-ընտանեկան հարաբերությունները վաղ միջնադարում

Քրիստոնեության ընդունումը վերափոխումներ մտցրեց նաև ընտանեկան հարաբերություններում և ամուսնական հարցերում, թեպետ հիմնովին չտրոխեց նահապետական սովորույթներն ու նորմերը: Հայ եկեղեցին, արքայի լիակատար աջակցությամբ, պաշտոնականացրեց ամուսնությունը և պահանջեց, որ ամուսինն ու կինը օրինականացնեն իրենց միությունը պսակադրությամբ և երդումներով՝ հավատարիմ մնալով քրիստոնեական ուսմունքին: Հոգևորականությունը ժողովրդի մեջ արմատավորեց այն պատկերացումը, որ առանց եկեղեցական պսակի չկա ամուսնություն: Անընդունելի դարձան բազմակնությունն ու ամուսնության նախաքրիստոնեական սովորույթները: Չէր խրախուսվում ամուսնալուծությունը: Դատարանները զրկվեցին ամուսնալուծության գործ քննելու իրավունքից: Կնոջ իրավունքները, ինչպես նախկինում, սահմանափակ էին: Կինը կախման մեջ էր ամուսնուց: Միևնույն ժամանակ, սակայն, ազնվական կանայք կախման մեջ չէին ամուսիններից և հասարակության ու ընտանիքի մեջ վայելում էին իրենց դասային և գույքային դրությանը համապատասխան հարգանք և պատիվ:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Ինչպե՞ս կմեկնաբանես այն, որ ազնվական կանայք, ի տարբերություն ոչ ազնվական կանանց, կախման մեջ չեն եղել իրենց ամուսիններից:

Գործնական առաջադրանք

Դասընկերներով փորձե՛ք կապեր հաստատել հայոց լեզու, գրականություն և հասարակագիտություն առարկաների ուսումնական նյութի հետ:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Հայոց այբուբենի գյուտի, Աստվածաշնչի թարգմանության և ինքնուրույն գրականության ստեղծման շնորհիվ Մեսրոպ Մաշտոցը Վռամշապուհ արքայի և կաթողիկոս Սահակ Պարթևի աջակցությամբ հոգևոր նորոգման սերմեր տարածեց հայ ժողովրդի մեջ:

Մաշտոցի ստեղծած այբուբենը, չնչին հավելումով, կիրառվում է մինչ օրս և աշխարհի ինքնուրույն գրային համակարգերից մեկն է: Դրանով արժեքավոր գրքեր են գրվել և այսօր էլ գրվում են: Դու այն կարող ես ընտրել քո հեռախոսի այբուբենների ցանկում և գրել համացանցում:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Մեսրոպ Մաշտոց • Վռամշապուհ • Սահակ Պարթև • Կորյուն • Ագաթանգեղոս • Փավստոս Բուզանդ • Ղազար Փարպեցի • Եղիշե • Մովսես Խորենացի • Սեբեոս • Ղևոնդ • Եզնիկ Կողբացի • Դավիթ Անհաղթ • Հովհաննես Օձնեցի Միջնադար • վարդապետարան

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ինչո՞ւ էր անհրաժեշտ ստեղծել հայկական գրերը: Ի՞նչ նշանակություն ունեցավ հայոց գրերի ստեղծումը մշակույթի հետագա զարգացման համար:

բ. Բացատրիր: Ինչո՞ւ Սասանյան կայսրությունն ու Բյուզանդիան համաձայնեցին թե՛ Արևելյան, թե՛ Արևմտյան Հայաստաններում հայկական դպրոցներ բացելուն:

գ. Վերլուծիր: Ինչո՞ւ միայն քրիստոնեության ընդունմամբ հնարավոր չէր պահպանել մշակութային առանձնահատկությունները և միասնականությունը:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչո՞ւ էր կարևոր թարգմանական գրականության ստեղծումը, ի՞նչ նշանակություն այն ունեցավ:

2. Ընդհանրացրու: Ինչո՞վ էր կարևոր պատմագրական միասնական ավանդույթի ձևավորումը: Ինչպե՞ս էին միմյանց լրացնում ստեղծված պատմագրական երկերը: Ինչո՞վ էր առանձնանում այդ շարքում Մովսես Խորենացու «Հայոց պատմությունը»:

3. Գնահատիր: Ի՞նչ գործնական նշանակություն ունեին Եզնիկ Կողբացու և Դավիթ Անհաղթի ստեղծագործությունները:

Ա4 | Պատմական նշանակություն և պատմական հեռանկար

Պատկերացրու, որ դու Վռամշապուհ արքան ես: Հայ գրերի ստեղծման անհրաժեշտության հարցով քեզ են դիմել Սահակ Պարթևն ու Մեսրոպ Մաշտոցը: Դու գիտես, որ միայն քո ցանկությունը քիչ է: հարկավոր է նաև համոզել Սասանյան արքունիքին, որ թույլ տա հայկական գրերի ստեղծումն ու դպրոցներում դասավանդելը:

Ինչպե՞ս կփորձես համոզել Սասանյան արքունիքին՝ անհրաժեշտ թույլտվությունը ստանալու համար: Կարող ես Դասընկերներիդ հետ բեմականացնել այդ դրվագը:

6.2 ԳԼՈՒԽ Բնական գիտություններն ու արվեստը V-IX դարերում

Հենվելով ձեր գիտելիքների վրա

Հայաստանը միջնադար մտավ որպես հարուստ մշակութային ավանդույթներ ունեցող երկիր: Այն որոշ չափով շարունակեց հելլենիստական ժամանակաշրջանի ավանդույթները՝ միաժամանակ աստիճանաբար յուրացնելով և զարգացնելով քրիստոնեական արժեքանությունը:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր օտար մշակույթների արժեքների յուրացման և միաժամանակ ավանդական մշակութային արժեքների պահպանման անհրաժեշտությունը:***

Վաղ միջնադարում հայ գրականությանը զուգահեռ բուռն վերելք ապրեցին նաև բնական գիտությունները, արվեստն ու ճարտարապետությունը: Ընդ որում՝ զարգացումը չընթացավ անտիկ գիտության, արվեստի ու ճարտարապետության հետ խզման ճանապարհով: Ճիշտ հակառակը՝ ընթացավ ավանդվածի հիման վրա, առանձին գծերի վերարժևորմամբ և համադրությամբ:

Բառարան

Բազիլիկ | ուղղանկյուն հատակագծով պաշտամունքային շինություն: Ծածկը կրող սյունաշարերով բաժանվում է մեկ, երեք կամ հինգ մասերի՝ այսպես կոչված նավերի:

Շարական | եկեղեցական տոնացույցի որևէ օրվա համապատասխան ժամին կատարվող հոգևոր երգ կամ հոգևոր երգերի ամբողջական շարք:

Բնական գիտությունները

Վաղ միջնադարյան Հայաստանում զարգացած ճյուղերն էին **տիեզերագիտությունը և տոմարը, բժշկագիտությունը, աշխարհագրությունը և քարտեզագրությունը:**

Առաջին հայ հեղինակը, որ օգտագործել է բնագիտության տվյալներն իր աշխատությունում, **Եզնիկ Կողբացին է:** Սակայն բնական և ճշգրիտ գիտությունների հիմնադիրը VII դ. աշխարհահռչակ գիտնական **Անանիա Շիրակացին** է: Նա նշանակալի ներդրում է ունեցել մաթեմատիկայի, ֆիզիկայի, աշխարհագրության, աստղագիտության, օդերևութաբանության և օրացույցի ուսումնասիրության մեջ: Կազմել է բնագիտության դասագրքեր: Մաթեմատիկայի բնագավառում նրա նվաճումներից են չորս մաթեմատիկական գործողությունների աղյուսակները, մաթեմատիկական հանելուկների և խնդիրների ամենավաղ հավաքածուն և մաթեմատիկայի խնդիրների ամենավաղ հայերեն գիրքը:

Շիրակացին պնդել է, որ երկիրը գնդաձև է, և աշխարհի կառուցվածքը համեմատել է ձվի հետ (երկիր՝ դեղնուց, մթնոլորտ՝ սպիտակուց, երկնակամար՝ պատյան): Որոշ համեմատությունների միջոցով կարողացել է հիմնավորել, որ

Արեգակը մեծ է թե՛ Լուսնից, թե՛ երկրից և գտնվում է շատ մեծ հեռավորության վրա: Նա ճշգրիտ բացատրել է Արեգակի և Լուսնի խավարումները, Լուսնի փուլերը և Ծիր Կաթինի կառուցվածքը՝ վերջինս նկարագրելով որպես «կուտակված բազմաթիվ մեծ ու փոքր աստղեր»: Նա նաև ճիշտ է նկարագրել մակընթացությունները՝ վերագրելով դրանք Լուսնի ազդեցությանը:

Վաղ միջնադարյան Հայաստանում ծաղկում ապրեցին նաև աշխարհագրությունն ու քարտեզագրությունը: Հայտնի են **Մովսես Խորենացու** և **Անանիա Շիրակացու** հեղինակած **«Աշխարհացույց»**-ները, որոնք եզակի աշխատություններ են: Գրվել են անտիկ հեղինակների աշխատություններից մեծապես օգտվելով, բայց և հավելելով իրենց ինքնուրույն նյութը: Բավականին մանրամասն տեղեկություններ են պարունակում ժամանակի հայտնի աշխարհի՝ Եվրոպայի, Ասիայի և Լիբիայի (Աֆրիկայի) մասին: Եզակի են Մեծ Հայքի, Փոքր Հայքի, Վիրքի, Աղվանքի և Պարսկաստանի մասին տեղեկությունները: Նկատենք, որ Անանիա Շիրակացու «Աշխարհացույցը», հիմնված լինելով Մովսես Խորենացու «Աշխարհացույցի» վրա, նաև ճշգրտել ու լրացրել է այն:

Ս Ձայներ անցյալից



ԱՆԱՆԻԱ ՇԻՐԱԿԱՑԻ
(VII դար)

«Դարձյալ [...] ասում են, թե բարու կամ չարի հակումը մեր կամքով չէ, և ոչ էլ մեզանից են նրանք սկիզբ առնում, այլ ծնվողների ծննդաբաշխությունից՝ ակամա և ոչ թե մեր կամքով: Եթե իրոք այդպես լիներ, ապա ավելորդ կլինեին օրենքները, որոնք կարգ ու կանոն են սահմանում, թե ինչը կարելի է անել և ինչը՝ ոչ: Ավելորդ կլինեին նաև դատավորները, որոնք մեծարում են բարեգործներին և արդար դատաստանով պատժում չարագործներին: Քանի որ գողի հանդգնությունը և չարությունը իր ծննդյան բախտին համապատասխան է և ոչ ըստ իր կամքի, և ոչ էլ սպանողի հանցագործությունն է իր ցանկությամբ եղել, որովհետև եթե կամենար էլ, չէր կարող իր ձեռքը ետ պահել սպանությունից և չէր կարող ազատվել գործելուց, որովհետև նա իր ծննդյան բնույթով հարկադրված էր սպանություն կատարելու [...] Քանի որ, ինչպես մոլորյալներն են ասում, այն, ինչ լինում է, մեր կամքով չի լինում, ապա էլ ինչո՞ւ պիտի պատիժ կրի նրա համար»:
(Ամպերի և նշանների մասին):

Այս ժամանակաշրջանում որոշ զարգացում ապրեց նաև **բժշկությունը:** Առանձնապես մեծ համբավ ունեին Հայկական լեռնաշխարհի դեղաբույսերը, որոնք արտահանվում էին Արևելքի և Արևմուտքի մի շարք երկրներ: Ստեղծվեց ժողովրդական բժշկության վրա հիմնված դեղամիջոցների հարուստ գանձարան:

Ծավալուն աշխատանքներ էին տարվում նաև **տոմարագիտության** մեջ, որը հատկապես կարևոր էր Հայոց եկեղեցու կայացման համար: 554 թ. Դվինի երկրորդ ժողովում սահմանվեց **Հայոց մեծ թվականը,** որի սկիզբը համարվում է **552 թ. հուլիսի 11-ը:** Ստեղծելով իր թվականությունը՝ Հայոց եկեղեցին զատվեց հարևան եկեղեցիներից և նրանց ազդեցություններից եկեղեցական տոների, ժամանակի հաշվման և այլ հարցերում:

Ճարտարապետությունը

Վաղ միջնադարյան Հայաստանի արվեստում առաջատարը **ճարտարապետությունն** էր: Նրա զարգացման դեռևս վաղ փուլում (IV-VII դդ.) ստեղծվել են դասական շինություններ: Այս շրջանում էր, որ ձևավորվեց հայկական ազգային ճարտարապետությունը, որը մեծ չափով կապված էր քրիստոնեության հետ:

Սկզբում գերակշռող էր դեռ նախաքրիստոնեական ժամանակներից ժառանգված ճարտարապետական ոճը, որը հայտնի է **«բազիլիկ»** անվամբ: Այս ոճով կառուցված պաշտամունքային շինությունները երկարավուն են, ծածկը կրող սյունաշարերով բաժանված են մեկ, երեք կամ հինգ մասերի՝ այսպես կոչված նավերի: Տարածված էր հատկապես եռանավ տեսակը: Հայաստանի վաղ քրիստոնեական ճարտարապետության լավագույն հուշարձաններից է **Էջմիածնի** տաճարը, որը կառուցվել է նախաքրիստոնեական տաճարի տեղում 303 թ.:

Նոր կրոնն իր հետ բերեց տաճարաշինության մի շարք հիմնական պահանջներ: V դ. հաստատվեցին **գմբեթավոր** եկեղեցու երկու՝ **գմբեթավոր բազիլիկ** և **կենտրոնագմբեթ** տեսակները, որոնք իրենց կատարելությանը հասան VII դարում: Այս դարաշրջանում կառուցված և մինչ օրս պահպանված կենտրոնագմբեթ տաճարի շատ տիպիկ օրինակ է հայկական ճարտարապետության **գլուխգործոցներից** մեկը՝ **Սուրբ Հռիփսիմեի** տաճարը: Խաչաձև կենտրոնագմբեթ կառույցի եզակի օրինակ է նաև հայ ճարտարապետության մեկ այլ գլուխգործոց՝ **Զվարթնոցի** տաճարը, որի ավերակները գտնվում են Երևանից Էջմիածին տանող ճանապարհին: Տաճարը կառուցվել է յոթնաստիճան պատվանդանի կենտրոնում, շրջանաձև հատակագծով: Արտաքինից ներկայացնում է եռահարկ, աստիճանաբար նեղացող կենտրոնագմբեթ շինություն: Թե՛ Հռիփսիմեի, թե՛ Զվարթնոցի տաճարներն իրենց ճարտարապետական լուծումներով ազդեցություն են ունեցել Հայաստանի և այլ երկրների ճարտարապետությունների վրա: Նման մեծածավալ կենտրոնագմբեթ կառույցների առկայությունը խոսում է նաև մաթեմատիկայի և հատկապես երկրաչափության խոր իմացության մասին, առանց որոնց հնարավոր չէր բարդ հորինվածքների և քարային կառույցների ճիշտ տեղաբաշխումը:

Քանդակագործություն և նկարչություն

Միջնադարյան մշակույթի ինքնատիպության խորհրդանիշն են **խաչքարերը,** որոնք խորհրդանշում են Քրիստոսի փրկագործությունը: Երևան եկան **բարձրաքանդակներն** ու **հարթաքանդակները:** Շենքերի, եկեղեցիների, պալատների և կոթողների վրա քանդակվում էին զանազան պատկերներ, առանձին տեսարաններ, բուսական և երկրաչափական շատ հարուստ ու բազմազան զարդաձևեր: Տիրապետող էին կրոնական բովանդակությամբ քանդակները: Շատ չեն, բայց կան նաև աշխարհիկ բովանդակությամբ քանդակներ, որոնցում տեղ են գտել վերնախավի կենցաղին, ինչպես նաև բնակչության առանձին զբաղմունքների վերաբերող պատկերներ:

Ճարտարապետական կառույցների ներքին հարդարման առավել արտահայտիչ ձևերից էին մնում **խճանկարը և որմնանկարը:** Դրանցով են զարդարված եղել Դվինի Մայր տաճարը և Զվարթնոցը: Դրանք ևս կրոնական բովանդակությամբ զանազան պատկերներ, կենդանիներ և բույսեր են պատկերել: Պահպանված լավագույն խճանկարներից են Երուսաղեմի տաճարի խճանկարները: Շատ ավելի սովորական և տարածված է եղել ձեռագիր գրքերի զարդարումը **մանրանկարներով:**

Թատրոն և երաժշտություն

Վաղ միջնադարյան Հայաստանում լայն տարածում ունեին նաև թատերական ներկայացումներն ու զվարճալիքները: Ընդ որում՝ միջնադարյան թատրոնը բազմաբնույթ և բազմաժանր էր: Թատերական ներկայացումները կարևոր տեղ էին գրավում բնակչության կենցաղում: Կային թատերախմբեր, որոնք թափառում էին երկրով մեկ և ներկայացումներ տալիս: Թափառական թատերախմբերը բաղկացած էին պարուհիներից, լարախաղացներից և ծաղրածուներից: Մի շարք ուղղակի և անուղղակի փաստեր վկայում են, որ Հայաստանում նախարարական ամրոցներն ունեցել են թատրոններ, բայց դրանց կառուցվածքի վերաբերյալ ոչ մի տեղեկություն չի պահպանվել: Անգամ ստեղծվել են թատերական շինություններ՝ կանանց համար առանձնացված տեղերով: Ժողովրդի նման թատերասիրությունը հարուցել է հոգևորականների անհանգստությունը: Հայտնի են, օրինակ, կաթողիկոս **Հովհաննես Մանդակունու** (V դ.) քարոզները՝ ընդդեմ թատերական արվեստի: Ներկայացումները հոգևորականներին դրդեցին թատերական տարրեր ներմուծել եկեղեցական ծեսերի մեջ: Ստեղծվեցին կրոնական թեմաներով քրիստոնեական ծիսական ներկայացումներ:

Վաղ միջնադարյան կենցաղի անբաժանելի մասն էր նաև երաժշտությունը: Պատմիչների մոտ մի շարք վկայություններ կան ժողովրդական և աշխարհիկ երաժշտության մասին: Տարածված էին գուսանական երգերը: Դրանց կողքին V դ. սկզբնավորվեց և զարգացավ նաև հոգևոր երգը՝ օրհներգը, որը հետագայում կոչվեց **շարական:** Առաջին շարականագիրներից են Մեսրոպ Մաշտոցը, Սահակ Պարթևը, Մովսես Խորենացին և այլք: Ուշագրավ է, որ VIII դ. գործել է նաև կին շարականագիր **Սահակդուխտ Սյունեցին**: Նա շատ հմուտ է եղել երաժշտական արվեստում և ստեղծել է բազմաթիվ մեղեդիներ:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Անկախության կորստի, օտար նվաճողների տիրապետության կամ հալածանքների պայմաններում ինքնուրույն գրականությունը, բնական գիտությունների յուրացումն ու արվեստի ազգայնացումը կռվաններ հանդիսացան հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման գործում:

Այսօր ևս կարևոր է հոգևոր և նյութական մշակույթների շարունակական արդիականացումը՝ առնվազն ժամանակին համաքայլ ընթանալու համար:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Եզնիկ Կողբացի • Մովսես Խորենացի • Անանիա Շիրակացի • Հովհաննես Մանդակունի • Սահակադուխտ Սյունեցի • Հայոց մեծ թվական

Սբ Հռիփսիմեի տաճար • Զվարթնոցի տաճար • բազիլիկ • կենտրոնագմբեթ • որմնանկար • մանրանկար • շարական

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Ներկայացրու: Ի՞նչ առաջադեմ գաղափարներ է զարգացրել Անանիա Շիրակացին տիեզերագիտության և մաթեմատիկայի իր ուսումնասիրություններում:

բ. Վերլուծիր: Ե՞րբ է սահմանվել Հայոց մեծ թվականը: Ինչո՞վ էր դա կարևոր:

գ. Պարզաբանիր: Ինչո՞ւ միայն քրիստոնեության ընդունմամբ հնարավոր չէր պահպանել մշակութային առանձնահատկությունները և միասնականությունը:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ փոփոխություններ կրեց քանդակագործությունը: Ինչպիսի՞ բովանդակությամբ քանդակներն էին տիրապետող, ինչո՞ւ:

2. Ընդհանրացրու: Ինչո՞ւ էր եկեղեցին անհանգստացած ժողովրդի թատերասիրությամբ:

3. Գնահատիր: Ի՞նչ բնույթի կառույցներ են մեզ ավելի շատ հասել վաղ միջնադարից: Ինչո՞վ է դա բացատրվում:

Ա4 | Փաստարկում և հիմնավորում

Պատկերացրու, որ դու կինոռեժիսոր ես և պետք է վավերագրական ֆիլմ նկարահանես գմբեթավոր եկեղեցիների մասին: Գրիր ֆիլմի համառոտ սցենար՝ օգտվելով տեքստից և համացանցից:
Ինչի՞ն հատկապես ուշադրություն կդարձնես: Ինչո՞ւ:

Աշխատանք սկզբնաղբյուրների հետ

1 | **Մեկնաբանիր:** Ինչպե՞ս կմեկնաբանես «բարու կամ չարի հակումը մեր կամքով չէ» արտահայտությունը:

2 | **Վերլուծիր և ներկայացրու:** Ինչո՞ւ, ըստ Շիրակացու, օրենքներն ու դատավորները ավելորդ կլինեին, եթե մարդկանց արարքները կախված լինեին ճակատագրից կամ բախտից: Ինքդ ի՞նչ ես մտածում:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ համացանցի օգնությամբ ուսումնասիրիր այս գլխում նշված ճարտարապետական գլուխգործոցներից մեկը: Ձեր գտած տեղեկությունները (կառույցի գտնվելու վայրի, ներքին և արտաքին հարդարանքի մասին) և դրանց հիման վրա ձեր արած եզրակացությունները դասարանին ներկայացրե՛ք բանավոր: Կազմակերպե՛ք վիրտուալ ճամփորդություն տաճարում:

ԹԵՄԱ 7

Բագրատունյաց Հայաստան

Ուսումնասիրելով այս թեման՝ կկարողանաս.

ա. Ներկայացնել Բագրատունյաց Հայաստանի պատմության առանցքային դրվագները, պետական կարգը, բանակը, տնտեսությունը, մշակույթի զարգացման առանձնահատկություններն ու ձեռքբերումները:

բ. Բնութագրել Բագրատունի նշանավոր արքաների և աշխարհիկ ու հոգևոր գործիչների՝ պետության անվտանգության ամրապնդմանն ու հզորացմանն ուղղված ձեռնարկումները և կարծիք հայտնել դրանց վերաբերյալ:

գ. Վերլուծել համաշխարհային և տեղական պատմական մի շարք գործընթացների ազդեցությունը Անիի Բագրատունյաց թագավորության հիմնադրման, հզորացման և անկման գործընթացներում:

դ. Քննարկել և եզրակացություն անել X-XI դարերում հայ ժողովրդի միասնականությանը, հոգևոր ինքնուրույնությանն ու ինքնությանը սպառնացող մարտահրավերների և դրանց դիմագրավելու քայլերի վերաբերյալ:

ե. Արժևորել Բագրատունյաց Հայաստանի քաղաքակրթական ժառանգությունը հայոց և համաշխարհային մշակույթների համատեքստում:

Բագրատունյաց արքայատոհմի դրոշը
(վերակազմություն)

7.1 ԳԼՈՒԽ Բագրատունիների Հաստատումը հայոց գահին

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Իշխանաց իշխան Աշոտ Բագրատունին, հմտորեն օգտագործելով արաբա-բյուզանդական հակամարտությունները, կարողացավ երկիրը զերծ պահել օտար ուժերի ներխուժումներից և վերականգնել Հայաստանի անկախությունը:

* ***Դասընկերներիդ հետ քննարկի՛ր, թե հայոց նախորդ թագավորներից որի՞ գահակալության շրջանի հետ կարելի է զուգահեռներ տանել: Ի՞նչ ես կարծում՝ ո՞ր արքան է ավելի ճկուն քաղաքականություն վարել, ինչպե՞ս:***

855 թ. Հայաստանից **Բուղայի** հեռանալուց հետո արաբական տիրապետությունից ազատագրվելու պայքարը Հայաստանում մտավ վճռական փուլ: Թե՛ արտաքին, թե՛ ներքին պայմանները Հայաստանի օգտին էին: Արաբական խալիֆայությունը խիստ թուլացել էր և գրեթե կորցրել էր իր իշխանությունը ծայրամասերի նկատմամբ: Արդյունքում կայսրության մի շարք ծայրամասերում առաջացան ինքնուրույն իշխանություններ և թագավորություններ: Թուլացած խալիֆայությանը մնում էր ճանաչել տեղերում առաջացած իշխանությունները և բավարարվել դրանց վրա իր գերիշխանության ձևական պահպանմամբ:

Բառարան

Կաթողիկոսանիստ աթոռ | այն տեղը, որտեղ հաստատված է կաթողիկոսական իշխանությունը՝ կաթողիկոսի նստավայրը:

Հայաստանի անկախության վերականգնումն ու ամրապնդումը

Այս նոր հանգամանքներում Հայաստանը վերահսկողության տակ պահելու համար խալիֆը սկսեց երկրի կառավարիչներ նշանակել հայ նախարարներից: 855 թ. երկրի կառավարիչ և սպարապետ նշանակվեց **Աշոտ Բագրատունին:** Զգուշավոր և սթափ քաղաքականության շնորհիվ նա շուտով՝ 862 թ., դարձավ նաև իշխանաց իշխան, որի իշխանական լիազորությունները տարածվում էին ոչ միայն Հայաստանի, այլև Վիրքի և Աղվանքի վրա: Ավելին՝ Աշոտ Բագրատունուն հանձնվեց նաև հարկահանության իրավունքը, որից հետո արաբական զորքերը դուրս բերվեցին երկրից: Հայաստանից շուտով հեռացավ նաև արաբ ոստիկանը: Ստացվող եկամուտների մեծագույն մասն արդեն մնում էր երկրում: Նվազեց նաև գանձվող հարկերի քանակը: Դա Աշոտ Բագրատունուն հնարավորություն տվեց ավելացնելու բանակի թվաքանակը՝ հասցնելով 40 հազարի:

Երկրի ներքին կայունությունն ապահովելու համար Աշոտ Բագրատունին մեծ ջանքեր գործադրեց հայ նախարարների միջև ծագած գժտությունները հարթելու և նրանց նկատմամբ իր իշխանությունն ամրապնդելու համար: Ազդեցիկ իշխաններին իր շուրջ համախմբելու և դաշինք կնքելու նպատակով խնամիական կապեր էր հաստատում նրանց հետ:

Նախարարներին հաշտեցնելու գործում մեծ էր նաև Հայոց կաթողիկոս **Զաքարիա Զագեցու** աջակցությունը:

Ի վերջո Աշոտ Բագրատունին 869 թ. Հայոց նախարարների համագումարում հռչակվեց հայոց թագավոր: Ժողովականները Հայաստանի թագավորությունը ճանաչելու միջնորդությամբ դիմեցին խալիֆին: Երկար ձգձգումներից հետո խալիֆն ի վերջո Աշոտ Բագրատունուն հայոց թագավոր ճանաչեց: Նա ցանկանում էր բացառել Բյուզանդիայի հետ Հայաստանի դաշինքը: Այսպիսով՝ 885 թ. խալիֆը Աշոտ Բագրատունուն թագ և թանկարժեք նվերներ ուղարկեց: Բյուզանդիայի կայսր **Վասիլ I-ը** ևս շտապեց ճանաչել Հայաստանի անկախությունը: **885 թ. օգոստոսի 26-ին** Աշոտ Բագրատունին **Բագարանում** հայոց կաթողիկոս **Գևորգ Գառնեցու** կողմից օծվեց թագավոր: Շուրջ 450 տարի ընդհատումից հետո վերականգնվեց հայոց թագավորությունը:

Պայքար թագավորության պահպանման համար

Նորաստեղծ թագավորության առջև ծառացել էին ներքին և արտաքին մի շարք խնդիրներ: Առաջին հերթին հարկավոր էր ապահովել երկրի ներքաղաքական կայունությունը և ամրապնդել պետությունը: **Աշոտ I-ը (885-890)** և նրան հաջորդած որդին՝ **Սմբատ I-ը (890-914),** իրենց ենթարկեցին կենտրոնախույս հայ ավատատերերին Վասպուրականում, Գուգարքում, Ուտիքում, Արցախում և Հայաստանի այլ շրջաններում, ինչպես նաև Հայաստանի հարավում առաջացած արաբական ամիրայությունների ամիրաներին: Այդպիսով հայկական հողերի մեծագույն մասը միավորեցին իրենց իշխանության ներքո: Պակաս կարևոր չէր Արաբական խալի-

S **Պատմությունը և մարդը**

ՎԱՍԻԼ (ԲԱՐՍԵՂ) I ՄԱԿԵԴՈՆԱՑԻ
(867-886)

Հայկական ծագումով բյուզանդական կայսր: Մակեդոնական (Հայկական) դինաստիայի (867-1056) հիմնադիրն է:

Ծնվել է Մակեդոնիայում (Բյուզանդիա)՝ գաղթական հայի ընտանիքում, մոտ 811 թ.: Վասիլը գահին տիրել էր ապօրինաբար՝ սպանելով Միքայել III կայսրը, որի համանակարգն էր ինքը: Իր կայսր լինելը հիմնավորելու և օրինավորելու համար նա ամեն ջանք գործադրեց: Մշակվեց նրա ծագումնաբանության առասպելը, ըստ որի՝ նրա նախնիները ոչ թե հասարակ գյուղացիներ էին, ինչպես կարծում էին, այլ Հայաստանի Արշակունի թագավորների, ինչպես նաև Կոստանդին I-ի հետնորդները: Նրա հայկական ծագումը հաստատում են հայ պատմիչներ Ստեփանոս Տարոնեցին (X դ.) և Սամուել Անեցին (XII դ.):

Իրեն հռչակելով Արշակունի՝ Վասիլը սերտ հարաբերություններ հաստատեց Բագրատունիների հետ: 876 թ. դիմեց հայոց իշխանաց իշխան Աշոտ Բագրատունուն՝ արքայական թագ ստանալու խնդրանքով, քանի որ Բագրատունիները Արշակունիների թագադիրներն էին: Իրականում Վասիլը հավակնություններ ուներ Արշակունիների նախկին տերության՝ Մեծ Հայքի նկատմամբ: Արշակունի լինելով օրինավորվում էր ապագայում Մեծ Հայքը նվաճելը:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Թվարկի՛ր այն խնդիրները, որոնք լուծում էր Վասիլ I-ը՝ իրեն Արշակունի հռչակելով:

ֆայության և Բյուզանդական կայսրության նկատմամբ դիրքորոշման հարցը: Մինչ այդ Աշոտ I-ը բավականին հավասարակշիռ քաղաքականություն էր վարում և երբեք ընդդեմ արաբների չմիացավ բյուզանդական ուժերին: Սակայն հավասարակշռությունն աստիճանաբար խախտվեց հօգուտ Բյուզանդիայի: Դա դրսևորվեց հատկապես Սմբատ I-ի կառավարման տարիներին: Խալիֆայությունը սկսեց միջամտել Հայաստանի ներքին գործերին՝ Բյուզանդիայի հետ շփումները չեզոքացնելու նպատակով: Չնայած Սմբատ I-ի որոշ հաջողություններին՝ երկիրը մտավ տևական պատերազմների մի շրջան: Նրա դեմ այս անգամ պայքարում էր արաբների աջակցությունը վայելող **Գագիկ Արծրունին:** Երկիրը պառակտված էր, և թագավորի զինական ուժերն անկարող էին դիմադրել: Երկրի հետագա ավերումը կանխելու նպատակով արաբներին հանձնված Սմբատ I արքան Ատրպատականի ամիրա **Յուսուֆի** կողմից **914 թ.** մահապատժի ենթարկվեց: Ամբողջ սրությամբ դրված էր Հայոց թագավորության լինել-չլինելու հարցը. քայքայվել էին պետական հաստատությունները, կառավարման համակարգն ու բանակը, նվաճված էին թագավորության բազմաթիվ քաղաքներ և բերդեր:

Այդ օրհասական պահին հայոց թագավորության պահպանման գործը ստանձնեց երիտասարդ թագաժառանգ Աշոտը՝ **Աշոտ II Երկաթը (914-928),** որն իր պատվանունը ստացավ համառ մարտերի և ճկուն ռազմավարության, ինչպես նաև խիզախության ու տոկունության շնորհիվ: Բազմաթիվ ճակատամարտերից ամենավճռականն ու նշանակալին թերևս **Սևանի «ծովամարտն»** էր **(924 թ.):** Այստեղ հայկական զորքերը ջախջախիչ հաղթանակ տարան արաբների նկատմամբ: Սևանի «ծովամարտից» հետո շուտով Հայաստանը հասավ արաբական խալիֆայության գերիշխանության լիակատար թոթափմանը՝ հրաժարվելով անգամ խիստ կրճատված հարկերը վճարելուց:

Անին՝ մայրաքաղաք: Թագավորությունն իր հզորության գագաթնակետին

Հաստատված տևական խաղաղության շնորհիվ երկրում տնտեսական և մշակութային զարգացում սկսվեց: Վերելքի ժամանակաշրջան էին մանավանդ **Աշոտ III-ի (953-977)** գահակալման տարիները: Վերջինս աչքի ընկավ իր եռանդուն քաղաքականությամբ. անմիջապես ձեռնամուխ եղավ պետության միասնականությանը խանգարող գործոնների վերացմանը, վերակազմավորեց և մեծացրեց բանակը, իր ազդեցությանը ենթարկեց եկեղեցին: Աշոտ III-ին չհաջողեց արաբներից գրավել Դվինը, բայց նա նոր մայրաքաղաք հիմնեց: Մինչ այդ Բագրատունի թագավորները երեք մայրաքաղաք էին փոխել՝ **Բագարան, Երազգավորս (Շիրակավան) և Կարս:** Վերջիններս չունեին մշակութային, տնտեսական և քաղաքական բավարար հնարավորություններ, որոնք կնպաստեին պետության միասնականությանը: Հասկանալով միասնական պետության համար կայուն և մշտական մայրաքաղաքի կարևորությունը՝ Աշոտ III-ը **961 թ. Անին** հռչակեց Հայաստանի մայրաքաղաք: Նոր մայրաքաղաքը նպաստավոր դիրքի

շնորհիվ ժամանակի ընթացքում դարձավ խոշոր առևտրային կենտրոն: Աշոտ III-ի կատարած կարևոր քայլերից էր նաև այն, որ նա **կաթողիկոսանիստ աթոռը** տեղափոխեց **Շիրակ (Արգինա)**՝ ապահովելով եկեղեցու միասնականությունը:

Սմբատ II (977-990), Գագիկ I (990-1020) թագավորների օրոք երկիրը կենտրոնացել էր ավերված տնտեսության վերականգնման վրա: Մայրաքաղաքն այս պայմաններում այնքան արագ սկսեց աճել, որ **Սմբատ II-ը** նրա շուրջը կառուցեց պարիսպների երկրորդ շարքը (Սմբատաշեն պարիսպներ): Կաթողիկոսարանը Արգինայից տեղափոխեց Անի: 987 թվականին արաբներից գրավեց Հայաստանի նախկին մայրաքաղաք Դվինը: Չնայած այդ ամենին՝ Սմբատ II-ի գահակալության շրջանում Բագրատունյաց Հայաստանում նաև խորացավ ավատատիրական մասնատվածությունը:

Գագիկ I թագավորը մի շարք հաղթանակներ տարավ հարևան արաբական ամիրայությունների դեմ և ավելի ընդլայնեց Բագրատունիների տոհմի կալվածքները: Վերականգնեց հին բերդերը և կառուցեց նորերը: Կարողացավ հպատակեցնել կենտրոնախույս ուժերին, անգամ հակադրվել Բյուզանդիային: Բայց այս ամենը ժամանակավոր էր, քանի որ երկրի առանձին մասերի միջև տնտեսական և քաղաքական կապերը թույլ էին: Երկրի միասնականությունն ավելի շատ պայմանավորված էր թագավորի անձով, և նրա մահվանից հետո բոլոր խնդիրները միանգամից դրսևորվեցին, մանավանդ որ տարածաշրջանում ակտիվ նվաճողական քաղաքականություն էր ծավալել Բյուզանդիան: Նա ծրագրում էր նվաճել նաև Բագրատունյաց Հայաստանը:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Շուրջ 450 տարվա ընդհատումից հետո՝ 885 թ. վերականգնված հայոց թագավորությունը կարողացավ ներքին և արտաքին հավասարակշիռ քաղաքականության շնորհիվ պահպանել և ամրապնդել երկրի անկախությունը: Սակայն դա մեծ դժվարությունների հետ էր կապված. կենտրոնացման քաղաքականությանը դիմադրում էին հայ խոշոր ավատատերերը, իսկ Արաբական խալիֆայությունը, Ատրպատականի ամիրայությունն ու Բյուզանդական կայսրությունը գործադրում էին բոլոր միջոցները հայկական պետության կայացումը խափանելու համար:

Այսօր ևս պետության կայացման ընթացքին միջամտում են ներքին և արտաքին բազմաթիվ կանխատեսելի ու անկանխատեսելի գործոններ: Դրանց մի մասը պատմական զարգացման հերթական փուլին բնորոշ հանգամանք է, մի մասը՝ տարբեր շահերի կամ անարդյունավետ քաղաքականության հետևանք: Պատմական փորձը մեզ այսօր մի շարք զուգահեռների հնարավորություն է տալիս:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Աշոտ I • Զաքարիա Ձագեցի • Վասիլ I • Սմբատ I • Գագիկ Արծրունի • Աշոտ II Երկաթ • Աշոտ III • Սմբատ II • Գագիկ I • Բագարան • Սևանի «ծովամարտ» • Անի • Կաթողիկոսանիստ աթոռ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Պարզաբանիր: Ի՞նչ ներքին և արտաքին նախադրյալներ կային հայոց թագավորության վերականգնման համար:

բ. Բացատրիր: Ինչո՞վ էր պայմանավորված Աշոտ Ի-ի զգուշավոր քաղաքականությունը: Ինչո՞ւ նա երբեք ընդդեմ արաբների չմիացավ բյուզանդական ուժերին:

գ. Վերլուծիր: Ի՞նչ միջոցների էր դիմում Արաբական խալիֆայությունը՝ Բագրատունիների դիմադրությունը թուլացնելու և իր գերակայությունը հաստատելու համար:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ հետևանքներ ունեցավ Բագրատունյաց թագավորության համար այն, որ արտաքին քաղաքականության հավասարակշռությունն աստիճանաբար խախտվեց հօգուտ Բյուզանդիայի:

2. Ընդհանրացրու: Ինչպե՞ս հաջողվեց Աշոտ II Երկաթ արքային թե՛ պահպանել և թե՛ ամրապնդել երկրի անկախությունը:

3. Գնահատիր: Ի՞նչ նշանակություն ունեցավ Բագրատունյաց թագավորության համար նոր մայրաքաղաքի՝ Անիի հիմնումը:

Ա4 | Պատճառ և հետևանք

Պատկերացրու, որ դու Աշոտ III արքայի խորհրդատուն ես և պետք է նրան համոզես, որ նոր մայրաքաղաք հիմնի, և որ այդ նոր մայրաքաղաքը պետք է այդուհետ մշտական լինի: Ինչպե՞ս կհիմնավորես քո առաջարկը: Մանրամասնիր:

Ըստ քեզ՝ ի՞նչ ընթացք կարող էր ունենալ Բագրատունիների թագավորությունը, եթե մայրաքաղաք մնար Կարսը, և չհիմնվեր նոր մայրաքաղաք Անին:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ համացանցից գտե՛ք և գրե՛ք Հայոց կաթողիկոսների նստավայրերը (կաթողիկոսանիստ աթոռները) Բագրատունիների կառավարման տարիներին: Դրանք նշե՛ք քարտեզի վրա և օրինակներով ցո՛ւյց տվեք, թե երբ և ինչու են այդքան հաճախ փոփոխվել կաթողիկոսանիստ աթոռները:

Առանձնացրու քեզ հետաքրքրող տեղեկությունը և քննարկի՛ր դասարանում: Ո՞ր տեղեկությունն է քեզ ավելի հիմնավոր կամ հետաքրքիր թվում: Ինչո՞ւ:

7.2 ԳԼՈՒԽ Բագրատունյաց Հայաստանի մասնատումն ու անկումը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Բագրատունյաց թագավորության հիմնադրման իսկ պահից երկրի քաղաքական միավորման հիմնական զսպանակը մնում էր արտաքին և ներքին ուժերին դիմագրավելու մտահոգությունը: Վերականգնելով հայոց թագավորությունը՝ Բագրատունիները, սակայն, հզոր երկիր ստեղծելու ձգտումը չիրագործեցին, քանի որ չկարողացան ստեղծել կառավարման նոր ձևեր, հատկապես թագավորների կողմից վերահսկվող իրավական համակարգ:

Ի՞նչ ես կարծում, հնարավո՞ր է անընդմեջ կառավարել հնուց ավանդված կառավարման համակարգով և հաշվի չնստել հասարակական փոփոխությունների հետ: Այսօր արդյո՞ք նման խնդիրներ չկան:

Բառարան

Գերագահություն | գոյություն ունեցող այլ գահերի նկատմամբ գերակայությունը:

Չնայած Գագիկ I-ի գործադրած ջանքերին և շարունակվող տնտեսական ու մշակութային վերելքին՝ երկրի պառակտվածությունը հնարավոր չեղավ հաղթահարել: Գագիկ I-ի իրավահաջորդների և ենթակա թագավորությունների շարունակական վեճերը Հայաստանը դարձրին բյուզանդական հավակնությունների հեշտ զոհը: Երկրի մի շարք գավառներ սկսեցին տնտեսապես և քաղաքականապես հեռանալ կենտրոնական իշխանությունից: Նրանց տիրակալները ձգտում էին անկախանալ Անիի Բագրատունիներից: Բյուզանդական կայսրությունը սկսեց մեկ առ մեկ կլանել այդ գավառները:

Ենթակա թագավորությունների ստեղծումը

Բագրատունյաց թագավորության հիմնադրման իսկ պահից թագավորները գրեթե մշտապես բախման մեջ էին կենտրոնախույս ուժերի դեմ: Վերջիններիս անկախանալու փորձերը խրախուսվում էին Արաբական խալիֆայության կամ Բյուզանդական կայսրության կողմից: Արդյունքում երկրի քաղաքական կենտրոնացման գործընթացը մինչև թագավորության կործանումը մնաց մակերեսային և թերի:

Հայաստանի քաղաքական մասնատումը սկսվեց **Վասպուրականից,** որը բավականին ընդարձակ և տնտեսապես բարգավաճ իշխանություն էր: Միջազգային քարավանային առևտրական ուղիներից մեկն անցնում էր Վասպուրականի տարածքով և նրան տնտեսական առավելություններ էր տալիս: Սա կենտրոնական իշխանությունից անջատվելու նախադրյալներ ստեղծեց: Եվ արդեն **908 թ. Գագիկ Արծրունին** Ատրպատականի **Յուսուֆ ամիրայի** աջակցությամբ իրեն հռչակեց թագավոր: Յուսուֆը խալիֆի անունից նրան թագ ուղարկեց և

ճանաչեց հայոց թագավոր՝ հարկավ, երկրի մասնատվածությունը խորացնելու, իսկ ապա այն նվաճելու նպատակով: Այդպիսով ստեղծվեց **Վասպուրականի Արծրունյաց թագավորությունը (908-1021),** որը Բագրատունյաց Հայաստանի ենթակա թագավորություններից ամենաընդարձակն ու ամենազորեղն էր: Թեպետ հետագայում Արծրունիներն ընդունեցին Բագրատունիների **գերագահությունը**, բայց այն մեծ մասամբ ձևական բնույթ էր կրում:

Կենտրոնական իշխանությունից զատվելու և առանձին թագավորություն հռչակելու հաջորդ քայլը եղավ մայրաքաղաքը Կարսից Անի տեղափոխելուց կարճ ժամանակ անց: Աշոտ III-ի եղբայր **Մուշեղը,** որն այդ ժամանակ Հայաստանի սպարապետն էր, մայրաքաղաքի փոփոխությունից օգտվելով՝ **963 թ.** իրեն հռչակեց թագավոր և հիմնադրեց **Վանանդի** կամ **Կարսի թագավորությունը (963-1065):** Արդյունքում ստեղծվեց ևս մի թագավորություն՝ այս անգամ Բագրատունիներից սերվող:

Անիի Բագրատունիների մեկ այլ ճյուղն էլ թագավորություն հիմնեց Տաշիր-Ձորագետում: Աշոտ III-ի որդին՝ **Գուրգենը,** որը Տաշիրի կառավարիչն էր, **978 թ.** հիմնադրեց **Տաշիր-Ձորագետի թագավորությունը (978-1113):** Հետագայում այն կոչվեց նաև Կյուրիկյան՝ «Գուրգեն» անվան տեղի «Կյուրիկե» ձևից: **Սմբատ II (977-990)** արքան թույլ տվեց այս թագավորության ստեղծումը՝ ցանկանալով վերածել այն պատվարի հյուսիսային սահմանամերձ շրջաններում, բայց սա ևս կենտրոնաձիգ իշխանության թուլացման նշան էր: Կենտրոնական իշխանությանը ենթակա լինելու ձևական բնույթը դրսևորվեց Կյուրիկյանների ամենահզոր **Դավիթ արքայի (989-1048)** կառավարման ժամանակ: Վերջինս անգամ հրաժարվեց ճանաչել կենտրոնի գերիշխանությունը: Գագիկ I արքան գրավեց նրա տարածքները՝ զրկելով թագավորությունից: Այստեղից էլ նրա **«Անհողին»** մականունը: Սակայն կաթողիկոսի միջնորդությամբ Դավիթը գնաց Գագիկ I-ի մոտ և հնազանդություն հայտնեց:

Կենտրոնախույս տրամադրություններ կային նաև **Սյունիքում:** Դրանք դրսևորվել էին դեռևս IX դ. վերջերին-X դ. սկզբին՝ խրախուսվելով Ատրպատականի ոստիկանի կողմից: Անկախանալու հաջորդ փորձն արեց Սյունյաց նշանավոր իշխան **Սմբատը:** 987 թ. նա հռչակվեց թագավոր և Ատրպատականի աջակցությամբ հիմնադրեց **Սյունիքի թագավորությունը (987-1170):** Որոշ ժամանակ անց, կորցնելով Ատրպատականի հովանավորությունը, Սմբատ Սյունին կաթողիկոսի միջնորդությամբ ճանաչեց Անիի Բագրատունիների գերիշխանությունը: Համեմատաբար փոքր տարածք զբաղեցնող այս թագավորությունը ամենակենսունակը գտնվեց՝ գոյատևելով շուրջ երկու դար:

Թոնդրակյան շարժումը

Բագրատունյաց թագավորության համար ոչ պակաս վտանգավոր էր Թոնդրակյան կրոնական շարժումը: Այն առաջացավ, երբ դեռ չէր մարել Պավլիկյան շարժումը: Շարժման առաջնորդն ու գաղափարախոսը **Սմբատ Զա-**

Նայելով քարտեզին

Բագրատունիների տերությունը IX դ. վերջին և X դ. սկզբին

1. **Բացահայտիր քարտեզը:** Ո՞ր կողմից էր Բագրատունյաց Հայաստանին սպառնում ամենալուրջ վտանգը:
2. **Կիրառիր աշխարհագրական հմտություններդ:** Որքանո՞վ է արդարացված այն կարծիքը, որ X դ. - XI դ. սկիզբն ընկած ժամանակաշրջանում կար հայկական երկու պետություն՝ Բագրատունիներինը՝ որպես Հյուսիսային թագավորություն և Արծրունիներինը՝ որպես Հարավային թագավորություն: Ինչո՞ւ:

րեհավանցին (մոտ IX կամ X դդ.) էր: Նա Վանա լճի հյուսիսում գտնվող **Թոնդրակ** ավանում (որից և շարժման անվանումը) հիմնեց իր կենտրոնական համայնքը: Սմբատ Զարեհավանցին շփումներ էր ունեցել Պավլիկյան համայնքի հետ: երկար ճամփորդել էր Հայաստանում և հարևան երկրներում՝ ծանոթանալով ժամանակի ուսմունքներին ու գաղափարախոսություններին:

Թոնդրակցիների մասին պահպանված տեղեկություններից երևում է, որ նրանք ոչ միայն լավ կազմակերպված կրոնական համայնք էին, այլև սոցիալական վերափոխիչների և ապստամբների տպավորիչ խումբ: Նրանք պնդում էին, որ վերադառնում են քրիստոնեության ակունքներին՝ մերժելով եկեղեցիները, եկեղեցական աստիճանակարգը, եկեղեցական խորհուրդները, պատարագը և այլն: Իրենց մոտեցումները հիմնավորում էին նրանով, որ այդ ամենն անհայտ էր Քրիստոսին և նրա աշակերտներին: Թոնդրակցիների համայնքները կազ-

մակերևված էին հավասարության սկզբունքով՝ առանց հոգևոր կոչումների ու աստիճանների: Ընդ որում՝ հավասար էին նաև կանայք և տղամարդիկ: Նրանք մերժում էին Քրիստոսի հարությունը, դրախտի գոյությունը և պնդում, որ մարդկային բարօրությունն ու երջանկությունը պետք է կառուցվեն երկրի վրա:

Թոնդրակցիների այս գաղափարները լայն տարածում գտան ժողովրդի մեջ: Սա լրջորեն անհանգստացնում էր աշխարհիկ և հոգևոր իշխանություններին: Սկսվեցին հալածանքներն ու հետապնդումները: Չնայած այդ ամենին՝ Թոնդրակյան շարժումը հնարավոր եղավ ճնշել միայն Բագրատունյաց թագավորության անկումից հետո՝ 1050-ական թթ., Բյուզանդիայի հետևողական միջամտությամբ:

Բագրատունյաց թագավորության անկումը

Գագիկ I-ի օրոք արտաքին պայմանները դեռ նոր էին կայունացել, երբ բյուզանդական բանակները հայտնվեցին Բագրատունյաց Հայաստանի սահմաններին: Արևմուտքից եկող վտանգի առաջին զոհերը եղան Տարոնը, հետո Տայքը և Վասպուրականի Արծրունիների թագավորությունը: **1021 թ.** Սենեքերիմ Արծրունին Վասպուրականի թագավորությունը զիջեց Բյուզանդիային և գաղթեց Սեբաստիա: Իրավիճակն օրհասական էր նաև Անիի թագավորության համար, որն այժմ պառակտված էր Գագիկ I-ի երկու որդիների՝ **Հովհաննես-Սմբատի և Աշոտ IV-ի** միջև: Զինված բախման վերաճած պայքարը հնարավոր եղավ դադարեցնել վրաց թագավորի, հայոց կաթողիկոսի և սպարապետ **Վահրամ Պահլավունու** միջնորդությամբ: Թագավորությունը բաժանվեց երկու եղբայրների միջև, իսկ կնքված հաշտությամբ **Հովհաննես-Սմբատը (1020-1041)** դարձավ հայոց թագավոր՝ Անի մայրաքաղաքով: Նրա մահից հետո գահը ժառանգելու էր Աշոտը: Շուտով դրությունն էլ ավելի

Ս Ձայներ անցյալից

ՀՈՎՀԱՆՆԵՍ ՍԿԻԼԻՑԵՍ
(մոտ 1040-1101)

«[Ի]շխանությունը ժառանգած որդի Գագիկը, թեև [շարունակում էր] հռոմայեցիների* հետ խաղաղություն ու զինակցություն պահպանել, բայց իր ծեռքում էր պահում նաև հորենական իշխանությունը և չէր ուզում այն հռոմայեցիներին զիջել՝ հակառակ հոր թողած փաստաթղթի: Մոնոմախը, արքունիքում գտնելով այդ փաստաթուղթը, և՛ Անին էր պահանջում, և՛ բովանդակ Մեծ Հայքը՝ որպես Վասիլ կասեր ժառանգորդը: Այն պատճառով, որ [Գագիկը], թեև իրեն հռոմայեցիների ծառան էր խոստովանում, չէր ուզում հրաժարվել հորենական իշխանությունից, կայսրը վճռեց պատերազմել: [...]

Գագիկը, մի կողմից պատերազմ մղելով հռոմեական բանակի դեմ, մյուս կողմից ենթարկվելով Դվինի կառավարչի ասպատակություններին, կատարյալ հուսաբեկ եղած, [...] հաշտություն է կնքում և [...] հանձնվում կայսերը ու տալիս [Անի] քաղաքը: Գալով կայսեր մոտ՝ նա մագիստրոսի պատվաստիճան ստացավ, շատ եկամտաբեր շրջաններ [...] և այսուհետև խաղաղ ու անվրդով կյանք ապրեց (**Համառոտություն պատմությանց, Կոստանդին Մոնոմախ:8**)»:

* *հռոմայեցիներ = բյուզանդացիներ*

սրվեց. 1021 թ. Վասպուրականն անցավ Բյուզանդիային, իսկ ավարտին մոտեցող բյուզանդա-վրացական պատերազմում (1021-1022 թթ.) ակնհայտ էր Բյուզանդիայի հաղթանակը: Սպասվող բյուզանդական հարձակումը չեզոքացնելու նպատակով Հովհաննես-Սմբատ արքան կաթողիկոս **Պետրոս Գետադարձին** ուղարկեց Տրապիզոն՝ բյուզանդա-վրացական բանակցություններին մասնակցելու: Վերջինս **Վասիլ II կայսեր** հետ **1022 թ. Տրապիզոնում** պայմանագիր («կտակ») կնքեց, համաձայն որի՝ Հովհաննես-Սմբատի մահվանից հետո Անիի թագավորությունն անցնելու էր Բյուզանդիայի կայսրին: Իսկ արդեն **1041 թ.** անհայտ հանգամանքներում հաջորդաբար մահացան նախ Աշոտը, ապա Հովհաննես-Սմբատը: Բյուզանդիան անմիջապես զորք ուղարկեց՝ «կտակի» համաձայն տիրելու թագավորությանը: Չնայած դեպքերի նման զարգացմանը՝ Բագրատունյաց պետությունը դեռ բավականաչափ ուժ ուներ ժամանակավորապես զսպելու բյուզանդական հարձակումները: Սպարապետ Պահլավունին կարողացավ ջախջախել բյուզանդական զորքերին և գահի բարձրացնել Աշոտի 18-ամյա որդուն՝ **Գագիկ II-ին (1042-1045):** Չկարողանալով կոտրել հայերի դիմադրությունը՝ Բյուզանդիան անցավ դիվանագիտական ճնշումների: Ի վերջո, բյուզանդասերների խմբավորման՝ կաթողիկոս Պետրոս Գետադարձի և արքունիքում լուրջ ազդեցություն ունեցող **Վեստ Սարգսի** միջոցով, բանակցությունների պատրվակով Գագիկ II-ին համոզեցին մեկնել Կոստանդնուպոլիս, որտեղ նա կալանավորվեց և այլևս չվերադարձավ հայրենիք: Բյուզանդական զորքերը, չնայած մի քանի պարտություններին, ի վերջո գրավեցին Անին:

Այդպիսով՝ **1045 թ.** Անիի Բագրատունյաց թագավորությունն անկում ապրեց և անցավ Բյուզանդիայի տիրապետության տակ:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Ճնշելով Հայաստանի անկախությունը՝ Բյուզանդիան խախտեց Հայաստանի՝ դարերով հաստատված միջանկյալ դիրքը կայսրության և Մերձավոր Արևելքի տերությունների միջև: Կորցնելով քաղաքակրթական այդ պատնեշը՝ նրանք ճանապարհ հարթեցին սելջուկ-թուրքերի առջև: Արդյունքում ոչ միայն պատճառ դարձան տարածաշրջանի քաղաքական և էթնիկ դիմագծի փոփոխության, այլև սեփական կայսրության կործանման: Այդ քաղաքական իրադարձությունների հետևանքներն առկա են մինչ օրս:

Գործնական առաջադրանք

Դասընկերոջդ հետ օգտագործի՛ր համացանցը Բագրատունյաց վերջին՝ Գագիկ II արքայի կառավարման տարիներն ուսումնասիրելու համար: Ձեր գտած տեղեկությունները և դրանց հիման վրա ձեր արած եզրակացությունները դասարանին ներկայացրե՛ք բանավոր, գծապատկերներով և քարտեզներով:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

Գագիկ Արծրունի • Մուշեղ Բագրատունի • Գուրգեն Բագրատունի • Սմբատ Այունի • Սմբատ Զարեհավանցի • Հովհաննես-Սմբատ • Աշոտ IV • Գագիկ II • Պետրոս Գետադարձ • Վեստ Սարգիս • Վասիլ II • ենթակա թագավորություններ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Պարզաբանիր: Ինչպե՞ս առաջացան ենթակա թագավորությունները:

բ. Բացատրիր: Ինչո՞վ էր պայմանավորված կենտրոնախույս ուժերի ակտիվացումը (թվարկիր մի քանի պատճառ):

գ. Հիմնավորիր: Ինչո՞վ էին վտանգավոր ենթակա թագավորությունների և Թոնդրակյան շարժման գաղափարները և գործողությունները կենտրոնական իշխանության համար:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ի՞նչ ես կարծում, ինչո՞վ էր գայթակղիչ Թոնդրակյան շարժման գաղափարախոսությունը, որ այն այդքան արագ տարածվում էր:

2. Ընդհանրացրու: Ինչու՞ Անիի Բագրատունիներին չհաջողվեց ստեղծել կենտրոնաձիգ պետություն, ինչու՞ նրանք չկարողացան զսպել անջատողական ձգտումները և թույլ չտալ ենթակա թագավորությունների առաջացումը:

3. Գնահատիր: Կարելի՞ է արդյոք արդարացնել Տրապիզոնի պայմանագիրը («Կտակը»), արդյո՞ք հնարավոր էր այն չեղարկել: Ինչպե՞ս

Ա4 | Փոփոխություն և շարունակականություն

Պատկերացրու, որ դու կաթողիկոս Պետրոս Գետադարձն ես կամ Վեստ Սարգիսը և պետք է Գագիկ արքային համոզես, որ մեկնի Կոստանդնուպոլիս՝ բանակցությունների: Ինչպե՞ս կփորձես համոզել նրան, որ մեկնի Կոստանդնուպոլիս: Հիմա փորձիր հանկառանը համոզել արքային:

Ի՞նչ ես կարծում, եթե Գագիկ II արքան չգնար բանակցելու, դա ի՞նչ խնդիրներ կառաջացներ: Արդյո՞ք հայկական զորքերը կկարողանային դիմակայել Բյուզանդիայի հարձակմանը:

Աշխատանք սկզբնաղբյուրի հետ

1 | **Մեկնաբանիր:** Ո՞ր դեպքերի և ի՞նչ փաստաթղթի մասին է խոսքը:

2 | **Վերլուծիր և ներկայացրու:** Ի՞նչ տարբերություններ և հակասություններ կան Հովհաննես Սիկիլիցեսի հաղորդածի և դասանյութի միջև: Ի՞նչ ես մտածում, Գագիկ արքայի հուսահատությունից կարո՞ղ էր օգտվել բյուզանդասերների խումբը և նրան համոզել Կոստանդնուպոլիս մեկնել՝ բանակցելու նպատակով:

7.3 ԳԼՈՒԽ Բագրատունյաց Հայաստանի սոցիալ-տնտեսական և մշակութային կյանքը

Հիմնվի՛ր գիտելիքներիդ վրա

Մշակույթն այնպես է ազդում մեր հայացքների և վարքագծի վրա, որ հաճախ մենք նույնիսկ տեղյակ չենք լինում այդ ազդեցության մասին: Մշակութային նախադրյալները ստեղծում են ընդհանրություններ, ձևավորում են տվյալ ազգին, հանրությանը պատկանելու զգացողություն: Մշակութային ազդեցությունները բազմաթիվ են: Դրանք ներառում են գեղարվեստական արտահայտմանը, լեզվին, կրոնին, կենցաղին վերաբերող սովորությունները:

* ***Ի՞նչ ես կարծում, այսօր մշակութային ազդեցություններն ավելի շատ ի՞նչ միջոցներով են տարածվում: Ի՞նչ ազդեցություններ ես նկատել:***

Հայկական պետականության վերականգնման և հարաբերական խաղաղության հաստատման արդյունքում միաժամանակ ամրապնդվեց երկրի ներքին կայունությունը, աշխուժացան առևտրային հարաբերությունները՝ Հայաստանի տնտեսությունը ներառելով միջազգային լայնածավալ հարաբերություններում: Երկրի նյութական հարստությունն աճեց, ավատատեր ազնվականության ու եկեղեցու ձեռքում զգալի դրամական հարստության կուտակվեց: Պատմաբաններից ոմանք այս շրջանը համարում են հայկական վերածնունդ:

Բառարան

Եռադաշտային համակարգ | հողի մշակման ձև: Վարելահողը բաժանվում էր երեք մասի, որի մի մասը պարզապես հերկվում էր, մյուս մասում գարնանացան, երրորդ մասում աշնանացան էր ցանվում: Անմշակ մնացած վարելահողն օգտագործվում էր հաջորդ տարի, իսկ մյուս մասերից մեկը կրկին հերկում էին և հանգիստ թողնում՝ բերքատվությունը բարձրացնելու նպատակով:

Հասարակական-պետական կարգը

Բագրատունյաց Հայաստանի սոցիալական կառույցը նախկինի համեմատ արմատական փոփոխություններ չի կրել: Սա, ըստ երևույթին, եղել է գոյություն ունեցող հասարակական կառույցի կատարելագործման, բայց ոչ նորարարության շրջան: Իշխող վերնախավը դարձյալ կազմում էին բարձրաստիճան հոգևորականներն ու ազնվականները (իշխաններ, նախարարներ և ազատներ): Բնակչության ճնշող մեծամասնությունը՝ հասարակության ստորին շերտը, հիմնականում բնակվում էր գյուղերում:

Երկրի գերագույն տերը **հայոց արքան** էր, որին անվանում էին «հայոց շահնշահ»: Նրան էին հպատակվում ենթակա թագավորություններն ու Հայաստանում առաջացած մի շարք արաբական ամիրայություններ: Սա մեծ մասամբ ձևական բնույթ ուներ. թագավորն իր ավատառուների նկատմամբ ավելի քիչ իշխանություն ուներ կամ էլ բնավ չուներ:

Երկիրը կառավարվում էր արքունիքին կից **գործակալությունների** միջոցով: Հատկապես կարևոր էին **իշխանաց իշխանի** և **սպարապետի** պաշտոնները: Իշխանաց իշխան սովորաբար դառնում էր արքայի եղբայրներից մեկը կամ թագաժառագը և պատերազմի ժամանակ սպարապետի հետ միասին գլխավորում էր զորքը:

Կարևոր էր նաև **գլխավոր դատավորի** պաշտոնը, որը նախկինի պես զբաղեցնում էր **հայոց կաթողիկոսը:**

Թագավորության կյանքում մեծ դեր ուներ **բանակը**: Հզոր հեծելազորը բաղկացած էր **արքունական** և **մարզպանական** գնդերից, որոնց ընդհանուր թիվը հասավ 80-100 հազարի: Մարզպանական գունդը կազմվում էր ամբողջ Հայաստանից հավաքված գնդերից և ենթարկվում էր մարզպանին:

Տնտեսությունը և քաղաքները

Ներքին քաղաքական կայունությունը և մեծ տերությունների հետ համեմատաբար նպաստավոր հարաբերությունները խոշոր նշանակություն ունեցան քաղաքների և առևտրի զարգացման համար: Կարևոր էր և այն, որ Հայաստանն իր չեզոքության շնորհիվ Բյուզանդիայից, Արաբական խալիֆայությունից և Հեռավոր Արևելքի երկրներից եկող քարավանների համար բարենպաստ տարածք էր: Սա հնարավորություն տվեց, որ Հայաստանի տնտեսությունը ներառվի տարածաշրջանային և միջազգային առևտրային ցանցերի մեջ:

Քաղաքներն ընդարձակվում էին, կառուցվում էին նոր քաղաքներ: Նշանավոր քաղաքներից էին **Դվինը, Անին, Կարսը, Բաղեշը, Կարինը, Արծնը, Բերկրին, Վանը:** Հնագիտական տվյալներով՝ Հայաստանի հիմնական քաղաք-կենտրոններն ամենայն հավանականությամբ շատ ավելի մեծ էին, քան այդ ժամանակների Եվրոպայի քաղաքները: Որպես կանոն՝ քաղաքները պարսպապատ էին և կոչվում էին բերդաքաղաքներ: Կային և անպարիսպ քաղաքներ: Դրանցից նշանավոր էր **Արծնը:** Խոշոր քաղաքները կազմված էին երեք մասերից՝ **միջնաբերդ, բուն քաղաք (շահաստան)** և **արվարձաններ**: Սովորաբար միջնաբերդը քաղաքի կենտրոնում էր կամ էլ պաշտպանական տեսակետից ավելի ապահով մասում: Միջնաբերդի շուրջ տարածվում էր բուն քաղաքը՝ «շահաստանը», որը ևս պարսպապատ էր և ավելի ընդարձակ: Այստեղ էին գտնվում գլխավոր եկեղեցիները, հյուրատները, խանութները, բաղնիքները, արհեստանոցները և այլն: Որոշ քաղաքներ ունեին իրենց ինքնավար մարմինները՝ քաղաքային **խորհուրդներ** կամ **քաղաքային ավագանի**:

Քաղաքների նման վերելքի արդյունքում հետզհետե առևտրի մեջ ներգրավվեց նաև **գյուղական արտադրանքը:** Նշանակալիորեն զարգացան հողի մշակման եղանակները և երկրագործական տեխնիկան: Լայն կիրառում ստացավ **եռադաշտային համակարգը:** Հեղաշրջիչ նշանակություն ունեցավ արորին փոխարինած **գութանը**, որի ամուր երկաթյա խոփը թույլ էր տալիս հեշտությամբ

մշակել նախկինում չմշակվող խոպան հողերը: Այդ ամենը նպաստեց նաև բերքատվության բարձրացմանը: Մեծ և փոքր քաղաքներն ունեին մշտական **շուկաներ,** որտեղ վաճառվում էին գյուղատնտեսական և արտադրական ապրանքներ: Հաճախ տոնավաճառներ էին լինում գլխավոր խաչմերուկներում և ուխտատեղիներում:

Քաղաքները արտադրական կարևոր կենտրոններ էին: Անիի և Դվինի հնավայրերում պեղումների արդյունքում հայտնաբերվել են բրուտագործների, դարբինների, պղնձագործների, փորագրողների, կաշեգործների և մագաղաթագործների արհեստանոցներ:

Կրթությունը

Առևտրի, արհեստների ու քաղաքների բուռն զարգացմամբ խիստ կարևորվեց տարրական կրթությունը: Լայն տարածում գտած տարրական դպրոցները երկու տեսակի էին՝ հասարակական և մասնավոր: Հասարակական դպրոցները պահվում էին պետության կամ եկեղեցու միջոցներով, մինչդեռ մասնավոր դպրոցները վճարովի էին: Ուսման տևողությունը երեք տարի էր: Տարրական դպրոցն ավարտողները կարողանում էին գրել և կարդալ, երգել շարականներ, տիրապետում էին եկեղեցական արարողություններին, ինչպես նաև թվաբանական տարրական գիտելիքի:

Բարձրագույն ուսումնական հաստատությունները՝ վարդապետարանները, իրենց սաներին ավելի հարուստ գիտելիքներ էին փոխանցում: Այստեղ դասավանդում էին **«յոթ ազատ արվեստները»,** որոնք բաժանված էին երկու մասի՝ եռյակ (քերականություն, ճարտասանություն, տրամաբանություն) և քառյակ

S Տաշիր-Ձորագետի Կյուրիկե II-ի մետաղադրամներից

ՀՀ կենտրոնական բանկ

Հին ժամանակներում բոլոր տիրակալները չէ, որ կարող էին դրամ հատել. Միայն լիովին անկախ պետությունների կառավարիչները կարող էին հատել իրենց սեփական մետաղադրամները: Այս առումով ուշագրավ է, որ Բագրատունիները, ինչպես և Արշակունիները, չնայած թագավորության վերականգնմանը, սեփական դրամ հատելու իրավունք չեն ունեցել. կիրառվում էր կամ բյուզանդականը, կամ արաբականը: Միայն Կյուրիկյաններն էին, որ դրամ հատելու իրավունք ունեին: Կյուրիկյանների տոհմը Բագրատունիների ճյուղերից մեկն էր, որն իշխում էր Տաշիր-Ձորագետի փոքրիկ թագավորությունում: Դրամ հատելու իրավունք նրանք ստացել են Բյուզանդիայի կայսր Կոստանդին Դուկասի (1059-1067) կողմից: Կյուրիկե II (1048-1089) արքայի օրոք թողարկվել են պղնձե դրամներ՝ «Աստված պահապան Կյուրիկեին» մակագրությամբ:
Այսպիսով՝ հայերեն գրությամբ առաջին դրամը Կյուրիկե II-ի հատած պղնձե դրամներն են:

ՏԵՂԵԿՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
Ի՞նչ ես կարծում, արդյո՞ք Բագրատունյաց Հայաստանը կարող ենք լիովին անկախ թագավորություն համարել: Ինչո՞ւ այո, կամ ինչո՞ւ ոչ:

(մաթեմատիկա, երկրաչափություն, աստղաբաշխություն, երաժշտություն): Սովորողները վերջում հանձնում էին քննություն, ստանում վարդապետի աստիճան և ուսուցչությամբ զբաղվելու իրավունք: Երիտասարդներից ոմանք նաև մեկնում էին արտերկիր՝ սովորելու դարաշրջանի ամենահեղինակավոր ուսումնական հաստատություններում:

Միջնադարյան բարձրագույն դպրոցներից էին **Անիի, Կարսի, Սանահինի, Հաղպատի, Կեչառիսի, Տաթևի, Նարեկավանքի** և այլ վայրերի վարդապետարանները: Դրանք նաև հոգևոր-գիտական կարևորագույն կենտրոններ էին:

Պատմագրությունը

Այս շրջանում կրկին աչքի ընկավ պատմագրության ոլորտը: Հայ պատմիչները, ի թիվս այլ բաների, քննադատում էին հայկական աշխարհիկ ավանդույթները, հոգևորականների սանձարձակ բարքերը, ժամանցն ու կենցաղը: Նրանք Հայաստանի կործանումը պայմանավորում էին քրիստոնեական բարոյականության անկմամբ:

Որոշ պատմիչներ, ինչպես, օրինակ, **Հովհաննես Դրասխանակերտցին (մոտ 840-ականներ-929),** լրջորեն մտահոգված էին իրենց ժամանակի քաղաքականությամբ: Դրասխանակերտցու «Պատմություն հայոց»-ն ընդգրկում է ջրհեղեղից մինչև X դ. առաջին քառորդն ընկած ժամանակաշրջանը: Ուշագրավ է մանավանդ երկրորդ մասը, որտեղ նրա պատմությունը շատ ավելի աշխույժ է, քան նախորդ բաժնում: Պատմիչն իրադարձություններն արձանագրում է մեծ ուշադրությամբ, մանրուքների հաշվառմամբ:

Թովմա Արծրունին (IX դ. երկրորդ կես-X դ. սկիզբ) իր «Արծրունիների տան պատմությունը» երկում պատմում է Արծրունիների տոհմի անցյալի մասին՝ զուգահեռաբար ուշագրավ մանրամասնություններ հաղորդելով նաև Հարավային Հայաստանի պատմական իրադարձությունների և կենցաղի մասին: Իսկ **Անանուն պատմիչը,** գովաբանելով Գագիկ Արծրունուն, էջեր է նվիրում Վանա լճի Աղթամար կղզում գտնվող **Ոստան** քաղաքի շենքերի նկարագրությանը: Սա նշանակում է, որ պատմիչները սկսել էին իրենց պատմություններում ներառել նաև տվյալ ժամանակի խնդիրները և նկարագրել արվեստի նմուշները:

Հայ դասական պատմագրության ավանդույթներով է գրված **Արիստակես Լաստիվերցու (XI դ.)** «Պատմությունը», որն արժեքավոր է և՛ որպես պատմական փաստաթուղթ, և՛ որպես գրականություն: Նրա ոճը երբեմն պարզ է, երբեմն չոր, բայց հաճախ վառ պատկերներով, համարձակ, հուզական և պերճախոս:

Նույն շրջանի մեկ այլ հեղինակի՝ Ստեփանոս **Տարոնեցի Ասողիկի (X դ. կեսեր-XI դ. սկիզբ)** «Տիեզերական պատմությունն» առաջինն աշխատությունն է հայ պատմագրության մեջ, որտեղ շարադրված է **Հայաստանի պատմությունը համաշխարհային պատմության համատեքստում:** Պատմիչը քննարկում է նաև իր ժամանակի մշակութային կյանքը՝ նշելով մշակութային գլխավոր կենտրոն-

ների և ամենահայտնի գիտնականների ու ճարտարապետների անունները: Տարոնեցին նաև ուժեղ կենտրոնացված պետության և լավ կազմակերպված ազգային եկեղեցու գաղափարի ջերմեռանդ ջատագովն էր:

Գրականությունը և փիլիսոփայությունը

Ժամանակաշրջանը շատ նշանավոր բանաստեղծներ տվեց: Սկզբնապես նրանց տաղանդն արտահայտվում էր կրոնական **օրհներգերում** և **աղոթքներում**: Սակայն միջնադարում աստիճանաբար աշխարհիկ թեմաներ հայտնվեցին, որոնք, սակայն, քողարկվում էին խորհրդապաշտական երանգներով: Այստեղ նախ և առաջ հիշատակելի է մեծագույն հոգևոր բանաստեղծ **Գրիգոր Նարեկացին (մոտ 951-1003):** Նարեկացու ամենահայտնի գործը «Մատյան ողբերգության» պոեմն է, որը ժողովրդի մեջ հայտնի է **«Նարեկ»** անվամբ: Այն աղոթք-բանաստեղծությունների ժողովածու է, որը հայտնի է ամբողջ աշխարհում և թարգմանվել է աշխարհի բազմաթիվ լեզուներով: Լեզուն հաճախ բարդ է, բայց վառ և նորարար: Նոր հասկացություններ, խոր հույզեր և բարդ մտքեր արտահայտելու համար նա ստիպված էր նոր բառեր հորինել: «Մատյան ողբերգությանն» արժանի տեղ է զբաղեցնում համաշխարհային գրական գլուխգործոցների շարքում:

Բագրատունյաց դարաշրջանում փիլիսոփայությունը ևս աննախընթաց վերելք ապրեց: Դարաշրջանի ամենահայտնի փիլիսոփաներից էր **Գրիգոր Մագիստրոս Պահլավունին (մոտ 990-1058):** Նրա գործունեությունը չի սահմանափակվել միայն փիլիսոփայությամբ. նա ժամանակի բազմակողմանի կրթություն ստացած մարդկանցից էր և զբաղվում էր կրթական, գիտական և թարգմանական աշխատանքով: Հայերեն է թարգմանել Պլատոնի, Արիստոտելի, Էվկլիդեսի և այլոց աշխատությունները: Ձգտում էր վերականգնել անտիկ և հայ փիլիսոփայական ավանդույթները: Կարևորում էր բնական գիտությունների դերն աշխարհի և Աստծո ճանաչման գործում:

Արվեստը և ճարտարապետությունը

Բագրատունյաց Հայաստանի տնտեսական առաջընթացը հանգեցրեց նաև մշակութային բուռն վերելքի: Այդ ժամանակաշրջանում կառուցվել են միջնադարյան հայկական ճարտարապետության բազմաթիվ գլուխգործոցներ, այդ թվում՝ **Սանահինի, Հաղպատի, Կեչառիսի, Տաթևի, Սևանի, Բջնիի** վանական համալիրները, **Աղթամար կղզու Սուրբ Խաչը և Անիի Մայր տաճարը:**

Աղթամար կղզում գտնվող Սուրբ Խաչ տաճարը կառուցել է **Մանուել** ճարտարապետը: Ոչ միայն կրոնական, այլև աշխարհիկ թեմաներով բազմազան զարդաքանդակներն արտակարգ շքեղություն են հաղորդում տաճարին: Բացի դրանից, Մանուելը կղզում կառուցել է նաև թագավորական պալատ և նավահանգիստ՝ բազմաթիվ նավերի համար:

Իր վեհությամբ հատկապես աչքի է ընկել մայրաքաղաք Անիի Մայր տաճարը, որը կառուցել է Մանուելի աշակերտ **Տրդատ** ճարտարապետը: Տաճարի ճարտարապետական հորինվածքում առկա են ոճական այնպիսի նորամուծություններ, որոնք հետագայում անցել են եվրոպական ճարտարապետությանը՝ դառնալով ռոմանական և գոթական ոճերի բնորոշ կողմը: Նա Անի քաղաքում կառուցել է նաև Զվարթնոցի հայտնի եռահարկ տաճարի ճշգրիտ կրկնօրինակը, երբ Զվարթնոցն արդեն ավերակ էր: Տրդատը նաև վերականգնել է Կոստանդնուպոլսի հայտնի **Սուրբ Սոֆիա** տաճարի՝ երկրաշարժից ավերված գմբեթը, երբ հույն ճարտարապետները չեն կարողացել վերականգնել: Նրա վերականգնած գմբեթը կանգուն է մինչ օրս:

Դարաշրջանի կարևոր ձեռքբերումներից է նաև ճարտարապետության հետ **քանդակագործության** և **որմնանկարչության** ներդաշնակ միահյուսումը: Դրա ուշագրավ օրինակներից են վերոթվարկյալ վանական համալիրները: Աղթամարի տաճարը թերևս միակ հուշարձանն է, որի որմնանկարները համեմատաբար ամբողջական են պահպանվել:

Բագրատունյաց արվեստագետների զարդաքանդակների հմայքը բազմապատկվեց **խաչքարերի** ավելի նուրբ և բարդ զարդանախշերում: Զուգահեռ զարգացում է նկատվում ձեռագրերի **մանրանկարչության** մեջ:

Ինչո՞ւ է դա կարևոր այսօր

Բագրատունյաց Հայաստանում մշակութային բուռն վերելքը պայմանավորվեց անկախության վերականգնմամբ և տնտեսության բարգավաճմամբ: Մշակութային զարթոնքը նշանավորեց մի նոր դարաշրջան, որն ավելի ուշ պատմաբանները բնորոշեցին որպես Հայկական վերածնունդ: Այս ընթացքում ստեղծված մշակութային արժեքները մեզ հպարտություն են ներշնչում նաև այսօր: Այսօր էլ արժե մտածել՝ ինչպես են միմյանց հետ կապված երկրի կայունությունն ու մշակութային զարգացումները:

Գործնական առաջադրանք

Օգտվելով համացանցից՝ գրի՛ր էսսե, որտեղ կհիմնավորես Գրիգոր Մագիստրոս Պահլավունու այն դրույթը, համաձայն որի՝ «աշխարհի և Աստծո ճանաչման գործում» մեծ է բնական գիտությունների դերը: Կամ հակառակը: Դասարանում քննարկե՛ք՝ արդյո՞ք հումանիտար գիտությունները ևս կարևոր չեն այդ հարցում:

Գլխի վերանայում

Ա1 | Հասկացություններ և անուններ

Բնութագրիր:

հայկական վերածնունդ • Հովհաննես Դրասխանակերտցի • Թովմա Արծրունի • Անանուն պատմիչ • Արիստակես Լաստիվերցի • Ստեփանոս Տարոնեցի Ասողիկ • Գրիգոր Նարեկացի • Գրիգոր Մագիստրոս Պահլավունի • Մանուել Ճարտարապետ • Տրդատ Ճարտարապետ • Անիի Մայր տաճար • Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցի • «յոթ ազատ արվեստներ» • եռադաշտային համակարգ • միջնաբերդ • բուն քաղաք (շահաստան) • արվարձաններ

Ա2 | Հիմնական գաղափարներ

ա. Պարզաբանիր: Ի՞նչ մշակութային (պատմագրություն, գրականություն, փիլիսոփայություն, արվեստ և ճարտարապետություն) ձեռքբերումներ ունեցավ Բագրատունյաց Հայաստանը: Ինչպիսի՞ փոփոխությունների ենթարկվեց մշակույթն այդ շրջանում:

բ. Հիմնավորիր: Ինչո՞ւ ենք Բագրատունյաց Հայաստանի մշակութային զարթոնքը համարում հայկական վերածնունդ:

գ. Բացատրիր: Ի՞նչ առանձնահատկություններ ուներ Բագրատունյաց ժամանակաշրջանի պատմագրությունը, որոնցով տարբերվում էր նախորդ ժամանակաշրջանի պատմագրությունից:

Ա3 | Քննադատական մտածողություն

1. Ճանաչիր ազդեցությունը: Ինչպե՞ս էր առևտրի, արհեստների ու քաղաքների բուռն զարգացումն ազդում կրթության վրա:

2. Ընդհանրացրու: Ինչո՞վ էր պայմանավորված այն, որ Բագրատունյաց Հայաստանում թագավորի իշխանությունն ավատատուների նկատմամբ սահմանափակ էր կամ նույնիսկ բացակայում էր:

3. Գնահատիր: Ի՞նչ խնդիրներ էին քննարկվում Բագրատունյաց Հայաստանի ժամանակաշրջանի պատմագրության մեջ: Ինչո՞վ էր առանձնանում Ստեփանոս Ասողիկի «Տիեզերական պատմությունը»:

Ա4 | Փոփոխություն և շարունակականություն

Պատկերացրու, որ դու կաթողիկոս Հովհաննես Դրասխանակերտցուն օգնող հոգևորական ես: Քեզ հանձնարարված է նկարագրել քրիստոնեական բարոյականությունն անտեսելու հետևանքները:

Ինչպե՞ս ցույց կտայիր բարոյական անկման և պետության կործանման կապը: Իսկ գուցե կհակաճառե՞ս այս մտքին:

Գրիգոր Նարեկացի, Մատյան ողբերգության
Ընթերցում է Սարգիս Նաջարյանը